

ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՀԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ՄՈՍԿՎԱ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ

Մոսկվայի մասին հնագույն գրավոր տեղեկությունը պահպանվել է 1147 թ., սակայն հնագիտական նյութերի հիման վրա ոմանք հանգել են այն եզրակացության, որ տակավին X—XI դդ. հին Մոսկվայի տարածքի վրա գոյություն է ունեցել առևտրա-արհեստագործական մի բնակավայր, որը տընտեսական սերտ կապերի մեջ է եղել եվրոպական երկրների (հատկապես՝ Գերմանիայի), Միջին Ասիայի և Հայաստանի հետ¹։

Մոսկվայի բարգավաճումը կատարվում է շատ արագ։ Շուտով այն դառնում է Վլադիմիրո-Սուզդալյան Ռուսիայի նշանավոր քաղաքներից մեկը։ XIII դ. սկզբներին ստեղծվում է Մոսկովյան ինքնուրույն իշխանությունը, որը հմտորեն հաշվի առնելով մոնղոլական գերիշխանության տակ ստեղծված քաղաքական իրավիճակը և օգտագործելով կենտրոնական Ռուսաստանի միմյանց դեմ մաքառող ուսական իշխանությունների հակամարտությունները՝ ընդարձակում է իր սահմանները հարևանների հաշվին, և XIV դ. կեսերին արդեն դառնում ողջ Ռուսաստանի քաղաքական ու եկեղեցական ճանաչված կենտրոն։ Նույն դարի երկրորդ կեսին Մոսկովյան մեծ իշխանությունը դիսավորում է ուսժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական տիրապետության դեմ։ 1380 թ. ուսական զորքերը, Մոսկվայի մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի դիսավորությամբ, պարտության են մատնում մոնղոլական բանակին, հաջող սկիզբ դնելով օտար բռնակալական լծից հայրենի երկրի ազատագրության և միմյանց դեմ պայքարող ուսական իշխանությունների միավորման։

Այսպիսով, Մոսկվայի մեծ իշխանները XIV—XV դդ. ընթացքում օտար տիրապետության ու ֆեոդալական մասնատվածության դեմ համառ պայքար մղելով, վերամիավորում են ուսական հողերի մեծագույն մասը և Մոսկվան դարձնում նոր Ռուսաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն²։

Մոսկվայի և արևելյան երկրների տնտեսական սերտ կապերն իրականացվում էին միջազգային նշանակություն ձևեր բերած երեք հիմնական մայրուղիներով։ Դրանցից կարևորագույնը Վոլգյան մայրուղին էր. Վոլգայի վրայով Մոսկվան կապված էր Անդրկովկասյան երկրների, Իրանի, Միջին Ասիայի,

¹ М. Г. Рабинович. Раскопки в Москве в 1950 году. «Краткие сообщения ИИМК», XLIV, М.—Л., 1952, էջ 117: Մ. Տիխոմիրովը կասկածի տակ է առնում նոր հայտնաբերված նյութերի՝ Մ. Ռարինովիչի առաջարկած ժամանակագրությունը, այն տեղաշարժելով XII—XIII դդ. М. Н. Тихомиров. Древнерусские города, М., 1956, էջ 408—409):

² «Очерки истории СССР», период феодализма, IX—XV вв. в двух частях, II, М., 1953, էջ 271—332:

Հնդկաստանի և Չինաստանի հետ: Հին այդ ճանապարհի ողջ երկայնքով՝ Վուլգայի գետաբերանից սկսած մինչև ակունքները, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ծաղկում էին առևտրա-արհեստագործական խոշոր նշանակություն ունեցող նավահանգիստ-քաղաքներ, որոնցում միջազգային աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում:

VIII—X դդ.՝ Խազարական խաքանաթի տիրապետության ժամանակաշրջանում, բացառիկ դեր էր կատարում Իթիլ մայրաքաղաքը՝ Հազարան կոչվող առևտրա-արհեստագործական իր թաղամասով (գտնվում էր ներկայիս Աստրախան քաղաքից 15 կմ հյուսիս)³: Խազարական պետության քայքայումից հետո մերձվոլգյան երկրամասերի տերը դարձան Վուլգայի բուլղարները, որոնց նշանավոր մայրաքաղաքը՝ Բուլղարը, կառուցված Վուլգա և Կամա գետերի հատման շրջանում, հինգ դար շարունակ պահպանեց իր բացառիկ դերը որպես միջազգային ապրանքափոխանակության կարևոր մի հանգուցակետ:

Մոնղոլական արշավանքներից հետո այս երկրամասերն ընկան Ոսկե Հորդայի տիրապետության տակ. գետի ողջ երկայնքով, կարևոր անցուղիներին առընթեր, ստեղծվեցին ու բարգավաճեցին վարչական ու տնտեսական նոր կենտրոններ՝ Սարայ-Բերքեն (Հին Սարայը), Սարայ-Բաթուն (Նոր Սարայը), Ուլյակը կամ Ուկեկը և Ղազանը:

Վուլգայի ուսական տիրապետության տակ գտնվող հատվածում կարևորագույն տնտեսական դեր էր կատարում 1221 թ. հիմնադրված Նիժնի-Նովգորոդը, որ 1392 թ. դարձավ Մոսկովյան մեծ իշխանության վաճառաշահ քաղաքներից մեկը: Ճիշտ է, պատերազմական գործողությունների, ավաղակային արշավանքների և այլ անբարենպաստ հանգամանքների հետևանքով հրրեմն ժամանակավորապես դադարում էր հաղորդակցությունը Վուլգայի ողջ երկայնքով կամ նրա առանձին հատվածներում, սակայն կարճատև էր լինում այդ դադարը: Ավերված կենտրոնների փոխարեն ստեղծվում էին նորերը և նույնիսկ թշնամի ուժերն աջակցում էին միմյանց (անշուշտ՝ յուրաքանչյուրն իր շահերից ելնելով)՝ տնտեսական վիթխարի նշանակություն ունեցող մայրուղու վերականգնման ու բարգավաճման համար, և այն շարունակում էր կատարել իր բացառիկ դերը միջազգային ապրանքափոխանակության բնագավառում:

Վոլգյան մայրուղին ծանոթ էր հայերին մեր պատմության հնագույն ժամանակներից ի վեր. որոշակի տվյալներով տակավին մ. թ. ա. I դ. մարերն ու հայերը ցամաքային ճանապարհով Միջագետքից արևելյան ապրանքներ էին հասցնում Կասպից ծովի հյուսիսային շրջանները⁴:

Տնտեսական այդ կապերն, անշուշտ, ավելի լայն ծավալ էին ստացել Արշակունյաց և մարգպանական շրջաններում: VII դ. մեծանուն դիտնական Անանիա Շիրակացին իր «Աշխարհացույցի» մեջ⁵ խաղարների պետության ու նրա տիրապետության տակ գտնվող ցեղախմբերի մասին այնպիսի ուշագրավ և

³ Խազարների մայրաքաղաքը սկզբնական շրջանում Բալանշարն էր, որն ավերվեց արաբների կողմից 722 կամ 723 թթ.: Դրանից հետո մայրաքաղաք դարձավ Իթիլը (B. B. Бартольд, Арабские известия о русах. «Советское востоковедение», I, М.—Л., 1940, էջ 18):

⁴ B. B. Бартольд, նշվ. աշխ., էջ 16:

⁵ Կ. Լ. Դանիելյանի «Армянские космографические труды VII века о строении вселенной» (Ереван, 1978), աշխատության տպագրությունից հետո «Աշխարհացույցի» Ան. Շիրակացուն պատկանելու հարցը կարելի է վերջնականապես լուծված համարել:

ստույգ տվյալներ է հաղորդում, որ կասկած չի մնում այն մասին, որ նա ունեցել է հայազգի տեղեկատուներ: Այդ մասին նա նույնիսկ որոշակի ակնարկ ունի: Հունական (Սև) և Կասպից ծովերի մասին իր ձեռքի տակ ունեցած նյութերի շարադրությանն անցնելուց առաջ, նա ուղղակի գրում է. «Քանզի զՅունականան և զԿասքիականան մերոց իսկ արանց պատահեաց շուրջ անցանել...»⁶: Եվ, հավանաբար, հենց «մերոց իսկ արանց» հաղորդած տեղեկությունների հիման վրա, նա տեղյակ էր, որ Վոլգան (Աթրլ գետը) յոթանասուն վտակներ կաղմելով է թափվում Կասպից ծով, մի գիտելիք, որ նրանից դարեր հետո է միայն տեղ գտել Ռուսական առաջին (Լավրենտիևյան) տարեգրության մեջ, ինչպես և արար աշխարհագիրներ Իրն-Հաուբալի, ալ-Քարնաաթի, Յակուբի և այլոց գրվածքներում⁷:

VII դ. վերջերին Արևելից Հայոց կաթողիկոսական աթոռը, որ ավելի հայտնի է Աղվանից կաթողիկոսություն անունով, քարոզչական լայն գործունեություն էր ծավալել Խաղարական խաքանաթի սահմաններում և, մանավանդ, նրա հարավային երկրամասերում (հյուսիսային Կովկասի Կասպից ծովին առափնյա շրջաններում): Ճիշտ է, ի վերջո խաղարական հասարակության վերնախավը պետական կրոն է հայտարարում հուդայիզմը (կարաիմյան դավանանքը), սակայն հայ քրիստոնեական եկեղեցին նույնպես այնտեղ ունեցել է մեծարանակ հետևորդներ⁸: X դ. արար պատմագիր Մասուդին վկայում է, որ Իթիլ քաղաքի բնակչության մեջ կային մեծ թվով քրիստոնյաներ⁹, իսկ Իրն-Հաուբալը խոսում է խաղարական Սրմբդըռ ծովափնյա քաղաքի մասին, նշելով, որ «այնտեղ բնակվում էին մուսուլմաններ և ուրիշներ, որոնք ունեին իրենց մզկիթները, քրիստոնյաներն իրենց եկեղեցիները, հրեաները՝ սինագոգները»¹⁰:

X դ. կեսերին հյուսիս-արևմտյան Ղազախստանից դեպի արևմուտք շարժվելով և անցնելով Վոլգան, Կովկասի ու Սև ծովի հյուսիսային տափաստանները ներխուժեցին Ղազախ (նաև պոլովցի, կուման) կոչվող թուրքական լեզվաբնույթի պատկանող բոշվոր ցեղերը: Աշխարհագրական այդ միջավայրում հաջորդելով խաղարներին, նրանք դարեր շարունակ՝ մինչև մոնղոլական արշավանքները, իրենց հսկողության տակ պահեցին Արևելքն Արևմուտքի հետ կապող հյուսիսային մայրուղիները: Այդ ցեղերը, սակայն, միասնական պետություն չկարողացան ստեղծել: Նրանք ցրված էին Գեշտ-ի Ղազախ կոչվող

6 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 339: տե՛ս նաև էջ 347—348, ուր հետաքրքրական տեղեկություններ կան խաղարների, նրանց խաքանի (հական), թագուհու (խաթուն) մասին և թվարկված են Մարմատիայում ապրող 50 ցեղախմբերն ու ցեղերը (խաղիրք, բուխք, բարսիք, աղշեզք... և այլն):

7 Б. Н. Заходер. Из истории волжско-каспийских связей древней Руси. «Советское востоковедение», 1955, № 3, էջ 118: Արար աշխարհագիրների երկերում տարբեր աշխարհամասերի վերաբերյալ տեղա տեղեկությունների զգալի մի մասը փոխ է անված իրենց տիրապետության տակ գտնվող հին մշակույթ ունեցող ժողովուրդներից, որոնց շարքում հայերը նույնպես գրավել են պատվավոր տեղ:

8 Խաղարական պետության սահմաններում հայ հոգևորականների ծավալած քարոզչական գործունեության ու ձեռք բերած հաջողությունների մասին պատմում է Մովսես Կաղանկատվացին (տե՛ս Մովսեսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ., 1860, II, զբլուխը 18—19—ևն, հատկապես՝ էջ 197—198):

9 В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 24—25:

10 նույն տեղում, էջ 34—35:

անծայրածիր տափաստաններում՝ բաժանված լինելով մի շարք կիսանկախ ցեղախմբերի. Գանուրի և Դնեպրի միջև հաստատվել էին Լուկոմորյան կոչվող զփշախները, ապա՝ արևմուտքից-արևելք դալով, նրանց հարևանությամբ ապրում էին Մերձդնեպրյան կամ Զապարոժյան, Մերձձովյան (ներքին Դոնից միջև Ազովի ծովափերը), Դոնեցկի, Դոնի, Արիմի, Հյուսիսային Կովկասի զփշախական զանգվածները¹¹:

Խաղարական պետության մայրաքաղաք Իթիլի անկումից (995 թ.) հետո հավանաբար հենց նույն վայրում ստեղծվեց ու բարդավաճեց զփշախական տնտեսական կենտրոն Սաքսին քաղաքը¹²: Տնտեսական կարևոր նշանակություն ստացավ նաև Սարկել քաղաքը՝ կառուցված Դոն գետի մեծ աղեղի այն մասում, որ առավել մոտ էր գտնվում Վոլգային¹³:

Հայերը, որ աշխույժ հարաբերություններ էին ստեղծել այս երկրամասերի հետ պատմական նախորդ ժամանակաշրջանում, բնականաբար, պահպանել էին իրենց տնտեսական դիրքերը զփշախական իշխանություններում, զգալի դեր կատարելով Դեշտ-ի Ափշախի ճանապարհներով կատարվող միջազգային առևտրի մեջ: Պետք է խոստովանել, սակայն, որ այդ մասին պահպանվել են միայն սակավաթիվ նյութեր, որոնցից մի քանիսը՝ ըստ ինքյան պերճախոս:

1180 թ. տեղի է ունենում Վրաց պետության գահակալի՝ Քամար Քագուհու ամուսնությունը Վլադիմիրի մեծ իշխան, XII դ. կեսերին Ռուսաստանի պատմության մեջ խոշոր դեր կատարած Անդրեյ Բոգոլյուբսկու որդու՝ Յուրի (Գեորգի) Բոգոլյուբսկու հետ: Յուրին, իր հորեղբայր Վսեվոլոդի կողմից հալածվելով, հյուրընկալվել էր զփշախների թագավորի մոտ, ըստ երևույթին, Սաքսին քաղաքում (մեծ հավանականությամբ նրա մայրը զփշախական իշխանուհիներից է եղել): Երբ վրացական արքունիքում քննության նյութ է դառնում ջահել Քագուհու համար պատշաճ ամուսին գտնելու հարցը, թրխիսցի ոմն Քավադ՝ Աբուլ-Հասանը առաջարկում է իրեն քաջածանոթ Յուրի Բոգոլյուբսկու թեկնածությունը: Վրաց դարբաղը (պետական խորհուրդը) ընդունում է այդ առաջարկը: Ռուս իշխանին հրավիրելու պարտականությունը դրվում է Թրխիսի բնակիչ, վաճառական Զանբան Զորաբաբելի վրա, որը, ավելի

11 К. В. Кудряшов. Половецкая степь, М., 1948, էջ 134: Պարտվելով մոնղոլ-թաթարներից և ընդունելով նրանց գերիշխանությունը, զփշախները ոչ միայն չդադարեցին գոյություն ունենալուց, այլև իրենց մեջ ձուլեցին թաթարներին. վերջիններս, ըստ XIV դ. առաջին կեսի առար հեղինակ էլ-Օմարիի՝ «Զուլվեցին և խնամիացան նրանց (զփշախների) հետ... և նրանք բոլորը դարձան կատարյալ զփշախներ, այնպես որ կարձես նույն ցեղից լինելին» (В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. I. Извлечения из сочинений арабских, СПб., 1894, էջ 235):

12 «Очерки истории СССР», период феодализма, IX—XV вв., в двух частях, I, М., 1953, էջ 202:

13 К. В. Кудряшов, նշվ. աշխ., էջ 9—34 (այստեղ հատուկ գուրխ է նվիրված Սարկելի տեղադրությանը): Վոլգայի և Դոնի ջրավազանները միմյանցից բաժանող և ընդամենը 60 կմ տարածություն ընող ջրբաժան այդ շրջանը դարեր շարունակ վիթխարի դեր է կատարել, լինելով Սև ծովը Կասպից ծովի հետ կապող տնտեսական դարկերակի անխափան մասը և ունենալով ռազմատրատեգիական կարևոր նշանակություն: Դեռևս XVI դ. թուրքական սուլթան Սելիմ II-ը անհաջող փորձ կատարեց Դոնը Վոլգային ջրանցքով միացնելու: Այսպիսի ծրագրեր առաջ բաշխեցին նաև Պետրոս I-ի ժամանակ:

արագ, բան ակնկալվում էր, ճեպում է Ղփչախ թագավոր Սեվինջի մոտ և Թբիլիսի հասցնում փեսացուին¹⁴։

Ո՞վ էր Վրաստանի քաղաքական կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող խնամիական այս կապի ստեղծման նախաձեռնողը։ Այս հարցը հուզել է շատ պատմաբանների՝ XVIII դ. կեսերից սկսած մինչև մեր օրերը¹⁵։ Եվ ինչպես հաճախ է պատահում բանասիրության մեջ, տարբեր ու հակասական տեսակետներից հավանականը բնավ էլ վերջին ուսումնասիրողներին չի պատկանում։ Այսօր էլ ուժի մեջ է արքայազն Վախուշտի հաղորդած տվյալն այն մասին, որ Աբուլ-Հասանը թբիլիսցի մի վաճառական է եղել, ինչպես նաև պրոֆ. Ա. Խախանովի կարծիքը, թե ազգությանը նա հայ է եղել և առևտրական սերտ կապեր է ունեցել տարբեր երկրների, ըստ որում նաև՝ Գեղարի-ի Ղփչախի հետ¹⁶։

Ղփչախում բնակություն հաստատած հայերը սերտ կապեր են ունեցել Հայոց բնաշխարհի և հայկական հեռավոր գաղթօջախների հետ։ Ուշագրավ է այն փաստը, որ 1193 թ. ոմն Աղբարիկ՝ որդի Առչուծի, Ղփչախում (ցավոք, տեղը որոշակի չի նշված) գնել է մեկ դար դրանից առաջ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում բնօրինակված հայերեն մի Ավետարան¹⁷։

Ղփչախների հետ միասին, Խաղաբախյան պետության ժառանգորդները դարձան միջին Վոլգայի առափնյա երկրամասերում հաստատված բուլղարները, որոնք հայտնի են գիտության մեջ՝ Վոլգայի բուլղարներ անունով։

Բացի գետային մայրուղուց, բուլղարներն արևելյան երկրների հետ առևտրական աշխույժ կապեր էին պահպանում ցամաքային այն ճանապարհով, որ Մեծ Բուլղար քաղաքից՝ տափաստաններով ձգվում էր դեպի Յաիկ, իսկ այդտեղից էլ, անցնելով Ղազախական անապատով, դեպի Խորեզմ։ Այս ճանապարհի նշանակությունն ըստ երևույթին մեծացավ XII—XIII դդ.՝ Խորեզմշահների պետության ծաղկման ժամանակաշրջանում¹⁸։

X դ. արաբ ուղեգիր Իբն-Ֆադլանի վկայությամբ բուլղարների արքայական վրանի հատակին փռված էին մեծ մասամբ հայկական դորգեր¹⁹։ Հնագիտական պեղումներից հայտնաբերված ուշագրավ նյութերի հիման վրա ապացուցված է արդեն, որ Բուլղար քաղաքի պարիսպներից դուրս գոյություն է ու-

¹⁴ «История и восхваления венценосцев». В кн. «Картлис цховреба», т. II, Тбилиси, 1959, էջ 36: նաև՝ С. Т. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. «Научные труды Ереванского ун-та», т. XXIII, 1946, էջ 395—396 և З. В. Папаскири. Эпизод из истории русско-грузинских взаимоотношений. «История СССР», 1977, № 1, էջ 135:

¹⁵ Արքայազն Վախուշտի, Ա. Խախանով, Ս. Երեմյան, Պ. Ինգորովա, Ի. Յինցաձե, Ն. Բերձենիշվիլի, Շ. Մեսիթա. ահա հարցին անդրադարձած գիտնականների ոչ լրիվ ցանկը (սրանց, հաճախ իրարամերժ, տեսակետների համառոտ շարադրանքը տե՛ս 2. Պապասկիրիի վերոհիշյալ հոդվածի մեջ)։

¹⁶ А. С. Хаханов. Положение армян в грузинском царстве. «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897, էջ 55:

¹⁷ Կառեզին Ա. կարողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, № 255, սյուն. 569—570. С. Т. Еремян. նշվ. աշխ., էջ 393:

¹⁸ А. П. Новосельцев, В. Т. Пашуто. Внешняя торговля древней Руси (до середины XIII в.). «История СССР», 1967, № 3, էջ 106:

¹⁹ Ибн-Фадлан. Путешествие на Волгу, перевод с комментариями, под редакцией акад. И. Ю. Крачковского, М., 1939, էջ 73: Բարկին Ասախլյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., 2, Երևան, 1964, էջ 39:

նեցել հայկական առևտրա-արհեստագործական մի թաղամաս, որը հիմնադրված լինելով դեռևս IX դ., իր զարգացումն է ապրել ու բարգավաճել հատկապես XIII—XIV դդ., դառնալով Ոսկե Հորդաշի վաճառաշահ բնակավայրերից մեկը: Այդ թաղամասում, նախկին փայտածածկ եկեղեցու փոխարեն, XIV դ. կառուցվել է երկհարկանի քարաշեն թաղակապ մի շքեղ եկեղեցի, որի ավերակները, թյուրիմացաբար «հունական դահլիճ» անվանումն ստանալով, երկար ժամանակ հնագետների ուշադրության կենտրոնում էին գտնվում²⁰: Հատուկ նշանակություն ունեն Բուլղարի հայկական գերեզմանատան արձանագիր տապանաքարերը, որոնցից պահպանվել են միայն շնչին հիշատակներ (4-ը հասել են մեզ ամբողջական կամ թերի, իսկ 3-ից պահպանվել են միայն արձանագրությունների անհաջող ընդօրինակություններ): Դրանց մեջ կան թվակիր արձանագրություններ, որոնք առանց բացառության պատկանելով XIV դ. առաջին հիսնամյակին (1308—1337 թթ.)՝ խոստովանություններ Անայդ շրջանում Բուլղարի հայկական թաղամասի ծաղկուն վիճակի մասին²¹:

Հետաքրքրական արդյունքներ են տվել նաև հայկական գերեզմանատան պեղումները: Այստեղ հայտնաբերվել են ոսկե և արծաթե զարդեր, մետաքս և դիպակ՝ հյուսված ոսկեհուռ թելերով: Մասնագետները մեծ նմանություն են տեսնում սրանց և Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Անիում և Դվինում արտադրված գործվածքների միջև, միաժամանակ նշելով, որ պեղածո նյութերը վկայում են հայ վաճառականների բարեկեցիկ վիճակի մասին²²: Մեծ Բուլղար քաղաքի հայկական համայնքը՝ առաջին հերթին Մոսկվայի հետ էր զարգացնում անտեսական իր կապերը: Սակայն, ելնելով այն փաստից, որ Բուլղարի մոտակայքում, Կամա գետի վրա ևս եղել են հայկական փոքրիկ դաղթօջախներ²³, պետք է հետևեն, որ տեղի հայ վաճառականները սերտ հարաբերությունների մեջ էին նաև հյուսիսային և հյուսիս-արևելյան հեռավոր անտառատունգրային շրջաններում թափառող որսորդական և եղջերվապահ ցեղերի հետ:

20 А. П. Смирнов. Армянская колония города Болгар. «Материалы и исследования по археологии СССР» (МИА), вып. 61, М., 1958, էջ 330—359.

21 Լ. Զանփոլադյան, Վոլգայի ափին հայտնաբերված հայկական արձանագրությունները («Թանրեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 211—222): Տեղին է այստեղ նշել, որ Մերձվոլգյան երկրամասերում հայկական վիճագրական հուշարձանների և այլ նյութերի հայտնաբերման հնարավորությունները պետք չէ սպառված համարել: Այս ասումով ուշադրության արժանի է անդլիացի վաճառական Քրիստոֆեր Բուրոյի 1579 թ. իր հորեղորը հասցեագրած մի նամակը, որից հայտնի է դառնում, թե հայերեն արձանագիր տապանաքարեր են եղել նաև Ուկեկ կամ Ուվեկ քաղաքի մոտ (արդի Սարատովի մերձակայքում): «Այս վայրում, — գրել է նա, — եղել է շատ նուրբ քարից շինված մի բերդ, և նրան կից կար մի քաղաք... մնում են մինչև այսօր բերդի ավերակների մի մասը և որոշ թվով գերեզմաններ, որոնց մեջ թվում է թե աղնվական մարդիկ են թաղված, որովհետև գերեզմանաքարերի վրա տեսնվում են ձիու պատկեր, որի վրա նստել է մի մարդ աղևզը ձեռքին և մեջքին նետի գոտի: Գերեզմանաքարերից մեկի վրա վահանի մի կտոր կար, որի վրա տառեր էին փորված, որոնց մեկ մասը եղծված էր և մնացյալը դարձել էր պակասավոր. բայց մնացորդի ձևերից դատելով հայկական տառեր էին» (տե՛ս Լով. Զակարյան, Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932, էջ 436—437):

22 М. Фехнер. Великие Булгары, Казань, Свияжск. М., 1978, էջ 47—48. Р. М. Джанполадян. О двух тканях из Ани и Болгарах. «Краткие сообщения инст. археологии АН СССР (КСИА), вып. 132, էջ 221:

23 Կրասնայա-Պոլյանա և Կիրիսկայա գյուղերում հայտնաբերվել են հայերեն արձանագիր տապանաքարեր (տե՛ս Լ. Զանփոլադյան, նշվ. հոդվածը, էջ 219):

1431 թ. ուսաները գրավեցին և ավերեցին Բուլղար քաղաքը. ըստ երևույթին հենց այս շրջանում էլ դադարեց գոյություն ունենալուց Բուլղարի հայկական թաղամասը. ինչ վերաբերում է թաղամասի բնակչությանը, պետք չէ տարակուսել, որ նրանց մեծագույն մասը, վերաբնակվելով նույն մայրուղու վրա գտնվող այլ կենտրոններում, շարունակեց գործուն դեր կատարել Վուլգայի վրայով կատարվող միջազգային առևտրի բնագավառում:

XIII դ. 30-ական թթ. մերձվուլգյան երկրամասերը բռնագրավվում են մոնղոլների կողմից ու տեղականորեն մտնում Ռսկե Հորդայի կազմի մեջ: Հորդայի տիրակալները, դառնալով Արևելքն ու Արևմուտքը կապող տնտեսական հսկայական նշանակություն ունեցող այդ ճանապարհի տերը, անհրաժեշտ քայլեր են կատարում միջազգային ավանդական ապրանքափոխանակության վերականգնման ուղղությամբ: Նրանց տիրապետության սկզբնական շրջանում ստեղծվում ու բարգավաճում է Սարայ-Բաթու կամ Հին Սարայ քաղաքը՝ Վուլգայի գետաբերանից ոչ հեռու (արդի Աստրախանի նահանգի Սելիտերնոյն գյուղի շրջանում): Սարայ-Բաթուն, որպես Ռսկե Հորդայի մայրաքաղաք և արհեստագործության ու առևտրի խոշոր կենտրոն, գոյատևում է ընդամենը մեկ դար: Բայց այդ կարճ ժամանակամիջոցում այստեղ հայերի թիվն այնքան է աճում, որ կառուցվում են եկեղեցիներ (Սուրբ Աստվածածին և Սուրբ Նշան), հիմնադրվում է Գանձասարի կաթողիկոսությանը ենթակա արքեպիսկոպոսական թեմ²⁴, որի հոգևոր վարչության տակ էին գտնվում, անտարակույս, նաև Ռսկե Հորդայի այլ շրջաններում բնակություն հաստատած հայերը: Պահպանվել է մի Ավետարան, ընդօրինակված 1319 թ. «ի մայրաքաղաքիս Սարայ... մերձ առ ծովուն Կասպիականի»: Այդ ժամանակ Սարայում արքեպիսկոպոս էր «քաջ հովուապետ» կոչված տեր Պողոսը:

Ըստ երևույթին Հին Սարայի հայ բնակչության կազմում մեծ դեր են կատարել նաև արհեստավորները: Պեղումներից հայտնաբերվել են երկու կավե թաղարների բեկորներ, որոնց վրա պահպանվել է միևնույն վարպետի,

²⁴ Գիտենք արդեն, որ տակավին VII դ. հյուսիսային Կովկասում և Խազարների պետության այլ շրջաններում քարոզչական լայն գործունեություն էին ծավալել Հայոց Արևելից կողմանց կամ Աղվանից կաթողիկոսները: Նրանց հոգևոր ազդեցությունն աշխարհագրական այս միջավայրում հարատևել է մինչև XVIII դ. վերջերը, երբ էջմիածնի կաթողիկոսներին հաջողվել է իրենց ենթակայության տակ առնել այդ երկրամասում գտնվող հայերի հոգևոր առաջնորդությունը:

Սարայ Բաթու քաղաքում ընդօրինակված Ավետարանի գրիչ Խաչատուր քահանան, իր հիշատակարանի այն հատվածում, ուր ընդունված էր նշել, թե ի՞նչ և ո՞ր կաթողիկոսի գահակալության տարիներին են ավարտվել ընդօրինակման աշխատանքները, տարբերվելով իր ժամանակակից գրիչներից, կողք-կողքի հիշատակում է միաժամանակ հայոց երկու կաթողիկոսների. «Յամս աստուածապատիւ եւ հոգևոր տեառն Ստեփանոսի՝ Արևելեան կաթողիկոսի Հայոց, և տեառն Կոստանդեա՝ Կիլիկեցոյ կաթողիկոսի» («ԺՂ դարի... հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 155—156): Սկզբից հիշատակված «Արևելեան կաթողիկոս հայոց»-ը ոչ այլ ոք է, եթե ոչ 1261—1323 թթ. գահակալած Ստեփանոս Գ Աղվանից կաթողիկոսը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 639): Սրան «Արևելյան կաթողիկոս հայոց» անվանելով և այդ ժամանակվա Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդինից առաջ հիշատակելով, Խաչատուր քահանան անժխտելի վկայություն է բողոք այն մասին, որ Ռսկե Հորդայի հայկական գաղթավայրերը մտել են Գանձասարի թեմի մեջ և Գանձասարի կաթողիկոսները շատերի կողմից ճանաչվել են որպես «Արևելեան հայոց կաթողիկոսներ»:

նույն կնիքով դրոշմված արաբերեն հետևյալ արձանագրությունը. «Ինանիկ որդի Սարգսի»²⁵:

XIV դ. 20-ական թթ. Սարայ-Բաթուն վայրէջքի շրջան էր թեակոխել, իր տեղը զիջելով Սարայ-Բերքեին (Նոր Սարային), որը կառուցվել էր Բերքե խանի (1257—1266 թթ.) ժամանակ՝ հաճելի կլիմայով ու բարեբերությամբ հռչակված Վուզա-Ախտուրինյան հովտամասում (Վուզոգրադից ոչ հեռու): Ուզբեկ խանի ժամանակ Սարայ-Բերքեն դարձավ Ոսկե Հորդայի մայրաքաղաքը: Տնտեսական ու վարչական կենտրոնների այս փոփոխության համար, անշուշտ, կային հիմնավոր պատճառներ: Մոնղոլական երկու աշխարհածավալ պետությունների՝ Իլխանության և Ոսկե Հորդայի ստեղծման հենց առաջին տարիներից, քաղաքական ու տնտեսական անհաշտելի հակադրությունների դուռ բացվեց նրանց միջև: Ոսկե Հորդայի տիրակալները ձգտում էին իրենց ազդեցության ոլորտի մեջ պահել Կասպից ծովով և ծովափնյա շրջաններով դեպի հյուսիս՝ Մոսկվա ու Նովգորոդ (ապա հյուսիսային Սվրոպա) և Ղրիմի վրայով դեպի միջին և հարավային եվրոպական երկրներ տանող առևտրական բանուկ ճանապարհները: Իսկ իլխանները, վճռականորեն հակադրվելով նրանց, փորձում էին խցել այդ ուղիները, իրենց երկրում արտադրվող և հեռավոր արևելյան երկրներից ստացվող ապրանքների առաքումը դեպի Սվրոպա իրականացնելու համար Սև և Միջերկրական ծովերի, մասնավորապես Տրապիզոնի և Կիլիկյան հայկական թագավորության Այաս նավահանգստի վրայով²⁶:

Իլխանների այդ քաղաքականությունը ժամանակավորապես պակասեց հաջողությամբ: Ոսկե Հորդան, իհարկե, չէր կարող հայեցողի դերով բավարարվել: Եվ XIII դ. 60-ական թթ. սկսած մինչև իլխանության քայքայման շրջանը, մոնղոլական երկու այդ պետությունների միջև տեղի ունեցան արյունահեղ պատերազմներ (1262—63, 1265, 1288, 1290, 1318—19, 1324—25, 1335—36 թթ.), որոնց հետևանքով ծայր աստիճանի ավերվեցին Դերբենդի ու Շիրվանի երկրամասերը, ժողովուրդը լրեց իր հայրենի բնակավայրերը, երկիրն ամայացավ²⁷: Սարայ-Բաթուի կամ Հին Սարայի տնտեսական հետադիմությունն ու անկումը, առաջին հերթին, անխղելիորեն կապված էր պատմական այս անցուդարձերի հետ:

25 ՏԵ՝ Մ. Գ. Крамаровский. Гончар-армянин из Сарая ал-Джедид. «Труды Гос. Эрмитажа», XIX, II., 1978, էջ 102—105: Կնքադրոշմի առաջին անվան վերձանությունը դժվարությունների առջև է կանգնեցրել հոգվածագրին. նա առաջարկել է Անանդ, Անանալ, Ինանալ, Անանկ, Ինանակ ընթերցումները, ավելի հավանական համարելով «Անանդ»-ը: Մեր կարծիքով բրուտագործ-վարպետի իրական անունը եղել է Ինանիկ՝ XIV դ. Հայաստանում գործածվող մի անուն (ինչպես հայանի է, այդպես էին կոչում Բուրթեյ Օրբելյանի որդի Իվանեին): Զի բացառված նաև «Անանիկ»-ը՝ Անանիա անվան փաղաքչական ձևը:

26 Առկանովելու համար կենսական նշանակություն ունեցող այս մայրուղիները, առաջին իլխանները սիրաշահում էին հայ և ասորի վաճառականներին, արտոնություններ շնորհում նրանց, նույնիսկ զորավիգ կանգնում հայկական որոշ իլխանությունների (նկատի ունենք հատկապես Երզնկայի, Համշենի և Մակվի իլխանությունները), հաշվի առնելով դրանց գրաված հանդուցային դիրքը միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների վրա:

27 А. А. Али-заде. Борьба Золотой орды и государства ильханов. «Сборник по истории Азербайджана», вып. I, Баку, 1949, էջ 57—94: Արժեքավոր այս հոգվածի հեղինակի կարծիքով Ոսկե Հորդայի տիրակալների պայքարի նպատակն էր գրավել Ադրբեջանն ու իշխել այդ երկրով անցնող ճանապարհներին: Սակայն թվում է, թե նրանց մտահոգության հիմ-

Ի՞նչ եղավ Սարայ-Բաթուի հայ բնակչությունը: Մի մասը, անտարակույս, փոխադրվեց Ղրիմ՝ նոր շունչ հաղորդելով այդ թերակղզու հայկական հին գաղթօջախներին: Հավանաբար զգալի թիվ են կազմել նաև այն հայերը, որոնք խարխախ նետեցին Հին Սարայից ոչ հեռու կյանք առած ու հետագայում միջազգային նշանակություն ստացած Աստրախան քաղաքում: Սարայի հայերի երրորդ զանգվածը, պետք է ենթադրել, որ բնակություն է հաստատել Ոսկե Հորդայի նոր մայրաքաղաքում՝ Սարայ-Բերքեում, որը, ինչպես ասվեց, 1330-ական թթ. դարձավ հսկայածավալ մոնղոլական հյուսիսային կայսրության վաճառաշահ կենտրոնը:

1333 թ. Սարայ այցելած հոշակավոր արաբ ճանապարհորդ իբն-Բատուտան, ողջ աշխարհը ոտնատակ արած մի անձնավորություն, հիացումով է խոսել այդ քաղաքի մասին. «Սարայ քաղաքը, — գրել է նա, — կառուցված հարթ տարածության վրա և վիթխարի շափեր ընդունած՝ մեկն է գեղեցկագույն քաղաքներից. այն լի է մարդկանցով, ունի գեղեցիկ շուկաներ ու լայն փողոցներ... այնտեղ բնակվում են տարբեր ժողովուրդներ... ամեն մի ժողովուրդ ապրում է առանձին՝ իր թաղամասում, որտեղ և գտնվում է նրա շուկան»²⁸:

Այս և արաբ այլ հեղինակների տվյալներով Սարայում բնակվել և առևտրով ու արհեստներով են զբաղվել Կովկասից, Պարսկաստանից, արաբական տարբեր երկրներից (Սիրիա, Իրաք, Եգիպտոս), Ռուսաստանից, Հունաստանից, Իտալիայից ներգաղթածներ: Ինչպես տեսնում ենք, նրանց շարքերում հայերը հանվանն չին հիշատակված, սակայն կարելի է առանց դուշըն ինչ կասկածի հավաստել, որ տնտեսական դերով ու բազմամարդության մեջ այստեղ ևս հայերն առաջավոր տեղ են գրավել: Այդ են վկայում, օրինակ, նոր Սարայում հայտնաբերված և Սարգիս անունով հայ վարպետի ստորագրությունը կրող անոթներն²⁹ ու հայերեն արձանագրություններով տապանաքարերը: Նկատված է նաև, որ տեղական ջնարակված թասերից շատերը խիստ նման են Հայաստանում արտադրված ամաններին³⁰:

Սարայ-Բերքե քաղաքի հայկական համայնքը 1370-ական թթ. եղել է կազմակերպված գաղութ, ունեցել է իր եկեղեցին. հավանաբար այստեղ՝ թեմական առաջնորդի հանգամանքով, նստել է հայ եպիսկոպոս, որը Սեի կաթողիկոսների կողմից դիտվել է որպես «Ամենայն Հոսաց և Աւախաց» կոչվող և կոչվում հաստատված արքեպիսկոպոսի ենթակայության տակ գտնվող եկեղեցական պաշտոնյաներից մեկը: Պետք է ենթադրել, սակայն, որ Սարայի և մերձվոլգյան երկրամասերի հայկական մյուս համայնքները առաջվա պես ենթարկվել են Գանձասարի հայ կաթողիկոսներին, որոնք դարեր շարունակ իրենց ազդեցության ոլորտի մեջ են պահել Կովկասից հյուսիս գտնվող հայ-

նական առարկան Կասպ-Վոլգյան ճանապարհի միջազգային դերի պահպանումն էր: Պետության եկամուտների մեջ հսկայական տեղ էին գրավում այդ ճանապարհով ներմուծվող ու արտահանվող ապրանքներից գանձվող մաքսատուրքերը:

28 В. П. Тизенгаузен, *նշվ. աշխ.*, I, էջ 306:

29 А. Якубовский. Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой в X—XV вв. «Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР», Ленинград, 1933.

30 Т. А. Измайлова. Керамика из раскопок Амберда. «Труды отдела Востока Гос. Эрмитажа», т. IV, Л., 1947, էջ 188: Բարկեն Ասաբեյան, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հատ. 2, Երևան, 1964, էջ 39—40:

կազմի գաղթօջախները: Սաի կաթողիկոսները, բնականաբար, եռանդուն քայլեր էին կատարում իրենց ազդեցությունն այս երկրամասերի հայկական համայնքների վրա տարածելու և ամրապնդելու ուղղությամբ, այնտեղ առաքելով բարձրաստիճան նվիրակներ: Պահպանվել է կաթողիկոսական անթվակիր մի կոնդակ, շարադրված Ռսկե Հորդաչի Ջանիբեկ խանի իշխանության տարիներին (1342—1357 թթ.), հավանաբար Մխիթար Գոնեբցի կաթողիկոսի կողմից: Կոնդակը տվյալներ է պարունակում Ռսկե Հորդաչի տարածքով մեկ սփռված հայ զանգվածների, նրանց բնակության կենտրոնների և ունեցած եկեղեցիների մասին: Հասցեագրված է Ղրիմ (Սուլխաթ), Ազախ (Ազով, Տանա), Սարայ քաղաքների հայկական համայնքների բնակչությանը և բոլոր նրանց, ովքեր ցրված են «շուրջ դրոշմը էթիլ գետով, և որք զՋահուն գետով, դոր Ամոյն կոչեն ակումբ առեալ և ընդարձակ տարածեալ, այսինքն մինչև ի ծովն Կասբից»³¹: Այս ուշադրավ վկայությամբ ոչ միայն ընդարձակվում են մեր գիտելիքները Վոլգա գետով և Ազովի ու Սև ծովերի վրայով կատարվող միջազգային առևտրի բնագավառում հայ վաճառականների կատարած դերի մասին, այլև հնարավորություններ են ստեղծվում հանգելու այն եզրակացության, որ նրանք շատ ավելի լայն շափերով, քան ենթադրվում է առ այսօր՝ իրենց գործունեության շրջանակների մեջ են առել նաև Միջին Ասիայի երկրամասերը: Այս փաստերի լույսի տակ ավելի կարևոր նշանակություն են ստանում Բալխաշ լճի ավազանում հայտնաբերված Հովհան Հայոց եպիսկոպոսի տապանաքարը (1323 թ.) և Իսսիկ-կուլ լճից հարավ Սուրբ Մատթեոսի անունով հայկական վանքի գոյության մասին 1375 թ. եվրոպական մի քարտեզի տվյալը³²:

Միջին Ասիայից դեպի հեռավոր Հնդկաստան ու Չինաստան ձգվող ճանապարհներին հայ վաճառականների քաջածանոթության մասին վստահելի տրվյալներ կան նաև հայ միջնադարյան գեղարվեստական գրականության էջերում: XVI դ. նշանավոր բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին, իր «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն» ստեղծագործության մեջ, տեղեկություններ է գրանցել Մխիթար Բաղիշեցի անունով մի հայ վաճառականի մասին, որ հեռագնաց ճանապարհորդությամբ, անցնելով Ատրպատական, Ղում, Իրաղ, Խորասան՝ հասել է Միջին Ասիա (Սամարղանդ և Բուխարա), այնտեղից անցել Հնդկաստան և «հռչակավոր քաղաքն Խաթայ» («մերձ սահմանացն Չինումաչինայ»): Ավարտելով իր առևտրական գործերը, նա հայրենիք է վերադարձել ընտրելով մի այլ ուղի: Միջին Ասիայից անցել է Կասպից ծովի հյուսիսային շրջանները, ապա՝ հյուսիսային Կովկաս և՛ Ալանաց աշխարհով իջել հարավ ու հասել իր հայրենի երկիրը՝ Հայաստան³³:

1380 թ. Կուլիկովյան ճակատամարտում Ռսկե Հորդաչի կրած պարտությունից հետո սկսվում է բռնությամբ ստեղծված արհեստական այդ պետական կազմակերպության մայրամուտը: 1395 թ. Ռսկե Հորդան ծանր հարված

³¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9622, էջ 671:

³² Н. Я. Марр. Надгробный камень из Семиречья с армяно-сирийской надписью 1323 г. ЗВОАО. т. VIII, էջ 344—349; В. В. Бартольд. Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, էջ 45; Լ. Խաչիկյան, Հայ պատմագրության անհայտ էջերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 243—244:

³³ Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, բնական բնագիր և ծանոթագրություններ Մալխա Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 121—123:

է կրում և նկ Քեմուրից: Քեմուրյանները գրավում և ավերում են Սարայ-Բերքեն, Աստրախանը, որոնցից առաջինը այլևս բնավ չի վերականգնվում որպես խոշոր քաղաք, իսկ երկրորդը շունչ է առնում տասնամյակներ հետո: Զգալի չափով տուժում են նաև Ղրիմի քաղաքները: Մեծ հարված է հասցվում միջազգային նշանակություն ունեցող կարավանային առևտրին: Շուտով ավելի են սրվում բոլորակալ տարբեր խմբավորումների հակամարտությունները, և իշխանության համար մղվող պատերազմները տարեցտարի ավելի արյունահեղ են դառնում: Ոսկե Հորդայից անջատվում և առանձին խանություն է դառնում Ղազանի խանությունը (1445 թ.): Քիչ հետո՝ 1449 թ., հիմնադրվում է Ղրիմի ինքնուրույն խանությունը, իսկ 1450—64 թթ. միջոցին՝ Աստրախանի խանությունը: Այսպիսով, Ոսկե Հորդան, զրկված բարերեր, զարգացած և նստակյաց բնակչություն ունեցող հիմնական շրջաններից, իր հոգեվարքն է ապրում, այլևս կարևոր դեր չկատարելով միջազգային տարանցիկ առևտրի բնագավառում³⁴:

Վոլգայի ցամաքային ու դետային ճանապարհները, ինչպես նաև Ղրիմից դեպի Միջին Ասիա ձգվող կարավանային մայրուղին (որ հատում էր Վոլգան Սարայ-Բերքի քաղաքի մոտակայքում), ամբողջապես ընկնում է Ղազանի խանի տիրապետության տակ:

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական նոր այս պայմաններում մերձվողյան հայկական գաղթօջախների բնակչությունն արագորեն հաղթահարում է ստեղծված դժվարությունները և շարունակում կատարել փորձված վաճառականի և հմուտ արհեստավորի իր դերը Ղազանի խանության նշանավոր քաղաքներում՝ Բուլղարում, Սուլարում և, հատկապես, խանության տնտեսական կենտրոնում՝ Ղազան մայրաքաղաքում: Ամեն տարի մայիսի վերջերին քաղաքի մերձակայքում գտնվող «Վաճառականների կղզում» (Гостинный остров) կազմակերպվում էր միջազգային նշանակություն ունեցող մեծ տոնավաճառ, որին մասնակցում էին Ռուսաստանից և արևելյան երկրներից ժամանած քաղամաթիվ վաճառականներ³⁵: Ղազանի դերը, որպես Ռուսաստանի և արևելյան երկրների առևտրի կարևոր հանգուցակետ, հատկապես մեծանում է XV դ. կեսերին, երբ Ստորին Վոլգայի տափաստաններով անցնող ճանապարհները խափանվել էին և դեռևս չէին կարգավորվել Թուրքիայի հետ տնտեսական կապերը³⁶: Հենց այս ժամանակ քաղաքի մերձակայքում կազմակերպվել է հայկական կայուն գաղթօջախ, որի աղոտ հիշատակները հասել են մեզ՝ «Արմյանսկայա» կոչվող դուչգ փողոցների անուններով³⁷:

Ղազանի հայերն ունեցել են իրենց եկեղեցին և գերեզմանատունը, որից պահպանվել է միայն 4 սող արձանագրությամբ մի տապանաքար³⁸:

³⁴ Б. Д. Греков, А. Ю. Якубовский. Золотая орда и ее падение, М.—Л., 1950, էջ 407—416:

³⁵ Այդ տոնավաճառի մասին «Ղազանյան տարեգրքի» մեջ գրված է. «На тот же день съезжались в Казань изо всея Руския земля богаты купцы и многия иноземцы дальния и торговаху с Русью великими драгими товары.» «Полное собрание русских летописей», (այսուհետև ПСРЛ) т. XIX, էջ 23:

³⁶ «Очерки истории СССР», т. II, М., 1953, էջ 432:

³⁷ Նույն տեղում, էջ 432: նաև՝ Б. М. Мюллер. Об армянских надписях в Болгарах и Казани. ИРАИМК, 4տ. IV, էջ 69:

³⁸ Հս. Ջանիդուղյան, նշվ. աշխ., էջ 221: Հայերեն արձանագրությամբ տապանաքարերի

Պետք է ենթադրել, որ Ղազանցի հայերի մեծամասնությունը աշխատում էր առևտրի ոլորտում, սակայն նրանց մեջ, անշուշտ, եղել են նաև հմուտ արհեստավորներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ: «Ղազանյան տարեգրքի» մեջ պահպանված է հետաքրքրական մի վկայություն՝ Ղազանի խանի բանակում ծառայող հայ թնդանոթաձիգների մասին: Երբ 1552 թ. ռուսական ցար Իվան Ահեղի զորքերը պաշարել էին Ղազանը, հայ թնդանոթաձիգները ըստ Էրևույթին հրաժարվել են կռվել ռուսների դեմ. թաթարները հայերին շղթայել են թնդանոթներին, և մերկ սրերով նրանց գլխավերև կանգնած՝ հարկադրել կրակ բացել ռուսների վրա: Հայերը, սակայն մահվան վտանգն իսկ արհամարհելով, այնպես են արձակել արկերը, որ ռուսական զորքերին որևէ վնաս չհասնի: Այդ կապակցությամբ տարեգիրը վկայում է. «Лестно и худо бияху и не улучаху, аки неумеючи, и ядра через все перепущаху или не допущаху, едва кого убиваху»³⁹.

Թաթարները, միաժամանակ, բանտարկել և խիստ հսկողության տակ էին պահում հինգ հազար օտարերկրյա վաճառականների, «բուխարացիների, և շամախեցիների, և թուրքերի, և հայերի, և ուրիշների» («...Бухар, и Шемахей, и Турчан, и Армян, и инех»), — անշուշտ տեղյակ լինելով նրանցից շատերի ռուսասիրության մասին⁴⁰: Այս թվարկման մեջ, չնայած հատուկ տեղ է հատկացված հայերին, բայց պետք է ենթադրել, որ հայազգի են եղել նաև շամախեցի և նույնիսկ «թուրքիացի» (Турчан) կոչվածներից ոմանք:

Իվան Ահեղի այս պատերազմով ոչ միայն Ղազանի խանությունն անցավ ռուսական տիրապետության տակ, այլև նախապատրաստվեց Աստրախանի նվաճումը (1556 թ.): Նույն այս տարիներին ռուսական գերիշխանությունը ճանաչեցին նաև Սիրիբի խաները և Նողայի իշխանները: Վոլգյան մայրուղին, այսպիսով, մեկ ծայրից մյուսը, իր ամբողջությամբ՝ անցավ ռուսական տիրապետության տակ, Վոլգյան մեկընդմիջտ դարձավ ռուսական գետ՝ «Матушка Волга»:

Ղազանի հայկական գաղթօջախի մասին որոշ փաստեր կան նաև միջնադարյան հայկական աղբյուրներում: Գիտենք, օրինակ, որ այդ քաղաքում ևս ապրել են զրասեր հայեր, որոնց պատվերով ընդօրինակվել ու բազմացվել են հայերեն ձեռագիր մատյաններ: Այսպես, XVII դ. 40-ական թթ. այստեղ աշխատել է Վասիլ անունով մի գրիչ, որը խոշա Ավետիսի պատվերով ընդօրինակել է երկու Ավետարան⁴¹:

Ղազանի խանության վերացումից հետո Ռուսաստանի ներքին և արտաքին առևտրի համար անհամեմատ մեծ նշանակություն ստացավ ռուսական հնամենի քաղաք Նիժնի-Նովգորոդը: Այն հիմնադրվել էր 1221 թ. և, արագ զար-

աակայությունը, նույնիսկ այն դեպքում, երբ հարձակվել են միայն մեկ-երկու նմուշ կամ թերի բնկոտներ, երբեմնի շին գաղթօջախի գոյության խոստով փաստ պետք է համարել:

³⁹ ПСРЛ, т. XIX, էջ 130: К. Н. Григорьян. Из истории русско-армянских культурных связей X—XVII веков. «Труды отдела древнерусской литературы», IX, М.—Л., 1953, էջ 334:

⁴⁰ М. В. Фехнер. Торговля русского государства со странами Востока в XVI веке, М., 1952, էջ 56:

⁴¹ Մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 3004 ձեռագիրն է, ընդօրինակված 1642 թ., մյուս ձեռագիրը պահվում է Ղազանի համալսարանում:

գանալով, դարձել ուսղմական նշանակություն ունեցող կարևորագույն հենակետ՝ ընդդեմ նախ Վոլգյան բուլղարների, ապա՝ Ղազանի Թաթարների: Այստեղ էին խաչաձևվում Ռուսաստանից դեպի Արևելք տանող հիմնական ճանապարհները: 1350 թ. Նիժնի-Նովգորոդը դարձավ Մուզղալյան-Նիժնեգորոդյան միացյալ իշխանության մայրաքաղաքը. իսկ XIV դ. վերջերին Մոսկվայի մեծ իշխան Վասիլի I-ը իր տիրապետությունը տարածեց հին Ռուսիայի արևելյան այս շրջանների վրա, և Նիժնի-Նովգորոդը՝ բարգավաճելով, դարձավ օրավուր հզորացող Մոսկովյան իշխանության կարևորագույն տնտեսական կենտրոններից մեկը: 1525 թ., ի հակադրություն Ղազանի, Մոսկվայի մեծ իշխան Վասիլի III-ը, Նիժնի-Նովգորոդի մոտակայքում հիմնադրեց Մակարևյան նշանավոր տոնավաճառը: Իսկ Ղազանի անկումից հետո, Նիժնի-Նովգորոդը ավելի ընդարձակելով տնտեսական իր կապերը, դառնում է Ռուսաստանի առևտրական կենտրոնը՝ հսկայական դեր կատարելով համառուսական շուկայի ձևավորման գործում: Հատուկ ուսումնասիրության նյութ կարող է դառնալ Նիժնի-Նովգորոդյան առևտրի բնագավառում հայ վաճառականների կատարած դերի համակողմանի քայահայտումը: Մենք, սակայն, կբավարարվենք, հիշատակելով հետևյալ փաստը. 1368 թ. Մեծ Նովգորոդի կողմից կազմակերպվող և Վոլգյան գետուղու վրա դործող զինված ջոկատները, որ հայտնի են ուշկույնիկներ անունով⁴², հարձակում են գործել Նիժնի-Նովգորոդում գտնվող մահմեդականների ու հայերի վրա («бесерман и армен»)⁴³, ոչնչացրել նրանց նավակներն ու կողոպտել նրանց պատկանող մեծաքանակ ապրանքները («Товар их безчисленно весь пограбиша»)⁴⁴.

Նիժնի-Նովգորոդից Մոսկվա էին հասնում երկու ճանապարհով. մեկն Օկա գետով տանում էր Կոլոմնա, իսկ Կոլոմնայից՝ Մոսկվա գետով՝ Մոսկվա. մյուս ճանապարհը Վոլգայով շարունակվում էր մինչև Յարոսլավլ, ապա Մոսկվա՝ ցամաքային ճանապարհով⁴⁵:

Մենք կարող էինք այս երկու ճանապարհներից մեկն ընտրելով ուղևորվել դեպի Մոսկվա՝ այդ մեծ քաղաքում հայկական հիշատակներ որոնելու նպատակով, սակայն, դանդաղեցնելով մեր ընթացքը, փորձենք համառոտակի ծանոթանալ Մոսկվայից դեպի արևելյան երկրներ ձգվող մյուս կարևոր մայրու-

42 Մեծ Նովգորոդի բոյարների կողմից կազմակերպվող ուշկույնիկների ավազակային այս արշավների նպատակն էր Վոլգյան մայրուղուց դուրս մղել արևելյան երկրներից ժամանող վաճառականներին, իրենց ձեռքում կենտրոնացնելու համար նաև տնտեսական փթխարի նրշանակություն ունեցող այդ ճանապարհով կատարվող առևտուրը: Ուշկույնիկների արշավանքները նվազեցին XV դարի ընթացքում և վերջ գտան 1478 թ. հետո, երբ Մոսկվայի գերիշխանությունը տարածվեց Մեծ Նովգորոդի վրա:

43 Ակադ. Մ. Տիխոմիրովը նշել է, որ հաճախ «бесерман» էին կոչվում մուսուլմանական երկրներից ժամանած բոլոր վաճառականները, անկախ դավանանքից և ազգային պատկանելիությունից (М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV—XV вв., М., 1957, էջ 131—132):

44 ПСРЛ, т. XVIII, էջ 104:

45 Н. Костомаров. Очерк торговли московского государства в XVI и XVII столетиях, СПб., 1862, էջ 100—101:

դուն, որի տնտեսական նշանակությունը փոքր-ինչ գերազնահատված է որոշ ուսումնասիրողների կողմից:

Պիմեն մետրոպոլիտի՝ Մոսկվայից Կոստանդնուպոլիս կատարած ճամփորդության ուղեգրությունը (շարադրված XIV դ. 90-ական թթ.)⁴⁶ հնարավորություն է բնձնում ճշգրիտ հետևելու Մոսկվա—Օկա—Դոն—Ազախ—Ղրիմ—Փոքր Ասիա գետային-ցամաքային-ծովային ճանապարհի ուղեգծին⁴⁷:

Ուսումնասիրելով այդ մայրուղու ընթացքը և սլարդելով դրան առնչվող և գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մեծանուն գիտնական Մ. Ն. Տիխոմիրովը հակված էր կարծելու, թե մոնղոլական արշավանքներից հետո, մինչև XIV դ. կեսերը, այս ճանապարհը շատ ավելի բանուկ է եղել, քան Մոսկվայից դեպի Սև ծով տանող Դնեպրյան կամ Վոլգա-Դոնյան ճանապարհը: Թվում է, թե այս եզրակացությունը կարոտ է ավելի համոզիչ փաստարկների: Միջազգային ապրանքափոխանակության համար Դոնը, անտարակույս, այս շրջանում կարևոր դեր կատարում էր, սակայն, հիմնականում իր ստորին հոսանքով, սերտորեն շաղկապված լինելով Վոլգայի հետ: Դոնի գետաբերանում գտնվող Ազով քաղաքը, որ եվրոպական աղբյուրներում հայտնի է Տանա անունով, իսկ հայերի կողմից կոչվել է Ազախ, կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն որպես միջազգային համբավ ձեռք բերած նավահանգստային քաղաք, այլև որպես ցամաքային ճանապարհների հանգուցակետ: Ազովից էր սկսում հյուսիսային Կովկասով դեպի Վոլգայի գետաբերանը՝ Սարայ-Բաթու և Աստրախան, այստեղից էլ դեպի Միջին Ասիա, այնուհետև դեպի Չինաստան ձգվող այն ճանապարհը, որն այնքան հանգամանորեն նկարագրված է Ֆլորենտացի վաճառական Ֆ. Բ. Պեգոլոտտիի կողմից՝ XIV դ. սկզբներին⁴⁸:

Ղրիմի արևելյան ծովափում հաստատված և Կաֆայի տիրը դարձած շենովացիները մեծ ջանքեր թափեցին Ազովը ևս իրենց հենակետը դարձնելու համար, և այդ նրանց հաջողվեց 1316—1332 թթ.: Սակայն քիչ անց շենովացիների մրցակից վենետիկցիները, անշուշտ, նյութական մեծ միջոցներ վատնելով, կարողացան Ոսկե Հորդայի տիրակալ Ուզբեկ խանից հրովարտակ ստանալ Ազովում մշտական ներկայացուցիչ ունենալու և այդտեղ անարգել ու անմարս առևտուր անելու համար: Ազովը փաստորեն դարձավ վենետիկցիների միջնաբերդը: Նրա տնտեսական նշանակությունը շատ մեծ էր. երբ 1343 թ. մոնղոլները ներխուժելով՝ ավերածություններ գործեցին այստեղ, և Զանյրեկ

⁴⁶ «Хождение Пими́на в Царьград» (ПСРЛ, т. XI, էջ 95 և հտ.),

⁴⁷ Մոսկվա և Օկա գետերով նավարկելով և անցնելով Կոստանա, Պերեյասլավ (Ռյազան) քաղաքներով, ուղևորները դուրս էին գալիս ցամաք և շարժվում դեպի Դոնի ափամասերը: Դուրսի քաղաքի մոտ կրկին նավակներ էին վերցնում և նավարկելով դեպի հարավ հասնում Դոնի գետաբերանի մոտ կառուցված Ազով (Տանա) քաղաքը: Մոսկվայից Ազով ճանապարհը տևում էր շուրջ 40 օր: Ազովից նավարկելով՝ 5 օրում հասնում էին Կաֆա, այստեղից էլ նույնքան ժամանակում՝ Սինոպ, իսկ Սինոպից 18 օրում Կ. Պոլիս (տե՛ս Մ. Ն. Тихомиров, Пути из России в Византию в XIV—XV вв. «Византийские очерки» (Труды советских ученых к XIV конгрессу византинистов), М., 1971, էջ 4—7; նույնի Россия и Византия в XIV—XV столетиях. «Сборник Радова Византологического института», № 7, էջ 23—38:

⁴⁸ Francesco Balducci Pegolotti. La pratica della mercatura. Ed. by A. Evans. The Medieval Academy of America, Cambridge (Mass.), 1936, էջ 21:

խանը ժամանակավորապես դադարեցրեց իտալացիների հետ առևտուրը, Իտալիայում կրկնակի բարձրացան մետաքսի և արևելյան համեմունքի գները⁴⁹։

Արևելյան ապրանքները Ազովից արտահանվում էին ոչ միայն Իտալիա և հարավային Եվրոպայի ուրիշ երկրներ, այլ նաև Գերմանիա։ Նյուրնբերգցի մի վաճառական՝ Ուլման Շարումերն իր հետաքրքրական նոթերի մեջ արձանագրել է, որ իր հայրենի քաղաքը՝ Լվովի ճանապարհով արևելյան ապրանքներ է ստացել Տանա (Ազով) քաղաքից⁵⁰։

Ազովը, ինչպես նշել է Հայդը, ծովային ճանապարհով կապված էր Աղբերմանի հետ։ Աղբերման հասցված ապրանքները Գնեստրի վրայով փոխադրվում էին Լվով, իսկ այնտեղից էլ՝ կենտրոնական Եվրոպայի շրջանները։ Եվ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ բոլոր քաղաքներում (Աղբերման, Լվով և այլն) հայ վաճառականները կազմում էին բնակչության մի զգալի մասը, ապա կարելի կլինի առանց կասկածի հետևանքի, թե Ազովում ևս գոյություն է ունեցել կազմակերպված հայ գաղթօջախ։

Ազովը որպես շրային ու ցամաքային ճանապարհների հանգուցակետ, իր բացառիկ դերը պահպանեց մինչև XV դ. սկզբները՝ երբ 1418 թ. մոնղոլները գրավեցին ու ավերեցին քաղաքը. վենետիկցիները վերջնականապես դուրս մղվեցին Սև և Ազովի ծովերից⁵¹։ Դոնի նշանակությունը ավելի նվազեց նույն դարի կեսերից, երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը, իսկ այնուհետև տեր զարձան Ղրիմին ու Դոնի գետաբերանին։

Անշուշտ, իրավացի էր ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ Թուրքիայի առաջխաղացումն ու գրավումները մեծ աղետ էր համարում ոչ միայն վենետիկի ու Ջենովայի, այլև Ռուսաստանի համար, որը Կաֆայի և Ազովի անկումից հետո կորցրեց դեպի Եվրոպա բացված և իր տնտեսական զարգացման համար վճռական նշանակություն ունեցող «պատուհանը»⁵²։

Ազովի հայկական գաղութի ու նրա տնտեսական դերի մասին աննշան տեղեկություններ են պահպանվել, սակայն, կասկածի ենթակա չէ, որ այնտեղ, քաղաքի ծաղկման շրջանում, ապրել են մեծ թվով հայեր, ունենալով համայնքային իրենց մարմինները և առնվազն մեկ եկեղեցի (Գրիգոր Լուսավորչի անունով)⁵³։ 1341 թ. Տերտեր Երևանցի թափառական գրիչը այստեղ՝

49 В. Е. Сыроечковский. Гости-сурожане. М.—Л., 1935, էջ 1։

50 В. Василевский. Древняя торговля Киева с Регенсбургом. ЖМНП, 1888, июль, էջ 148։

51 Е. С. Зевакин и Н. А. Пенчко. Очерки по истории генуэзских колоний на западном Кавказе в XIII и XIV вв. «Исторические записки», 1938, № 3, էջ 76։ Г. Губ-бонс. История торговли Европы. СПб., 1901, էջ 52։

52 Մեջ ենք բերում Մ. Տիխոմիրովի խոսքերը. «Донской путь и связи с Судаком, Кафой и Константинополем в XIV веке были своего рода «окном в Европу», непосредственной связью русских земель с богатым Среднеземноморьем. Захват итальянских колоний в Крыму турками надо считать большим бедствием не только для итальянских торговых республик, в первую очередь для Венеции и Генуи, но и для России» (М. Н. Тихомиров. Средневековая Москва, էջ 131)։

53 Ասում ենք «առնվազն», նկատի ունենալով, որ 1341 թ. նախաթուն անունով մի կին, իր հանգուցյալ որդու հիշատակին մի Ավետարան է նվիրել Ազովի Ս. Գրիգոր եկեղեցուն. հիշատակարանում գրված է. «Ճառս ի սուրբ Գր[իգոր] լկաթի քաղաք՝ եկեղեցին տէր Մանուէլի» («ԹՎ գարի... հիշատակարաններ», էջ 330)։ Այստեղից կարելի է հետևանքի, որ տեր Մանուէլի եկեղեցուց բացի, թերևս, Ազովում եղել է նաև մի ուրիշ հայկական եկեղեցի։ Ուշագրավ է

«աննման Ազախում» ընդօրինակել է բովանդակալից մի ժողովածու, հիշատակարանի մեջ գրելով նաև մեզ հետաքրքրող հետևյալ տողերը. «Գրեցաւ գիրքս յաշխարհիս ամենաւրհնեալ խան Աւղայէկին և բարեհամբաւ սրգոյ իւրոյ Գինիպէկին, ի բաղաքս յԱզախս, առ դրան սուրբ Գրիգորոյ Լուսաւորչին, ի յայսիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի՝ սրգոյ Գրիգորի քահանայի Սուղտացոյ, և յաւագիրիցութեանն Սարգսի՝ սրգոյ Մանուիէլ քահանայի»⁵⁴:

1328—1365 թթ. Ղրիմում գրված ձեռագրերի մեջ բազմիցս հիշատակված է Հայաստանյայց եկեղեցու Ամենայն հյուսիսական կողմանց կոչվող թեմի առաջնորդ Ստեփանոս կաթսիկոպոսը կամ արքեպիսկոպոսը⁵⁵։ Կարծում ենք, որ այստեղ ևս նույն գործչի անունն է տրված, ուստի Ազովը Ղրիմի հայ կաթսիկոպոսի ենթակայության տակ եղող գաղթավայրերից է եղել։ Եպիսկոպոսի կողքին հիշատակված է Մանվիլի սրգի Սարգիս ավագերեցը, որպես Ազախի հայ գաղթօջախի հոգևոր առաջնորդ։ Ավագերեցի գոյությունն իսկ ենթադրել է տալիս մի քանի քահանաների առկայությունն այդ կենտրոնում, իսկ այդ հանդամանքն ինքնին Ազովի հայկական համայնքի բազմամարդության ստույգ վկայությունն է հանդիսանում։ Ըստ այդմ պետք չէ տարակուսել, որ Ազովի հայ վաճառականները գործոն դեր են կատարել վենետիկյան հասարակապետության տնտեսական խոշոր նշանակություն ունեցող այդ գաղութի կյանքում. ի թիվս այլ երկրների (Ռսկե Հորդա, Միջին Ասիա, Անդրկովկաս և այլն), նրանք սերտ կապեր պետք է հաստատած լինեին նաև կենտրոնական Ռուսաստանի բաժնետիրական իշխանությունների և, մասնավորապես, Մոսկովյան մեծ իշխանության հետ։

Որքան էլ կարևոր լինեք Ազովի դերն ու տնտեսական նշանակությունը եվրոպական երկրների առևտրական կապիտալի համար, այն չէր կարող մըրցակցել Ղրիմի նշանավոր կենտրոն, ջենովական առևտրական կապիտալի խարսխակայան Կաֆայի հետ, որը XIII—XV դդ. (մինչև Թուրքիայի կողմից նվաճվելը) Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության հիմնական կետն էր և մի շարք կողմերով առաջ էր անցել նույնիսկ եվրոպայի ու Ասիայի ոսկե կամուրջը համարվող Կոստանդնուպոլսից։

Այստեղ անհրաժեշտություն է զգացվում նշելու, որ IX դ. սկսած արևելյան առևտրի հռչակավոր ճանապարհն անցնում էր Ղրիմի վրայով, և Սև ծովը միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում հաջողությամբ մըրցում էր Միջերկրականի հետ։ Հայաստանի պատմության համար այդ բախտորոշ ժամանակաշրջան էր. դարավոր սպառաբն օտար բռնակալության դեմ պսակվեց հաջողությամբ և ժողովուրդը, թոթափելով արաբական ծանր լուծը, վերստեղծեց իր նոր պետականությունն ու տնտեսական բարգավաճման ընթացքի մեջ մտավ։ Դրան նպաստեց նաև Հայաստանի աշխարհագրական դիրքը։ Հայ վաճառականները, ամենայն հավանականությամբ հենց այդ ժամանակ, տնտեսական սերտ կապեր հաստատեցին Ղրիմի վաճառաշահ քաղաք-

նաև, որ 1339 թ. այստեղ մի ձեռագիր է ընդօրինակել Մկրտիչ քահանան (նույն տեղում, էջ 321). ըստ այդմ Ազովը եղել է հայ գաղթաշխարհի գրչության կենտրոններից մեկը։

⁵⁴ «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 328—329։

⁵⁵ Մեկ անգամ միայն, 1328 թ. մի հիշատակարանի մեջ, կոչված է «արքեպիսկոպոս... երիմի աշխարհին» («ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 208)։

ների հետ, բազմամարդ գաղթավայրեր հաստատելով նրա տարրեր մասերում: Թուրք-սելջուկների աշխարհավեր արշավանքները և հայրենի երկրի անտն-սական կյանքի հետադիմությունը, անշուշտ, ժամանակավորապես խզեցին այդ կապերը: Ղրիմի ու ողջ Սև ծովի առևտուրն ամբողջովին իրենց ձեռքն առնելու համար հրապարակ իշան իտալական երկու առևտրական հասարակապետություններ՝ Վենետիկն ու Ջենովան: Դրանց մրցակցությունը դարավոր պատմություն ուներ: Վենետիկը, տակավին 1082 թ., Բյուզանդական կայսրության սահմաններում անմաքս առևտուր անելու առանձնաշնորհումներ էր ստացել: Երբ Խաչակրաց IV արշավանքի հետևանքով 1204 թ. Բյուզանդական կայսրությունը բզկավեց և Կոստանդնուպոլիսը գրավվեց եվրոպացիների կողմից, Վենետիկը տեր դարձավ կայսրության տարածքի երեք-ութերորդ մասին⁵⁶ և փորձեց իր ձեռքում կենտրոնացնել սեծովյան ողջ առևտուրը: Այստեղ, սակայն, նա համառ դիմադրության հանդիպեց ջենովացիների կողմից, որոնք նույնպես գաղութատիրական մեծ ախորժակներ ունեին: 1169 թ. Մանվել Ա կայսեր հետ կնքած պայմանագրով, որը վերահաստատվեց Իսահակ Անգելոս կայսեր կողմից 1192 թ., ջենովացիները ստացել էին Սև ծովում առևտուր անելու բացառիկ առանձնաշնորհումներ⁵⁷: 1260 թ. Ջենովան ռազմական օգնություն ցույց տվեց Միքայել Պալեոլոգին՝ լատինների դեմ նրա մղած պայքարում: Ի տրիտուր այդ օգնության նա ստացավ Կ. Պոլսի Պերա և Գաղատա արվարձանները: 1266 թ. ջենովացիները, թուլլտվություն ստանալով Մանգու խանից, նախկինում քիչ հայտնի ծովափնյա մի բնակավայրում հիմնադրեցին իրենց առևտրական կենտրոնը՝ հետագայում մեծ հռչակ ստացած Կաֆա քաղաքը⁵⁸: Կան հիմքեր ենթադրելու, որ ջենովացիներից առաջ այդ վայրում հաստատված են եղել հայ գաղթականներ: Շուտով Կաֆան դարձավ միջազգային առևտրի կարևորագույն կենտրոն: Կաֆայեցի վաճառականները, ծովային ու ցամաքային ճանապարհներով, տնտեսական սերտ կապեր ստեղծեցին մերձավոր ու հեռավոր շատ երկրների հետ: Առանց շափազանցության կարելի է ասել, որ սկսած XIII դ. վերջերից արևելյան ապրանքների հոսքը դեպի Եվրոպա մեծ շափով կատարվում էր Կաֆայի վրայով, և միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում Սև ծովը հաջողությամբ մրցում էր Միջերկրականի հետ⁵⁹: Բացառիկ նշանակություն ուներ Կաֆան Ռուսաստանի և, մասնավորապես, Մոսկովյան մեծ իշխանության համար: Ռուսական բաժնետիրական իշխանությունների մեծագույն մասը ջենովական Կաֆայում էր անմիջական շփման մեջ մտնում կենտրոնական Եվրոպայի և Միջերկրածովյան ավազանի երկրների հետ:

Անշուշտ, իրավացի է ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ գրում է. «Նովգորոդն ու Մոսկվան իրենց առևտրական ջանքերն ուղղում էին տարրեր կողմեր: Նովգորոդյան առևտուրը կողմնորոշված էր դեպի հյուսիս, իսկ մոսկով-

⁵⁶ Վենետիկի տիրապետության տակ անցան էպիրոսը, Ակարնանիան, Էտոլիան, Հոնիական կղզիները, Պելոպոնեսը, Արխիպելագի հարավային և արևմտյան կղզիները, Գարդանելի նեղուցի և Մարմարայի ծովի մի շարք քաղաքներ, Թրակիայի քաղաքներից շատերը (Ադրիանապոլիս և այլն), Կ. Պոլսի արվարձան Պերան, Կրետե կղզին և այլն (տե՛ս Вернер Зомбарт. Современный капитализм, т. I, М., էջ 311):

⁵⁷ А. Л. Яковсон, Крым в средние века, М., 1973, էջ 79 և հտ.:

⁵⁸ Е. С. Зевакин и Н. А. Панчко, Եզվ. աշխ., էջ 75:

⁵⁹ «История стран зарубежной Азии в средние века», изд. «Наука», М., 1970,

յանը՝ դեպի հարավ: Նովգորոդը ապրանք էր մատակարարում դերմանական Հանդյան քաղաքներին, իսկ մոսկովյան առևտրական գործարքների մասնակիցները՝ իտալական հասարակապետություններն էին՝ Ջենովան և Վենետիկը»⁶⁰:

1475 թ. Թուրքերը նվաճեցին Ղրիմը և հետագա տասնամյակների ընթացքում իրենց հսկողության տակ առան Սև ծովի ողջ ավազանը: Ղրիմի խանը դարձավ սուլթանի հսկողության տակ: Անցնելով Թուրքական տիրապետության տակ, ղրիմյան առևտրական մայրուղին կորցրեց իր նախկին նշանակությունը: Թուրքերը ոչ միայն Սև ծովից դուրս շարտեցին իտալացիներին, այլև ծանր հարված հասցրին Ռուսաստանի արտաքին առևտրին: Հետագայում, տասնամյակների մաքառումից հետո, կիսակործան Կաֆան սկսեց կենդանության նշաններ ցույց տալ: Կաֆայիցիների համառ ջանքերով հնարավոր եղավ մասամբ վերականգնել դարերի ընթացքում ամրապնդված անտեսական առևտրությունները՝ մեկ կողմից հյուսիսային Կովկասի, Իրանի և Թուրքիայի, մյուս կողմից՝ Ահաստանի և Ռուսաստանի հետ:

Միջնադարյան Ղրիմի տնտեսական նշանակության մասին հանրահայտ գիտելիքների համառոտ այս շարադրանքից հետո՝ անհրաժեշտություն է առաջանում թուրքիկ մի ակնարկով վերաշարադրելու ղրիմահայության պատմության մասին գիտությունը հայտնի փաստերը, բայց հնարավորի սրտը լրացումներ ու ճշգրտումներ կատարելով: Բայց մինչև այդ հարկ ենք համարում մեր վերաբերմունքը ճշգրտել ղրիմահայության պատմության կարևորագույն սկզբնաղբյուր համարված Հիշատակարանի նկատմամբ: Այն գրանցված է 1690 թ. Ղրիմում ընդօրինակված մի Հայամավուրթի մեջ⁶¹: Հայագիտական շրջաններին Հիշատակարանի բովանդակությունը հայտնի է եղել XVIII դ. վերջերից, բայց այն՝ գրեթե ամբողջությամբ, գիտական շրջանառության մեջ է դրվել Մ. Բժշկյանի կողմից՝ 1830 թ.⁶²:

Այդ Հիշատակարանի հիմնական աղբյուրը՝ XVII դ. անվանի բանաստեղծ ու եկեղեցական գործիչ Մարտիրոս Ղրիմեցու շափածո Պատմությունն է, որ հենց հեղինակի ուղղակի վկայությամբ՝ հորինված է բանավոր գրույցների հիման վրա.

Քանզի պատմագրաց շունիմք նախնական
Գրեալ վասն նորին պարզ և յայտնի բան,

60 М. Н. Тихомиров. Средневековая Москва... էջ 136:

61 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7442, էջ 280ա—283ա:

62 Տե՛ս Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Ահաստան եւ այլ կողմանս բնակեալս ի հայազանց, սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանդերձ դանազան բանասիրական տեղեկութեամբք, Վենետիկ, 1830, էջ 335—342: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ իր աշխատության խորագիրը Մ. Բժշկյանը կաղմել է հավատ ընծայելով Հիշատակարանի այն վկայությանը, որի համաձայն Ղրիմի, Ահաստանի և շատ այլ երկրների հայկական գաղթօջախների բնակչությունը սերունդն է հանդիսանում Անի մայրաքաղաքից արտագաղթած հայերի: Բնականաբար, բոլորովին այլ հարցերի նվիրված այս ուսումնասիրության մեջ, մենք անկարող ենք հանգամանորեն անդրադառնալ այդ գրվածքի բոլոր մասերին: Մեզ համար կարևոր է պարզել, թե որոնք են նրա աղբյուրները և թե որչափ են նրանք արժանահավատ: Հիշատակարանի ամբողջական հրատարակությունն իրականացրել է Գյուտ Աղանյանցը. տե՛ս «Դիվան Հայոց պատմության», գիրք Թ, Թիֆլիս, 1911, սյուն. 489—496:

Այլ անդիր գրուցաց՝ յարմար և սլատկան
Առեալ՝ կամիմ լինել նորա պատմարան⁶³։

Մարտիրոս Ղրիմեցին «անդիր գրուցներին» հետամուտ է եղել XVII դ. երկրորդ հիսնամյակում (հավանաբար 70-ական թթ.), այսինքն՝ պատմական մի ժամանակաշրջանում, երբ Ղրիմի հայկական գաղթօջախները բոլորել էին իրենց պատմական գոյությունն առնվազն շորրորդ շրջափուլը⁶⁴։

Տնտեսական ու քաղաքական բազմապիսի ազդակների (աշխարհավեր պատերազմներ, ծանր հարկապահանջություն, միջադաշինն ապրանքափոխանակության ուղիների փոփոխություն և այլն) հետևանքով, ինչպես Ղրիմում, այնպես էլ այլ երկրներում հաստատված հայկական գաղթավայրերը ոչ միայն ապրում էին տնտեսական աշխուժացման և փլուզման միմյանց հաջորդող շրջաններ, այլև փոխում էին իրենց բնակչության կազմը. գաղթօջախների հին բնակիչները (մանավանդ տնտեսական մեծ կարողություն ունեցող վաճառականները) տնտեսական գործունեության ավելի բարենպաստ պայմաններ գտնելու հույսով, զանգվածաբար արտագաղթում էին այլ երկրներ։ Ղրիմի հայկական գաղութն այսպիսով, ինչպես վկայում են շատ ազբյուրներ, շարունակաբար զրկվել է իր նախկին բնակիչներից, որոնք արտագաղթել են այլ երկրներ, ստեղծելով հայկական նոր գաղթօջախներ (Լվով, Կամեննեց-Պոդոլսկ և այլն)։ Հին բնակիչների տեղը, հետագայում, գրավել են տնտեսական ու քաղաքական զարհուրելի պայմանների հետևանքով իրենց հայրենի տները լքած նոր գաղթականներ, որոնք ինչ-որ չափով շենացրել են Ղրիմի անշքացած հայկական բնակավայրերը, հայկական թարմ շունչ հաղորդելով նրանց։ Հասկանալի է, որ այդ փոփոխությունների հետևանքով խամրում էին պատմական հիշատակները, մոռացվում պատմական դեպքերի հաջորդական օղակներից շատերը, գունազարդվում շատ եղելություններ։ Այս բոլորից հետո գծվար չէ համոզվել այն բանում, որ XVII դ. երկրորդ կեսերին զրիմահայերի միջավայրում պատմվող «անդիր գրուցները» հավաստի շինանյութ չէին կարող լինել ստույգ պատմություն կերտելու համար։

Եվ այսպես, ձեռքի տակ շունենալով պատմական ստույգ ազբյուրներ, և հավատ քնծաչելով զրիմահայության որոշ շրջաններում տարածված դրուցներին, Մարտիրոս Ղրիմեցին հանգել է այն եզրակացության, որ զրիմահայության հիմնական զանգվածն Անի մայրաքաղաքից է արտագաղթել Ղրիմի թերակղզի ու հաստատվել Կաֆա քաղաքում 1331 թ.՝ մինչև այդ երկար

63 Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 143։

64 Ղրիմահայ գաղթօջախների պատմությունը կարելի է բաժանել չորս հիմնական շրջափուլերի. ա) Բագրատունյանց շրջան. այս շրջանում ստեղծված տնտեսական կապերը Ղրիմի թերակղզու հետ խզվում են, և հայկական գաղթօջախները խամրում են սելջուկյան արշավանքների ու տիրապետության առաջին շրջանում։ բ) Կրկին աշխուժանում են XII դ. վերջերին և XIII-ի սկզբներին, երբ պատմական Հայաստանի մի զգալի մասն ազատագրվում է սելջուկյան լծից։ գ) նոր թափ են ստանում Իլխանության շրջանում, երբ Զենոբյայի ու Վենետիկի առևտրական կապիտալի ջանքերով Ան ծովը առաջնային նշանակություն է ստանում՝ միջադաշին չափանիշներով։ դ) Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի և Կաֆայի նվաճումը ծանր հարված է հասցնում Ղրիմի առևտրական կենտրոններին։ Մի քանի տասնամյակ հետո միայն Կաֆան ուշքի է գալիս, վերականգնվում են նրա տնտեսական աշխարհատարած կապերի մի մասը, սակայն քաղաքն այլևս երբեք չի հասնում իր նախկին բարգավաճ վիճակին։

ժամանակ ապրած լինելով Վոլգայի գետաբերանի մերձակայքում գտնվող Աղսարայ կոչված քաղաքում:

Չափածո այս գրվածքը Մարտիրոս Ղրիմեցուց մեկ-երկու տասնամյակ հետո (1690 թ.), ավելի ընդարձակելով, ճոխացնելով և պատմական հիշատակարանի ձև տալով, մուծել է Հայսամավուրբի մեջ Դավիթ Ղրիմեցի անունով մի գրիչ: Նրա պատկերացումով Անի մայրաքաղաքի բնակչությունը, մոնղոլների կողմից քաղաքը գրավվելուց հետո (այդ դեպքը կատարվել է 1236 թ.), ցրվել է աշխարհով մեկ. «Ոմանք գնացին ի Ճուղայ,— գրում է նա,— ոմանք ի Վան, և այլք ի Սիս. և այլք Ախսարայ եկին, հրաման առեալ ի թաթար խանէն բնակեցան անդ ոչ քաղում ժամանակս, որ էր զայս Չեֆ (1299) թուին»:

Անիի բնակչության արտագաղթի և Ջուղայում, Վանում, Սսում կամ պատմական Հայաստանի մի այլ կենտրոնում խարխիս նետելու մասին այս հայտարարությունը չի հաստատում XIII դ. մեր արժանահավատ սկզբնաղբյուրների՝ պատմագիրների և հիշատակարանների հաղորդած տվյալներով: Չեֆ (1299) թվականը աղաղակող անախրոնիզմի արգելում է: Եվ եթե դրան ավելացնենք նաև Աղսարայ քաղաքի գտնվելու վայրի մասին Մարտիրոս Ղրիմեցու և Հիշատակարանի հեղինակի պատկերացումների իրարամերձ բովանդակությունը (ըստ Մ. Ղրիմեցու Աղսարայը գտնվել է Վոլգայի գետաբերանում, իսկ ըստ Հիշատակարանի՝ «ի մէջ Հաշտարխանու և Ղաղանու»), ապա պարզ կլինի, որ երկու հեղինակներն էլ ո՛չ բավարար գիտելիքներ են ունեցել և ո՛չ էլ վստահելի նյութ՝ զրիմահայություն քիչ թե շատ հավաստի պատմություն շարադրելու համար:

Միանգամայն անհիմն ու հեքիաթային է նաև այդ դույզ աղբյուրների պնդումն այն մասին, որ Աղսարայում հաստատված հայերը («իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք»), պայման կապելով ջենովացիների իշխանի հետ, որ բնակվում էր «ի Ծոսնկհիսարին Ծէօտոսիու» Ղրիմ են փոխադրվում ճեղքելով հսկայական այդ տարածությունը՝ Աղսարայից մինչև Կաֆա, գինված պայքար մղելով թաթարների դեմ («վառեալք գինու, պատերազմելով ընդ թաթարացն, ճեղքեալ գան ի Ղոիմ»):

Ջենովացիների և հայերի բարգավաճ վիճակը և կարևոր դերը միջազգային առևտրի մեջ XIII—XV դդ., սերտորեն առնչված էր Ռսկե Հորդայի հետ ունեցած նրանց տնտեսական կապերի հետ: Թաթարների դեմ հայերի դիմված ընդհարումը XIV դ. 30-ական թթ. բացառված է, քանի որ հայերը Կաֆայում և Ղրիմի մյուս կենտրոններում բնակություն էին հաստատում հաշվի առնելով հենց այդ կենտրոնների դերը միջազգային առևտրի մեջ, իսկ այդ առևտուրը չէր կարող բարգավաճել առանց Ռսկե Հորդայի վրայով անցնող առևտրական մայրուղիների:

Նկատի ունենալով այս և մի շարք այլ փաստեր, կարելի է եզրակացնել, որ Հիշատակարանի հիման վրա անհնարին է ճիշտ պատկերացում կազմել միջնադարյան հայկական ամենախոշոր ու նշանակալից գաղթօջախի՝ Ղրիմի հայոց պատմության հանգամանքների մասին:

Մարտիրոս Ղրիմեցու Պատմության և Հիշատակարանի մեջ շատ մեծ տեղ է հատկացված XVII դ. երկրորդ կեսերին զրիմահայ գաղութում տնտեսական դիրքով ու փարթամությամբ հռչակված մեծահարուստ ընտանիքների ծագման հարցերին: Այդ հեղինակները, նույնիսկ տարրական գիտելիքներ

շունենալով միջնադարյան Հայաստանի ֆեոդալական տների ծննդաբանության և պատմական աշխարհագրության վերաբերյալ, ազնվական ծագում են վերագրել Պատմության պատվիրատուներին, մեկ հարվածով նրանց շաղկապելով միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր իշխանական տների հետ: Զավեշտական երանգ ունեն Հիշատակարանի այն տողերը, որոնք կոչված են բացահայտելու Բագրատունիների և Պահլավունիների հետ շաղկապվել հրազոդ Աբրահամի որդի Տրդատի գերդաստանի տոհմաբանական շղթայի հին օղակները:

Հիշատակարանի հեղինակը տեղեկություն ունի, որ նրա նախնիները 1602 թ. Զալալիների խժոժությունների հետևանքով Ղրիմ են ներգաղթել Պարսից աշխարհից: Սրանց ազնվական ծագումը «հաստատելու» համար հարկ է եղել վերաբարձել ունիթոուների երգվյալ հակառակորդ Մազաբիա Ղրիմեցու հիշատակը, նրա հետ Ղրիմից դեպի Հայաստան առաքել նրա ազգականներից մեկին («պապու եղբոր որդուն»), որպեսզի սա, ինչ-որ հրաշքով, առնչվի Սյունյաց ոմն իշխան Իվանեի հետ, լինի նաև Աղթամարում և Նախիջևանում, սերունդներ ունենա, որոնցից սերված Աբրահամը կրկին վերադառնա Ղրիմ, Բագրատունի-Պահլավունի նորածիլ գերդաստանի հիմնադիրը հանդիսանալու համար⁶⁵:

Ի՞նչ բանի համար է ստեղծված այս հերթաթիվ: Այս հարցի պատասխանը դյուրությամբ գտնում ենք, երբ հաշվի ենք առնում, որ «ազնվական» այս գերդաստանի բարեհիշատակ շառավիղ Տրդատ «Պահլավունին», իր բրոշ՝ Աննայի հետ միասին կառուցել է տվել Կաֆայի Ս. Նիկողայոս եկեղեցին, հանդիսացել է միաժամանակ այն անձնավորությունը, որի պատվերով Հիշատակարանի վերջում տեղադրվել է նրա իսկ ցանկությամբ կազմված աղգաբանական ծառը, և հրահանգ է տրվել գալիք սերունդներին՝ աճեցնել ծառի ճյուղերը հետագա ժառանգների անուններով⁶⁶:

Ըստ այդմ Բագրատունի և Պահլավունի կոչվել ցանկացող Տրդատ Կաֆայեցու և նրա նախնիների հիշատակը հավերժացնելու անսքող մտահոգությամբ ստեղծված Պատմությունն ու Հիշատակարանը շին կարող համարվել արժանահավատ այնպիսի աղբյուրներ, որոնց հիման վրա կարելի լիներ շարադրել զրիմահայ գաղթօջախների ստույգ պատմությունը: Հանգելով այս եզրակացությանը, մենք բնավ էլ այն կարծիքին չենք, թե նրանց մեջ դույզն

65 Մեջ ենք բերում Հիշատակարանի այդ հատվածն ամբողջությամբ: «Տէր Մազաբիայն ընդ պապու եղբոր թոռոյն Պետրոսի ելեալ ի Ղրիմոյ գնացին ի յԱղթամարայ (այսպէս — և. ե.) առ Յօհաննէս վարդապետն, որ էր պապու եղբոր որդի տէր Մազաբիային և եղբայր Պետրոսի՝ հօրն Անանիային, որք էին որդիք Իվանայ, ի տօհմէ Պալհաւունեանց, ի գաւառէն Ռոտնայ, ի քաղաքէն Վանանդու: Զի Պետրոսըս այս ծնաւ ի Նախիջևան քաղաքի գ՛Գաւիթ, Գաւիթ գ՛Սեղրակ, Սեղրակ գ՛Մարգար. Մարգար գ՛Սակի, Սակի գ՛Աբրահամ...» և այլն (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7442, էջ 282բ): Այս տողերի հեղինակը պարզ երևում է, որ Թովմա Մեծոփեցոց և Հայսմավուրթից բացի ուրիշ «աղբյուր» չի ունեցել: Տարբեր աղբյուրներով այնտեղ պատմված առանձին դրվագներ (Մազաբիա Ղրիմեցու Հայաստան գալը, Իվանե Թրբեղյանի հետ կապված անցուղարձեբը և այլն) շաղկապելով միմյանց, նա «ստեղծել» է իրենից ակնկալվող տոհմաբանական ծառը, ճիշտ այն հիմունքներով, ինչպես դրանք ուշ միջնադարում ստեղծվում էին ամենուրեք:

66 Այս մասին դեռևս մեր դարի առաջին թվականներին հետաքրքրական ու ճիշտ դատողություններ է արել Երվանդ Շահազիզը (տե՛ս «Նոր-Նախիջևանը և նոր-Նախիջևանցիք», Թիֆլիս, 1903, էջ 26—27):

խակ շափով շկան պատմական անցուղարձերի իրական հիշատակներ: Հավատացած ենք, օրինակ, որ զրիմահայերը իրենց շաղկապել են Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի հետ ոչ միայն փառավոր անցյալով պնդելու համար, այլև հենվելով պատմական հիմք ունեցող որոշ իրողություն վրա: Անիի մեծահարուստ վաճառականներն էին առաջին հերթին (Արծնի, Կարսի և հայկական այլ քաղաքների վաճառականների հետ միասին), որ գործարար կապեր հաստատեցին Ղրիմի ծովափնյա քաղաքների հետ, նրանցից շատերում ստեղծեցին հենակետեր, պահեստներ ու մշտական կայաններ, որոնք հետագայում դարձան կենսունակ գաղթօջախներ⁶⁷:

Պատմական ենթահող է նկատվում նաև XIV դ. 30-ական թթ. Աղսարայ քաղաքից մեծ թվով հայերի դեպի Կաֆա և Ղրիմի այլ քաղաքներ կատարած գանդավածային ներգաղթի զրույցի մեջ: Մարտիրոս Ղրիմեցու կարծիքով Աղսարայը Ոսկե Հորդանյի հին մայրաքաղաք Սարայ-Բաթուն է: Իսկ ինչպես գիտենք, 1330-ական թվականներին էր հենց, որ գաղաքից գոյություն ունենալուց Սարայ-Բաթուն, նշանավոր այն քաղաքը, ուր ապրում էին մեծ բանակություններ հայեր, ունենալով իրենց եկեղեցին (գուցե՝ եկեղեցիները) և թեմական առաջնորդը: Սարայ-Բաթուի անկման և Կաֆայի ծաղկման թվականների զարմանալի համընկնումները դժվար կլինի պատահականության արդյունք համարել: Ըստ այդմ զրիմահայերի միջավայրում գոյություն ունեցող անդիր զրույցներից քաղված տվյալը 1330 (կամ 1331 կամ 1340) թվականին Աղսարայից Ղրիմ կատարված մեծ ներգաղթի մասին՝ որոշակի արժևք է ներկայացնում. ոչ այն առումով, որ զրիմահայ գաղթօջախներն ստեղծվել են հենց այդ ներգաղթի հետևանքով (ինչպես կարծել են շատերը), այլ այն լուսաբանությամբ, թե այդ տարիներին, իրոք, Ղրիմի քաղաքներում բնակություն են հաստատել վոլգայի գետաբերանից գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնք նոր շունչ են հաղորդել վաղ ժամանակներից գոյություն ունեցող զրիմահայ գաղթօջախներին:

Այսպիսով պարզ է դառնում, որ վաղուց ի վեր գիտական շրջանառության մեջ դրված Հիշատակարանը (Մարտիրոս Ղրիմեցու շափածո Պատմության հետ միասին) ուշադրության արժանի խիստ անբավարար տեղեկություններ է պարունակում ի նպաստ զրիմահայ գաղթօջախների ստեղծման ժամանակագրական հարցերի և վաղ շրջանի պատմության ուսումնասիրության: Այդ

67 Այս առիթով ընթերցողների ուշադրություն ենք հրավիրում մի փաստի վրա, որը համոզիչ համարվելով կարող է լրացուցիչ կուլան դառնալ Անիի և Ղրիմի միջև XIII դ. և նրանից առաջ գործարար տնտեսական կապերի առկայությունը հաստատելու համար: XIII դ. սկզբներին Անի քաղաքում տնտեսական բացառիկ դիրքի էին հասել Հոնենց կոշվոզ գերդաստանի անդամները, հատկապես Սմբատորենց Սուլեմայի որդի Տիգրան Հոնենցը, որը հսկայական հարստություններ էր դիզել՝ զբաղվելով առևտրական ու վաշխառուական բնորոշ գործարքներով: Նրա գործունեության մասին հետաքրքրական տեղեկություններ են գրանցված իր իսկ կողմից Անիում կառուցված եկեղեցու պատին փորագրված բնորոշ արձանագրության մեջ (տե՛ս «Գիվան հայ վիմագրության», սրբակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 63): Միջնադարյան հայկական շատ աղբյուրներում (հատկապես ձեռագրական հիշատակարանների մեջ) Ղրիմի արևելյան ծովափը կոչվում էր Հոնաց աշխարհ. հաշվի առնելով այդ իրողությունը, կարելի է հետևել, որ Հոնենց գերդաստանի անունն առնչվում է հենց Հոնաց աշխարհի հետ: Նրանք, ըստ երևույթին, տնտեսական սերտ կապեր են ունեցել առաջին հերթին Հոնաց աշխարհի (Ղրիմի) հետ, կամ էլ Անիում բնակություն են հաստատել՝ մինչ այդ ապրած լինելով Ղրիմում:

բացը վերացնելու համար այլ կարգի սկզբնաղբյուրների կարիք է զգացվում: Բարեբախտաբար, այդպիսի ստույգ աղբյուրներ՝ դիվանական փաստաթղթեր (նկատի ունենք հատկապես Զենովայի արխիվներում պահպանված նյութերը), ձեռագրական հիշատակարաններ, ժամանակագրական տվյալներ և այլն՝ գոյություն ունեն բավարար քանակությամբ, և դրանց ժողովման, դասդասման ու մասնագիտական քննարկման գծով տարվող աշխատանքները նոր են միայն լայն ծավալ ստանում:

Հայկական հիշատակների անբավ շտեմարան է հանդիսանում նաև Ղրիմի թերակղզին՝ վերգետնյա ու ստորգետնյա իր հուշարձաններով: Զեռնարկելով դրանց համակողմանի ուսումնասիրությանը, դրիմահայ գաղթօջախների պատմության հարցերը քննարկող մասնագետները կարողացել են ամբողջական պատկերն ուրվագծել եվրոպական որոշ աղբյուրներում «Մովսիսի Հայաստան» կոչված այդ թերակղզու հայկական գաղթօջախների պատմության⁶⁸:

Ստորև փորձելու ենք համառոտակի վերաշարադրել այդ պատմության հիմնական դրվագները, կատարելով որոշ ճշգրտումներ ու լրացումներ:

* * *

IX—X դդ. հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխավորությամբ տեղական և համառ սլաշքար մղելով արաբական բռնատիրության դեմ, թոթափեց օտար տիրապետության դարավոր լուծը և մտավ սոցիալ-քաղաքական ու տնտեսական բարգավաճման ընթացքի մեջ: «Շնորհիվ միջազգային առևտրի գլխավոր ճանապարհներից մեկի վրա ունեցած իր դիրքի,— դրել է ակադ. Հ. Մանանդյանը,— Բագրատունյաց Հայաստանը... դառել էր իդեալական շեղք երկիր տարանցիկ առևտրի և միջազգային հարաբերությունների համար»⁶⁹:

Հեռավոր արևելյան երկրներից ցամաքային ու ծովային ճանապարհներով Պարսկաստան ներմուծվող և այդտեղից Հայաստանի վրայով դեպի Բյուզանդիա ու եվրոպական երկրներ արտահանվող ապրանքները (հում մետաքս, մետաքս սուկեհուռ գործվածքներ, համեմունք, բուրումնավետ նյութեր, թանկագին քարեր և այլն), ինչպես նաև հենց Հայաստանի քաղաքներում (մասնավորապես Գվինում և Անիում) արտադրվող ապրանքներ (գորգեր, բրդե զգեստներ, օթոցներ, ժանյակներ, գոտիներ, մետաքսե գործվածքներ, արծաթագործության և ոսկերչության արտադրանք, բարձրորակ ներկեր

⁶⁸ Նկատի ունենք հատկապես Խ. Փորթոյանին և Վ. Միքայելյանին, որոնց արժեքավոր ուսումնասիրությունները բազմիցս վկայակոչելու ենք հաջորդ էջերում:

⁶⁹ Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, 2-ое изд., Ереван, 1954, էջ 203: Հ. Մանանդյանը վկայակոչում է Վ. Գուրկո-Կրյաժնին, որը նույնպես շեշտել է Հայաստանի բացառիկ նշանակությունն այդ շրջանում՝ «իրրև միակ տարանցիկ ճանապարհ, երկու կողմից կողմերի (իմա՝ Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայի—Լ. Խ.) առևտրական հարաբերությունների համար» (տե՛ս В. Гурко-Кряжин. Прошлое и настоящее Советской Армении. «Новый Восток», кн. 16—17, 1927, էջ 206):

և այլն)⁷⁰, Հայաստանով անցնող կարավանային ճանապարհներով⁷¹, մեծ մասամբ հենց հայ վաճառականների ջանքերով, հասցվում էին Սև ծովի հարավ-արևելյան նավահանգիստները, այնուհետև դեպի Կոստանդնուպոլիս, դեպի Գանուրի գետաբերան ու դեպի Ղրիմ:

Միջազգային առևտրի մեջ ներգրավված հայկական քաղաքների տնտեսական զարգացման ու հեռավոր երկրների հետ հաստատված կապերի մասին բավարար տեղեկություններ չեն պահպանվել: Ուշադրով են հատկապես Արիստակնս Լաստիվերցու տվյալները Անի, Կարս և Արծն «հոյակապ», «ականավոր» ու «տիզերահոշակ» քաղաքների մասին, որոնք «ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»՝ փարթամացել էին «բազում բնչեղութեամբ» և մեծ հոշակ ձեռք բերել ամբողջ աշխարհում⁷²:

Ղրիմը, անտարակույս, այն երկրամասն էր, ուր ամենից շատ էին այցելում հայ վաճառականները: Հնադիտական շատ նյութեր, որ հայտնաբերվել են Ղրիմի տարբեր վայրերում (հատկապես Խերսոնեսում), հայկական մշակույթի անվիճելի ազդեցության հետքեր են կրում՝ վկայելով հայ տարրի գոյությունն այդ երկրամասում տակավին IX—XII դդ.⁷³: Այդ իրողությունը հաստատող գրավոր աղբյուրները, սակայն, XIII դ. երկրորդ հիսնամյակից

70 Հայաստանի քաղաքներում արտադրվող ու հեռավոր երկրներ արտահանվող ապրանքների տեսակների ու բարձր որակի մասին բազմաթիվ տեղեկություններ են գրանցված արաբական (ալ-Իսթախրի, իրն-Հաուկալ, ալ-Մուկադդասի և այլն) և պարսկական (Հուզուդ ալ-Ալամ) աղբյուրներում: Դրանց մեծագույն մասը գիտական շրջանառության մեջ է դրել Ն. Լ. Կարաուլովը: Տե՛ս Н. А. Караулов. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX (Тифлис, 1901), вып. XXXI (1902), вып. XXXVIII (1903). Այս նյութերը լայնորեն օգտագործվել ու մեկնարանվել են Հ. Մանանդյանի, Բ. Առաքելյանի և այլոց աշխատություններում:

71 Այդ ճանապարհի ակունքները գտնվում էին հեռավոր արևելյան երկրներում՝ Զինաստանում, Հնդկաշինում, Հնդկաստանում, Արաբական և Աֆրիկյան երկրամասերում: Մովսիսի ճանապարհներով այդ երկրների արտադրանքը հասցվում էր Պարսից ծոցի Բասրա նավահանգիստը, իսկ այդտեղից՝ դեպի Բաղդադ ու Քավրիդ (Փ. Ի. Успенский, Морское и сухопутное движение из центральной Азии в Европу и обратно в XIII—XIV вв. «Византийский временник», т. II (XXVII), էջ 271 և հտ.):

Քավրիդից Հայաստան էր մտնում բանուկ այն ճանապարհը, որ հայկական Մարանդ քաղաքում բաժանվում էր երկու ճյուղի: Մեկ ճյուղն անցնում էր Նախճավան—Դվին—Անի գծով, ուղղություն վերցնում Կարսի և Արտանուշի վրայով դեպի Ճորոխի գետաբերանը կամ էլ Կաղզրվանի, Վաղարշակերտի, Արծնի ու Բարերդի (ինչպես նաև Կարինի ու Երզնկայի) վրայով՝ դեպի Տրապիզոն: Մյուս ուղևորից Մարանդից՝ Հերի (Խոյ) վրայով մտնում էր Վասպուրական, անցնում Վան, Բերկրի, Արճեշ քաղաքներով և Վաղարշակերտում միանում նախորդ ուղևորին: Կարևոր նշանակություն ունեւր նաև Բաղդադից սկիզբ առնող այն ճանապարհը, որ Մերզինի ուղևորով մտնում էր պատմական Հայաստանի հարավային շրջանները, անցնում հիմնականում հայ բնակչություն ունեցող Ամիդ—Խարբերդ—Մելիտինե—Սերաստիա—Նվդա—Կիա (Քոխաթ)—Ամասիա քաղաքներով և կապվում էր Սև ծովի Սամսոն և Մինոպ նավահանգիստներին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն, 3-րդ հատորի (Երևան, 1976) մեջ տեղադրված «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» շատ արժեքավոր քարտեզը):

72 Հմմտ. «Պատմություն Արիստակիսի Լաստիվերցույ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 74, 75, 83, 133 և այլն: Ուշադրով է նաև բյուզանդական պատմագիր Միրայել Ատտալիատեսի վկայությունն Արծն քաղաքի մասին, ըստ որի այնտեղ վաճառվում էին Պարսկաստանից, Հնդկաստանից և Ասիական այլ երկրներից ներմուծվող ապրանքներ (Յ. Ա. Манандян, նշվ. աշխ., էջ 215—216):

73 Ա. Ս. Яковсон, նշվ. աշխ., էջ 86—103:

են սկսում բազմանալ, կապված լինելով ջենովական արխիվներում պահպանված նյութերի հետ:

Ե՛րբ են հայերը հաստատվել Ղրիմում. այս հարցը հուզել է շատ ուսումնասիրողների: Դեռևս անցյալ դարի 80-ական թթ. Ֆ. Բրունը, քննարկելով հարցին առնչվող սկզբնաղբյուրները, հանգել է այն եզրակացության, որ այդ կատարվել է ջենովացիների ու թաթարների Ղրիմում հաստատվելուց շատ առաջ⁷⁴:

Ավելի հանգամանորեն հարցի գիտական քննությամբ զբաղվել է Խ. Փորբշևյանը: Ջենովայի սուրբ Գևորգ բանկի արխիվում պահվում են 1290, 1313 և այլ թվականներին շարադրված փաստաթղթեր, որոնց մեջ հիշատակություններ կան Կաֆայի հայոց եպիսկոպոսին պատկանող ջրմուղի մասին: 1316 թ. Կաֆայի ջենովական հյուպատոսին հասցեագրված մի գրության մեջ հրահանգված է հեռու մնալ քաղաքի այն հողամասից, որի վրա գտնվում են երեք հայկական եկեղեցիներ, երկուսը՝ գործող, մեկը՝ կիսակործան: 1281—1290 թթ. գրանցված առևտրական մի շարք պայմանագրեր անհերքելիորեն հաստատում են, որ հայերը մեծ դեր են կատարել Ղրիմի տնտեսական կյանքի տարրեր ուղղորտներում: Նրանց մեջ տարրեր առիթներով հանվանե հիշատակված են կաֆայեցի բազմաթիվ հայեր. Տրապիզոն ցորեն փոխադրելու համար նաև վարձողներ, Սիրիա դրամ փոխադրողներ, Սինոպ ապրանք առաքողներ, իրենց արհեստի արտադրանքը վաճառքի հանողներ և այլն:

Մեջ բերելով այս կարգի ծանրակշիռ այլ փաստեր ևս, Խ. Փորբշևյանը վերջնականորեն ապացուցել է, որ հայերը Ղրիմում (մասնավորապես նրա արևելյան ծովափերին) հաստատվել և կարևոր դեր են ստանձնել՝ ջենովացիներից շատ առաջ⁷⁵: 1316 թ. Կաֆայում կիսակործան հայկական եկեղեցու գոյության փաստն ինքնին զորավոր ապացույց է այդտեղ կազմակերպորեն ձևավորված հայկական գաղութի առկայության՝ այդ տարեթվից առնվազն 2—3 հարյուրամյակ առաջ (հայկական բարաշեն տաճարները շատ ավելի երկար ժամանակ էին կանգուն մնում):

Ղրիմի հայկական գաղթօջախների ժամանակագրական հարցերին անդրադարձել է նաև Վ. Միրայելյանը⁷⁶:

Ղրիմի հայկական գաղթօջախներից շատերը և հատկապես Կաֆան ու Սուրխաթը եղել են հայ գրչության ու մանրանկարչության նշանավոր կենտրոններ⁷⁷: Նրանցում քնդորինակված հայերեն ձեռագրերից շատերը պահպանվել ու հասել են մեզ՝ փառահեղ վկաները հանդիսանալով հայկական գաղթօջախների բնակչության գեղագիտական բարձր ճաշակի ու գրասիրության: Ժամանակագրական առումով դրանք շատ հին չեն. Ղրիմում ստեղծված և մեզ

74 Փ. Брун. Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 137 և հտ.:

75 Խ. Ա. Փորբշևյան, Ե՛րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 104—117: Հարկ է նշել, որ հանձինս Խ. Փորբշևյանի մենք ունեցել ենք հայ գաղթավայրերի (ղրիմահայության, շերքեզահայության, նոր-նախիջևանի հայության) պատմության հարցերի հմուտ ու խորազնին մի ուսումնասիրող, որի վաստակն ըստ արժանվույն չի գնահատվել:

76 Վ. Ա. Միրայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 41—66 ևն:

77 «Ժ՛ դարի ...հիշատակարաններ» ժողովածուի մեջ տեղ են գտել Ղրիմի տարրեր վայրերում քնդորինակված 70-ից ավելի ձեռագրերի հիշատակարաններ, դրանցից 42-ը հաստատապես շարագրված են Սուրխաթում, 20-ը՝ Կաֆայում, մյուսները այլ բնակավայրերում ու վանքերում:

հայտնի հնագույն հայերեն ձեռագիրն ընդօրինակված է 1328 թ., XIV դ. 30-ական թթ. սլահավանվել են 2, 40-ական թվականներից՝ 6 ձեռագիր: Երբ ուշադրությամբ ծանոթանում ենք դրանց հիշատակարաններին, դարձյալ հանգում ենք այն եզրակացության, որ Ղրիմում հայկական գաղթօջախներ գոյություն են ունեցել XIV դ. շատ առաջ: 1328 թ. շարադրված հիշատակարանի մեջ, օրինակ, որպես Ղրիմի հայ արքեպիսկոպոս հիշատակված է Ստեփանոսը՝ եղբայրը սարոն Տուրաչի, որ անվանված է «վերադիտող երիմին»⁷⁸: Մեկ ուրիշ հիշատակարանից տեղեկանում ենք, որ այս Ստեփանոսը որդին է Սուղդացի (Սուրոժցի) Գրիգոր քահանայի: 1320-ական թթ. արդեն եպիսկոպոս դարձած Ստեփանոսը անտարակույս ծնված սեռ է լինել դրանից առնվազն 30 տարի առաջ, ուստի XIII դ. վերջերին: Պարզ է, ուրեմն, որ այդ ժամանակ Սուղդայում (Սուրոժում) ապրել է ոմն Գրիգոր քահանա՝ հայրը սարոն Տուրաչի և Ստեփանոսի, այլ խոսքով՝ Կաֆայի և Սուրոժի հայկական գաղութների գոյությունը XIII դ. հաստատվում է նաև հայերեն հիշատակարանների տրվյալներով:

1334 թ. Կաֆայում շարադրված մի հիշատակարանի մեջ⁷⁹ թվարկված են մի քանի կաֆայացի հայեր, որոնք իրենց կարողության համեմատ նպաստել են մի ձեռագիր Հայսմավուրքի ընդօրինակության աշխատանքներին: Հատկապես նշանակալից է մանկավազ Կաղուրի հիշատակությունն այդ ձեռագրի մեջ. եթե վերհիշենք, որ մանկավազ կամ մանկավազ էին կոչվում հայկական միջնադարյան քաղաքների երիտասարդ առևտրականներին ու արհեստավորներին միավորող կազմակերպությունների՝ կտրիճվորաց եղբայրությունների ղեկավարները⁸⁰, ապա սարգ կլինի, որ 1334 թվականին արդեն հայկական Կաֆան օժտված է եղել միջնադարյան հայկական քաղաքներին բնորոշ հասարակական կազմակերպություններով, ուստի որպես համայնք կազմակերպվել է XIV դ. 20-ական թթ. շատ առաջ:

Նույն այդ ձեռագրում, որի մեջ հիշված է մանկավազ Կաղուրը, տվյալ կա նաև Կաֆայի մերձակայքում գոյություն ունեցող Գամճակ (կամ Քամճակ) հայկական վանքի մասին, որի շրջակայքում կառուցվել է Աստվածածնի անվան մի նոր եկեղեցի: Վանական հաստատության առկայությունն իր հերթին այդ գաղթավայրի հնության, բազմամարդության և նյութական բարօրության պիտի վկայություն պիտի համարել:

Նույնը կարելի է ասել նաև Սուրխաթի մասին (հին հիշատակարանների քաղաքն ավելի շատ կոչված է Սուլխաթ կամ Ղրիմ): Մեծ հավանականությամբ այստեղ՝ XIV դ. 40-ական թթ. բազմավաստակ գրիշ նատերի կողմից ընդօրինակված է մի ճաշոց գիրք՝ բազմաթիվ մանր հիշատակագրություններով: Դրանց մեջ որպես գրքի ընդօրինակության գործին նյութապես օժանդակողներ հիշված են մի քանի տասնյակ քաղաքացիներ՝ տղամարդ ու կին, որոնցից շատերը ծանուցվել են իրենց մասնագիտությունը նշող անվանումներով: Ըստ այդմ սարգ է դառնում, որ այդ քաղաքում ապրել են հետևյալ արհեստի

⁷⁸ «ԺԳ դարի... հիշատակարաններ», էջ 208:

⁷⁹ ՏԷՍ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենագրանին մխիթարանց ի վեներտիկ, Բ, 1924, էջ 511—512 (նաև «ԺԳ դարի... հիշատակարաններ», էջ 265—266): Այդ ձեռագրի գրության թվականը որոշ չէ. կարող է լինել նաև 1305-ը:

⁸⁰ Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը», «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 79—81:

տեր մարդիկ՝ կոշկակար, բազազ, ճոն, ջուլհակ, սկերիչ, ներկարար, դանկրար-դանակագործ, կտավագործ, քթանագործ, ապրեփեց, հուս (հյուան), թավկիր, դերձակ, դարբին, գինեծախ, սանրագործ, այգեպան (թվարկումն կատարում ենք բստ ձեռագրի համապատասխան գրանցումների հաջորդականության)⁸¹։ Այսպիսով, Սուրխաթի հայ գաղութում ապրել ու աշխատել են բազմապիսի արհեստների տեր անձինք, իսկ այդ կարող էր լինել գաղութի սկզբնավորումից առնվազն մի քանի տասնամյակ (եթե ոչ հարյուրամյակ) հետո։

Ղրիմահայ գաղթօջախների հնության վկայություններ են նաև վիճական բազմաթիվ այն արձանագրությունները, որոնք տակավին նախանցյալ դարի կեսերին պահպանված են եղել Կաֆայի և այլ բաղարների հայկական եկեղեցիների պատերին, կամ խաչքարերի վրա (գրանցից մի քանի տասնյակ միավորներ կաֆացիներն իրենց հետ փոխադրել են Նոր Նախիչևան և երկյուղածությամբ օգտագործել նոր եկեղեցիների կառուցման ժամանակ)։

Որոշ ուսումնասիրողներ (նկատի ունենք հատկապես Խ. Քուչուկ-Հովհաննիսյանին), բավարար գիտելիքներ շունենալով հայ վիճագրությունից, հրատարակել են հայկական մի շարք վիճական արձանագրություններ, որոնցից շատերն ամենցել են ստույգ տարեթիվ։ Եթե դրանք ճիշտ վերծանված լինեն, մենք հնարավորություն կունենայինք այսօր խոսք բացելու նաև Կաֆայի հայ բնակչության մասին տակավին XI դ., բայց ինչպես ասված է արդեն⁸², վերծանումների զգալի մասը եղել է սխալ կամ հույժ կասկածելի։ Ըստ այդմ Ղրիմահայ վիճագրական նյութերի ուսումնասիրության արդի վիճակը թույլ չի տալիս դրանք ևս օգտագործելու ժամանակագրական հարցերի պարզաբանման համար։

Ղրիմի վերը հիշատակված վաճառաշահ կենտրոններում, ինչպես նաև այլ բաղարներում (Խերսոնես, Մանգոսպ և այլն) XIII դ. առաջ հայ բնակչության առկայության մասին պատմագիտական գրականության մեջ արդեն հավաքված բոլոր տվյալների թվարկումով՝ մենք շատ պիտի հեռանայինք առաջադրված նպատակից։ Ժամանակագրական հարցերից ավելի կարևոր նշանակություն ունեն Ղրիմի նշանավոր տնտեսական կենտրոններում (հատկապես Կաֆայում) հայերի կատարած դերի, բնակչության թվական կազմում նրանց գրաված տեղի ճշգրտման հետ առնչվող հարցերը։

Բարերախտարար հարցերի այս փունջը լուսաբանող շատ փաստաթղթեր արդեն դրված են գիտական շրջանառության մեջ։ Կարևոր նշանակություն ունի այս առումով ջենովական հյուպատոսին առնթքեր գործող խորհրդի 1455 թ. մի արձանագրությունը, որի մեջ ուղղակի ասված է, որ Ղրիմը «մեծ մասով բնակեցված է հայերով, որոնք հանդիսանում են մեր (այսինքն՝ ջենովացիների—Լ. Խ.) հավատարիմ վաճառականները»⁸³։ Մի այլ փաստաթղթի համաձայն, թուրքերի կողմից բաղաքի գրավման նախօրերին Կաֆան ունեցել

⁸¹ «Տ՛ի գարի... հիշատակարաններ», էջ 359—367։

⁸² И. А. Орбели. Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями. «Избранные труды», Ереван, 1963, էջ 214։

⁸³ Е. С. Зевакин и Н. А. Пенчко, նշվ. աշխ., «Исторические записки», 1938, № 3, էջ 127. Հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, Բ, Երևան, էջ 431։

է 70 հազար բնակիչ, որի երկու-երրորդը (այսինքն 46 հազարը)՝ հայեր⁸⁴, նույնն են հաստատում նաև թուրքական տվյալները (70 հազարից 65 տոկոսը՝ հայ)⁸⁵:

Այսպիսի ճշգրիտ տվյալներ մյուս քաղաքների վերաբերյալ չեն պահպանվել, բայց ըստ որոշ հետազոտությունների, հայերը մեծամասնություն են կազմել նաև Սուրխաթ և Սուրոժ քաղաքներում⁸⁶: Եվ եթե, այնուամենայնիվ, հետազայում պարզվի, որ տնտեսական որոշ կենտրոններում հայերից ավելի մեծ թիվ են կազմել թաթարները, հույները կամ այլ ազգության պատկանող բնակիչներ, անփոփոխ պետք է մնա այն հիմնական եզրակացությունը, թե տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում հայերը զրավել են առաջատար բնագծեր:

Այս առումով խիստ հետաքրքրական է Ղրիմի հարավային ծովափնյա քաղաքների տնտեսական պատմության հմուտ ուսումնասիրողներ Ե. Չևակինի ու Ն. Պենշկոյի տեսակետը. «Թաուլական սկզբնաղբյուրների հիման վրա Ղրիմի հարավային ծովափի միջնադարյան քաղաքների մասին նյութի մշակումը մեր կողմից թույլ է տալիս հաստատելու, որ գլխավոր դերը Ղրիմում, ըստ երևույթին կատարել է հայկական առևտրական բուրժուազիան: Սև ծովի ջինովական կենտրոն Կաֆայում հաստատապես հայերը կազմում էին քաղաքային բնակչության երկու-երրորդը, և հայ վաշխառուների ոչ մեծ խումբը (XV դ.)՝ իր ձեռքում էր պահում քաղաքի տնտեսական հանգույցները: Այս հանգամանքը նույնիսկ անհանգստություն է պատճառել ջինովական կառավարչությանը՝ Կաֆայում քաղաքական իշխանությունը պահպանելու առումով»⁸⁷:

* * *

Այստեղ անհրաժեշտություն է առաջանում մի հայացք նետել նաև Ղրիմի տնտեսական զարկերակներից մեկի՝ Քամանյան թերակղզու և Հյուսիսային Կովկասի արևմտյան շրջանների վրա, որոնք հնագույն ժամանակներից որոշակի դեր են կատարել Անդրկովկասյան երկրների և Ռուսաստանի միջև տնտեսական կապերի իրականացման բնագավառում:

Քամանյան թերակղզին դարեր շարունակ տնտեսապես եղել է Ղրիմի անբաժան մասը, քաղաքականապես ևս հաճախ շղկապված լինելով նրա հետ: Հնդկաստանից, Միջին Ասիայից, Իրանից և Անդրկովկասից դեպի Ղրիմ տանող ցամաքային ճանապարհները խաչավորվում էին Քամանում: Ընդամենը 4—15 կմ լայնություն ունեցող Կերչյան նեղուցը արդելք չէր հանդիսանում

⁸⁴ Vigna. Codice diplomatico, t. I, էջ 365 (տեղեկությունը քաղել ենք Վ. Միքայելյանի վերը նշված աշխատությունից):

⁸⁵ Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 102:

⁸⁶ Տես օրինակ Փ. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140: (հմմ. և. Փորքչեյան, նշվ. հոդվածը, էջ 109):

⁸⁷ «Разработка нами на основании итальянских первоисточников темы о средневековых городах южного берега Крыма позволяет установить, что главную роль в Крыму, по-видимому, играла армянская торговая буржуазия. По крайней мере, в генуэзском центре на Черном море—Каффе—армяне составляли 2/3 городского населения и небольшая кучка армян—ростовщиков (в XV в.) держала в своих руках экономические нити города; это даже вызывало опасения генуэзской администрации за политическое господство в Каффе» («Исторические записки», 1938, № 3, էջ 127):

արևելքից արևմուտք և հակառակ ուղղությամբ կատարվող միջազգային նշանակություն ունեցող ապրանքափոխանակության համար: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Քամանյան թերակղզին, իր հարևան շրջանների հետ միասին, երկար դարեր շարունակ կովախնձոր է հանդիսացել հյոսր պետությունների միջև: X դ. կեսերին լուրջ քայլեր կատարվեցին Քամանյան թերակղզին Կիևյան Ռուսիային ենթարկելու ուղղությամբ: Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ Իգորևիչը Դոնի գետաբերանում 965 թ. ջախջախիչ հարված հասցրեց խաղարներին, վոնդեց նրանց այդ վայրերից, այնուհետև շարժվելով դեպի հարավ, հարձակվեց խաղարներին ենթակա յասերի ու կոսոխների վրա և իր տիրապետության տակ առավ բնդարձակ մի երկրամաս, որը ձգվում էր մինչև Կովկասյան լեռնաշղթա: Ռազմական այս հաջողությունների հետևանքով X դ. 80-ական թթ. Քամանյան թերակղզում և նրան կից շրջաններում ստեղծվեց Տմուտարականի բաժնեկալվածային ուսական իշխանությունը, որը պահպանեց իր գոյությունը մեկ դարից ավելի՝ զգալի դեր կատարելով հին Ռուսիայի պատմության մեջ⁸⁸:

Առատ տվյալներ՝ նորանվաճ ուսական այս երկրամասում հայ գաղթավայրերի գոյության և նրա տնտեսական կյանքում հայերի կատարած դերի մասին, ցավոք, չեն պահպանվել: Վաղուց ի վեր գիտական շրջանառության մեջ է դրված Գալիցիայի ուս իշխան Թեոդոր Դմիտրևիչի 1062 թ. մի հրովարտակր՝ ուղղված կոսոխացի հայերին (kosochackim Armenam), որով նրանք հրավիրվել են մշտական բնակության՝ Գալիցիա՝ երեք տարի հարկերից ազատ լինելու արտոնությամբ⁸⁹: Բազմաթիվ փորձեր են եղել որոշելու, թե ում է հասցեագրված այդ հրավեր-հրովարտակր և արդյոք այն XI դ. հավաստի փաստաթուղթ է, թե՞ ստեղծվել է հետագա դարերում Գալիցիայի հայերի կողմից, իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով⁹⁰:

Ում է հասցեագրված այդ հրովարտակր, այս հարցին տրված բազմաթիվ պատասխաններից ամենից հավանականը պետք է համարել Խ. Փորբշեյանի առաջադրած և բազմաթիվ փաստերով ու նկատառումներով հիմնավորված պատասխանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տմուտարականի բնակիչները բյուզանդական, ուսական և այլ հին աղբյուրներում կոչված են կասոխ կամ կոսոխ⁹¹, Խ. Փորբշեյանը հանգում է այն հավանական եզրակացության, որ ուս իշխան Թեոդոր Դմիտրևիչը Գալիցիա է հրավիրել հենց

⁸⁸ «Очерки истории СССР», т. I, 1953, էջ 400—406: Խ. Փորբշեյան, երբ և որտեղից են հայերը գաղթել Չերքեզիա, ՊՔԷ, 1959, № 2—3, էջ 235:

⁸⁹ Մ. Բժշկյան, Ճանապարհորդություն, էջ 85:

⁹⁰ Վերջերս այս տեսակետը հիմնավորելու մի անհաջող փորձ կատարեց ուկրաինահայ գաղթավայրերի վաստակավոր ուսումնասիրող Յա. Գաշկևիչը (տե՛ս նրա «Грамота Феодора Дмитриевича 1062 г.» հոդվածը, տպագրված հետևյալ պարբերականում. «Научно-информационный бюллетень Архивного управления УРСР», Киев, 1962 № 4, էջ 9—20): Հանգամանորեն քննարկելով Յա. Գաշկևիչի բոլոր առարկությունները, Վ. Միրայեկյանը «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» (Երևան, 1964, էջ 54—63) իր արժեքավոր մենագրության մեջ արդեն ցույց է տվել, որ բավարար հիմքեր չկան այդ հրովարտակր հետագա դարերի կեղծիք համարելու: Ընդհակառակը, հին ու հավաստի փաստաթուղթ լինելու մի շարք հատկանիշներ ունենալով՝ հրովարտակր արժանի է վստահության: Մենք բաժանում ենք այդ տեսակետը:

⁹¹ Ըստ Խ. Փորբշեյանի՝ այդ անվանումը ալանական ծագում ունի. ալանների հետնորդ սերն այժմ էլ չերեքեզներին անվանում են «կաշեկներ»:

Տմուտարականի իշխանության սահմաններում բնակություն հաստատած և իրենց առևտրական գործարքներով ողջ հին Ռուսիայում հռչակված հայերին:

XI դ. վերջին տասնամյակներին Տմուտարականը դառնում է արյունալի բախումների թատերաբեմ, որի դիսավոր դերերը ստանձնում են ինչպես ուսական մրցակից իշխանները, այնպես էլ Բյուզանդական կայսրության պատական պաշտոնյաները: XII դ. այդ շրջանները գտնվում են Բյուզանդիայի տնտեսական ու քաղաքական ազդեցության ոլորտի մեջ, իսկ այնուհետև տեղական ցեղապետների իշխանության ներքո, որոնք ընդունել էին ղփչախների գերիշխանությունը:

XIII դ. երկրորդ հիսնամյակում Կաֆայում հաստատված ջենովացիներն աստիճանաբար իրենց ազդեցությունը տարածում են Ղրիմի թերակղզու արևելելյան ծովափնյա քաղաքների վրա, ապա ամուր հենակետեր ստեղծում Սև և Ազովի ծովերի Կովկասյան առափնյա շրջաններում: Դրանի դետաբերանից մինչև Սուխում ընկած տարածքի վրա, ըստ մի շարք հին քարտեզների, XIV դ. ընթացքում գոյություն են ունեցել 39 իտալական առևտրական հենակետեր: Դրանց մեջ բացառիկ նշանակություն ունեին հատկապես երկուսը՝ Մատրեզան և Կոսյան⁹²:

Մատրեզան պատմական գրականության մեջ հայտնի է տարբեր անուններով՝ Մատրախա, Տամատարխա, Տմուտարական և այլն: Այն գտնվել է Կուրանի դետաբերաններից մեկում, որն այժմ գոյություն չունի: Նրա նավահանգրստում խարխախ էին նետում առևտրական խոշոր նավեր, որոնք Ազովի ծովի ծանծաղույթյան պատճառով անկարող էին հասնել Ազով: Մեծ էր նրա նշանակությունը ոչ միայն որպես միջազգային ապրանքափոխանակության հանգրվան, այլև որպես Հյուսիսային Կովկասի արևմտյան շրջանների տնտեսական կենտրոն: Շրջակա ցեղերն այստեղ աշխույժ փոխանակություն էին կատարում, իրենց արտադրանքը՝ ձուկ, ձկնկիթ, մեղր, մեղրամոմ, տարբեր տեսակի փայտանյութ (հատկապես՝ տոսախ)՝ փոխանակելով արևելյան և արևմտյան երկրներից ստացվող ապրանքների հետ: Ջենովացիները Մատրեզայում ունեին հյուպատոսարան և առևտրական հաստատություններ:

Իր նշանակությամբ երկրորդ տեղն էր գրավում Կոսյա (նաև Լակոպա, Կոսյարնո) կոչվող քաղաքը, որի տեղադրությունը տակավին չի որոշված: Այստեղ ևս եղել է ջենովական հյուպատոսարան, կառուցվել են եկեղեցիներ, գոյություն են ունեցել առևտրական գրասենյակներ, շափ ու կշռի կետեր և տոնավաճառ, որն սկսվել է ապրիլի վերջերին ու տևել մինչև մայիսի 15-ը: Կոսյայի վաճառականները մեծ քանակությամբ ձուկ և ձկնկիթ են արտահանել Կոստանդնուպոլիս: Տնտեսական որոշակի նշանակություն են ունեցել նաև Անապան, Գելինջիկը և այլ նավահանգիստներ:

Ջենովացիների ազդեցության ժամանակաշրջանում կարգի էին բերվել Հյուսիսային Կովկասով անցնող կարավանային ճանապարհները⁹³: Կաֆա

⁹² E. C. Зевакин и Н. А. Пенчко, նշվ. աշխ., էջ 78—86:

⁹³ Գլխավոր ճանապարհը Կուրանի աջ ափով ձգվում էր դեպի արևելք և Քերեքի ափերով հասնում մինչև Կասպից ծով: Կովկասյան լեռնականների հետ ստեղծված տնտեսական աշխույժ կապերին նպաստում էր Անապայից սկսվող ճանապարհը, որը Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսով անցնում էր դեպի արևելք և կտրելով Կուրանի լեռնային վտակները (Կեֆար, Մեծ Զելինջուկ, Մարտիսա, Քերեքա) հասնում մինչև գետի վերին հոսանքները, ապա Կուրաչայ:

քաղաքը միջազգային հռչակ էր ձեռք բերել ոչ միայն որպես անգերազանցելի նավահանգիստ, այլև կիզակետն էր դարձել բոլոր այն ճանապարհների, որոնցով հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդները Քամանյան թերակղզու վրայով հաղորդակցվում էին Ղրիմի, իսկ նրա միջնորդությամբ Ռուսաստանի և եվրոպական երկրների հետ:

Արդ, բուն նյութին անցնելով, նշենք, որ հյուսիս-արևմտյան Կովկասի վերոհիշյալ կենտրոններում և այդ կենտրոնները Անդրկովկասի ու Իրանի հետ շաղկապող ճանապարհների բոլոր հանգուցակետերում՝ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները հենակետեր էին ստեղծել և տնտեսական աշխույժ գործունեություն ծավալել ջենովացիների բեմելից դարեր առաջ:

Հայկական աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ կան այդ մասին: XIX դ. սկզբներին եղել են ինչ-որ տվյալներ, որոնց հիման վրա Հովհաննես Ղրիմեցին գրել է այսպիսի տողեր. «...Այլ եւ աշխարհն Ափխազաց, եւ աշխարհն Եգերացոց, այսինքն Չէրքեզաց, ի նախկին ժամանակս, յորս էին հայր բաղումք ի հնումն, ըստ ակնարկելոյ պատմութեանց. եւ այժմ իսկ ի հիւսիսային ծագս այսորիկ աշխարհաց գտանին ոչ սակաւ տունք հայոց՝ ի հին ժամանակաց անտի մնացեալք»⁹⁴:

Ցավով պետք է նշել, որ առ այսօր ծրագրված աշխատանք չի կատարված հնագույն այդ դաղթավայրերի հետքերը որոնելու ուղղությամբ: Սակայն պատահականորեն հայտնաբերված նյութերն իսկ հնամենի ու սերտ կապերի առկայության օգտին են վկայում:

Դեռևս անցյալ դարի վերջերին Մայկոպի շրջանում, Բելայա գետի ափին, Բելորեչենսկայա և Խանսկայա ստանիցաների մերձակայքում հայտնաբերվել էին քառանկյուն (9×5,7 մետր) հատակադիժ և կիսաշրջան արսիդ ունեցող բարակոփ մի եկեղեցու ավերակներ: Այդ եկեղեցու բարավորը, որ այժմ պահվում է Վրացական ՍՍՀ Պետական թանգարանում, կրում է անվարժ-ուռուցիկ տառերով փորագրված այսպիսի արձանագրություն. ԿԱՏԱՐԵՅԱԻ ԵԿԵՂԵՅԻՍ ՉԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՍ ԽՐԸՄՊԷԻՆ ԿԱՑԱՅՈՒՆ⁹⁵:

Այստեղ ճանապարհը բաժանվում էր երկու ուղղության. մեկը կտրելով Կովկասյան լեռնաշղթան, մտնում էր Անդրկովկաս, մյուսը՝ Թերեքի ափերով հասնում Կասպից ծով: Այս ճանապարհի հետքերը պահպանվել էին մինչև անցյալ դարի 60-ական թվականները (տե՛ս «Исторические записки», 1938, № 3, էջ 87—88):

⁹⁴ Յովհաննես Ղրիմեցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. նշանի, հրատարակեց Հ. Համադասյ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 92:

⁹⁵ Այս արձանագրության զարմանալի սխալ վերծանությունը տպագրել է դեռևս 1893 թ., հայ բանասիրության մեջ բազմաթիվ թյուրիմացությունների դուռ բացած Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը: Ըստ նրա՝ արձանագրությունը պետք է կարդալ այսպես. ԿԱՏԱՐԵՅԱԻ ԵԿԵՂԵՅԻՍ ՉԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՍ Մ... ԲՊԷԻՆ. ՀԱՅՈՑ... ՈՒՆ, և պետք է թարգմանել այսպես. Церковь построена каменщиком (имя неразборчиво)... в 620 году армянской эры, т. е. в 1171 году (տե՛ս Խ. Կուչուկ-Иоаннесов. Христианская надпись XII столетия. «Материалы по археологии Кавказа, собранные экспедициями московского археологического общества», вып. III, М., 1893, էջ 106—109):

Արձանագրությունը փորագրված համարելով 1171 թ., Քուչուկ-Հովհաննիսյանը գիտական արժեքից զուրկ դատողություններ է արել հյուսիսային Կովկասի այդ շրջաններում հայկական եկեղեցու գոյության պատմական պատճառների մասին: Նույն արձանագրության վերծանության և արժեքավորման մի փորձ էլ կատարվեց վերջերս: Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիումին զեկուցումով հանդես եկավ հնագետ Մ. Լոժկինը, որը, սակայն, էական առարկություններ չարեց Խ. Քուչուկ-Հովհաննիսյանին (տե՛ս Михаил Ложкин, Об армянской церкви XII века в Белореченске, Ереван, 1978, էջ 2 և 8):

XVII դ. 80-ական թթ. Ղրիմում ստեղծագործել է Սիմեոն Կաֆացի անունով մի տաղասաց, որի հոր անունը եղել է Խրմպէյ⁹⁶: Նույնացնելով քարգործ (իմա՝ ճարտարապետ վարպետ) Խրմպէյ Կաֆացուն տաղասացի հոր հետ, որ շատ հավանական է (արձանագրության տառաձևերը բնորոշ են հենց այդ ժամանակաշրջանին), կարող ենք եկեղեցու կառուցման ժամանակը համարել, մերձավորապես, 1650-ական թվականները: Բայց չի բացառված, որ այստեղ հայեր են հաստատված եղել այդ ժամանակից շատ դարեր առաջ, իսկ որ նրանք սերտորեն կապված են եղել Ղրիմի հետ, այդ երևում է այն իրողությունից, որ եկեղեցու կառուցման համար հրավիրվել է կաֆայեցի մի վարպետ: Ինչպե՞ս է կոչվել հայկական այդ բնակավայրը, չգիտենք: Եվ եթե հետազոտում գիտական պեղումներ կատարվեն եկեղեցուց ոչ հեռու գտնվող տարածություններում, թերևս հնարավոր լինի պարզել, որ հենց այստեղ է գտնվել միջնադարում շատ հայտնի վերոհիշյալ Կոպա քաղաքը⁹⁷:

Ժամանակագրական առումով շատ ավելի հին կարող են լինել պատմական Չերքեզիայի մի այլ անկյունում՝ Կարաչայ-չերքեզների ինքնավար մարզում, Մեծ Զելենշուկ գետի միջին հոսանքից ոչ հեռու գտնվող երեք եկեղեցիները: Դրանցից ամենամեծը, որ գտնվում է շատ խարխուլ վիճակում, երեք տասնամյակ առաջ ենթարկվել է հնագիտական հետախուզման: Եկեղեցու հատակի մի անկյունում հայտնաբերված 1,5 մետր խորություն ունեցող փոսից դուրս են բերվել ոսկեղեն առարկաներ, մատանիներ, օղեր, զարդասեղներ, թանկագին քարեր և, որ ամենակարևորն է, Աշոտ Ա Բագրատունի Հայոց թագավորի (885—890 թթ.) մատանի-կնիքը, արաբերեն հատակ ընթերցվող՝ «Աշոտ բն Մնբատ» (այսինքն՝ «Աշոտ Սմբատի որդի») մակագրությունը⁹⁸:

Ցավոք, հայտնաբերված առարկաները առ այսօր մասնագիտական քննության բովով չեն անցել: Մեծ հավանականությամբ նրանք, կնիքի հետ միասին, բերվել ու պահվել են եկեղեցու դարաններից մեկում Բագրատունյաց հարստության անկումից հետո՝ XI դ. կեսերին, խոսուն վկանները լինելով Հա-

96 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1948, էջ 517:

97 Իտալական աղբյուրների տվյալներով Կոպան գտնվել է Կուրանի գետաբերանից 280 մղոն (շուրջ 400 կմ) հեռավորության վրա՝ գետափին: Եթե քաղաքի հետքերը փնտրելու համար նկատի առնվի Կուրան մայր գետը և անտեսվեն նրա խոշոր վտակները, ապա որոնումները պետք է կենտրոնացվեն ներկայիս Կրասնոտկինի շրջանում, բայց եթե Կուրան գետի հետ շաղկապենք նրա խոշոր վտակներից՝ Բելայա կոչվածը, ապա Կոպայի ավերակների հետքերը կարող են հայտնաբերվել վերոհիշյալ եկեղեցու մերձակայքում: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև այն փաստի վրա, որ Բելորեչենսկայա ստանիցայի մոտ գտնվող հին գերեզմանատան պեղումներից ևս հայտնաբերվել են հայկական նյութեր: Մասնավորապես արժեքավոր են մի գոտու արծաթե ճարմանդները, որոնք անտարակույս միջնադարյան հայկական արհեստագործության զեղեցիկ նմուշներից են: Դրանց հրատարակիչ Կ. Ա. Ռոկտինան (К. А. Роктина. Группа серебряных украшений из кубанских могильников XIV—XV вв. «Труды отдела истории культуры и искусства Востока Гос. Эрмитажа», т. III, Л., 1940, էջ 211 և II, 4, 5 պատկերներ) հայտնել է այն կարծիքը, որ դրանք արտադրվել են Կիլիկյան Հայաստանում XV դ.: Մեր կարծիքով, սակայն, ոչ մի արգելք չկա դրանց ժամանակը մի քանի դարով ետ տանելու և դրանք կենտրոնական Հայաստանի հետ կապելու համար:

98 В. А. Крачковская. Печать Багратида Ашота с арабской надписью. «Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры», XII, М.—Л., 1946, էջ 112—117: նաև Հ. Օ. Լալայանով, Աշոտ Բագրատունու կնիքը («Տեղեկագիր», 1955, № 2, էջ 97—98), որը նորություն չի պարունակում:

յաստանի և Հյուսիսային Կովկասի միջև գոյութուն ունեցած տնտեսական սերտ առնչությունների:

Հյուսիս-արևմտյան Կովկասի վաճառաշահ կենտրոնների բնակչության ազգային կազմի մասին աննշան տեղեկություններ են պահպանվել: Ն. Զևյակինն ու Ն. Պենչկոն իրենց վերոհիշյալ հոդվածում ոչ միայն տարբեր առիթներով խոսել են Մատրեգայում և Կոպայում հայ բնակչության առկայության մասին, այլև հանգել են այն եզրակացության, որ հավանաբար հայ առևտրական կապիտալն է այդ գաղթավայրում կատարել առաջնային դեր⁹⁹:

Այս երկրամասում հայկական հիշատակների հայտնաբերման ուղղութեամբ աշխատանքները պետք է շարունակել, օգտագործելով ինչպես մայրենի լեզուն մոռացած շերքեղահայերի մասին դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված աղբյուրները (այդպիսիք պետք է որ լինեն ուսական արխիվներում), այնպես էլ հայկական մատենագրության մեջ գոյություն ունեցող ակնարկները:

Այս առումով ուշադրության արժանի են Քաշտ կոչվող երկրամասի և ցեղանվան մասին առկա ցաքուցրիվ տեղեկությունները: Կիևյան Ռուսիայի տարեգիրները, ինչպես նաև բյուզանդական որոշ հեղինակներ, խոսելով Տմուտարականի ուսական իշխանության բուն բնակիչների՝ հին շերքեղների մասին, դրանց միշտ անվանում են կասոխներ կամ կոսոխներ (касоги կամ косоги): Այդ ցեղանունը տարբեր ժողովուրդների կողմից ու տարբեր ժամանակներում արտաբերվել է իրարից շատ տարբերվող ձևափոխություններով. կոսոխ, կոսոդ, կասախ, խաղուխ, քեշակ, քաշայի, քաշոտ¹⁰⁰: Այս վերջին (քաշոտ) ձևը կամ ստեղծվել է հայերի միջավայրում, կամ էլ գերադասվել նրանց կողմից՝ որպես ավելի հարազատ ու դյուրալուր ձև:

Կաֆա քաղաքի պարիսպներից դուրս XV—XVII դդ. գոյություն է ունեցել հայկական մի թաղամաս Քաշոտ անունով¹⁰¹: Մեծ հավանականությամբ կարելի է հետևցնել, որ այդ վայրի հայ բնակչության մեծամասնությունը գաղթել է այստեղ Թամանյան թերակղզուց կամ պատմական Չերքեզիայի Թամանից ոչ հեռու գտնվող շրջաններից, կամ էլ տնտեսական սերտ կապերի մեջ է եղել նույն այդ շրջանների (այսինքն՝ բուն Քաշոտի) հետ:

⁹⁹ Նրանք բառացի գրել են. «Без сомнения армянский торговый капитал проник и на Западный Кавказ и быть может играл в тамошних колониях первенствующую роль» («Исторические записки», 1938, № 3, էջ 127):

¹⁰⁰ «История Кабарды с древнейших времен до наших дней», М., 1957, էջ 22—25: Տեղեկությունը բաղել ենք Խ. Փորթեյանի վերահիշյալ հոդվածից:

¹⁰¹ «Այլ արտաքոյ (Կաֆայ) քաղաքին մէկ մահալա թաղ հայր կային, որ Քաշոտ ասեն», — գրում է նրա մասին Գր. Գարանազցին (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Գարանազեցոյ», հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 80):

1458 թ. Կաֆայում դիմեծախ Ավդուլը ընդօրինակել է տվել մի ձեռագիր՝ Քաշոտի սուրբ Գեորգ զորավարի եկեղեցուն նվիրարեղելու համար («Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 112): Խաշատուր Կաֆայեցի տարեգիրը 1649 թ. դեպքերի կապակցությամբ հայտնում է, որ ապրիլի 15-ին Գրիգոր պարոնտերը ոմն Սիմեոնի քահանա է ձեռնադրել «ի վերայ Քաշոտին» («Մանր ժամանակագրութուններ 13—18-րդ դդ.», հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 225): Ըստ այդմ Կաֆայի Քաշոտ կոչվող թաղամասի գոյությունը հաստատվում է XV—XVII դդ. աղբյուրներով:

Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրության մեջ, 1624 և 1628 թթ. կատարված դեպքերի առնչությամբ, Քաշուտի մասին գտնում ենք երկու կարևոր դրանցում.

1. «Քվին ՌՀԳ (1624)... ապրիլի ԺԱ. (11) կիրակին Քաշուտի յուռուսն կոխեց Խրիմին վերի մահալան և բրիստոնեայքն գերեցուց, և պարծանքնրն բրիստոնէից՝ Սուրբ Նշանն գերի վերուց, և խաւարեցուց վանքն տէր Մովսէսի»¹⁰²;

2. «Քվին ՇՀԷ (1628), ապրիլի Ի (20), աւր կիրակի, Քաշուտի ուռուսն Կաֆան կոխեց, մահալան Համբարձրման: Անիծածն, որ է որդի Քումանպէին, եկաւ գերեցուց, ոմանս թալլեց, ոմանս ի սուր մաշեց, և այլ շատ շարիր գործեց»¹⁰³;

Այս կարևոր տեղեկությունները, անտարակույս, վերաբերում են Դոնի կազակների դեպի Ղրիմ (Սուրխաս, Կաֆա) կատարած արշավանքներին¹⁰⁴:

Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ կազակներն այստեղ կոչված են «Քաշուտի ուռուս». սրանից կարելի է հետևցնել, որ Դոնի կազակները արդեն XVII դ. իրենց ազդեցությունը տարածել էին Ազովի ծովի արևելյան ափերը եզերող պատմական Չերքեզիայի շրջանների վրա, ու թերևս, այդ կողմերում ունեին իրենց հենակետերը, որոնք կորիզը հանդիսացան ավելի քան մեկ դար հետո Կուբանի շրջանում ձևավորված կազակական զորքերի¹⁰⁵:

102 «Մանր ժամանակագրություններ», I, էջ 212:

103 Նույն տեղում, էջ 217:

104 Քաշուտի տեղագրությունը որոշելու անհաշող ու երկշտ մի փորձ է կատարել Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրության» հրատարակիչը, տալով այսպիսի բացատրություն. «Արդյո՞ք Կազուսը չէ, Անապայի և Նովորոսիյսկի մոտերքը, թերևս ավելի հյուսիս» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ» I, էջ 231):

Հունգարացի վաստակավոր արևելագետ է. Շյուցը, որ իրագործել է Տարեգրության դրամաներին թարգմանությունը, օժտել է այն շատ արժեքավոր ծանոթագրություններով ու ճշգրբակի նրա անհասկանալի բազմաթիվ հատվածները, զատել է միմյանցից Կաֆայի հայկական թաղամաս Քաշուտը «Դոնի կազակների բնակավայր» Քաշուտից: Այս բնակավայրի տեղագրությունը որոշելու նպատակով նա որոնումներ է կատարել, անդրադարձել է Կուբան գետի Կոնստի վտակի անվանը, ինչպես նաև Վոլգայի կամիկների Կոշուտ կոչվող բնակավայրին և այլն (տե՛ս E. Schütz. Eine Armenische Chronik von Kaffa aus der ersten Hälfte des 17. Jahrhunderts. „Acta Orientalia Academia Scientiarum Hungaricae“, 1975. Hung. Tomus XXIX, Fasc. 2, էջ 167—181):

Մեր կարծիքը Քաշուտի մասին՝ շարադրված է վերը:

Շեղվելով բուն նյութից, անդրադառնալու ենք Խաչատուր Կաֆայեցու Տարեգրության մեջ «հայ» բառի տարօրինակ գործածությանը, որ տարակուսանքների տեղիք է տվել: Ըստ Տարեգրության, օրինակ, 1628 թ. Ղրիմ է ներխուժել 12 հազար հայ, մեկ տարի հետո՝ 40 հազար հայ և նոզայ և այլն (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», I, էջ 214, 215 և այլն): Խաչատուրը խոսում է թուրքերի՝ Մալթայում տարած հաղթանակի մասին, ասելով, որ «վեզիրն հայն սպանել է ի կռիւն», նկարագրում է Ազովի հերոսական պաշտպանությունը Դոնի կազակների կողմից, դերակատարներին դարձյալ «հայ» անվանելով և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 223):

Կնճիոր հարթվում է դյուրություններ: Մեր հեղինակը «հայ» բառը գործածում է նաև «բրիստոնեյա» բառի փոխարեն. «հայ» են կոչվում և՛ Չապորոթյան կազակները, և՛ Դոնի կազակները, և՛ Մալթայի պաշտպան վենետիկցիները, և՛ այլ բրիստոնյա ժողովուրդներ:

105 Քաշուտը Տմուտարական ոռոսական բաժնետիրական իշխանության տարածքն էր ձիածամանակ: Կարելի՞ է, արդյոք, այս հանգամանքը նկատի առնելով մտածել, թե աշխար-

Սրանք են, ահա, մեզ հասած տեղեկությունները Ղրիմի հետ տնտեսապես շաղկապված Քամանյան թերակղզում և պատմական Չերքեզիայի այլ շրջաններում երկար դարեր գոյատևած հայկական գաղթօջախների մասին: Դրանք ցաք ու ցրիվ են ու աղբատիկ, բայց, այնուամենայնիվ, հնարավորություն են բնօրում հանգելու այն եզրակացության, որ այս վայրերում խարխախ նետած հայերը ևս կարևոր դեր են կատարել Ղրիմի վրայով Ռուսական իշխանությունների և Արևմտյան Եվրոպայի այլ երկրների հետ տնտեսական կապերի ստեղծման ու իրականացման բնագավառում:

* * *

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ղրիմը կապված է եղել Անդրկովկասի, Իրանի, Միջին Ասիայի և Հեռավոր Արևելքի հետ միջազգային նշանակություն ունեցող ծովային ու ցամաքային մի շարք ճանապարհներով: Հայաստան—Ղրիմ կապերն իրագործվել են ա) Սև ծովի հարավային և արևելյան նավահանգիստներից՝ ծովային ճանապարհով, բ) Սև ծովի արևմտյան եզրերով և Կովկասյան լեռնաշղթան հատող կաժաններով, որոնց հանգրվանն էր Քամանյան թերակղզին, գ) Դերբենդի կիրճով դեպի հյուսիս ուղղված ճանապարհով, որը Հյուսիսային Կովկասում երկճյուղվում էր. ճյուղերից մեկն ուղղություն էր վերցնում դարձյալ դեպի Քաման, մյուսը՝ դեպի Վոլգայի գետաբերան, դ) Ռուսաստանից և Միջին Ասիայից, տարբեր ճանապարհներով արևելյան ապրանքներ էին հասցվում Ազով, այնտեղից էլ՝ Ղրիմ. այս ուղի-գծի վրա ևս հայերը որպես տնտեսապես շահագրգռված կողմ, ունեին իրենց գաղթօջախները:

Կաֆա քաղաքն այս ճանապարհներով ստացվող ապրանքների վիթխարի մի պահեստ էր դարձել:

Այդ ապրանքների մի զգալի մասը արտահանվում էր Արևելյան Եվրոպա կարավանային բանուկ այն ճանապարհով, որ կտրում էր Ղրիմի թերակղզին հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք և, անցնելով Պերեկոպը (հայկական միջնադարյան աղբյուրներում՝ կոչված Օր, Օրինբերան)՝ ուղղություն էր վերցնում դեպի Կիև:

Պետք է ենթադրել, որ Պերեկոպում, անվազն XIV դ. սկզբներից գոյություն է ունեցել հայկական կաշուն գաղթօջախ, որի մասին, ցավոք, հին տեղեկություններ չեն պահպանվել: Այստեղ հաստատված հայերն ունեին իրենց եկեղեցին. քաղաքում կային հայերին պատկանող կարավանատներ, պահեստներ և այլն¹⁰⁶: XVIII դ. 30-ական թթ. ռազմական գործողությունների հետևանքով տուժած Պերեկոպի դերն իր վրա է վերցնում նրա մոտակայքում հայերի կողմից հիմնադրված և Արմյանսկի բազար (Հայկական շուկա) անունն ստացած բնակավայրը, որը հռչակված էր իր շուկայով, անընդմեջ ծը-

հազրական այդ միջավայրում, Տմուտարականի իշխանության անկումից դարեր հետո ևս պահպանվել էին ռուսական համայնքներ, որոնք աշխուժացել էին Դոնի գետաբերանի շրջակայքում հաստատված կազակների աղղեցությունը կրելով:

¹⁰⁶ Վ. Միխայլյան, նշվ. աշխ., էջ 114 (վկայակոչված է «Заседания Одесского общества истории и древностей», т. I, 1844, էջ 602):

խացոզ խոհանոցներով, որոնցում ընտիր կերակուրներ էին պատրաստվում անցնող ու դարձող ճանապարհորդների համար¹⁰⁷:

Պերեկոպից հյուսիս, մինչև Կիև ձգվող ճանապարհը միշտ էլ եղել է շատ վտանգավոր, ենթակա լինելով հարավային Ռուսաստանի տափաստաններում մեկը մյուսին հաջորդող վաշկատուն ժողովուրդների շարունակական ավազակային հարձակումներին: Հայտնի է, որ 915—1036 թթ. ընթացքում Կիևի իշխանները մարտնչել են պեչենգների դեմ, մանր միջադեպերը շահաված 16 անգամ¹⁰⁸: Եվ այդ պարբերականությունը պահպանվել, նույնիսկ ավելի հաճախակի է դարձել հաջորդ դարերում, երբ թաթարները, ապա նաև թուրքերը, գրեթե ամեն տարի ներխուժում էին ռուսական երկրամասերը, ավերում բնակավայրերը, ամայացնում երկիրն ու իրենց հետ տանում հաղարավոր գերիներ¹⁰⁹:

Այս պայմաններում կարավանային առևտրի ասպարեզում առաջնային դիրք զբաղած հայ վաճառականները միաժամանակ հանդիսանում էին զինվոր-մարտիկներ: Մենք դեռևս առիթ կունենանք ավելի հանգամանորեն շոշափելու այս հարցը, բացահայտելով հայերի դերը Դնեպրի աջափնյա տարածություններում ստեղծված նշանավոր բերդ-քաղաքների տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ասպարեզներում:

* * *

Հին Ռուսիայի նշանավոր Կիև մայրաքաղաքը դարեր շարունակ եղել է հայ-ռուսական տնտեսական ու մշակութային կապերի դարբնոց, ուստի նրա ներսում ծաղկած հայկական գաղթօջախի պատմությունն արժանի է ավելի հանգամանալից քննության:

Կիևի հին պատմությունը լուսաբանող գրավոր աղբյուրներ գրեթե չեն պահպանվել: Մեծ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու գործած ավերածություններին (1169 թ.), մոնղոլական զույգ արշավանքներին (1240 և 1263 թթ.), ինչպես և բազմիցս կրկնվող ամենակուլ հրդեհներին՝ զոհ են գնացել նաև քաղաքի պատմության ձեռագրական սկզբնաղբյուրները:

Հնագիտական նյութի ուսումնասիրությունը մասնագետներին բերել է այն համոզման, որ մերձդնեպրյան շրջանները Կովկասի ու Սև ծովի ափամերձ հունական գաղթօջախների հետ տնտեսական որոշ կապեր են ունեցել տակավին մ. թ. ա. V—IV դդ.: Մեր թվարկության առաջին հարյուրամյակների ընթացքում տեղական տնտեսական կապեր են հաստատվել Հռոմեական կայսրության, իսկ III—IV դդ. նաև գոթերի հետ:

VIII դ. միջազգային ասլրանքափոխանակության համար մեծ նշանակություն է ստանում Բալթիկ և Սև ծովերը միմյանց շաղկապող գետային այն մայրուղին, որ հայտնի է պատմագրության մեջ «Վարյագներից դեպի Հունաստան» («Из Варяг в Греки») անունով: Այդ մայրուղու շնորհիվ բարգավաճում են Ռուսաստանի պատմության մեջ հսկայական դեր կատարած մի շարք քաղաքներ, մասնավորապես Մեծ Նովգորոդը և «ռուսական քաղաքների մայր» Կիևը:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 114—115:

¹⁰⁸ Б. Д. Греков. Киевская Русь, М., 1949, էջ 463:

¹⁰⁹ «Очерки истории СССР», т. II, էջ 556:

Կիևը դառնում է արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն հենց այն ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխավորությամբ թոթափելով արաբական լուծը, քաղաքական ու տնտեսական առաջադիմության ընթացքի մեջ էր մտել՝ դառնալով «իդեալական շեղոք երկիր տարանցիկ առևտրի և միջազգային հարաբերությունների համար» (Հ. Մանանդյան):

Հայաստանի քաղաքներից շատերը, մասնավորապես՝ Դվինը, Անին, Կարսը, Արծնը ոչ միայն դարձել էին տարբեր ճանապարհներով արևելյան երկրներից Հայաստան ներմուծվող, այստեղից էլ եվրոպական երկրներ արտահանվող ապրանքների ապահով պահեստատեղիներ ու փոխանակային առևտրի կենտրոններ, այլև մասնակցում էին միջազգային առևտրին իրենց սեփական արտադրանքով:

«Ի ծովէ և ի ցամաքէ» ճոխացած հայ վաճառականները ամենայն հավանականությամբ տնտեսական կապեր էին ստեղծել նաև «Վարյագներից դեպի Հունաստան» ճանապարհի նշանավոր կանգառներում: Գոտլանդ կղզում, Լադոգայում, Նովգորոդում, Մոգիլևում և Կիևում հայտնաբերված հազարավոր դրամների մեջ կան նաև Դվինում VIII—X դդ. կոփված դրամների բաղմաթիվ նմուշներ, որոնք տնտեսական այդ կապերի խոստն վկաներն են¹¹⁰: Կիևի մերձակայքում գտնվել են նաև ականջօղեր և այլ զարդեր, որոնք, մեծ նմանություն ունենալով Դվինից հայտնաբերված ոսկերչական իրերի հետ, քստ մասնագետների՝ դարձյալ իրեղեն վկայություններ են Հայաստանի և Կիևի միջև գոյություն ունեցած առևտրական կապերի¹¹¹:

Ավելի պերճախոս են սակավաթիվ գրավոր աղբյուրները և, մասնավորապես, Կիևի Պեչորյան վանքի նշանավոր Հարանց վարքը: Ռուսական հին գրականության մեծարժեք այդ հուշարձանի մեջ ուրույն տեղ է գրավում վանքի նշանավոր միաբաններից մեկի՝ երանելի Ազապիտի կյանքի պատմությունը¹¹², որի մեջ արժեքավոր տվյալներ են գրանցված Վսեվոլոդ Յարոսլավիչի և, մանավանդ, նրա որդու՝ Վլադիմիր Մոնոմախի իշխանության տարիների, այսինքն XI դ. վերջերի և XII դ. առաջին տասնամյակների մասին: Այստեղ, մասնավորապես, ասված է, որ այդ ժամանակ Կիևում բնակվել է հմուտ ու ճարտար մի հայ բժիշկ. երբ Չերնիգոլում հիվանդացել է Մոնոմախը, «նրան ջանադրությամբ բուժել է այդ հայը»: Այստեղ խոսք կա և այն մասին, որ Կիևում բնակվել են նաև հայ բժշկի բաղմաթիվ հավատակիցները: «Հարանց վարքի» մի այլ հոդվածից պարզվում է, որ վանքի միաբան-

¹¹⁰ Գիտական մեծ նշանակություն ունի 1913 թ. Կիևում հայտնաբերված դանձր, բաղկացած VIII—X դդ. կոփված 2760 արծաթե դրամներից: Դրանց մեջ կան Հայաստանում կոփված արքայան դրամներ: Այս նյութերը խնամքով հավաքել և գիտականորեն արժեքավորել է անվանի դրամագետ և Մուշեղյանը (տե՛ս X. A. Мушегян, Денежное обращение Двина, по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 160—165):

¹¹¹ Տե՛ս Н. П. Кондаков. Русские клады. Исследование древностей великокняжеского периода, т. I, СПб., 1896, էջ 128: Կ. Ղաֆադաշյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 176:

¹¹² Патерик Киево-Печерского монастыря, СПб., 1911 («Памятники славяно-русской письменности», т. 2): Տե՛ս նաև՝ Л. Меликсет-Бек. Древняя Русь и Армения. («Сборник трудов Института языка АН Арм. ССР», Ереван, 1946, էջ 122), Լ. Խաչիկյան, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16—17-րդ դարերում («Տեղեկագիր»), 1954, № 4, էջ 47) և այլն:

ներից մեկ ուրիշը հաճախակի այցելել է Կիևի այն թաղը, ուր ապրել են հայերը, և դավանաբանական հարցերի շուրջ բուռն վեճեր բորբոքել նրանց հետ¹¹³: Այս տվյալներն ի նկատի ունենալով ակադ. Մ. Տիխոմիրովը հանդել է այն եզրակացություն, որ Կիևում «եղել է լիակազմ հայկական մի գաղութ»¹¹⁴:

Կիևի Պեչորյան վանքն իր հիմնադրման օրից լինելով ուսական եկեղեցու շահերի արտահայտիչ, մաքառել է բյուզանդական եկեղեցու քաղաքական ու մշակութային ճնշումների դեմ: Այստեղ են ստեղծվել ուս պատմագրության և վարքագրության առաջին ինքնուրույն ստեղծագործությունները, որոնց մեջ, ի հակադրություն հունարենից կատարված թարգմանական երկերի, փառաբանվել են հանուն Ռուսաստանի և ուս եկեղեցու նահատակված հերոսները: Այդ բնույթի ստեղծագործությունների առաջնեկը «Բորիսի և Գլեբի վարքն» էր («Сказание о Борисе и Глебе»): Ռուսաստանում բարձր եկեղեցական պաշտոններ զբաղված հույն կղերականները հարկադրված էին ճանաչել այս գործիչների «սրբությունը»: Ավելի բացահայտ կերպարանք ստացավ ուս-բյուզանդական հակամարտությունը, երբ փորձեր կատարվեցին սրբերի շարքը դասելու ազգությամբ ուս այլ նահատակների¹¹⁵:

Խիստ ուշագրավ է, որ նույն այս ժամանակաշրջանում բյուզանդական եկեղեցու ոտնձգությունների դեմ համառ պայքար մղող հայ եկեղեցին՝ առանց հասպաղումի, ճանաչեց Բորիսի և Գլեբի (նրանց քրիստոնեական անուններն էին՝ Ռոման և Դավիթ) «սրբությունը». նրանց վարքը վերաշարադրվեց հայերեն և մուծվեց հայկական Հայամավուրքի մեջ: Վարքի հայերեն խմբագրության վերջում ասված է, որ այդ սրբերի մասունքները նորանոր սքանչելագործությունների աղբյուր են հանդիսանում և նոր հրաշքներ գործում, որոնց «բազում[ք] ի մերոյ աշխարհէս տեսողը եղեալ, պատմեն մեզ»¹¹⁶: Այս արդեն որոշակի փաստ է այն մասին, որ «ի մերոյ աշխարհէս», այսինքն՝ Հայաստանից շատ-շատերը այցելելով Կիև և վերադառնալով հայրենիք, վարքի հայ խմբագրողին վկայություն են տվել ուսական սրբերի նոր «հրաշագործությունների» մասին:

Ըստ Մ. էմինի, որ առաջին անգամ ուշագրություն դարձրեց այս բնագրի վրա՝ ուսումնասիրեց և հրատարակեց նրա ուսերեն թարգմանությունը, վարքի հայկական խմբագրությունն ստեղծվել է XII դ. Կիլիկյան Հայաստանում¹¹⁷: Որոշակի փաստեր ի հիմնավորումն այս ենթադրության չկան, ուստի բացառված չի կարելի համարել և այն վարկածը, որ այդ աշխատանքը կատարվել է մայր երկրի այն շրջաններից մեկում, որը տնտեսական սերտ կապեր է ունեցել Ղրիմի ու Կիևյան Ռուսիայի հետ:

113 Изложение веры церкви Армянской, историко-догматическое исследование И. Троицкого, СПб., 1875, էջ 245—247:

114 М. Н. Тухомиров. Древнерусские города, М., 1956, էջ 293: Անվանի գիտնականից առաջ և հետո նույն եզրակացությանը հանդել են և այլ բազմաթիվ ուսումնասիրողներ:

115 Б. Д. Греков, նշվ. աշխ., էջ 406—408:

116 Յայտնաբերք ըստ կարգի ընտրելագոյն արիւնակի Յայտնաբերաց տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834:

117 Н. О. Эмин. Сказание о святых Романе и Давиде (Борисе и Глебе) и о кончине русского епископа св. Фомы. По армянским четые-минеем. «Русский архив», М., 1877, I, էջ 273—288: նաև «Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859—1882 гг.). апокрифы, жития, слова и др.» М., 1899, էջ 150—167:

Այս առնչությամբ տեղին է հիշել Գրիգոր Տղա կաթողիկոսի և Հյուսիսային Հայաստանի նշանավոր եկեղեցական գործիչ Գրիգոր Տուտեորդու 1170-ական թթ. թղթակցությունը: Նամակներից մեկում Տուտեորդին ջերմ խոսքերով մեծարում է ուսական եկեղեցին, կոչելով այն «քրիստոննէութեամբ պատուեալ մեծափառ եկեղեցիս Ըսուզաց»¹¹⁸: Քաղկեդոնականության դեմ անհաշտ պայքարի քաղաքականության ջատագով սանահինցիների գաղափարական դեկավարը երկարնակ դավանանքի որևէ եկեղեցի «քրիստոննէութեամբ պատուեալ» կամ «մեծափառ» կարող էր կոչել այն դեպքում միայն, եթե նա չուր ունենար հունական ճնշումների դեմ նույն այդ եկեղեցու ընդվզումների մասին: Դավանանքով տարբեր, բայց գոյավիճակով նման հայ և ուս եկեղեցիների շահերն այս հարցում համընկնում էին:

Սրանք են, ահա, սակավաթիվ այն նյութերը, որոնք լույս են սփռում կիևահայ գաղթօջախի պատմության հնագույն շրջանի վրա:

XII դ. կեսերից Կիևի պատմության համար սկսվում է նոր շրջան՝ ի հետևանս, նախ, ուսական բաժնեկալվածային իշխանությունների միջև ծայր առած զգվոտոցների, և ապա ավելի մեծ չափով, միջազգային ապրանքափոխանակության մայրուղիների փոփոխության:

Սելջուկ-թուրքերի աշխարհավեր արշավանքները և Իրանի, Անդրկովկասի ու Փոքր Ասիայի բռնագրավումը, Խաչակրաց արշավանքները՝ դեպի մերձավոր արևելյան երկրներ, Երուսաղեմի, Անտիոքի, Կիպրոսի խաչակիր իշխանությունների ստեղծումը Միջերկրականի ամերին, Կիլիկիայի հայկական պետության տնտեսական ու քաղաքական հաջողությունները և, մանավանդ, բյուզանդական կայսրության ամենազարգացած շրջանների բռնագրավումը խաչակիրների կողմից և լատինական կայսրության ստեղծումը այդ

118 Ա. Տեր-Միքելյան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղության համար («Արարատ», 1893, № 4, էջ 349), նաև՝ Աս. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում («Տեղեկագիր», 1948, № 3, էջ 49): Գրիգոր Տուտեորդուց վկայակոչված հատվածը ճիշտ մեկնաբանելու համար պետք է խորամուխ լինել թղթի գրության հանգամանքների ու բովանդակության մեջ: Գրիգոր Տղա կաթողիկոսը Տուտեորդուն հասցեագրած իր երկու նամակներով անդրադառնում է բյուզանդացիների հետ եկեղեցական միություն ստեղծելու նպատակով տարվող բանակցությունների ընթացքին: Նրա միտք բանին այս է. հայերը Քրիստոսի բնության մասին հույների հետ վիճարանելիս՝ ամուր դիրքի վրա չեն գտնվում, ուստի ստիպված են որոշ զիջումներ կատարել: Իր պատասխան թղթով, Տուտեորդին, ամենայն վճռականությամբ մերժում է ավանդական դիրքերից զույգն իսկ զիջում կատարելու հնարավորությունը: Վերջում, շեղարցնելով նուրբ հեղանքը, նա խորհուրդ է տալիս եկեղեցական միությունը գլուխ բերել՝ հայոց գավանանքը պարտադրելով մյուս եկեղեցիներին, այսինքն վճռականորեն մերժում է միության գաղափարն իսկ, քաջ գիտակցելով, որ հույներն ու ֆրանկները միության կոչիք են անում Հայաստանում և հայկական գաղթավայրերում իրենց ազդեցությունն ուժեղացնելու նպատակով: Սանահինցիների առաջնորդը գրում է. «Ի Հոռմս երթիցես, տուր առ նոսա հաւանութիւն և ամենայն ազգին ֆրանկաց, առ ասորիս և քրիստոննէութեամբ պատուել մեծափառ եկեղեցիս Ըսուզաց, խնդրեալ զպատշաճս ի նոցանէ. և միով հաւանութեամբ թէ տայցեն՝ ճանապարհորդեա ի քաղաքն Կոստանդնուպօլիս, տուր զմկրտութիւն լուսաւորութեան, և ըստ օրինաց՝ նախնի քոց հարցն՝ օրհնութեամբ պսակեա զսուրբ Սոփիա, որեարք (տպված է՝ որ է այրք—Լ. Խ.) նոցա, և քրիստոսազարդ փառօրն զարդարեալ, յարևմտից ծագեալ ընդ հիւսիսի կոչել յորդեգրութիւն հաւատոյ սրբոյ աւազանին ծննդեամբ զբարեյաղթ քրիստոսապսակեալ Թագաւորս մեր՝ զսիրելի ամենեցուն, այսպէս հաստատեալ պարծանս առ աստուած, ասելով. «Ահա ես և մանկունք իմ» («Արարատ», 1893, էջ 349):

երկրամասերում, հսկայական ու հեղաբեկիչ հետևանքներ ունեցան Արևելքի ու Արևմուտքի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում:

Մենք արդեն առիթ ենք ունեցել անդրադառնալու իտալական, քաղաքապետությունների՝ Ջենովայի ու Վենետիկի, դեպի Սև ծովի ավազանը կատարած առաջխաղացման և միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների հանգույցներում հենակետեր ստեղծելու պատմական դրվագներին: Այդ երկու թշնամի քաղաքների հակամարտությունից, ի վերջո, հաղթանակով դուրս եկավ Ջենովան. մինչև Կաֆայի գրավումը թուրքերի կողմից (1475 թ.), նրա հսկողության տակ էին գտնվում Ղրիմից և Կովկասի հյուսիս-արևմուտքյան շրջաններից դեպի Եվրոպական երկրներ ձգվող ծովային ու ցամաքային գլխավոր ճանապարհները, որոնց երթուղիների մեջ ևս կատարվեցին փոփոխություններ: Կիևահայ գաղթօջախի պատմության անշուշամբ առաջին հերթին անհրաժեշտ է հիշատակել, որ «Վարյացիներից դեպի Հունաստան» տանող հին ճանապարհը կորցրեց իր երբեմնի նշանակությունը, և նրա դերն իր վրա առավ նախկին ուղեգծից դեպի արևմուտք ձգվող այն նոր մայրուղին, որը Բալթիկ ծովը շաղկապում էր Սև ծովին՝ Վիսլա—Արևմտյան Բուդ—Գնեսար գետերի միջնորդությամբ¹¹⁹:

Այս նոր ճանապարհի տարբեր հատվածներում բարգավաճեցին առևտրաարհեստագործական մեծ նշանակություն ունեցող նոր քաղաքներ. Ադրբեյջանը՝ Գնեսարի գետաբերանի ծովախորշում, Կամենեց-Պոդոլսկը՝ Ռուսաստանից դեպի Մոլդավիա և դեպի Հարավային Եվրոպայի այլ երկրներ տանող ճանապարհների վրա և մանավանդ՝ Լվովը, որը երկու նշանավոր ճանապարհներով (via nova և via antique) կապված էր Լեհաստանի ու կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Միջազգային ճանաչում ստացան նաև Լուցկ և Վլադիմիր (հայկական աղբյուրներում՝ Օլատեմիր) քաղաքները, որոնց վրայով աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում Լիտվայի, հյուսիսային Լեհաստանի, Մադդերբուրգի և Հանզայի մեջ ընդգրկված մերձբալթյան քաղաքների հետ¹²⁰:

Կամենեց-Պոդոլսկ և Լվով քաղաքների հայկական ինքնավար մարմինների մեծաքանակ արձանագրությունները և հայերեն, ղիշախերեն, լեհերեն լեզուներով պահպանված դիվանական բազմաթիվ փաստաթղթերն ու այլ սկզբնաղբյուրներ հնարավորություն են ընձեռում հանգամանորեն լուսաբանելու հայկական այդ խոշոր գաղթօջախների և նրանց հետ կապված մյուս բնակավայրերի պատմության հետ կապված շատ դրվագներ, բացահայտելու նրանց կատարած դերը հարավային Ռուսաստանի (մասնավորապես Գալիցյան և Վոլինյան երկրամասերի) տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում:

Առանց չափազանցության կարելի է հաստատել, դրել է այդ մասին պրոֆ. Ի. Լիննիչենկոն, որ հարավային Ռուսիայի ամենանշանավոր հայկական կենտրոնները՝ Լվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստությամբ, փարթամությամբ և նշանակությամբ՝ մեծ մասամբ ու հատկապես պարտական են

119 В. Т. Пашуто. Очерки по истории Галицко-Волынской Руси, 1950, էջ 167:

120 Я. Д. Исаевич. Культура Галицко-Волынской Руси («Вопросы истории», 1973, № 1, էջ 94—95):

հայերին: Այս ճարպիկ, աշխույժ և բուրբ ասպարեղներում հաջողակ ժողովրդի շնորհիվ էր հատկապես, որ հարավային Ռուսիայի առևտրական կենտրոնները միջնորդի դեր կատարեցին Արևելքի և Արևմուտքի առևտրի ասպարեղում¹²¹:

Հարավային Ռուսաստանում և Լեհաստանում այնքան էին սովոր հայերին տեսնել միայն արևելյան ապրանքներ վաճառողի մենաշնորհային դերում, որ մի ամբողջ շարք արևելյան ապրանքներ՝ «հայկական ապրանք» էին կոչվում¹²²:

Քաղաքական ու տնտեսական այս տեղաշարժերի հետևանքով XII դ. վերջին տասնամյակներից սկսած Կիևը դադարեց ռուս իշխանների աթոռանիստ կենտրոն լինելուց և զրկվեց դարերի ընթացքում հաստատած միջազգային իր կապերի մի մասից: 1240 թ. մոնղոլական հորդաները գրավեցին Կիևը ու այնպիսի ծանր հարված հասցրին նրա տնտեսությանը, որ քաղաքն այլևս անկաթող եղավ վերահաստատելու իր դերագահությունը միջնադարյան ռուսական քաղաքների շարքում¹²³: Շուտով ռուսական եկեղեցու հոգևոր պետը մետրոպոլիտական իր աթոռը Կիևից փոխադրեց Մոսկվայից ոչ հեռու՝ Կլյազմայի վրա գտնվող Վլադիմիր բարգավաճ քաղաքը:

1362—1471 թթ. Կիևը գտնվում էր Լիտովյան մեծ իշխանության տիրապետության տակ, իսկ այնուհետև, մինչև Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ (1654 թ.) ենթակա էր Լեհաստանին, հանդիսանալով Կիևյան վոյեվոդության վարչական կենտրոնը:

Պատմական ձախորդ այս հանգամանքների հետևանքով, ինչպես ասացինք, Կիևը մեծապես տուժել էր ու զրկվել իր երբեմնի փառքից, սակայն սրբխալ կլինեի կարծել, թե երկարատև այդ դարերի ընթացքում քաղաքը չի ապրել վերելքի ու ծաղկման պահեր: Կան որոշակի փաստեր այն մասին, որ շնայած տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, XIV դ. վերջերին վերականգնվել էին Կիևի կապերը Մոսկվայի հետ, և Լեհաստանից Ռուսաստան ձգվող հիմնական ճանապարհն այդ ժամանակ ևս անցնում էր նրա վրայով: Լեհ անվանի գիտնական Մ. Մալովիստի կարծիքով XV դ. Կիևը Մոսկվայից դեպի Կաֆա տանող հիմնական ճանապարհի կարևորագույն հանգրվանն էր: Մոսկվայից Կիև էին ժամանում պատմական նախորդ շրջանից հայտնի ուղիներով, այնուհետև անցնում էին Կանև ու Չերկասս և միշտ երկյուղ կրելով թաթարական հարձակումներից՝ սայլերով ու բեռնակիր անասուններով կրտրում էին տափաստանը, Պերեկոպով մտնում էին Ղրիմ: Ըստ նույն գիտնականի այս երթուղին, շնայած իր վտանգավորությունը, ավելի բանուկ էր, քան այն ճանապարհները, որոնք Մոսկվան կապում էի Կաֆայի հետ Վոլգայի կամ Դոնի վրայով¹²⁴:

121 Տե՛ս Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 3 (հմմտ. Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, էջ 37—38):

122 Մ. Мелуксет-Бек, նշվ. աշխ., էջ 113:

123 Б. Д. Греков, նշվ. աշխ., էջ 501—507; В. Васильевский, նշվ. հոդված, ЖМНП, 1888, июль, էջ 148:

124 Marian Malowist, Kaffa-kolonia genuëska na Krymie i problem wschodni w latach 1453—1475, Warszawa, 1947 (հմմ. М. Н. Тухомиров, Пути из России в Византию, էջ 18—19):

Այս ճանապարհի տնտեսական նշանակության և Կիևի արտաքին կապերի ընդլայնման մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում նաև Միխայիլ Լիտվինը՝ լավատեղյակ մի անձնավորություն (Լիտվայի դիվանագիտական ներկայացուցիչը Ղրիմում), որը հեղինակն է 1548—1551 թթ. ընդգրկող մի հուշագրության. «Կիևը,— գրում է նա,— լի է օտարերկրյա ապրանքներով, քանի որ շկա ավելի սովորական մի ճանապարհ, քան այն հին ու հանրահայտ ճանապարհը, որը տանում է... դեպի Դնեպրի Տավանյան գետանցքը, իսկ այնտեղից էլ տափաստանով դեպի Կիև: Այս ճանապարհով Ասիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Արարիայից, Սիրիայից առաքվում են դեպի Մոսկվա, դեպի Պսկով ու Նովգորոդ... արևելյան բոլոր ապրանքները, այսինքն՝ թանկարժեք քարեր, մետաքս, մետաքսե գործվածքներ, խոնկ, բուրավես նյութեր, դաֆրան, պղպեղ և այլ համեմունք: Այս ճանապարհով հաճախ ուղևորվում են օտարերկրյա վաճառականներ. նրանք կազմում են կարավան կոչվող խմբեր, երբեմն բաղկացած 1000 մարդուց և շարժվում են բազմաթիվ բարձրած սալերի և բեռնավորված ուղտերի ուղեկցությամբ»¹²⁵:

Այստեղ թվարկված ապրանքներն են հենց, որ «հայկական ապրանք» անունն էին ստացել. ուստի պետք չէ տարակուսել, որ Կիևի վրայով դեպի հյուսիս ու, մասնավորապես, դեպի Մոսկվա ուղևորվող «օտարերկրյա վաճառականների» շարքում հայերը կենտրոնական տեղ են զբաղեցրել:

Այս ժամանակաշրջանի Կիևի հայկական գաղթօջախի մասին համեմատաբար ավելի առատ տեղեկություններ են պահպանվել: Հայ-ուկրաինական հարաբերությունների վաստակաշատ ուսումնասիրող Յա. Դաշկևիչը Լվովի հնադարաններում պահվող մի քանի տասնյակ փաստաթղթերի վրա հայտնաբերեց Կիևի հայկական գաղութի ինքնավարության ղեկավար մարմնի՝ տանուտերերի խորհրդի կնքադրոշմը. ԱՅՍ է ՄՈՂՐՆ ՄԱՆԳԵՐՄԱՆԻ ՏԱՆՈՒՏԵՐԱՅԻ մակադրությամբ: Կնիքը բոլորած է. կենտրոնում պատկերված է դառն աստուծո՝ խաչակերպ վերջավորությամբ մի դրոշ պարզած¹²⁶: Այս գյուտով հաստատվեց, որ կիևահայերը կազմակերպված են եղել և ճանաչվել պետության կողմից որպես առանձին համայնք, ունենալով իրենց ինքնավար մարմինները:

Ինչպիսի՞ իրավունքներով է օժտված եղել տանուտերերի այս խորհուրդը հարցին կարելի է պատասխանել հաշվի առնելով այն տվյալները, որոնք վերաբերում են Ուկրաինայի մյուս հայկական գաղթօջախների ինքնավար մարմիններին: 1572—1619 թթ. Լվովի հայկական համայնքի դատարանում որպես

¹²⁵ «Мемуары, относящиеся к истории Южной Руси», т. I, Киев, 1890, էջ 51 (հմմ. М. Фехнер. նշվ. աշխ., էջ 19—20):

¹²⁶ Я. Р. Дашкевич. Армянские общественные печати на Украине. «Թանրեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 240:

Կնիքի դրոշմը կրող փաստաթղթերի ծայրային թվականներն են 1648—1730 թթ.: Այդ շրջանում Կիևի հայկական համայնքը, ինչպես տեսնելու ենք ստորև, այլևս գոյություն չունի. քաղաքում ապրում էր միայն մի քանի հայ ցնտանիք: Սակայն Լվովի հայ տանուտերերը տնօրինում էին եկեղեցուն պատկանող կալվածքների հասույթները և շեն էին պահում եկեղեցին: Կնիքը դորձածում էին հաստատելու համար այն փաստաթղթերը, որոնք առնչվում էին մարած գաղթօջախի եկեղեցուն պատկանող կալվածքներին ու հասույթներին: Այդ հանգամանքը, սակայն, կնիքի իրավական ուժի վրա չի ազդել. պետական մարմինները, քաջ տեղյակ լինելով, որ կիևահայ գաղութը ունեցել է իր ինքնավար մարմինը, նրա մարումից հետո էլ վավերական են ճանաչել այդ մարմնի կնիքը կրող փաստաթղթերը:

գրագիր աշխատող Մինաս Թոխաթեցի բանաստեղծը հայ դատավորների իրավունքների մասին գրել է այսպիսի տողեր.

ՉՀայոց ազգն դոքա դատեն,
Ուխտ և դաշինք կու հաստատեն,
Չապստամբեալսն խրատեն,
Չկարգ և զսահմանքն կու պընդեն:
Երկոտասան դատաւորք են,
Չծուռն և զշիտակն դոքա բնեն,
Չմեղապարտսն վիրաւորեն
Եւ զուղիղսն ադատեն¹²⁷:

«Այսոքիկ դատաւորք,— ասում է նրանց մասին Մ. Բժշկյանը,— կոչէին տանուտեարք, և ամենայն ինչ, թէ աշխարհական և թէ եկեղեցական, նոցին վճռաւ որոշեալ լինէր»¹²⁸:

Համայնքին վերաբերող հարցերով նրանք իրավասու էին դիմելու պետական իշխանություններին, անմիջական հարաբերությունների մեջ մտնելու պետական բարձրագույն ատյանների, նույնիսկ թագավորի հետ, տնօրինելու համայնքի ներքին գործերը, ղեկավարելու բարեգործական հաստատությունները և այլն¹²⁹: Այդպիսի իրավունքներով էր օժտված, անշուշտ, նաև կիևահայերի տանուտեարքի խորհուրդը:

Ստույգ հայտնի է, որ Պոդոլ թաղամասում կիևահայերն ունեցել են համայնքի միջոցներով կառուցված ու շին պահվող հիվանդանոց, որի գոյությունն իսկ առհավատչյան է համայնքի ինքնավար մարմինների աշխույժ գործունեության և նյութական միջոցների առատության¹³⁰:

Հաշվի առնելով Հայաստանի խոշոր քաղաքների և Արևելյան Եվրոպայի հայկական մի շարք գաղթավայրերի մասին առկա տվյալները, կարելի է պընդել, որ Կիևի հայկական ինքնավար մարմինները ևս մեծ շափով մասնակցել են քաղաքի ինքնապաշտպանության աշխատանքներին. ամբույթյունների կառուցման համար նյութական միջոցներ ու աշխատուժ են տրամադրել, աշխարհագորային ազմունակ ուժեր են կազմակերպել ու վտանգի պահին դրանք ազմի դաշտ առաջնորդել¹³¹: Կիևահայերի գործունեության այս կողմը լուսաբանելու համար ևս հարկադրական մի շեղում ենք կատարելու:

127 Ն. Ակիեյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 80. Հմմտ. Վ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկի քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963, էջ 56:

128 Մ. Բժշկյան, Նշվ. աշխ., էջ 216:

129 Վ. Գրիգորյան, Նշվ. աշխ., էջ 56—57:

130 Д. И. Мышко. О жизни армян в Киеве в XV—первой половине XVII вв. «Исторические связи и дружба украинского и армянского народов». Киев, 1965, էջ 113—121:

131 Հայտնի է, օրինակ, որ Կամենեց-Պոդոլսկի հայերն իրենց միջոցներով կառուցել ու դարերի ընթացքում հաճախ վերանորոգել են քաղաքի պարիսպների մի հատվածը, որ հայտնի է Հայկական ամբույթյուն (Армянский редут) անունով: Պարիսպների այդ հատվածի պաշտպանությունը հայերի պարտականությունն է եղել, և նրանք քաղաքը են կատարել իրենց քաղաքացիական պարտքը (Հմմտ. Մ. Բժշկյան, Նշվ. աշխ., էջ 135, Վ. Գրիգորյան, Նշվ. աշխ., էջ 34 և այլն):

Հարավային Ռուսաստանի Կիևյան, Վոլինյան և Պոդոլյան երկրամասերի աշխարհագրական դիրքն ու դարավոր հարևանությունը միմյանց հաջորդող վաչկատուն ժողովուրդների՝ պեչենեգների (IX—XI դդ.), ղփչախների (XI—XIII դդ.), թաթար-մոնղոլների (XIII—XVIII դդ.) հետ՝ իր խորը կնիքն էր դրել նրանց բնակչության կյանքի ու կենցաղի վրա: Արևելյան երկրների հետ հաղորդակցվելու խոշոր գետային ու ցամաքային ճանապարհները՝ «Վարյագներից դեպի Հունաստան» ձգվող գետային ուղիքն և, մանավանդ, Կիևից Ղրիմ տանող կարավանային ճանապարհը՝ անցնում էին քոչվորների հսկողության տակ գտնվող երկրամասերով. և նրանք ոչ միայն դարանակալ հարձակումներ էին գործում անցնող ու դարձող կարավանների վրա, այլև պարբերաբար, զինական մեծ ուժերով, հարձակվում էին ռուսական քաղաքների վրա՝ ավարում, ավերում, գերեվարում: Այդ արշավանքներն ավելի հաճախակի էին դարձել XV դ. 80-ական թթ. հետո, երբ թուրքերին հպատակված Ղրիմի խաները, գրեթե ամեն տարի, իսկ երբեմն նույնիսկ տարին մի քանի անգամ, արշավում էին դեպի Կիև ու հարևան շրջանները՝ հսկայական նյութական կորուստներ պատճառելով խաղաղ բնակչությանը¹³²:

Ավազակային այս ներխուժումների առաջն առնելու համար Կիևի իշխանության հարավային շրջաններում տակավին XI դ. կառուցվել էին մի շարք բերդ-ամրոցներ, որոնք՝ հետագա դարերում ավելի ընդարձակվելով՝ վեր էին ածվել ռազմական ու տնտեսական խոշոր կենտրոնների: XV—XVI դդ. Դրենսկի աշափնյա տարածություններում քոչվորների դեմ մարտնչում էին Կիևը, Կանևը, Չերկասը, Ժիտոմիրը, Բրասլավը, Վիննիցան, Կրիմենեցը, Կամենեց-Պոդոլսկը, Լվովը, Գալիչը¹³³ և այլ քաղաքներ: Այդ ամրոց-քաղաքներում էին պատսպարվում նաև շրջակա գյուղերի բնակիչները, որոնք դաշտային աշխատանքների էին դուրս գալիս զինավառ: Քաղաքացիները իրենց ձիերով ու զեն-

132 «Очерки истории СССР», II, էջ 556. М. Грушевский. Иллюстрированная история украинского народа, СПб., 1913, էջ 154:

133 Հին Գալիչի հայկական գաղութի պատմության համար զգալի հետաքրքրություն են ներկայացնում վերջերս այդ քաղաքի սուրբ Պանտելիմոն եկեղեցում հայտնաբերված հայերեն արձանագրությունները, որոնց գծագրությունները բերված են Օ. Խալիֆալյանի «Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении» հետաքրքրական աշխատության մեջ: Ամրոցային պահպանված և լավ ընթերցվող միակ արձանագրությունը վերծանվում է այսպես (վերծանությունն առաջարկում ենք ձեռքի տակ ունենալով հաջող մի լուսանկար, որ ժամանակին մեզ ուղարկել էր Յա. Գալիչը). «Ես Ասվատուրս Քալային որդին գիրեց գիրս. թվ. ՊՂԳ (1444)»: Օ. Խալիֆալյանը Քալայ անձնանունը վերծանել է «Թուլայզ» (Тулзай) սխալ ձևով, մինչդեռ ճիշտ ձևն ուղադրավ է՝ անչլվելով թոնդրակեցիներին տրված թուլայեցի անվանը:

Օգտվելով աղբյուրից, առաջարկում ենք ևս մեկ ճշգրտում:

Օ. Խալիֆալյանն իր այս ուսումնասիրության մեջ, ինչպես նաև «Պատմա-բանասիրական հանդեսի» 1971 թ. № 2-ում (էջ 254—262) տպագրած հոդվածում, վերատույլ է Սերբիայի Պեարովիցի քաղաքից 10 կմ արևելք գտնվող Վիտովնիցե վանքի եկեղեցիներից մեկի հայերեն կառուցողական արձանագրությունը, որը պատմական կարևոր արժեք է ներկայացնում լինելով հավասարի փաստ այդ երկրամասում հայկական հին գաղթավայրի գոյության: Ճավոր պետք է նշել, սակայն, որ Օ. Խալիֆալյանը (ինչպես և նրանից առաջ ուրիշներ) ճիշտ չի վերծանել արձանագրության ամենակարևոր մասը՝ տարեթիվը: Արձանագրության վերջին փակագիր «Ամէն» բառից առաջ պարզ կարգացվում է «ՈՒՆ» (1178) թվականը: Տասնավոր «Ը» թվի ձախակողմյան ուղղահայաց գծի ներքևի հատվածը կարճ է փորագրված, ճիշտ այնպես, ինչպես կարճ են այդ տառի բոլոր գրությունները նույն արձանագրության մեջ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, «Ը»-ի փոխարեն հարգելի զիտնականը «Կ» է կարգացել, որի հետևանքով եկեղեցու կառուցման թվականը, 1178-ի փոխարեն համարել է 1218-ը:

քերով պարտավոր էին մասնակցել ինչպես պաշտպանական մարտերին, այնպես էլ թշնամուն, հակահարված տալու նպատակով կազմակերպվող արշավներին: Այս պայմաններում քաղաքացիներից յուրաքանչյուրը (արհեստավոր կամ առևտրական) միաժամանակ զենքի սովոր ունենալի էր¹³⁴: Առավել շահով ունենալի էին վաճառականները, որոնք ստիպված էին զենք կրելու և ըստ հարկի այն օգտագործելու առևտրի նպատակով ձեռնարկած իրենց ուղևորությունների ժամանակ: Ըստ ինքյան հասկանալի է, որ կիևահայերը բացառություն չէին կազմում: Նրանք էին հենց կարավաններ կազմած մշտապես երթևեկում վերը հիշատակված վտանգավոր ճանապարհներով: Ուստի հարաժամ պատրաստ պիտի լինեին կողոպտիչներին դիմադրավելու, իրենց անձնու գույքը պաշտպանելու¹³⁵:

Այս անհրաժեշտ ներածականից հետո դյուրավ պիտի հասկանանք և ըստ արժանվույն գնահատենք Միմենն Լեհացու հաղորդած խիստ արժեքավոր տրվյալը Մանքերման-Կիևի հայերի մասին: Վերհիշելով հայկական այդ հին գաղութի փառավոր անցյալը, հայրենասեր հեղինակը ցավով է արձանագրում, որ իր ասյրած ժամանակներում, այսինքն XVII դ. սկզբներին՝ նախկին բազմամարդ ու շեն գաղութից պահպանվել են միայն տխուր հիշատակներ: Նագրում է. «Եւ մեծն Մանքերման ասին թէ յորժամ սէֆէր լինէր, հինգհարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմ, եարար պահատուրնի (այսինքն՝ արի դուցազուններ— է. Խ.). եւ այժմ շորս տուն հայի մնացել է, բայց շատ խանութնի, վախճֆ տներ, ջաղացք, արտեր, պախշանի և այլք դեռ հայոց ձեռքն է»¹³⁶: Ըստ այսմ կիևահայերը վտանգի պահին թշնամու դեմ դուրս էին բերում 500 ուղամիկ-քաղաքացիներ: Այս ուղադրավ տվյալը, գրանցված արժանահավատ ու ճշմարտախոս հեղինակի կողմից, բացառիկ արժեք ունի XV—XVI դդ. Կիևվում բնակություն հաստատած հայերի մոտավոր թիվը որոշելու համար: Եթե նույնիսկ ենթադրենք, որ կիևահայ ընտանիքներից յուրաքանչյուրն ի վիճակի էր աշխարհազորային ունենալու, ապա ընտանիքների թիվը պետք է առնըվազն 500 լիներ, իսկ հայ բնակիչների թիվը՝ 2500-ից ոչ պակաս (ամեն մի ընտանիք 5 անձից բաղկացած համարելով)¹³⁷: Բայց նկատի պետք է առնել և այն հանգամանքը, որ քաղաքում կային նաև երիտասարդ որդի կամ հասուն տղամարդ շունեցող բազմաթիվ ընտանիքներ. եթե նրանց նվազագույն թիվը 100 հաշվենք, ապա կիևահայություն թիվը կավելանա ևս մի քանի հարյուրով:

¹³⁴ Առավել կամ նվազ շահով ունենալի էին միջնադարյան բոլոր քաղաքների բնակիչները, և արևմտյան, և արևելյան երկրներում: Հայտնի է, որ XIII դ. 30-ական թթ. Հայաստան ներխուժած մոնղոլական նվաճողների դեմ հերոսաբար մարտնչեցին հենց քաղաքացի-աշխարհազորայիները՝ Դանձակի, Անիի, Կարսի, Երզնկայի և այլ քաղաքների աշխատավոր բնակչությունը:

¹³⁵ Լեհ պետական պաշտոնյաները վկայել են, որ Կիևի ու մյուս սահմանամերձ քաղաքների բնակիչները սղինված են հրացաններով և գիտեն դիպուկ կրակել» (М. Грушевский, Եզդ. աշխ., էջ 154): Կիևցիները 1523 թ. բողոքագիր են ներկայացրել լեհ իշխանություններին ու մեղադրել իրենց վոյեվոդ Անդրեյ Նեմիրովիչին այն բանում, որ նա անօրեն քայլեր է կատարում, բռնադատում է իրենց ձիերն ու զենքերը, ստիպում արշավի դուրս գալ հեռիտան և այլն (Н. Костоморов. Богдан Хмельницкий, историческая монография, т. I, СПб., 1884, էջ 11):

¹³⁶ Միմեննի գույրի Լեհացույ Ուղևորութիւն, ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936, էջ 347—348:

¹³⁷ Այս հաշվով են առաջնորդվում միջնադարյան քաղաքների բնակչության թիվը մերձավորապես որոշել ցանկացող ուսումնասիրողները:

Քվական այս արդյունքը դուցիս և փոքր-ինչ շափազանցված, արտահայտել է իրական պատկերը: Հայտնի է, որ նույն այդ ժամանակներում Լուցի քաղաքում բնակվել է 800 հայ ընտանիք (այսինքն շուրջ 4000 անձ)¹³⁸, 1566 թ. հայերը Կամենեց-Պոդոլսկում ունեցել են 900 տուն (ընտանիքների թիվը հասել է մինչև 1200-ի)¹³⁹, բազմամարդ է եղել նաև Լվովի հայկական գաղութը: Մուդավիայի Սուլավա մայրաքաղաքում հայերի թիվն անցել է 3000-ից¹⁴⁰ և այլն:

Իրականին մոտ համարելով Սիմեոն Լեհացու տվյալները, կարող ենք հետևցնել, որ Կիևի հայ աշխարհազորայիները պատկանելի ուղղմական թե՛ լինելով՝ ի վիճակի էին ոչ միայն արժանավայել տեղ գրավելու քաղաքի պաշտպանական համակարգում, այլև ապահովելու կիևահայ վաճառականների բոլոր ուղղություններով շարժվող կարավանները հափշտակիչների հարձակումներից:

Ի լրումն վերոհիշյալի հարկ է նշել, որ մեջբերված փաստերի լույսի տակ այլևս կասկածելի չեն կարող համարվել գերմանական, ասպետական միաբանությունների և թուրք-թաթարական զավթիչների դեմ ուսև, լիտվացի և լեհ ժողովուրդների մղած կենաց ու մահու մարտերին հայերի բերած մասնակցության մասին առկա տեղեկություններն ու ակնարկները¹⁴¹:

Կիևի հայոց ինքնավար մարմնի՝ «Տանուտիրաց խորհրդի» հետ միասին, գաղութի կյանքում մեծ դեր է կատարել հայ եկեղեցին՝ միջնադարյան այն միակ կազմակերպությունը, որը սերտ կապեր պահպանելով հայրենի երկրի հետ ու իր հսկողության տակ պահելով գաղափարական ազդեցության բոլոր զսպանակները՝ հսկայական ազդեցություն է ունեցել մայր երկրից ծովերով ու ցամաքներով բաժանված գաղթօջախների բնակչության բոլոր խավերի վրա:

Շուրջ 3000 բնակիչ ունեցող գաղթօջախում, անշուշտ, պետք է գոյություն ունենային մի քանի հայկական եկեղեցիներ, որոնցից միայն մեկի՝ Աստվածածնի վերափոխման եկեղեցու մասին ունենք ստույգ տեղեկություն: Այն կառուցվել է XV դ կեսերին¹⁴²: Տվյալներ կան նաև Կիևի մերձակայքում Գրիգոր Լուսավորչին նվիրված մի տաճարի վերաբերյալ, բայց հայտնի չէ. հայերի՞ն է պատկանել այն, թե եղել է ուսական տաճար¹⁴³: Ուշագրավ է, որ կիևահայերը, մանավանդ ուրիշ վայրերից Կիև ժամանած հայ վաճառականները, հողեր իրենց կարիքները բավարարելու համար օգտվել են նաև ուսական եկե-

138 Սիմեոն Լեհացի, էջ 347:

139 Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 19:

140 «Ученые записки Молдавского филиала АН СССР», том VI (серия историческая), Кишинев, 1957, էջ 262:

141 Նկատի ունենք, մասնավորապես, 1410 թ. Գրոնովալդի և 1444 թ. Վառնայի ճակատամարտերը:

142 Н. Закревский. Описание Киева, том II, М., 1868, էջ 859, том I, М., էջ 453—454 (օգտվել ենք Գ. Միշկոյի վերոհիշյալ հոդվածից):

143 Л. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 120: Ռուսաստանի տարբեր վայրերում եղել են Գրիգոր Լուսավորչին նվիրված տաճարներ և, ավելի մեծ քանակությամբ՝ առանձին խորաններ. օրինակ Նովգորոդի մոտ գտնվող և 1198 թ. կառուցված Փրկչի եկեղեցու (Спас Нередицы) խորանի արտիզի վրա նկարված են Գր. Լուսավորչի, իսկ հյուսիսային պատին՝ Հոսիսիմյան կույսերը: Գր. Լուսավորչի պատկերված է նաև Խուսիսի վանքի հենց Լուսավորչի անվամբ 1445 թ. կառուցված եկեղեցում և այլն (տե՛ս Օ. X. Халпахчова, նշվ. աշխ., էջ 12—13):

ղեցիներից: Այդ եկեղեցիների մայրը համարվող Սբ. Սոֆիայի տաճարում՝ Սբ. Անտոնի և Սբ. Թեոդորոսի խորանի հյուսիսային պատին, պահպանվել են Գրիգոր Լուսավորչի և Հովհաննիսի որմնանկարները. դրանց՝ ինչպես և տաճարի այլ մասերի որմնանկարների վրա վերջերս հայտնաբերվեցին Ղրիմից, Աղքերմանից և այլ վայրերից Կիև այցելած հայ վաճառականների և հոգևորականների կողմից խազված 24 հիշատակագրություններ¹⁴⁴. Հայերեն տառերի հետքեր նկատվում են նաև տաճարում գտնվող Յարոսլավ Իմաստունի սարկոֆագի կափարիչի վրա¹⁴⁵:

Վերջերս հայտնի դարձավ, որ Կիև-Պեչորյան վանքի ստորգետնյա նորահայտ լաբիրինթոսներում ի հայտ են բերվել բացառիկ արժեք ունեցող ուսսերեն, լեհերեն և հայերեն արձանագրություններ: Յավոք, դրանք դեռևս չեն հրատարակվել, ուստի հայտնի չէ, թե երբ են գրվել և ինչ բովանդակություն ունեն¹⁴⁶:

Կիևում մեկից ավելի հայկական եկեղեցիներ լինելու մեր ենթադրությունն ուժ է ստանում լեհական աղբյուրներից քաղված մի վկայությամբ, ուր խոսք կա 1371—1378 թթ. Կիևում հայ եպիսկոպոսության առկայության մասին¹⁴⁷: Մի նոր շեղում կատարելով, փորձենք լուսարանել այս հարցը:

1328 թ. մի հիշատակարանի մեջ, առաջին անգամ լինելով, հիշվում է Սուղդացի (Սուրոժցի) Գրիգոր քահանայի որդի Ստեփանոս եպիսկոպոսը, որպես «երջանիկ արքեպիսկոպոս... Խրիմի աշխարհին»: Նրա թեմի կենտրոնն է Կաֆա քաղաքը: Չի անցնում երկու տասնամյակ և նույն այդ հոգևոր գործիչը հիշատակվում է իր ժամանակակիցների կողմից՝ արդեն որպես «Ամենայն հիւսիսային (կամ հիւսիսակա՛ն) կողմանց» կոչվող թեմի առաջնորդ¹⁴⁸: Դժվար չէ կուսհել, որ այն ժամանակ Կաֆայում նստող հայ արքեպիսկոպոսին էին ենթարկվում Ղրիմից հյուսիս ընկած երկրամասերը, ուստի նաև Կիևում քնակություն հաստատած հայերը: Կացությունն, ըստ երևույթին, փոխվել է 1360—1370-ական թթ., երբ, ինչպես ասացինք վերը, Կիևում հայտնվում է ինչ-որ հայ եպիսկոպոս: Այդ մասին լուր ունի նաև Ալոյիսիոս Պիդուն. «զԿիև ասին լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին հայոց, ուրանոր

¹⁴⁴ Այս կարևոր արձանագրությունների մեծ մասը թվագրված է. կան 1507, 1510, 1514, 1537, 1545, 1556, 1557, 1551, 1575, 1577, 1605, 1607 թթ. հիշատակագրություններ, որոնք խնամքով հրատարակել է արձանագրագետ Գ. Գրիգորյանը (տե՛ս նրա «Армянские надписи Киевского собора святой Софии» հոդվածը՝ «Լրարեր», 1979, № 4, էջ 85—93): Դրանց մեջ Կիևը հիշատակված է իր Մանրուման (նաև՝ Մանրուման) անունով, ճիշտ այնպես, ինչպես կոչվում էր այդ քաղաքը միջնադարյան պարսկերեն, արաբերեն, լատիներեն, հայերեն մի շարք աղբյուրներում (տե՛ս Լ. Ս. Хачикян. Новые материалы о древней армянской колонии Киева. «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, էջ 110—120):

¹⁴⁵ Վ. Հառարյունյան, Հայկական մի արձանագրության մասին («Տեղեկագիր», 1956, № 5, էջ 110):

¹⁴⁶ Е. Оберемок. Встреча с легендой. «Комсомольская правда», 1979 г. 30 июня, էջ 4:

¹⁴⁷ Я. Р. Дашкевич, նշվ. հոդվածը, «Բաները Մատենադարանի», № 11, 1973, էջ 241:

¹⁴⁸ «ՓՊ դարի... հիշատակարաններ», էջ 208, 350, 370, 397, 400, 410:

պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին... այլ և իրաւունս ունէր ձեռնարդրելոյ եպիսկոպոսունս», — գրում է նա¹⁴⁹:

Լվովի հայկական առաջնորդարանում անցյալ դարի վերջերին պահվում էին Հայոց կաթողիկոսների կողմից առաքված բազմաթիվ կոնդակներ. դրանք խնամքով հրատարակված են Ղ. Ալիշանի կողմից: Կոնդակներից առաջինը՝ արված Մեսրոպ կաթողիկոսի կողմից, կրում է 1364 թվականը և ծանուցում է Լվով կենտրոնով եկեղեցական մի նոր թեմ ստեղծելու վճիռը¹⁵⁰: Այնտեղ միաժամանակ ասված է, որ տարիներ առաջ, նույն այդ կողմերում եղել են ուրիշ առաջնորդ-եպիսկոպոսներ, որոնք, սակայն, զործել են «առանց մերոյ աթոռոյս հրամանի»: Ինչպիսի հասկանալի այս տեղեկությունը: Արդյո՞ք Գանձասարի կաթողիկոսներն են առաջին քաջերը կատարել այս երկրամասերում հայկական եկեղեցական թեմ հաստատելու ուղղությամբ, թե՞ ինքնազուտի ինչ-որ եկեղեցականներ են հրապարակ իշել, ենթակա չլինելով որևէ կաթողիկոսի: Այս հարցերին առայժմ չենք կարող հիմնավոր պատասխան տալ:

Հաշվի առնելով, ահա, այդ հանգամանքը, Մեսրոպ կաթողիկոսը եպիսկոպոս է օծում Գրիգոր անունով մի հոգևորականի և թեմական առաջնորդի պաշտոնով ուղարկում Լվով: Կոնդակի մեջ նորաստեղծ թեմի սահմանները նշված են այսպես. «Այլ և մերով բարձր առաքելական և հայրապետական ամենեքեկի հրամանաւ պարգևացար զձեզ՝ ըզլաւիդ, և ըզԱւլայտէմիր, իւր սահմանեալ վիճակադ՝ Լուցկայի», այսինքն՝ Գալիցիայի և Վոլինիայի նշանավոր քաղաքները՝ Լվովը, Վլադիմիրը և Լուցկը¹⁵¹: Կիևն այստեղ չի հիշատակված և գուցե այն պաաճառով, որ Կիև կենտրոնով եղել է հայ եկեղեցու մի ուրույն թեմ: Պետք է նշել, սակայն, որ մի քանի տարի անց փոխվում է իրավիճակը. 1379 թ. պարոն Նասրատինի որդի Հովհաննես կրոնավորը, հավանաբար Կաֆա քաղաքից մեկնում է Սիս՝ ինչ-որ թեմի (բացառված չէ, որ հենց Կիևի) եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Կաթողիկոսը, գծաված լինելով Լվովի առաջնորդ վերոհիշյալ Գրիգոր եպիսկոպոսի հետ, այս Հովհաննեսին եպիսկոպոս է կարգում ոչ միայն Լվով, Վլադիմիր ու Լուցկ քաղաքներն

149 Ա. Պիդու, Կարճատ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ և ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ և մերձակայ աշխարհաց (տե՛ս Վե՛ս Վե՛ս միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցոյն Հոռովմայ, ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16): Կիևի հայ եպիսկոպոսի մասին Ա. Պիդուի հաղորդած տվյալները՝ գրավոր հիմք չեն ունեցել (նա գրում է «...ասեն լինել...»): Կարելի է կարծել, որ նա կամ իր տեղեկատուն Կիևի երբեմնի հայ եպիսկոպոսին օժտել է պատրիարքական իջավունքներով (այդ եպիսկոպոսն, իբր, իրավունք է ունեցել նույնիսկ ինքնազուտի կերպով ուրիշ եպիսկոպոսներ ձեռնադրելու...), փորձելով «փաստերով» հիմնավորել նիկոյ Քորոսովիչի անօրինական գործողութիւնները և պայքարը Հայոց եկեղեցու գերագահութեան դեմ (հիշենք, որ Ա. Պիդուն կաթոլիկ կղերական էր, որ միջոցների առջև կանգ չէր առնում, նիկոյ Քորոսովիչի հետ միասին, Լվովի հայերին բռնի կաթոլիկ դարձնելու համար):

150 Ղ. Ալիշան, Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հաւատաշէայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 5—8:

151 Լուցկի հայոց եկեղեցին սուրբ Ստեփանոս անվան էր. գոյություն է ունեցել 1445-ից շատ առաջ: Այդ թվականին Լիտվական իշխան Ավիգրիգայուն հայկական այդ եկեղեցուն նվիրել է ձեպերով գյուղը. հետագայում եկեղեցին ձեռք է բերել նաև այլ կալվածքներ («Հայ ժողովրդի պատմություն», հատոր IV, Երևան, 1972, էջ 362: Տե՛ս նաև Ե. Բ. КОЛОСОК, П. П. Мах, Л. П. Сажаров. Луцьк, Київ, 1972, էջ 17, ուր գրված է. «Գալիցո-Վոլինյան առևտրի բնագավառում հայերի կատարած դերը փոքր չէ. Վոլինում նրանք հաստատվել են արդեն XIII դ.: XIV—XV դդ. նրանք Լուցկում կառուցել են եկեղեցի»):

ընդգրկող թեմի վրա, այլև մեծապես ընդարձակում է հայ դաղթաշխարհի այդ առաջնորդության սահմանները՝ նրան հնթակա դարձնելով հին Ռուսիայի և Մուղավիայի բոլոր հայկական դաղթօջախները: Թեմական նոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը մի կարևոր հիշատակարանի մեջ կոչված է «Ամենայն Ըոսաց և Ալախաց աշխարհի» հայոց առաջնորդ¹⁵², իսկ նրա գլխավորած ընդարձակ թեմի սահմանները 1388 թ. կաթողիկոսական կոնդակի մեջ թվարկված են այսպես. «...գրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ, յանուանի և յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լուվն և յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչովն, ի Կամենեցն, ի Լուցկայն, ի յԱլատէմուրն, ի Մանքրման, ի Վըլախաց երկիրն, և ի Պտինն, ի Ընկի-Սալայն, և ի յայլ ամենայն թեմն իւր առ հասարակ»¹⁵³:

Այստեղ հիշատակված են, առաջին հերթին, Մուղավական, ապա Գալիցիայի և Վոլինիայի ամենանշանավոր ու բազմամարդ հայկական դաղթօջախները: Թվարկումը կատարված է հաշվի առնելով նրանց աշխարհագրական դիրքը՝ հարավից հյուսիս. նախ Մուղավիայի Սերաթ և Սեչով (գրված՝ Չիչով) քաղաքները, ապա Կամենեց-Պոդոլսկը, Լուցկը, Վլադիմիրը, Կիևը (Մանքրման)¹⁵⁴. այնուհետև հիշատակված է Վլախաց երկիրը՝ միջնադարյան Վալախիան, որի նշանավոր քաղաքներում ևս (Տրգովիշտեում, Բուխարեստում և այլն) վաղ ժամանակներից բնակվել են հայ դաղթականներ: Որոշ դժվարությունների ենթահանդիպում վերջին երկու՝ Պտին և Ընկի-Սալայ տեղանունների ճշգրտման ճանապարհին:

Ղ. Ալիշանը, կասկածանքով, Պրտինը նույնացրել է Հունգարիայի մայրաքաղաք Պուտա-Քէշտի (իմա՝ Բուդապեշտ) հետ¹⁵⁵: Կարծում ենք, որ կասկածների հիմք չկա, քանի որ Կամենիցյան «Տարեգրքում», 1526 թ. վերաբերող մի գրանցման մեջ այդ մասին ասված է շատ որոշակի. «զՊուտին քաղաքն՝ որ էր դախթն Մաճարաց» (այսինքն՝ «Պուտին քաղաքը, որ Մաջարների աթոռանիստն էր»)¹⁵⁶:

Մնում է պարզել Ընկի-Սալայ կոչված բնակավայրի տեղագրությունը: Մեր կարծիքով կաթողիկոսական կոնդակը հարդարող գրագիրը կամ Ղ. Ալիշանի համար արտագրող անձնավորությունը՝ այս տեղանունը սխալ է վերծանել. բնագրում, մեծ հավանականությամբ, եղել է Ընկի-Սարայ, այսինքն՝ Ենկի (նոր) Սարայ. հայտնի է, որ այդպես էր կոչվում Ոսկե Հորդայի նոր մայրաքաղաքը՝ Սարայ-Բերքեն, ուր, ինչպես ասել ենք արդեն, հաստատվել էին մեծ քանակությամբ հայ դաղթականներ:

Կրկին դառնալով հայ եկեղեցու «Ամենայն Ըոսուցաց և Ալախաց» կոչվող թեմին, պետք է եզրակացնենք, որ այդ թեմի առաջնորդի հոգևոր իշխանությունը, ընդգրկելով անձայրածիր տարածություններ, իր մեջ է առել Ոսկե

152 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1527, էջ 7ա, 667բ (հմտ. «ԺՂ դարի... հիշատակարաններ», էջ 529):

153 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 9. տե՛ս Թեոդորոս կաթողիկոսի կոնդակը:

154 Մանքրմանի կապակցությամբ Ղ. Ալիշանը գրել է. «համարիմք Ագրեման», այսինքն՝ նույնացրել է Գնեստրի գետաբերանի նշանավոր նավահանգիստ, վաճառաշահ Ագրեմանի հետ: Արդեն ապացուցել ենք, որ Մանքրմանը Կիևն է (տե՛ս մեր «Новые материалы о древней армянской колонии Киева», վերահիշյալ հոդվածը):

155 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 4:

156 նույն տեղում, էջ 17:

Հորդայի մայրաքաղաքից սկսած մինչև Հունգարիայի մայրաքաղաքն ընկած երկրամասերի հայկական գաղթօջախները:

Կիև-Մանրերմանը, եթե նույնիսկ չի եղել երբևէ աթոռանիստ կենտրոն, ապա, անտարակույս, նշանակալից դեր է կատարել՝ որպես այս թեմի ամենաբազմամարդ հայկական գաղթօջախներից մեկը:

Լիտվայի մեծ իշխան, նշանավոր Կազիմիր IV-ի¹⁵⁷ կողմից տրված հրովարտակներով կիևահայերը քաղաքի բուն բնակիչներին համահավասար իրավունքներ են ձեռք բերել տնտեսական գործունեության բոլոր մարզերում. ազատորեն զբաղվել են առևտրով ու արհեստներով, կառուցել են տներ, ունեցել բանջարանոցներ և այլն:

Հայերի բնակության հիմնական վայրը եղել է Պոդոլ թաղամասը՝ Դնեպրի ափին. այստեղ նրանք ունեցել են իրենց հավաքատեղին, բազմաթիվ բնակելի տներ, արհեստանոցներ, խանութներ ու պահեստներ¹⁵⁸: Գաղթօջախի բնակչության մեծամասնությունն, անշուշտ, զբաղված է եղել առևտրով: Եղել են մեծահարուստ վաճառականներ, որոնք մտել են քաղաքի արտոնյալ դասի մեջ և օգտվել Մագդեբուրգյան իրավունքից¹⁵⁹: Կարելի է ենթադրել, որ այդ դասի մեջ էին մտնում նաև հայազգի սակավաթիվ պետական պաշտոնյաները¹⁶⁰, ինչպես նաև թարգմանի պաշտոն ունեցող անձինք, որոնք հաճախ կատարում էին դիվանագիտական հանձնարարություններ: Հայեր են եղել նաև բերդաբնակ քաղաքացիների մեջ, բայց հայերի մեծամասնությունը, ինչպես ասվեց, բնակվել է Պոդոլ թաղամասում. այստեղ է կառուցված եղել նաև Աստվածածնի վերափոխման եկեղեցին:

Վաճառականներից և առևտրի հետ աղերսվող այլ զբաղմունքի տեր քաղաքացիներից բացի, կիևահայերի մեջ եղել են մեծ թվով արհեստավորներ. կաշիզործներ, մուշտակագործներ, կոշկակարներ, գինեգործներ, ջրաղացալաններ և այլն:

Հայկական գաղթօջախների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, ինչպես և սպասելի էր, կենտրոնական տեղ է հատկացվում առևտրական դասի գործունեության հարցերին: Արհեստագործության տարրեր ճյուղերի զարգացման գործում հայերի կատարած դերի մասին նույնպես որոշ նյութեր են գրվել շրջանառության մեջ: Գրեթե անտեսված է, սակայն, գյուղատնտեսության բնագավառը: Միջնադարյան քաղաքների բնակչության մի զգալի մասն զբաղվել է գյուղատնտեսությամբ: Անվարան կարելի է նշել, որ գրեթե բոլոր երկրներում, ուր ստիպված խարխախ են նկատվում տարագիր հայ զանգվածներ, նրանց մեջ եղել են հմուտ ալգեզործներ և բանջարաբույծներ:

¹⁵⁷ Մեծ իշխան է եղել 1440—1447 թթ., այնուհետև դարձել է Լեհաստանի թագավոր. մահացել է 1492 թ.:

¹⁵⁸ Դ. Մ. Мелько, նշվ. աշխ., էջ 115—116:

¹⁵⁹ Մագդեբուրգյան իրավունքից օգտվող, ուստի հայկական ինքնավար մարմինների իրավասությունից զուրս գտնվող մեծահարուստ բոլոր հայ վաճառականներին ճանաչելն անհնարին է. նրանցից շատերի անուն-ազգանունները առևտրականացված են այն աստիճան, որ հայկական ծագման հետքերն իսպառ ջնջվել են: Անկասկած հայեր են ստորև հիշատակվողները. Իլյա Օրմենին, Յուլյեյ Օրմենին, Մորոզին Օրմենին, Կիրկոբ Օդիրկովիչ, Ֆեդկո Սերկիզեն (տե՛ս Դ. Մ. Мелько, նշվ. աշխ., էջ 117):

¹⁶⁰ Այդպիսի բարձրաստիճան մի պաշտոնյա է եղել Փիլիպպոս Հայր, որը երկարամյա ծառայությունների դիմաց 1540 թ. Լիտվայի մեծ իշխան Սիգիզմունդից կալվածքներ է ստացել Կիևի շրջակայքում (Դ. Մ. Мелько, նշվ. աշխ., էջ 115):

Եվ նրանք մեծ ջանքեր են գործադրել իրենց նոր բնակավայրերում արմատավորելու գյուղատնտեսական բարձր կուլտուրաների մշակութունը: Նույնը պետք է ասել նաև կիևահայերի մասին: Քաղաքից դուրս՝ շրջակա գյուղերում¹⁶¹, և քաղաքի տարբեր թաղամասերում՝ Շչեկավիցայում, Օբոլոնում, Վիշգորոդի մոտակայքում, և, մանավանդ, իրենց բնակության բուն վայրում՝ Պոդոլում, հայերն ունեցել են այգիներ, ստեղծել են գինեգործարաններ, և իրենք էլ վաճառքի են հանել իրենց սլատրաստած գինիները: «Հայերը, — իրավացիորեն նշել է Դ. Միշկոն, — որպես գինեգործության բնագավառի մասնագետներ, եռանդուն կերպով նպաստել են խաղողագործության զարգացմանը Կիևում»¹⁶²:

Գաղթած լինելով դաշտավարական և այգեգործական մշակույթի հազարամյա ավանդույթներ ունեցող մի երկրից, գյուղատնտեսության մարդում աշխատող կիևցի հայերը, անտարակույս, կիրառելու էին երկրագործության մշակույթի իրենց նախնիներից ժառանգած արդյունավետ եղանակները, հայ-

161 «Պատմական փաստաթղթերը, — գրել է Դ. Միշկոն, — վկայում են, որ այդ ժամանակ (XV դ.) հայերը Կիևի մոտակայքում՝ Կուրեննկայում, Սիրեցում, Փխտովրյան ճանապարհի երկայնքով՝ ունեցել ու մշակել են բանջարանոցներ և այգիներ» (նշվ. աշխ., էջ 114):

162 Այս առիթով հարկ ենք համարում, մի փոքր շեղում կատարելով, հարևանցիորեն անդրադառնալ միջնադարյան Ղրիմի խաղողագործության զարգացման գործում հայերի կատարած դերին, որ երբեմն անտեսվում է որոշ ուսումնասիրողների կողմից (տե՛ս, օրինակ, М. К. Старокадомская. Русское торговое население гегуэзской Каффы. «История и археология средневекового Крыма», М., 1958, էջ 154): Վ. Միրալեյանն արդեն լույս է սփռել այս հարցի վրա (տե՛ս «Ղրիմի հայկական գաղութի պատմություն», I, էջ 201): Ավելացնենք, որ Սուրխաթում և Կաֆայում ընդօրինակված հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրանցված են մի շարք հայ այգեգործ-գինեգործների անուններ. հիշատակված են, օրինակ, Գրիգորիս և Տուրք այգեպանները, Աղբարշահ, էվատշահ և Օղուլ գինեգործ-գինեծախները (տե՛ս «ՓԳ դարի... հիշատակարաններ», էջ 366, 367, 576, «ՓՆ դարի... հիշատակարաններ», Բ, էջ 112):

Գոնի տափաստանում, ինչպես և Հյուսիսային Կովկասի մի շարք շրջաններում ևս (մասնավորապես Ղզլարում և Մոզդզեկում)՝ խաղողագործության զարգացումն անխզելիորեն կապված է հայերի անվան հետ (Վ. Բ. Բալխուպաշյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 146): Ըստ որոշ տեղեկությունների, Ֆրանսիայի Փիլիպպոս Հանդուգն թագավորը (1342—1402) Հայաստանից հրավիրել է հայ գինեգործներ, որոնց գործածած հնձանները ցարդ պահվում են Գիժոնի գինու գործարանում (Ա. Ալպոշաճյան, Պատմություն հայ գաղթականության, Բ, Գահիրե, 1955, էջ 618): Տեղեկություններ կան Աֆղանըստանի Քարուլ քաղաքում գինեգործությամբ զբաղված հայերի մասին և այլն: Ի լրումն այս ամենի հիմքեր կան ենթադրելու, որ հայերը խաղողագործությամբ և գինեգործությամբ ըզրադվելու որոշ փորձեր են կատարել նույնիսկ հեռավոր Չինաստանում, տակավին Քան գինաստիայի տիրապետության զարաշրջանում, այսինքն՝ 618—907 թթ. միջոցին: Պահպանվել են այդ ժամանակ պատրաստված հախճապակե գունազարդ արձանիկներ՝ տարբեր ազգի մարդկանց՝ ույզուրների, թոխարցիների, կաշգարցիների, խորեզմցիների, պարսիկների, սեմական ժողովուրդների և այլոց դիմորոշ պատկերներով: Գրանց շարքում ուշագրավ տեղ են գրավում հայի արտաքին հատկանիշներով (արծվակտուց-կեռ թիթ, սև բևի ու մորուք) օժաված անձանց արձանիկները, որոնք կերտված են ծալապատիկ նստած և յուրաքանչյուրը մեկական է ՝ ինով լի տիկ բանած (The werteners among the figurines of the t'ang dynasty o China, by Jane Gaston Mahler, Roma, 1959. գունավոր ներդիրը՝ զբված 94—95 էջերի միջև և պատկերների բաժնի III a, b, c, d սև-սպիտակ լուսանկարները):

Այս մի քանի փաստերը հիշատակեցինք այն հույսով, որ առաջիկայում որևէ տնտեսագետ-պատմաբան, խնամքով հավաքելով ցարուցրիվ բոլոր նյութերը, հատուկ հետազոտություն է գրելու տարբեր երկրների գյուղատնտեսության զարգացման գործում հայ գաղթականների կատարած դերի մասին:

րենիքից բերած կամ հայրենի ավանդույթներով ստեղծած արտադրական գործիքները՝ նպաստելով դրանց տարածմանն ու արմատավորմանը աշխարհագրական այդ նոր միջավայրում¹⁶³։

Այս առումով հետաքրքրական են նաև Կիևի հայկական համայնքին պատկանող ջրաղացների մասին առկա տեղեկությունները։ Միմեոն Լեհացին իր «Ուղեգրության» մեր կողմից արդեն մեջբերված հատվածում հավաստում էր լուկ, որ Կիևում հին ժամանակներից մինչև իր օրերը, գործում էին հայերին պատկանող ջրաղացներ։ Դրանց մասին տեղեկություններ կան նաև օտար աղբյուրներում։ Փաստաթղթերը վկայում են, գրել է Դ. Միշկոն, որ հայերը Միրեց գետի վրա ունեցել են ամբարտակ, արհեստական լճակ ու ջրաղաց, որից ստացվող եկամուտը հատկացված է եղել եկեղեցու կարիքներին¹⁶⁴։ Հիշատակված ամբարտակն ստեղծվել է, անշուշտ, Միրեց գետի ջուրը ջրաղացի թափանիվն աշխատացնելու համար անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու նպատակով։ Պետք է ենթադրել, որ Հայաստանում լայն տարածում գտած ջրաղացների նմանողությամբ Կիևի մերձակայքում կառուցված ջրաղացներն ընդօրինակվել են տեղացիների կողմից, տարածվել շրջակայքում, և իրենց նպաստը բերել հացահատիկի աղացման տաժանակիր աշխատանքի դյուրացման գործին։

Տնտեսության տարրեր բնագավառներում կիևահայերի ծավալած գործունեության բնագավառները վերոհիշյալով շին կարող սպասված նկատվել։

Որոշ ուսումնասիրողներ, օրինակ, հարևանցիորեն նկատել են, որ հայ ճարտարապետության ու որմնանկարչության ազդեցության հետքեր են նրկատվում սուրբ Սոփիայի տաճարի, Միքայել հրեշտակապետի ոսկեզմբեթվանքի և Կիևի ճարտարապետական հնագույն այլ հուշարձանների վրա¹⁶⁵։ Կա՞ն արդյոք հիմնավոր փաստեր այսպիսի եզրահանգումների համար, չբնութենք։ Հարցը կարևոր է և կարոտ մասնագիտական անկանխակալ հետազոտությունների։

Ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում ևս մի հարց։ Հայտնի է, որ կլովում՝ Գալիցյան Ռուսիայի հայաշատ այդ մայրաքաղաքում, հայ վարպետների կողմից, թերևս հենց հայ վաճառականների նախաձեռնությամբ, կոփվել են սեփական արծաթե դրամներ¹⁶⁶։ Արծաթե նման դրամներ հատվել են

163 Նշանավոր հնագետ Ա. Վ. Արցիխովսկին, որ շեշտում է արտադրական գործիքների զարգացման փուլերի ուսումնասիրության սոցիոլոգիական կարևոր նշանակությունը, ձեռքի տակ շունենալով վստահելի աղբյուրներ, հեռամեծ դատողություններ է անում բնարկման նյութ դարձնելով Հոռոմի երկրագործական մշակույթի մասին հայտնի նյութերը, որոնք Ռուսաստանի հետ անմիջական առնչություն չունեն (տե՛ս А. В. Арциховский, Социологическое значение эволюции земледельческих орудий. «Труды социологической секции РАНИОН», 1927, էջ 133)։ Պետք է հուշել, որ շոշափելի արդյունքներ կարելի է ստանալ հայկական նյութի օգտագործման ճանապարհով, նկատի առնելով հայկական բազմաթիվ գաղթօջախների գոյությունն ու հայ երկրագործների և այգեգործների գործունեությունը ուսական այդ երկրամասերում։

164 Д. Мышко, նշվ. աշխ., էջ 115։

165 Նույն տեղում, էջ 114։

166 Я. Д. Исаевич, նշվ. աշխ., («Вопросы истории», 1973, № 1, էջ 95)։ Այստեղ ասված է, որ Մոլդավական դրամակշտային համակարգը ձևավորվել է Գալիցյան համակարգի օրինակով։ Նկատի ունենալով մոլդավական բաղաճներում հայ առևտրական կապիտալի կատարած մեծ դերը, կարելի է հետևել, որ դրամակոփության գործն այստեղ ևս հայերի մենաշնորհն է եղել։

նաև Կիևում՝ X դ. վերջերին—XI-ի սկզբներին (դրանից հետո, երկար ժամանակ, շրջանառության մեջ են գտնվել Կիևում պատրաստված որոշակի կշիռ ունեցող արծաթե կշռաչափերը)¹⁶⁷: Դրամագետների գործն է, առաջիկայում հատուկ ուսումնասիրության նյութ դարձնելով այս հարցը, պարզել, թե Կիևյան դրամների ու կշռաչափերի արտադրության մեջ ինչ դեր է վիճակված եղել հայ վարպետներին:

Լուծման կարոտ հարցերի այս շարքը կարելի է չբացնել նոր կետերով, որոնք, վերը թվարկվածներին դումարվելով, հաստատելու են այն միտքը, թե կիևահայ գաղթօջախի պատմության ամբողջական պատկերը ուրվագծելու համար հաղթահարվելու են դեռևս շատ դժվարություններ:

Լեհաստանի և Լիտվական մեծ իշխանության միջև կնքված Լյուբլինյան դաշնագրից հետո (1569 թ.) Կիևի վիճակը ավելի է վատթարանում: Լեհ ազնվականությունն ու կաթոլիկ եկեղեցին սկսում են բռնազրավել ուկրաինացիներին և հայերին պատկանող քաղաքամերձ կալվածքները: Ըստ երևույթին հենց այս ժամանակ մեծ ծավալ է ստանում կիևահայերի արտագաղթը հարավ-արևելյան Եվրոպայի վաճառաշահ այլ կենտրոններ: Արտագաղթի հոսքը չի դադարում նաև այն բանից հետո, երբ Բեչչոսպոլիտայի թագավոր Ստեփան Բատորին (1575—1586) հատուկ հրովարտակով վերահաստատում է հայերի իրավունքը՝ Կիևում կալվածքներ, խանութներ, արհեստանոցներ ունենալու 1596 թ. կնքվում է Բրեստի եկեղեցական ունիան. Ուկրաինական եկեղեցին ստիսորդարար միավորվում է կաթոլիկ եկեղեցու հետ և բնգունում Հոռմի պապի գերիշխանությունը: Դրանից հետո, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Միշկոն, կիևահայերը շատ ավելի անզուսպ ճնշումների են ենթարկվում: Կաթոլիկ և ունիթոն հոգևորականները կանգ չեն առնում միջոցների առջև՝ հայերին ևս կաթոլիկ դարձնելու և հայ եկեղեցուն պատկանող կալվածքները բռնազրավելու ճանապարհին: Կիևը չլքած սակավաթիվ հայերը, Լվովի հայկական մագիստրատի օժանդակությամբ, փորձում են դիմադրավել այդ ճնշումներին, իրենց ձեռքում պահել համայնապատկան կալվածքները, սակայն այդ պայքարն, ի վերջո, անհաջող վախճան է ունենում:

Եվ այսպես, XVII դ. կեսերին կիևահայ գաղութը՝ շուրջ վեց հարյուրամյակ գոյություն ունենալուց հետո եզրափակում է իր պատմության միջնադարյան շրջանը: Խամրում է գաղթօջախը՝ հսկայական դեր կատարելով հայ և ուրա ժողովուրդների միջև տնտեսական ու մշակութային կապերի ստեղծման ու ամրապնդման բնագավառում, մի քանի տասնամյակ հետո, պատմական ու սոցիալ-տնտեսական նոր պայմաններում նորից վերակենդանանալու հեռանկար ունենալով:

Իրենց հաջաքը դեպի Ռուսաստան ուղղած հայերի համար Կիևի տեղը բռնում է համայն Ռուսիայի նոր ու հզոր մայրաքաղաք Մոսկվան:

Ինչ ճանապարհով էին հայ վաճառականները Կիևից ուղևորվում Մոսկվա, առաջժամ այդ հարցին պատասխանելու հնարավորություն չունենք: Ամենակարճ ուղին Գեմնա գետի եզերքով էր բնթանալու և կանգառներ էր ունենալու Նովգորոդ-Սևերսկ ու Բրյանսկ քաղաքներում: Սակայն չի բացառված նաև Գնեսլայից ուղին՝ Լյուբեչ, Գոմել, Սմոլենսկ կանգառներով: Սրանցից սրն է

¹⁶⁷ В. Л. Янин. Денежно-весовые системы русского средневековья. Домонгольский период, М., 1956.

ավելի բանուկ եղել և երբ, կարելի կլինի սլարզել մանրակրկիտ հետազոտություններ կատարելուց հետո:

Հայտնի է, որ XV դ. սկսած Պուտիվլ քաղաքը դառնում է տնտեսական-աշխույժ կապերի աչքի ընկնող կենտրոն: Արիմից ու Քուրքիայից Պուտիվլ են ժամանում օտարազգի (նաև հայ) մեծաքանակ վաճառականներ, որոնք այստեղ հանգրիպում են Մոսկվայի մեծ իշխանության Կոլոմնա ու Մոժայսկ քաղաքներից եկած ուս վաճառականների հետ¹⁶⁸:

Հայտնի է միաժամանակ, որ XVII դ. սկզբներից որոշակի դեր է սկսում կատարել նաև ուկրաինական կազակական ամենախոշոր զորամիավորման՝ Նեժինյան գնդի կենտրոնը հանդիսացող Նեժին քաղաքը: Վերջերս գիտական շրջանառության մեջ դրվեցին մի շարք արխիվային փաստաթղթեր, որոնք հետաքրքրական տեղեկություններ են պարունակում XVIII դ. 30-ական թթ. այդ քաղաքում մշտական բնակություն հաստատած կամ առևտրական գործերով եկող ու գնացող բազմաթիվ հայ վաճառականների մասին¹⁶⁹:

Նկատի ունենալով այդ փաստերը, մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հայ վաճառականները Կիևից Մոսկվա երթևեկել են Պուտիվլ—Բրյանսկ ուղեգծով, սակայն այդ վայրերի քաղաքներում մշտական ու կայուն գաղթօջախներ չեն ստեղծել:

• • •

1380 թ. սեպտեմբերի 8-ին ուսական 150-հազարանոց բանակը, որի մեջ միավորվել էին գրեթե բոլոր բաժնետիրական իշխանությունների գնդերը, սլարտության մատնեցին Ոսկե Հորդայի կրկնապատիկ զորքերին, որոնք թումանբեկ Մամայի գլխավորությամբ արշավանքի էին դուրս եկել Մոսկվայի վրա: Այդ առաջին խոշոր հաղթանակն էր 150 տարի ուսական հողը կեղեքող դաժան թշնամու դեմ: Հաղթանակը ցույց տվեց, որ ուսական իշխանությունների կոտորակված ուժերի միավորումն զրավականն է լինելու մոնղոլական անարգ լծի թոթափման, մի լուծ, որը «ոչ միայն ճնշում, այլև անպատվում ու ցամաքեցնում էր իր դոճը դարձած ժողովրդի հոգին իսկ» (Կ. Մարքս): Կուլիկովյան փառավոր հաղթանակով Մոսկովյան մեծ իշխանությունը վերջնականապես իր ձեռքն առավ ուսական հողերի միավորման հայրենանվիր գործի ղեկավարությունը և դուրս եկավ տնտեսական ու քաղաքական զարգացման լայն ասպարեզ:

Հստ երևույթին հենց այս ժամանակաշրջանում էր, որ հայերը հաստատվեցին Մոսկվայում և սկսեցին զգալի դեր կատարել տարեցտարի հզորացող ուսական այդ իշխանության տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ արտաքին առևտրի բնագավառում:

Բազմիցս վկայակոչվելով համընդհանուր ճանաչում է գտել ուսական տարեգրություններից քաղված այն տեղեկությունը, որի համաձայն 1390 թ. Մոսկվայում ծագած հրդեհն սկսվել ու տարածվել է Աբրահամ անունով մի հայի բնակարանից. «Загорелся посад за городом от Аврама некоего ар-

168 М. В. Фехнер. Եզվ. աշխ., էջ 62.

169 Վ. Ա. Միխայլյան, Արիմի հայկական գաղութի պատմություն, I, էջ 187—193. Вардкес Микаелян, Ваграм Мартиросян. Материалы по истории армянского купечества в России (30-ые годы XVIII в.). «Լրաբեր» 1978, №4, էջ 79—99.

менина»¹⁷⁰, Մասնագետների կարծիքով, տարեգիրքը «քաղաքից դուրս՝ առևտրա-արհեստագործական արվարձան» ասելով նկատի է ունեցել նշանավոր Կիտայգորոդը, որի Վարվառկա կոչվող ամենաբանուկ փողոցի վրա՝ դեռևս XVII դ. կար մի հատված, ուր «տեղավորվում էին հայերն ու հույները»¹⁷¹։ Ուրիշ հավաստի տեղեկություններ՝ Մոսկվայում բնակություն հաստատած կամ Մոսկվայի հետ տնտեսական սերտ կապեր ստեղծած հայերի մասին այս դարաշրջանից չեն պահպանվել։ Եվ այն կարծիքն է տիրապետում, որ հայերի համակողմանի կապերը համայն Ռուսիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն դառնալու ընթացքի մեջ մտած Մոսկվայի հետ՝ տնտեսելիորեն ուրվագծվում են այս դեպքերից առնվազն մեկ դար հետո։ Այսուհանդերձ, սկզբնաղբյուրների մեջ առկա որոշ ակնարկներ հնարավորություն են ընձեռել ուսումնասիրողներին Մոսկվայի հայկական գաղութի պատմության ակունքները որոնել հենց այս ժամանակաշրջանում։

XIV—XV դդ. սահմանագլխին Մոսկվայի մետրոպոլիտն էր Կիպրիանոսը, որը կատաղի հարձակումներ էր գործում հայերի դեմ՝ նրանց դավանանքը համարելով խոտելի հերձված։ Նա խստիվ պատվիրում էր բոլոր ուղղափառներին՝ շփում շունենալ հայերի հետ, տոներին ու պասուց օրերին շքնդունել նրանց իրենց հարկի տակ, շահաստակ նրանց հետ մտերմական կապեր և այլն։ Մետրոպոլիտն այսպիսի խիստ հրահանգներ չէր արձակի, և թե կյանքում հակառակը տեղի շունենար։ Ռուս հասարակ մարդիկ, — ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը, — էական տարբերություններ չէին տեսնում ռուս-ուղղափառ և հայ-լուսավորչական դավանանքների միջև, հաճույքով մտերմանում էին հայերի հետ, ընդունում էին նրանց իրենց եկեղեցիներում, խնամիրական կապեր հաստատում և այլն։ Դրանց դեմն առնելու նպատակն էին հետապնդում Կիպրիանոսն ու նրա հետնորդները։ 1423 թ. հաստատված եպիսկոպոսների ձեռնադրության ծեսի մեջ հատուկ կետ սահմանվեց այն մասին, որ պետք է խստագույնս արգելվեն հայերի և ուղղափառների (ուսուների) միջև տեղի ունեցող ամուսնությունները, խնամիրությունը և այլն¹⁷²։

Այս կարգի կողմնակի վկայությունները, որքան էլ հետաքրքրական համարվեն և արժանի լինեն ուշադրության՝ անկարող են բավարարել մեր հարցասիրությանը։ Հին Մոսկվայի հայկական գաղութի պատմության գիտական լուսարանության համար նոր նյութեր են պետք։

Բարեբախտաբար, այդպիսի նյութեր կան. բայց դրանք կարող են օգտագործվել մեր առջև ծառայած խնդիրների լուծման համար այն բանից հետո միայն, երբ նախօրոք հարթված լինի Մոսկվայի միջնադարյան պատմության կնճիղներից մեկը՝ կապված Մոսկվայի տնտեսական կյանքում մեծ դեր կատարած «սուրճցի հյուրերի» ազգային պատկանելության և գործունեության բնագավառների հետ։

170 «Троицкая летопись», էջ 436, ПСРЛ, т. XVIII, էջ 140. В. Е. Сыроечковский. Гости-Сурожане, М., 1935, էջ 23 և այլն։

171 М. Н. Тихомиров. Средневековая Москва..., էջ 215։ Մ. Տիխոմիրովը Վարվառկա (նախկին Վարսկայա) փողոցի մասին գրում է. «Улица быстро стала оживленной артерией великого посада. Одним концом она входила к торговым рядам, и Кремлю, другим — к городскому рву» (նույն տեղում, էջ 47—48)։

172 М. Н. Тихомиров, նշվ. աշխ., էջ 216։

* * *

XIV դ. ընթացքում Մոսկվան բարգավաճել և դարավերջին դարձել էր Արևելյան Եվրոպայի ամենախոշոր տնտեսական կենտրոններից մեկը: Մեծ էին նրա կապերը ինչպես թաթարական տափաստանների, այնպես էլ եվրոպական երկրների հետ: Նովգորոդն ու Մոսկվան մրցակիցներ էին ուսական իշխանությունների և Եվրոպայի միջև տեղի ունեցող ու շարունակ ավելի լայն ծավալ ընդունող ապրանքափոխանակության բնագավառում: Եվ եթե Նովգորոդը ուսական ապրանքներ էր մատակարարում Հանգայի քաղաքներին, Մոսկվան իր հիմնական ուշադրությունը սեռել էր հարավի վրա, կապված լինելով Իտալական նշանավոր քաղաք-պետությունների՝ Ջենովայի ու Վենետիկի հետ: Տնտեսական այդ կապերի հանգուցակետը Ղրիմի նշանավոր ծովափնյա քաղաքներն էին՝ նախ Սուրոժը, ապա Կաֆան: Մինչև XV դ. 70-ական թթ., այսինքն՝ մինչև Ղրիմի գրավումը թուրքերի կողմից, այդ քաղաքները (մասնավորապես՝ Կաֆան) վիթխարի դեր էին կատարում Ռուսաստանի համար՝ լինելով միջերկրածովյան հարուստ երկրների հետ տնտեսական կապերի հանգուցակետ, դեպի Եվրոպա բացված լայնարձակ հորիզոն ունեցող մի պատուհան:

Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Կաֆայում հայերը մեծամասնություն են կազմել, իսկ Սուրոժում շատ ազդեցիկ դիրք գրավել: Հարցի ուսումնասիրության արդի վիճակում կարելի է ապացուցված համարել, որ հիմնականում այդ քաղաքների հայ վաճառականներն էին զբաղված արևելյան երկրներից ներմուծվող ապրանքների՝ մասնավորապես մետաքսե շքեղ գործվածքների, համեմունքի, բուրումնավետ նյութերի և թանկագին քարերի առևտրով: Մոսկվայում արևելյան այդ ապրանքների առևտրի մենաշնորհը գտնվում էր վերոհիշյալ «սուրոժցի հյուր» («гости сурожане») կամ ուղղակի «սուրոժցի» («сурожанин») կոչվող վաճառականների ձեռքում¹⁷³:

Եվ այսպես, «սուրոժցի հյուր» կամ «սուրոժցի» էին կոչվում Մոսկվայի բարձրագույն դասի վաճառականները, ի տարբերություն «սուկոննիկների» (մահուղավաճառների) և մյուս առևտրականների: Սրանք իրավական իրենց գոյավիճակով հավասարեցված էին բոյարներին և հոգևորականությանը, ազատված էին մի շարք հարկերից ու մաքսերից, իրավասու էին առանց տուրք վճարելու իրենց տներում ոգելից խմիչք պահելու և, որ ամենակարևորն է, անմիջապես ենթակա էին մեծ իշխանի դատական ատյանին¹⁷⁴:

173 Նշենք այստեղ, որ միջնադարյան տարբեր երկրներում լայնորեն գործածվել են որևէ քաղաքի անվան հետ աղերսված ուրիշ համանման տերմիններ: Այսպես՝ օրինակ, Միջին Ասիայում արտաքին առևտուրը եղել է բուխարացի վաճառականների մենաշնորհը, և ըստ այն մարդիկ, որոնք զբաղվել են այդ գործով, կոչվել են «բուխարայուրտուչի» («Очерки истории СССР», т. II, էջ 431): Թուրքական սուլթանները երկար ժամանակ Բարձր դասն թարգմանիչների պաշտոնին էին կոչում և Մոլդավիայի ու Վալախիայի գոսպոդոթներ էին կարգում Կ. Պոլսի Զանաթ թաղամասի հույներին, ըստ այդմ վերոհիշյալ պաշտոնները զբաղված անձինք կոչվում էին «ֆանարիտաներ»: XVI դ. Մոսկվայում կար վաճառականների մի դաս, որին պատկանող անձինք կոչվում էին «սմոլենցի» («смоляне»), սրանք Սմոլենսկ քաղաքի բնակիչներ էին (Б. Н. Флоря. Привилегированное купечество... «История СССР», 1977, № 5, էջ 149): Այս կարգի փաստերի թիվը կարելի է կրկնապատկել:

174 М. Н. Тухомиров. նշվ. աշխ., էջ 160:

«Սուրոժցի հյուր» կամ «սուրոժցի» տերմինները լայնորեն գործածական լինելով առանին կենցաղում՝ կիրառվում էին նաև տարեգիրների կողմից, սակայն պաշտոնական հանգամանք չէին ստացել: XIV—XV դդ. Մոսկվայի մեծ իշխանների ստորագրած պաշտոնական փաստաթղթերի մեջ վաճառականների այս դասը հիշատակվում է «հյուր» («гость») անունով միայն, մի տերմին, որ վաղ ժամանակներից հատկացվում էր «օտար երկրներից կամ այլ քաղաքներից ժամանած այն վաճառականներին, որոնք բնակվում կամ առևտուր էին անում ոչ այն վայրերում, ուր գրանցված էին»¹⁷⁵, այլ խոսքով «սուրոժցի» վաճառականները, շնայած Մոսկվայի տնտեսական կյանքում մեծ դեր էին կատարում, բայց իրենց գործունեության սկզբնական շրջանում, եթե նույնիսկ տարիներ շարունակ մնում էին Մոսկվայում՝ չէին համարվում այդ քաղաքի մշտական բնակիչներ:

Արդ՝ ո՞րն է եղել «սուրոժցիների» բուն բնակավայրը: Այսպիսի հարց, որքան մեզ հայտնի է, չի էլ դրվել բանասիրության մեջ: Ուսումնասիրողները տարակույս չեն ունեցել, որ «սուրոժցյան հյուրերը» ժամանել են Ղրիմի թերակղզու վաճառաշահ համանուն քաղաքից—Սուրոժից, որը գտնվել է Կաֆաջի և Ալուշտայի մեջտեղում ու մինչև Կաֆաջի ծաղկումը հսկայական դեր է կատարել՝ որպես փոխանակային առևտրի միջազգային նշանակություն ունեցող կենտրոն: Հույները քաղաքն անվանել են Սուզգայա, Սուզգեա, նաև Սուզգիա, արևմտաեվրոպական աղբյուրներում այն կոչվել է Սուզայա, ռուսական աղբյուրներում՝ Սուրոժից բացի, նաև Սուզակ, արաբական աղբյուրներում՝ Սուդադ, Սուրդակ կամ Սոդդադիա, Շոդդադիա. հայերը կոչել են Սուդդա կամ Սուդտա¹⁷⁶:

«Սուրոժցյան հյուրերին» անվերապահորեն Սուրոժ քաղաքի հետ շաղկապողները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ կան աղբյուրներ, որոնք այդ քաղաքի անունով Ղրիմի թերակղզին ամբողջությամբ կոչել են Սուրոժցյան թերակղզի, իսկ արաբական (թերևս նաև ռուսական) որոշ աղբյուրներում ողջ Սև ծովն է ճանաչվել Սուրոժի անունով¹⁷⁷:

Այս փաստերը ստիպում են ուսումնասիրողին շրջահայաց լինել այդ տեղանվան հետ առնչվող պատմաբանասիրական հարցերը մեկնաբանելիս: «Սուրոժ» ասելով՝ Մոսկվայի բնակիչները, ամենայն հավանականությամբ, նկատի են ունեցել ոչ թե մասնավորապես Սուրոժ քաղաքը, այլ Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափն ամբողջությամբ, ներառյալ ամիսներձ շրջանները, ուր XIII—XV դդ. Սուրոժից բացի և Սուրոժից ավելի ծաղկուն քաղաքներ էին դարձել Կաֆան, Սուրխաթը, Մանգուպը և այլ կենտրոններ:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել այդ «հյուրերի» ազգային պատկանելիության մասին: Այս հարցը հուզել է մի շարք պատմաբանների: Նրանց հայտնած

175 Вл. Даль. Толковый словарь, I, էջ 386:

176 Հայկական անվանման մասին տեղեկությունների աղբյուրը հայերեն ձեռագրերի հիշատակարաններն են, իսկ մյուս տվյալները քաղված են Վ. Վասիլևսկուց (տե՛ս В. Г. Васильевский. Труды, III, Петроград, 1915, էջ CLVI):

177 Այս մասին տե՛ս А. Н. Веселовский, Южно-русские былины, СПб., 1884 («Сборник отделения русского языка и словесности Академии Наук, т. XXXVI, № 3, էջ 69—70):

Պետք է ենթադրել, որ ռուսները Սուրոժցի անունով կոչել են Ղրիմին առափնյա ծովը և ոչ (կամ ոչ միայն) Ազովի ծովը, ինչպես ենթադրել են ոմանք (տե՛ս В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 17):

տարրեր տեսակետներին անդրադառնալուց առաջ անհրաժեշտություն է զգացվում ծանոթանալ «սուրոժցի» տերմինի գործածության պատմությանը: Առաջին անգամ այն հիշատակված է Իպատեյան տարեգրության մեջ՝ 1288 թ. տակ: Այստեղ ասված է, որ Վոլինյան երկրամասի իշխան Վասիլյոկ Վլադիմիրովիչի մահվան և թաղմանական արարողությունների ժամանակ Վլադիմիր քաղաքում ներկա են եղել և ողբացել տարրեր ազգերի ներկայացուցիչներ. «Плакашеса над ним все множество Володимерцев, мужы и жены и дети, Немци и Сурожвце, Новогородцы, Жидове»¹⁷⁸: Այս տվյալը Մոսկվայի հետ որևէ անընթաց շունի և հենց այս առումով զգալի արժեք է ներկայացնում: Դրա գոյությունը ժխտվում է այն տեսակետը, թե «սուրոժյան հյուր» տերմինը գործածական է եղել միայն Մոսկվայում:

Տեղին է այստեղ վերհիշել, որ Վոլինյան Վլադիմիր նշանավոր քաղաքում բնակվել են բազմաթիվ հայեր, որոնք ունեցել են իրենց կազմակերպված համայնքն ու եկեղեցին: Մահացած իշխանի հուղարկավորությանը քաղաքի բուն բնակիչներից՝ ռուսներից բացի, իհարկե, մասնակցել էին նաև ազգային փոքրամասնությունները, որոնցից հանվանե հիշատակված են գերմանացիները, հրեաները և «սուրոժցիները»:

Հյուսիսային ռուսական տարեգրությունների մեջ 1318 թ. առաջին անգամ հիշատակություն ենք գտնում «Սուրոժյան ծովի» մասին, իսկ 1356 թ. տակ տարեգրությունը ծանուցում է, որ Հորդայից Մոսկվա է ժամանել Իրընչի անունով մի դեսպան, «սուրոժցի հյուրերի» ընկերակցությամբ: Մասնագետները նշում են, որ այդ «առաջին ուղղակի վկայությունն է Մոսկվայի և Ղրիմի իտալական գաղթօջախների միջև առևտրական կապերի առկայության մասին»¹⁷⁹:

Այսպիսով, XIV դ. կեսերից առաջ որևէ տվյալ չի պահպանվել «սուրոժյան հյուրերի» Մոսկվայում ծավալած տնտեսական գործունեության մասին:

Վերը շարադրվածից պարզ է, որ տարեգրության հեղինակը «սուրոժյան հյուրեր» ասելով նկատի է առել ընդհանրապես Ղրիմի թերակղզուց և մասնավորապես Կաֆա քաղաքից ժամանած վաճառականներին:

Սակայն մի վայրկյան մոռանանք մեր այս տեսակետը և փորձենք հարցին մոտենալ այն ուսումնասիրողների հայեցակետից, ովքեր «Սուրոժ» տերմինի տակ բառացիորեն հասկացել են հենց Ղրիմի Սուրոժ-Սուղակ-Սուղա քաղաքը: Բնակչության ազգային պատկանելիության առումով ի՞նչ պատկեր էր ներկայացնում այդ քաղաքը XIV դ. կեսերին:

Սուրոժի պատմության հարցերով հետաքրքրված բոլոր ուսումնասիրողներն էլ, միաբերան վկայում են, որ քաղաքի բնակչության կազմում հայերը զգալի թիվ են կազմել, իսկ մի քանի մասնագետներ էլ (օրինակ, Յ. Բրունը)¹⁸⁰, թերևս փաստերը շափազանցնելով, հանգել են այն եզրակացության, որ հայերը կազմել են քաղաքի բնակչության մեծամասնությունը: Քաղաքի հանգամանալից պատմությունը շարադրել է վ. Գ. Վասիլևսկին «Սուրո Ստեփանոս Սուրոժցու վարքի» ներածականում¹⁸¹: Նշանավոր գիտնականը պար-

178 ПСРЛ, т. II, էջ 920; «Летопись по Илатскому списку», СПб, 1871, էջ 605.

179 В. Е. Сыроечковский, *նշվ. աշխ.*, էջ 17:

180 Ф. К. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140:

181 *Տե՛ս* Труды В. Г. Васильевского, том третий, Петроград, 1915. Русско-Византийские исследования. Жития св. Георгия Амастридского и Стефана Сурожского, §2 CLVI—CCVII («Исторические сведения о Суроже»):

դել է, որ XIII—XIV դդ. Սուրոժի կառավարիչները կոչվել են սերաստոսներ, գրանցից շատերի անունները գրանցվել են քաղաքի հունական եկեղեցուն պատկանած Սինաքսարի (Հարանց վարքի) լուսանցքներին: Հիշատակված սերաստոսների մեծ մասին վ. վասիլևսկին հույն է համարել, նշելով միաժամանակ, որ հանդիպում են նաև այնպիսի անուններ, որոնց մեջ կան հունարենին խորթ հնչյուններ: 1305 թ. հիշատակված է, օրինակ, սերաստոս Թոփտին՝ իր Թամար տիկնոջ հետ միասին: Հիմք ընդունելով տիկնոջ անունը, ուսումնասիրողն անորոշ դատողություններ է արել նրա (նաև նրա ամուսնու) վրացական ծագման մասին, անշուշտ, տեղյակ չլինելով, որ Թամար անունը, սկսած X դ. խիստ տարածված էր հայոց մեջ և որ Ղրիմում, շատ վաղ ժամանակներից, գոյություն է ունեցել Թոփտի դուռ հայաբնակ խոշոր գյուղը (ունեցել է երկու եկեղեցի), որն այդպես է կոչվել թերևս կառուցված լինելով այդ նշանավոր սերաստոսի կողմից, կամ մի այլ կերպ առնչված լինելով նրա անվան հետ: Այդ նույն Սինաքսարում հիշատակված են Սուրոժի պատմության մեջ նշանակալի դեր կատարած մի քանի այլ հայազգի անձնավորություններ ևս. Սամատ հայի տիկինը, Սմբատի որդի Դավիթը և ուրիշներ: 1292 թ. սուրոժցի հայերը զատիկը կատարել են ոչ թե հույների հետ՝ ապրիլի 6-ին, այլ նրանցից մեկ շաբաթ հետո: Այս կապակցությամբ, ինչպես միշտ ծոազատիկների ժամանակ, քաղաքում վեճեր են բորբոքվել հայ և հույն համայնքների միջև¹⁸², մի հանգամանք, որ իր հերթին վկայում է Սուրոժում հայ հոծ բնակչության առկայության մասին:

1322 թ. Սուրոժի պատմության համար դարձակետային նշանակություն է ունեցել: Ուզբեկ խանի զորահրամանատար Կարա-Բուլատը գրավել է քաղաքը և հալածանքներ սկսել քրիստոնյաների նկատմամբ. փակվել են շատ եկեղեցիներ, կործանվել խաչեր և սրբատեղիներ, ցած բերվել եկեղեցական դանգակներ և այլն: Քրիստոնյա բնակչության մեծ մասը լքել է քաղաքը: Իրն-Բատուտան 1334 թ. այցելելով Սուրոժ, գտել է այնտեղ միայն մի քանի հույն արհեստավորներ: Որոշ աշխուժություն է սկսվում 1365 թ. հետո միայն, երբ ջննովացիներին հաջողվում է իրենց տիրապետությունը տարածել նաև Սուրոժի վրա, սակայն քաղաքն այլևս ինքնուրույն տնտեսական նշանակություն ձեռք չի բերում, և վերականգնվում է միայն Կաֆայի շնորհիվ՝ դառնալով նրա երկրորդական կցորդը:

Մեջբերված այս թվականներն արժանի են սեփական ուշադրության: Սուրոժը, այսպիսով, 1322—1365 թթ. իր պատմության ողբերգական շրջանն էր ապրում: Բայց հենց այս շրջանում, ավելի որոշակի՝ 1356 թ., ուսական տարեգրությունների մեջ առաջին անգամ գրանցում է կատարվում «սուրոժյան հյուրերի» Մոսկվա ժամանելու մասին: Ինչպե՞ս բացատրել այս առեղծվածը:

Առաջին հերթին՝ մեր կողմից արդեն բացատրված ձևով. «Սուրոժյան հյուրեր» տերմինը տարեգրի կողմից օգտագործվել և ժամանակակիցների կողմից ընկալվել է՝ «Ղրիմից ժամանած վաճառական» (ավելի ճիշտ՝ «ղրիմահայ վաճառական») իմաստով: Իսկ եթե, այնուամենայնիվ, «Սուրոժ» ան-

182 В. Г. Васильевский, *нշվ. աշխ.*, էջ CLXXXVIII: Այս տեղեկությունների մի մասը, նույն այս աշխատությունից բաղկելով, օգտագործել են նաև ուրիշ հայագետներ (տե՛ս Խ. Ա. Փոլեշչյան, Մրբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, №2, էջ 108, Վ. Միխայլյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1, էջ 50):

վանումը պետք է վերագրվի ոչ ամբողջ Ղրիմին, այլ որոշակի մի բնակավայրի: Այդ դեպքում կա միայն հետևյալ բացատրությունը. Կաֆա քաղաքը բարգավաճելով և բռնելով Սուրոթի տեղը, կատարելով տնտեսական այն վիթխարի դերը, որը վիճակված էր նախկինում Սուրոթ քաղաքին, ինչ-որ ժամանակ սեփականալ է նաև իր նախորդի աշխարհասփյուռ անունը:

Աշխարհագրապես այդ երկու քաղաքներն այնքան մոտ էին գտնվում միմյանց և այնքան նույնական էր նրանց դերը որպես միջազգային ապրանքափոխանակության հանգրվան, որ հեռավոր երկրամասերում, Ղրիմի թերակղզու նոր կենտրոնի՝ Կաֆա քաղաքի պատմության իրողությունները, շփոթումով կամ սովորույթի ուժով, վերագրում էին Սուրոթ քաղաքին:

Ի հաստատումն այս բացատրության մեջ բերենք մի բնորոշ փաստ: 1298 թ. նոդայ ամիրի զորքերը գրավում են Կաֆան և այստեղ հսկայական ավերածություններ գործում: Այս լուրը վաճառականները հասցնում են Եգիպտոս, ուր և գրանցվում է, բայց արդեն ոչ թե որպես Կաֆայի հետ կատարված դեպք, այլ Սուրոթ-Սուդտայի¹⁸³:

Այսպիսով, կարելի է վստահորեն հայտարարել, որ Մոսկվայի ֆաղափափների առաջին խոսակցության մեջ «սուրոթցի հյուր» կոչված վաճառականները, որ հիշատակվել են սկսում XIV դ. կեսերից, իրականում սուրոթցի շէին, այլ Մոսկվա էին ժամանում Ղրիմի քերակղզու վաճառաշահ կենտրոններից՝ Սուրխաքից, Մանգուպից, Սուրոթից և այլ ֆաղափներից, բայց առաջին հերթին և մասնավորապես՝ հռչակավոր Կաֆա (Քեդդոսիա) ֆաղափից:

Արձանագրելով այս հետևությունը, պետք է կրկին վերհիշենք այն փաստը, որ Կաֆայի բնակչության մեծամասնությունը հայերից էր բաղկացած և, որ կաֆայեցի հայերի ձևորում էր կենտրոնացված արևելյան ապրանքների առևտրի գերակշիռ մասը:

Այս անհրաժեշտ բացատրություններից հետո տեսնենք այժմ, թե ինչպիսի կարծիքներ են արտահայտվել «սուրոթցի հյուրերի» ազգային պատկանելիության մասին:

Մոսկվա քաղաքի պատմության անվանի ուսումնասիրողներից Ի. Զարեկինը այդ կասկածներն զրկել է. «Մոսկվան, հենց այն պահից, երբ սկսեց պատմական իր ապրելաշրջանը, ի հետևանս մեր (Ռուսաստանի) հարավային երկրամասերում ծավալված առևտրական, մասնավորապես իտալական բարեպատեհ հարաբերությունների, ըստ երևույթին կարողացավ իր կողմը ձգել հատուկ մի գաղութ իտալական վաճառականների, որոնք սուրոթցի անվան տակ, ռուսների հետ միասին, շատ ակնառու և ազդեցիկ դիրք զբրավեցին [Մոսկովյան] մեծ իշխանության մայրաքաղաքի ներքին կյանքում, և հետագայում մեծապես նպաստեցին իտալական-ֆրանկական Եվրոպայի հետ նրա առնչություններին ու կապերին»¹⁸⁴:

183 В. Г. Васильевский, *Նշվ. աշխ.*, էջ СХСІ:

184 «Москва, как только начала свое историческое поприще, по счастливым обстоятельствам торгового и именно итальянского движения в наших южных краях, успела привлечь к себе, по-видимому, особую колонию итальянских торговцев, которые под именем сурожан, вместе с русскими заняли очень видное и влиятельное положение во внутренних делах великокняжеской столицы и впоследствии много способствовали ее сношениями и связями с итальянской, фряжскою Европою» (Иван Забелин. История города Москвы, ч. I, М., 1905, էջ 86):

Այսպիսով, ըստ Ի. Զարեկինի «սուրոժյան հյուրեր» կոչվող վաճառականները հիմնականում եղել են իտալացիներ, և նրանք են, որ մեծ դեր են կատարել Մոսկվայի և եվրոպական երկրների հետ տնտեսական կապերի ստեղծման ու ամրապնդման գործում: Պետք է նշել, որ այս տեսակետի հեղինակը հաշվի չի առել երկու հանգամանք. նախ՝ որ ռուսական աղբյուրներում իտալացիները հիշատակվում են որպես «ֆրյագ» կամ «ֆրյագին» (համապատասխանում է հայկական «ֆրանկ» բառին), և որևէ ցուցում չկա «սուրոժյան հյուր» ու «ֆրյագ» տերմինների նույնացմանն ի նպաստ, և այնուհետև՝ արևելյան ապրանքները ներմուծվում էին ջինովացիների տիրապետության տակ անցած Արիմյան նավահանգիստներն ու այնտեղից էր արտահանվում Ռուսաստան ոչ թե իտալացի վաճառականների, այլ հենց հայերի կողմից:

Ի. Զարեկինի նշած ճանապարհով է ընթացել նաև «սուրոժյան հյուրերի» մասին շատ արժեքավոր ու փաստալից մենագրության հեղինակ Վ. Սիրոյեչկովսկին՝ իտալացիներից բացի «սուրոժցի» բաղաբային դասի շարքում տեղ հատկացնելով նաև հույն վաճառականներին: Իր տեսակետը Վ. Սիրոյեչկովսկին հիմնավորում է երկու «սուրոժցիների»՝ ներամատի և Սալարևի, անունազգանունների յուրովի ստուգաբանությամբ. ներամատ անունը (ըստ երևույթին նույնացնելով հունական նիկոմեդես անվան հետ), նա համարում է հունական, ուստի այդ «սուրոժցուն» հույն է համարում, իսկ Սալարև ազգանունը (հավանաբար առնչելով լատիներեն *salarius* բառի հետ, որ նշանակում է «աղացած ձկան վաճառական») իտալական հռչակելով՝ այդ «սուրոժցուն» էլ իտալական ծագում է վերագրում:

Մեր կարծիքով, սակայն, մեկ-երկու անունների շհիմնավորված ստուգաբանությունների վրա հենվելով հնարավոր չէ պարզաբանել պատմաբանասիրական այնպիսի բարդ հարցեր, որոնցից է «սուրոժյան հյուրերի» ծագումնաբանության հարցը: Ըստ այդմ հավատ չի ներշնչում նաև Վ. Սիրոյեչկովսկու եզրակացությունը, որ շարադրված է այսպես. «Մոսկովյան վաճառականների մեջ առկայությունը դրիմեցի նշանավոր հույների և իտալացիների, որոնք հաստատվել էին Մոսկվայում ֆեոդալական այդ կենտրոնի բուռն զարգացման հետևանքով, օգնելու է մեզ բացատրելու «սուրոժցիներ» տերմինի առաջացումը: Արիմից ներգաղթած վաճառականների խմբի նշանավոր անդամները, որոնք շարունակ երթևեկում էին դեպի հարավային շուկաները, կարող էին սուրոժցի անվանումը տարածել բովանդակ դասի վրա»¹⁸⁵:

Մտազմնաբանական այս հարցին հպանցիկ անդրադարձել է նաև ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը: Հստակ տեսակետ նա չի առաջադրել, սակայն, ըստ երևույթին, հանգել է այն եզրակացության, որ «սուրոժցի» կոչվող և Մոսկվա բաղաբի հետ առնչված վաճառականները ազգությամբ ռուս են եղել, բայց կոչվել են «սուրոժցի», որովհետև նրանց գործունեությունը խարսխված է եղել Սև ծովի հարավային նավահանգիստների հետ: «Մոսկվայի վաճառականների ձևերում դրամական միջոցների կուտակումը սերտորեն կապված էր սևծովյան առևտրի հետ: Այդ պատճառով,— գրել է մեծանուն գիտնականը,—

¹⁸⁵ «Наличие среди московских купцов видных греков или итальянцев из Крыма, привлеченных в Москву пышным ростом этого феодального центра помогло бы нам объяснить появление термина «сурожане». Выходцы из Крыма, видные члены группы купцов, постоянно отправлявшихся к южным рынкам, могли сообщить всей группе наименование сурожан» (В. Е. Сыроечковский, *նշվ. աշխ.*, էջ 24):

վաճառականների առաջատար խումբը Մոսկվայում ստացել էր սուրոճցի հյուր մականունը»¹⁸⁶։ Սակայն այս բացատրությունը ևս խնդիրը չի լուծվում, քանի որ 1356 թ. անդրանիկ վկայության մեջ «սուրոճցի հյուրեր» են կոչված ոչ թե մոսկվացի, այլ Ղրիմից ժամանած օտարերկրացի վաճառականները։

Այս հարցին անդրադարձել է նաև Վ. Միքայելյանը և հանգել այն եզրակացության, որ ազգային կազմով «սուրոճցի» կոչվող վաճառականները միատարր չեն եղել. «Նրա մեջ առաջին հերթին մտնում էին ուսաներն ու հայերը, ապա նաև իտալացիներ և ղրիմաբնակ հույներ»¹⁸⁷, — գրել է նա՝ փորձելով միավորել ու հաշտեցնել վերոհիշյալ տեսակետները՝ հայերի համար ևս տեղ ապահովելով «սուրոճցիների» շարքում։

«Սուրոճցի հյուր» տերմինի իմաստը բացահայտելու փորձեր կատարելիս պետք չէ անտեսել, որ այդպես են կոչվել արևելյան ապրանքների վաճառականները ոչ միայն միջնադարյան Մոսկվայում, այլև ուրիշ քաղաքներում, մասնավորապես Վոլինյան Վլադիմիրում (այդ մասին խոսք եղավ արդեն), Կիևում, Սուդզալում, Մեծ Նովգորոդում (դրանց մասին՝ ստորև), գուցե և ուրիշ քաղաքներում։ Ըստ այդմ «սուրոճցի հյուր» տերմինը գործածվելով Մոսկվայի բնակչության առանձին կենցաղում և գրանցվելով տարեգրությունների մեջ՝ ենթադրել է տալիս ուրիշ մի վայրից ժամանած և տվյալ վայրում «հյուրի», այսինքն օտարերկրյա վաճառականի գոյավիճակ ունեցող վաճառականների մի դասի առկայություն։ Այդ վաճառականների հետագա սերունդները, տասնամյակներ շարունակ ապրելով ու գործելով Մոսկվայում, դառնալով այդ քաղաքի մշտական բնակիչ, խնամիանալով ուսաների հետ, ի վերջո՝ դավանափոխ լինելով՝ պետք է որ փոխելին ազգային իրենց դիմապատկերը և հանգես գային որպես ուս վաճառականներ։ Բայց այդ վերաբերում է արդեն «սուրոճցիների» հետագա պատմությանը և ոչ նրանց պատմական ասպարեղ իջնելու հանգամանքներին։ Ուստի, հետևելով վերոհիշյալ ուսումնասիրողներին, տեսնենք, թե ինչ արդյունքներ կարող ենք ստանալ «սուրոճցի» վաճառականներից մի քանիսի անուն-ազգանունների անկանխակալ քննության ճանապարհով։

Սկսենք հենց Ներամատի (ոսլոական աղբյուրներում գրված է Некомат) մասին տվյալների քննությունից։ Կուլիկովյան ճակատամարտին նախորդող տարիներին Մոսկվայում հանրահայտ էր այս «սուրոճցին»։ Նա լայն կապեր էր հաստատել մի կողմից Մոսկվայի ու Տվերի իշխանների, մյուս կողմից Ոսկե Հորդայի տիրակալների հետ։ Նրա շնորհիվ 1375 թ. Դմիտրի Դոնսկոյի քաղաքական հակառակորդ Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը Ոսկե Հորդայից, երկրորդ անգամ լինելով, Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսն ստացավ։ Դմիտրի Դոնսկոյը «со всей силою собрався, и со всеми князи русскими совокупяся», պարտության մատնեց իր քաղաքական հակառակորդին և ըստիպեց նրան՝ անվերապահորեն ենթարկվել Մոսկվայի մեծ իշխանությանը¹⁸⁸։ «Սուրոճցի» Ներամատը հետագայում մասնակցեց Դմիտրի Դոնսկոյի դեմ Մոսկվայի վերջին հաղթարարական (тысяцкий) որդու զլխավորությամբ նյութվող դավադրությանը, իսկ ավելի ուշ՝ 1383 թ. մահապատժի ենթարկվեց. նր-

186 «Накопление капиталов в руках московских купцов было тесно связано с черноморской торговлей. Поэтому ведущая купеческая группа получила в Москве прозвание гостей-сурожан» (М. Н. Тихомиров, *Եզ. աշխ.*, էջ 150)։

187 Վ. Միքայելյան, *Եզ. աշխ.*, էջ 184—185։

188 ПСРЛ, т. XI, էջ 15; «Очерки истории СССР» II, էջ 217։

բան պատկանած գյուղերն ու կալվածքները՝ Մոսկվայի մեծ իշխանի սեփականությունը դարձան¹⁸⁹: «Կարելի է շտաբակուսել այն բանում, — գրել է այդ կապալիցությունը ահադ. Մ. Տիխոմիրովը, — որ Նեքամատը կողմնակիցներ է ունեցել առևտրական շրջանակներում և որ շոշափված են եղել առևտրական բարձր շահեր, մեր կարծիքով՝ Սուրոժի հետ առևտուր անող հյուրերի շահերը, որոնց համար Ռսկե Հորդայի հետ խաղաղություն պահպանելը շափազանց կարևոր գործ է եղել, քանի որ Մոսկվայից դեպի Սև ծով տանող ճանապարհներից անցել են Ռսկե Հորդայի տարածություններով»¹⁹⁰:

Քիչ առաջ ասացինք, որ Վ. Սիրոյեչկովսկին Նեքամատին համարել է հույն վաճառական: Անվանի պատմաբանը, անշուշտ, ավելի շրջահայաց կլիներ, եթե ձեռքի տակ ունենար միայն վերջերս գիտական շրջանառության մեջ դրված միջնադարյան հայկական ձեռագրերի հիշատակարանները՝ հայերի մեջ տարածված անձնանունների մասին բազմաբովանդակ նյութերով: Այդ աղբյուրների համաձայն, հենց Նեքամատի գործունեության շրջանում կամ նրանից ընդամենը մի քանի տասնամյակ հետո, պատմական Հայաստանի մի շարք նահանգներում ու հայկական գաղթավայրերում սիրված ու տարածված է եղել Նեքամատ անձնանունը, որն ըստ Հ. Աճառյանի պարսկերենից է փոխառված և նշանակում է «բարի եկավ», այսինքն «բարի գալուստ» («բարեբախտ») ¹⁹¹: Նեքամատ անունն էին կրում Ամիրդի Ս. Թեոդորոս կաթողիկե եկեղեցու կառուցող ճարտարապետը, Խարբերդի հայ ուսուցիչը, խլաթեցի մի տանուտեր, Խուլայոս վանքի դպիրներից մեկը և նրանց ժամանակակից մի քանի այլ հայ անձնավորություններ¹⁹²:

Այսպիսով, «սուրոժցի» Նեքամատը, իր անունից դատելով, եղել է ոչ թե հույն, այլ հայ վաճառական՝ մեկը դրիմահայ հարյուրավոր այն վաճառականներից, որոնք XIV—XV դդ. մրցակից շունեին դեպի Ռուսաստան և արևելյան Սվրոպայի այլ երկրներ արևելյան ապրանքների ներմուծման ընդգրկված:

«Սուրոժցի» Նեքամատի կյանքի դրվագների համառոտակի շարադրանքից պարզ դարձավ, որ նա, բարձր դիրք զբաղեցնելով Մոսկովյան մեծ իշխանության կառավարող շրջաններում, պատկանում էր այն կուսակցությանը, որի ներկայացուցիչները գործում էին ի նպաստ Ռսկե Հորդայի հետ անտեսական կապերի զարգացման, ի վնաս Մոսկվայի մեծ իշխանության անկախության ջանքերի: Սակայն «սուրոժյան հյուրերի» մեծամասնությունը կանգնած էր Դմիտրի Դոնսկոյի կողքին, նպաստում էր ուսական երկրամասերի միավորման ուղղությամբ ծավալված նրա հայրենասիրական գործունեությանը, գործունե դեր էր կատարում Ռսկե Հորդայի դեմ նրա զլխավորած պայքարում:

Նրջանիկ պատահականությամբ պահպանվել են Դմիտրի Դոնսկոյի կուսակից մեկ տասնյակ այն «սուրոժցի հյուրերի» անունները, որոնք ուղեկցել են Մոսկվայի մեծ իշխանին Կուլիկովյան ճակատամարտում: Նախ մեջբերենք Նիկոնովյան տարեգրության այն հատվածն իր ամբողջությամբ, որի մեջ տե-

189 ПСРЛ, т. XXV, էջ 190, 211, ПСРЛ, т. XII, էջ 45, ПСРЛ, т. XVIII էջ 135, В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ ССII, М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 161 և այլն:

190 М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 173:

191 Հ. Աճառյան, Հայ անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1948, էջ 71:

192 «Փն դարի... հիշատակարաններ», Ա, էջ 553, 629, Բ, էջ 34, 73, Գ, էջ 31, 383, 527: Նեքամատ կամ Նեքամատիկ անունով մի ծեր դպիր էլ հիշված է Հ. Հաղարյանի հավաքածուի XV դ. ընդօրինակված № 9 ձեռագրում՝ որպես Թղթի կոկոզ և թանաք եփող (այս անդեկությունը մեզ հաղորդել է Ս. Եզանյանը, որին հաշտնում ենք շնորհակալություն):

ղեկութուններ են գրանցված այդ վաճառականների կատարած դերի մասին. «Поять же тогда князь велики с собою десять мужей сурожане гостей, видения ради: аще что Бог случит, имут поведати в дальных землях, яко сходници суть з земли на землю и знаеми всеми и в Ордах и в Фрязах; и другая вещь: аще что приличитя, да сии сътворяют по обычаю их: си же суть имена их...»¹⁹³. Այնուհետև թվարկված են նրանց անունները, որոնք տարբերակներով են նշված ձեռագրերի մեջ և Կուլիկովյան ճակատամարտի մասին պահպանված մյուս աղբյուրներում: Ստորև տալիս ենք ցանկը, յուրաքանչյուր անվան առընթեր նշելով տարբերակներն ու լրացուցիչ տվյալները.

1. Վասիլի Կապիցա (Պալիցա),
2. Սիրոր Ելֆերև (Ելուֆերև, Օլուֆերև, Օլֆերև),
3. Կոստանտին (Պետրենով, Վոլկ, Բոլկ, Բոլկով, Բելցա),
4. Կուզմա (Կոզմա) Կովերյա (Կովիրյա, Կովիր, Կովրյա, Խովրին),
5. Սեմյոն Օնտոնով (Անտոնով. հոր անունն է՝ Անտոն Վերբլյուզին), կոչված նաև Կորտոնոս,
6. Միխայիլ (Միխայլո) Սալարև (Սարաև, Սամարև),
7. Տիմոֆեյ Վեսյակով (Վասկով, Վեզյակով),
8. Դմիտրեյ Չեռնոյ (Չեռնի, Չերմնոյ),
9. Դեմենտեյ (Դմիտրի) Սալարև (Սարաև),
10. Իվան Շիխ¹⁹⁴:

Թվարկելով այս անունները, Վ. Վասիլևսկին հայտնում է այն կարծիքը, որ գրանց մեծամասնությունը ուսներ են, սակայն «առաջինները (որոնք — Լ. Խ.) կարող են համարվել նաև հույներ»¹⁹⁵:

Սալարև ազգանունը կրող զույգ անձինք (չնայած դրանք ձեռագրերում կոչված են նաև Սարաև կամ Սամարև) ըստ Վ. Սիրոյեչկովսկու՝ հավանաբար Ղրիմում հաստատված իտալացիներ են եղել¹⁹⁶: Ցանկի մեջ հիշատակված Սիմեոն Օնտոնովի մասին խոսում է Մ. Տիխոմիրովը: Մեջբերելով մի վարքաբանական գրվածքի մեջ առկա տվյալն այդ մեծահարուստ վաճառականի մասին (այնտեղ ասված է, որ նա եղել է «от великих купець и славных господствующему граду Москве»¹⁹⁷, — մեծանուն գիտնականը գրում է. «Սիմեոն Օնտոնովի անունն ու հայրանունը թվում է, թե վկայում է նրա ուսական ծագման մասին»¹⁹⁸:

Եվ այսպես, միայն անուններից ելնելով, ռուսամասիրողները փորձել են որոշել Դմիտրի Դոնսկոյի կուսակից «սուրոժյան հյուրերի» կամ նրանց մի մասի ազգային պատկանելիությունը: Հենց սկզբից պետք է ասել, որ այդ ճա-

¹⁹³ ПРСЛ, т. XI, էջ 54: Հմմ. «Куликовская битва и подъем национального самосознания» Л., 1979, էջ 234:

¹⁹⁴ Անվանացանկը ներկայացնում ենք Հ. Զարեիինի, Վ. Վասիլևսկու, Վ. Սիրոյեչկովսկու, Մ. Տիխոմիրովի, Գ. Մոխսեևայի վերը հիշատակված աշխատությունների մեջ առկա ցանկերի համադրությամբ:

¹⁹⁵ В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ ССІІ:

¹⁹⁶ «Было бы допустимо и Саларевых считать выходцами из итальянских колоний Крыма», — գրում է նա (տե՛ս В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 24):

¹⁹⁷ Н. Тихонравов. Древняя жития Сергия Радонежского, М., 1892, էջ 90:

¹⁹⁸ Н. М. Тихомиров, նշվ. աշխ., էջ 151:

նապարհով հնարավոր չէ քիչ թե շատ վստահելի արդյունքի հասնել, քանի որ կարելի է վկայակոչել տասնյակ ու հարյուրավոր օտարազգի անձնավորությունների անուններ, որոնք հիշատակվել են ուսական պաշտոնական փաստաթղթերում կամ տարեգրություններում այն աստիճանի ձևափոխված, որ հեռավոր հետք նույնիսկ չի մնացել նրանց նախնական ու հարազատ ձևերից: Գյուլնազար Օռուխենցը, օրինակ, դարձել է նազար Օրեխովիչ, Հովհաննեսի որդիներ Աթանասն ու Բարսեղը՝ կոչվել են Աֆանասի և Վասիլի Իվանովներ, Պողոս Զենենցը՝ Պավել Զինովև, Աստվածատուրի որդի Եղիան՝ Իլյա Բոգդանով և այլն և այլն¹⁹⁹: Թվարկված այս անձնավորությունների ազգության մասին ստույգ տեղեկություններ ունենալով, անվարան կարող ենք հայտարարել, որ նրանք հայ վաճառականներ կամ քաղաքական-գինավորական գործիչներ են եղել: Սակայն տարբեր բնույթի միջնադարյան աղբյուրների մեջ հիշատակված են հայազգի (ինչպես և ուրիշ ազգությունների պատկանող) բազմաթիվ անձնավորություններ՝ առանց ծանուցիչ տեղեկությունների: Ինչպե՞ս վարվել նրանց դեպքերում: Պատմաբանասիրական այս բարդ հարցին հնարավոր չէ գտնել դյուրին պատասխան: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ուսական աղբյուրներում հիշատակված ուսական անուն-ազգանուններ կրող անձանց ճշտող մեծամասնությունը ազգությամբ ուս է եղել. այդ մասին երկու կարծիք չի կարող լինել: Սակայն խնդիրն այսպես դյուրությունամբ լուծված չենք կարող համարել, երբ տվյալներ կան այս կամ այն անձնավորության մի ուրիշ երկրից ժամանած լինելու մասին: Եվ նույնն է պարագան «սուրոթյան հյուրերի», այսինքն՝ Ղրիմի հետ կապված և արևելյան ապրանքների առևտրով զբաղված վաճառականների: Գերզուցությունը նախապայման է լինելու նրանց ազգությունը որոշելու ուղղությամբ կատարվող բոլոր փորձերի:

Այս բացատրությունից հետո հարկ չկա հատուկ շեշտելու, որ «սուրոթյան հյուրերի» հարցով զբաղված վերոհիշյալ ուսումնասիրողների եզրակացություններն այն մասին, որ այդ վաճառականները եղել են իտալացիներ, հույներ, ռուսներ, կամ էլ այդ բոլորի հետ միասին՝ նաև հայեր, շատ հեռու են հիմնավորված լինելուց: Առաջին հերթին հենց այն պատճառով, որ բազմապիսի աղբյուրների միաբերան վկայությամբ՝ հայ վաճառականների մեծաշնորհն է եղել արևելյան ապրանքների ներմուծումը Արևելյան Եվրոպայի երկրներ (որոշ աղբյուրներում դրանք նույնիսկ կոչվել են «հայկական ապրանքներ»):

Ուսումնասիրողներից ոմանք փորձել են «սուրոթցիների» ազգության հարցը լուծել նրանց հետագա սերունդների մասին ուսական աղբյուրներում առկա տվյալների համադրումով: Նրանց հաջողվել է ուշագրավ տեղեկություններ հավաքել XV—XVI դդ. ապրած Սալարենների, Օնտոնովների, Վեսյակովների, Շիխովների մասին, պարզել, որ նրանք նույնպես զբաղվել են իրենց պապերի արհեստով՝ արևելյան ապրանքների առևտրով²⁰⁰: Անկարելի է թե-

199 Այս մի քանի տվյալները քաղել ենք պատահականորեն ընտրված մի գրքից («Армяно-русские отношения в XVIII веке», сборник документов, т. III, Ереван, 1978). Հենց այդ հատորի անվանացանկից դյուրությամբ կարելի է դուրս գրել Ռուսաստան այցելած հայ վաճառականների և այլ զբաղմունքի տեր անձանց անձանաչելի ձևափոխված—ուսականացված մի քանի տասնյակ ուրիշ անուններ՝ Իվան Մակարով, Դավիդ Գրիգորև, Վասիլ Մակարով, Բոգդան Բոգդանով, Սերգեյ Իվանով, Մակսիմ Յիլիպով, Պետր Իվանով և այլն, և այլն:

200 Տե՛ս, օրինակ, М. В. Тухомиров, նշվ. աշխ., էջ 151—153:

բազմահատել շատ արժեքավոր այդ աշխատանքը: Եվ կարելի է անվերապահորեն համաձայնվել, որ վերոհիշյալ վաճառականներից շատերի թոռներն ու թոռնորդները, անբակտելիորեն մերվելով ռուսական միջավայրին, հետագայում փոխել են իրենց ազգային դիմագիծը: Մեզ, սակայն, տվյալ դեպքում դբաղեցնում է «սուրոժյան հյուրերի» ծագումնաբանության հարցը, ուստի կրկին լանդրադառնանք Դմիտրի Դոնսկոյի հետ Կուլիկովյան ճակատամարտ մեկնած «սուրոժյաններին»:

Նախ, անհրաժեշտ է ի մի բերել ռուսական աղբյուրներում առկա տեղեկությունները նրանց գործունեության մասին:

«Сказание о Мамаевом побоище» ասքի խմբագրություններից մեկում ասված է, որ «սուրոժյանները» «яко гости хозяева быша»²⁰¹ Մեջբերելով այս հատվածը, Վ. Սիրոյեչկովսկին փորձում է բացատրել անձանոթ այդ ХОЗЯЕВԵ բառը, առնչելով այն թաթարական ХОЗЯ—պարոն բառի հետ: Ըստ այդմ, խնդրո առարկա նախադասությունը նա մեկնաբանում է այսպես. «Այդ հյուրերը եղել են «առաջընթաց հյուրեր», այսինքն առևտրական կարավանների գլխավորողներ (իմա՝ «քարվանքաշիններ»—Լ. Խ.)²⁰²: Այս բացատրությունը արամաբանված է և ընդունելի, բայց կարող են լինել նաև այլ առաջարկներ: Ելնելով այն փաստից, որ ռուսական միջնադարյան աղբյուրներում իրանա-հայկական «խոջա» տերմինը տառադարձվում էր ХОЗЯ (խոզի) ձևով²⁰³, ավելի հավանական է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք հայ մեծատուն վաճառականների համար շատ սովորական «խոջա» հորջորջման հետ: Ասքի հեղինակը այդ վաճառականներին խոջա կոչելով՝ ըստ երևույթին ցանկացել է շեշտել նրանց մեծահարուստ լինելը, նրանց առևտրական կապերի հսկայական ծավալ ունենալը և այլն:

Շատ ուշագրավ է նաև Տարեգրության ցուցումն այն մասին, որ այդ տասը «սուրոժյանները» «сходници суть з земли на землю и знаеми всеми и в Ордах и в Фрязах», այսինքն՝ «ճանապարհորդում էին երկրից երկիր ու ծանոթ էին բոլորին և՛ Հորդայում, և՛ Ֆրանկստանում»: Մենք, որ գիտենք արդեն հայկական կայուն գաղթօջախների գոյության մասին Ոսկե Հորդայի քաղաքներում և եվրոպական բազմաթիվ կենտրոններում, լրացուցիչ կովան ենք ստանում այդ «սուրոժյանների» հայկական ծագման մասին:

Ի՞նչ նպատակով էր Դմիտրի Դոնսկոյն իր հետ ռազմաձևակատ տարել այդ տասը վաճառականներին: Այս հարցին անդրադարձել են մի շարք ռուսումնասիրողներ: Ստորև համառոտ ծանոթանալու ենք այդ մասին արտահայտված կարևոր տեսակետներին, տեղեկությունները քաղելով հիմնականում Վ. Սիրոյեչկովսկու վկայակոչված աշխատությունից:

«Сказание о Мамаевом побоище» ասքում այդ մասին գրված է. «Поведания ради дальних земель», այսինքն,— ըստ Վ. Վասիլևսկու, «սուրոժյանները»՝ աշխարհ տեսած ու փորձառու այդ մարդիկ, կատարելու էին հետախույզի, ուղեցույցի և սննդամթերք հայթայթողի դեր: Վ. Սիրոյեչկովսկին սխալ

201 С. Шамбинаго. Повести о Мамаевом побоище. «Сборник отдела русского языка и словесности», LXXXI, էջ 51:

202 В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 70:

203 Խոզի-Մարում էր կոչվում, օրինակ, վրաց Ալեքսանդր թագավորի Ռուսաստան առաջած դեսպաններից մեկը (տե՛ս Վ. Բաբխուրաջյան, Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 27):

է համարում այս բացատրությունը՝ նշելով, որ սաղմական հետախույզի դեր կատարողներին միջնադարյան սուլթանական աղբյուրներում сторож կամ страж էին անվանում: Այս տեսակետից հետաքրքրական է հետևյալ փաստը: Ասրի որոշ ձեռագրերում ստված է, որ տափաստաններում Մամայի զորքերի շարժումներին ուշադիր հետևում էր ոմն «твердый страж» — Սիմեոն Մելիբով կամ Սեմյոն Մելիբ անունով. սա առաջինն էր, որ լուր հասցրեց թաթարական հորդայի Մոսկվայի վրա հարձակում սկսելու մասին: Անկախ մեղնից եղել են ուսումնասիրողներ, որոնք այս Սիմեոն Մելիբովին հավանաբար հայ են համարել²⁰⁴:

Նիկոնովյան տարեգրության մեջ, ինչպես հիշում ենք, ստված էր, որ «սուրոժցի» վաճառականները ուղեկցում էին Գմիարի Դոնսկոյին, — «видения ради», «аще что Бог случит, имут поведати в дальних землях», այսինքն՝ նրանց դերն էր պատերազմի հաջող ելքի լուրը տարածել աշխարհով մեկ, քանի որ առևտրական իրենց գործերով նրանք լինում էին ամենուրեք: «Ձագոնշչինա» կոչվող գրվածքի մեջ, ուղղակի ստված է, որ Կուլիկովյան ճակատամարտում սուլթանների տարած փառավոր հաղթանակի լուրը, արագությունը տարածվեց աշխարհի շրջա ծագերում. «Шибла слава к Железным вратам, к Риму и к Кафы по морю и к Торнаву и оттоле к Царюграду на похвалу: Русь великая одолета Мамай на поле Куликове»²⁰⁵:

Այստեղ հիշատակված են Դերբենտը (Երկաթի դուռ), Հոմեր, Կաֆան, բուլղարական երկրորդ թագավորության Տրոնովո մայրաքաղաքը, Կոստանդնուպոլիսը, — դարձյալ այն վայրերը, որոնց հետ ամենասերտ անտեսական կապերի մեջ էին հենց հայ վաճառականները:

Նիկոնովյան տարեգրությունն այս վաճառականների դերի մասին առաջ է բաշում ևս մի վարկած. «и другая вещь: аще что приличится да сии сътворяют по обычаю их». Նշանավոր պատմաբան Վ. Օ. Կլյուչևսկին գրծվար հասկանալի այս նախադասությունը բացատրում է այսպես. սուրոժցի վաճառականները «որպես մեծ փորձ ունեցող ու աշխարհատես մարդիկ, ծանոթ լինելով հեռավոր երկրների — Հորդայի և Ֆոանկաստանի անցուղարձերին ու սովորություններին, կարող էին արշավանքի ժամանակ օգտակար խորհուրդներ տալ»²⁰⁶:

Ա. Շախմատովի կարծիքով Մեծ իշխանն իր հետ վերցրել է «սուրոժցի վաճառականներին» հավանաբար դիվանագիտական հնարավոր հանձնարարությունների համար: Վ. Սիրոյեչկովսկին ճիշտ է համարում հենց այս կոահումը, նկատելով, որ թշնամու հետ բանակցելու անհրաժեշտությունը սկսեց է ծագեր և՛ հաղթանակի դեպքում, և՛ պարտության, իսկ «սուրոժցի վաճառականներն» իրենց լեզվագիտությամբ և Ոսկե Հորդայի կառավարող վերնախավի հետ ունեցած իրենց անտեսական սերտ կապերով՝ ամենահարմար թեկնածուներն էին դիվանագիտական ծառայություններ մատուցելու: Հարկ չկա այս-

204 Վ. Բ. Բաբխուպաբյան, Վ. Կ. Ոսկաեյան, նշվ. աշխ., էջ 22: Նրանք վկայակոչել են «Хрестоматия по истории СССР», т. I, М., 1949, էջ 219, որ տպագրված է «Ասր Մամայի շարդի մասին» գրվածքի մի փոփոխակ:

205 М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 258—259: Հմմ. В. П. Адрианова-Перетц, Задонщина. Текст и примечания («Труды отдела древнерусской литературы», V, М.—Л., 1947, էջ 202):

206 В. О. Ключевский. Опыты и исследования, 1912, էջ 464:

տեղ թվարկելու բաղձաթիվ այն դեպքերը, երբ հայ վաճառականներին դիվանագիտական բարդ ու նուրբ հանձնարարություններ էին առաջադրում լեհ թագավորները, Ղրիմի խաները, Պարսից շահերը, Վրաստանի գահակալները և այլ իշխանավորներ: Մոսկվայի մեծ իշխաններն այս առումով բացառություն չեն կազմել:

Այս անհրաժեշտ բացատրությունից հետո, կրկին անդրադառնանք վաճառականների ցանկին: Տեսանք, որ տվյալ դեպքում անուն-ազգանունները ազգային պատկանելիությունը որոշելու անվստահելի աղբյուրներ են: Սալարե ազգանվանը մենք արդեն հպանցիկ անդրադարձել ենք. ելակետ բնորոշելով այն վարկածը, որ ազգանունը «ավելի դյուրությամբ բացատրվում է ռոմանական լեզուներով, քան ռուսերենով», Վ. Սիրոյեչկովսկին, ինչպես տեսանք վերը, մի ամբողջ տեսություն է զարգացրել «սուրոժյան հյուրերից» շատերի իտալական ծագման և իտալական վաճառականների Մոսկվայում կատարած խոշոր դերի մասին: Բայց չէ՞ որ միջնադարյան Հայաստանում գործածական է եղել Սալար անձնանունը (առաջացած պարսկերեն «սալար» — «զորավար» բառից)²⁰⁷, ուստի, ավելի մեծ վստահությամբ կարող ենք այդ ազգանունը կրող երկու «սուրոժցիներին» նույնպես առնչել հայերի հետ:

Ցանկի հինգերորդ տեղում հիշատակված է Սիմեոն Օնտոնովը՝ Օնտոն Վերբլյուզինի որդին: Երբ վերհիշում ենք Միխայիլ Լիտվինից մեջբերված տողերը՝ արևելյան երկրներից Կիևի վրայով դեպի Մոսկվա կատարվող աշխույժ առևտրի մասին և այն մասին, որ արևելյան ապրանքները «օտարերկրյա վաճառականները (մեծ մասամբ հայերը—լ. Խ.) Մոսկվա էին փոխադրում սալ-լերով և բեռնավորված ուղտերով»²⁰⁸, այս անձնավորության Վերբլյուզին մականունը իմաստավորվում է ըստ ամենայնի: Տասնյակ և հարյուրավոր ուղտերից բաղկացած կարավաններում (որոնց մասին խոսում է Մ. Լիտվինը), անշուշտ, եղել են նաև ուղտապաններ: Եվ, ըստ երևույթին այդպիսիներից մեկն է եղել Օնտոն Վերբլյուզինը՝ «սուրոժցի» Սիմեոնի հայրը:

Ցանկի ութերորդ տեղում հիշատակված է Չեռնոյ կամ Չեռնիյ (այսինքն՝ Սև) մականունը կրող Դմիտրի վաճառականը: Հարկավ, անհնարին է պնդել, թե այդպիսի մականուն ունեցող անձն անպատճառ հայ է եղել, բայց մեծ հավանականությամբ կարելի է հետևեցնել, որ նա իր մաշկի գույնով խիստ տարբերվել է շրջապատի ռուս մարդկանցից:

Ցանկի չորրորդ հորիզոնականում հիշատակված է Կուզմա (Կողմա) Կովերյա (Կովիր, Կովրյա, Խովրին) «սուրոժցի», որից սկիզբ են առնում ռուսական պատմության մեջ խոշոր դեր կատարած Խովրին, Գոլովին և Տրետյակով իշխանական գերդաստանները²⁰⁹: XVI դ. կազմված իրենց տոհմաձառը Խովրիններն սկսում են Ստեփան անունով մի նախապապից, որը Դմիտրի Դոնսկոյի մոտ է եկել «из своей вотчины с Судака, да из Манкупа, да из Кафы»: Այդ Ստեփանը (եթե հորինովի և անգո մեկը չէ) ըստ երևույթին եղել

207 Հ. Ահառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 347: Անունն առաջին անգամ գործածված ենք գտնում Բարձրաբաշ վանքի 1247 թ. մի արձանագրության մեջ, ուր ասված է. «ես Սումբա որդի Սալարին միարանեցա սուրբ ուխտս և ըստ կարի ազնեցի տանս» (Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, Երևան, 1978, էջ 296):

208 Մ. В. Фехнер, Եզվ. աշխ., էջ 19—20:

209 Փ. К. Брук, Черноморье II, էջ 236:

է վերոհիշյալ Կողմա Կովերյայի մերձավոր ազգականը: «Սուրոժցի» վաճառականների այս ընտանիքը, իր ծագումը կապելով Սուդակի (Սուրոժի), Մանգուլի և Կաֆայի հետ, ուսական միջավայրում ներկայացել է որպես Ղրիմի թերակղզում XIII դ. սկզբներից գոյություն ունեցող Թևոզորո ֆեոդալական իշխանության (Մանգուլ կենտրոնով) հայազգի տիրակալների՝ Գավրասների ազգական²¹⁰: Իրական է եղել ազգակցական այդ կապը, թե հորինված, այժմ դժվար է որոշել: Մի բան, սակայն, պարզ է, Գավրասները, լինելով խոշոր ֆեոդալներ, միաժամանակ խոշոր վաճառականներ էին: Այդպիսիք էլ եղան Խովրինները Մոսկվայում հաստատվելուց հետո: Վերոհիշյալ Ստեփանի թոռը՝ Վլադիմիր Գրիգորևիչ Խովրինը 1450 թ. հիշատակված է որպես «Гость да и боярин великого князя». հայտնի է միաժամանակ, որ նա եղել է Մոսկվայի մեծ իշխան Վասիլի II-ի գանձապետ²¹¹:

Կիևի հայկական գաղթօջախի պատմությանը հատկացված էջերում ասել ենք արդեն, որ միջնադարյան քաղաքների պաշտպանության մարտերում բոլոր քաղաքացիները, մասնավորապես առևտրա-արհեստավորական խավերը, միշտ էլ առաջավոր դիրքերում են գտնվել: Այս առումով Մոսկվան, իհարկե բացառություն չէր կազմում: «Մոսկվայի աշխարհագորը» (МОСКОВСКАЯ РАТЬ), կազմված «սուրոժցիներից», մահուգավաճառներից (СУКОННИКИ), մյուս վաճառականներից և արհեստավորներից, գործելով մեծ իշխանի կողմից նշանակվող վոյեվոդի հրամանատարության ներքո, զգալի դեր է կատարել քաղաքի պաշտպանության համար մղվող մարտերում: «Մոսկվայի աշխարհագորը» գործուն մասնակցություն է ունեցել նաև Կուլիկովյան ճակատամարտում: Նկատի ունենալով այս հանգամանքը, բացառված չենք համարում, որ Դմիտրի Դոնսկոյի հետ պատերազմի դաշտ դուրս եկած վերոհիշյալ տասը «սուրոժցիները», ինչպես նաև բազմաթիվ ուրիշներ, որոնց անունները չեն պահպանվել, եղել են հայ աշխարհագորայինների ղեկավարներ, և բացառիկ դիրք են գրավել՝ ծառայելով մեծ իշխանին իրրև մատակարար, դիվանագետ և լրարեր:

²¹⁰ Ֆեոդորա իշխանության հայազգի տերերի գործունեության, ֆեոդալական այդ տիրույթի անտեսական դերի ու քաղաքական պատմության մասին առկա տեղեկությունները հավաքված են Ա. Լ. Յակոբսոնի կողմից (տե՛ս А. Л. Якобсон, Крым в средние века, М., 1973, էջ 128—133):

Նրանց հայկական ծագման մասին գրել են Ն. Աղսնցը, Ա. Վասիլևը (որոշ վերապահումներով) և ուրիշներ: Բյուզանդագետ Ա. Կաթանը, հենվելով Ա. Բրայերի մի հոդվածի վրա (A. A. M. Bryer. A Byzantine Family te Gabrades... „University of Birmingham historical Journal“ 12, 1990), հանդուժ է այն կարակացության, որ „сколько-нибудь определенных свидетельств в пользу армянского происхождения этой семьи не существует“, բայց ընդունում է, որ նրանք արևելյան ծագում ունեն (А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975, էջ 88—89):

Մեր նպատակից դուրս ենք համարում Գովրասների ծննդաբանական բարդ հարցի քննարկումը, սակայն խիստ թերահավատ ենք Ա. Բրայերի ուսումնասիրության արդյունքների նրկատմամբ: Մի գիտնական, որ հնարավոր է համարում ֆեոդալական հզոր մի գերդաստանի ազգանունը շաղկապել արար. «գյավուր» (անհավատ) վիրավորական բառի հետ, ենթադրելով, որ նրանք սեփականել են մահմեդականների կողմից իրենց «հատկացված» այդ հայհոյանքը և այն դարձրել ազգանուն, վստահություն չի կարող ներշնչել: Գյուվեր, Գովրիկյան, նաև Կորվին հայկական ազգանունների գոյությունն Արևելյան Սլյուպայի հայկական գաղթօջախներում Գովրասների, ուստի և Խովրինների հայկական ծագման օգտին է խոսում:

²¹¹ М. Н. Тухомиров, նշվ. աշխ., էջ 155—156:

«Ասր Կուլիկովյան ճակատամարտի մասին» գրվածքի մեջ հիշատակված են մի քանի իշխանների, բոյարների և վոյեվոդների անուններ, որոնք զոհվել են Կուլիկովյան ճակատամարտում: Դրանց շարքում հիշատակված է նաև Անդրեյ Սերկիզովիչ անուն-հայրանունը կրող մի անձնավորություն²¹², որն ըստ ոմանց Ոսկե Հորդայի թաթարներից է ծագում²¹³: Հռովմեական ծագում ունեցող Սերգիուս անունը միջին դարերում լայն տարածում էր գտել ողջ բրիտանական աշխարհում, ընդունելով տարբեր ձևեր. Սերգիոս (Հունաստանում), Սերգեյ (Ռուսաստանում) և այլն: Անունն ամենից շատ զործածական է եղել Հայաստանում՝ հիմնականում Սարգիս, բայց նաև Սերգիս ձևերով²¹⁴: Ռուսական միջնադարյան աղբյուրներում հիշատակված են այդ անունը կրող մի քանի հայազգի անձնավորություններ՝ այսպես, օրինակ, կաֆայիցի հայ վաճառական Սերկիզը²¹⁵, կիևցի հայ Ֆեդկո Սերկիզյանը (Федко Серкизен)²¹⁶ և այլք: Կուլիկովյան ճակատամարտում զոհված Անդրեյ Սերկիզովիչ զորահրամանատարի ազգանվան -ովիչ (-եվիչ) վերջավորությունը շատ բնորոշ է Լեհաստանում և հարավային Ռուսաստանում հաստատված հայերի համար. այս միջավայրում նշանավոր վաճառականներ և պետական ու եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաներ են եղել Զաքար Իվաշկևիչը, Նիկոլայ Բեռնատովիչը, Բեդրոս Զախարիասևիչը, Պյոտր Գրիգորևիչը, Սեֆեր Մուրատովիչը, Նիկոլ Թորոսովիչը և տասնյակ ու տասնյակ այլ հայեր:

Այս տեղեկությունների լույսի տակ հանգում ենք այն եզրակացության, որ մեծ հավանականությամբ հայ է եղել նաև խիզախ հրամանատար Անդրեյ Սերկիզովիչը, որը զոհվել է Կուլիկովյան ճակատամարտում²¹⁷:

Սրանք են, ահա, մեզ հայտնի տվյալները XIV դ. վերջին տասնամյակներում Մոսկվայում հաստատված և այդ նշանավոր քաղաքի տնտեսական ու քաղաքական ոլորտներում կարևոր դեր կատարած հայերի մասին: Մինչ այժմ հայտնի էր այդ տեղեկությունների փոքր մասը միայն. դրանք բաղմատպատկիցին «սուրոժյան հյուրերի» ազգային պատկանելիությունը պարզելու ուղղությամբ կատարված քննություններով և ստացված նոր արդյունքներով: Ինչպես տեսնելու ենք ստորև, կան և ուրիշ հնարավորություններ այդ արդյունքներն ամրապնդելու:

* * *

XV դ. Մոսկվայի տնտեսական կապերը Ղրիմի հետ ավելի են ծավալվում: «Սուրոժցի» բառը զործածությունից գրեթե դուրս է մղվում և նրան փոխարի-

212 «Воинские повести Древней Руси», под ред. члена-корр. АН СССР В. П. Адриановой-Перетц, М.—Л., 1949:

Իերում ենք ստորև մեզ հետաքրքրող հատվածը. «Не тури възрыкают на поле Куликове, побеженн у Дону великого,azoleша посечены князи руския и бояры и воеводы великого князя и князи белозерстии, посечени от поганых татар: Федор Семенович, Тимофей Волуевич, Семен Михайлович, Микула Васильевич, Ондрей Серкизович, Михайло Иванович и иния многия дружина, а иные лежат посечены. у Дона на брезни» (էջ 37):

213 Նույն տեղում, էջ 305:

214 Հ. Ահառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, էջ 402:

215 Հիշատակված է XIV դ. երկրորդ հիմնամյակում (В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 46):

216 Հիշատակված է 1552 թ. (Д. М. Мышко, նշվ. աշխ., էջ 117):

217 Այս մասին ակնարկ կա նաև Վ. Բարխուդարյանի և Վ. Ոսկանյանի վերջ հիշատակված աշխատության մեջ:

նկու է դալիս գոյություն ունեցող իրավիճակը ճշգրտորեն արտահայտող «կաֆայեցի» («кафинец» կամ «кафеанин») տերմինը²¹⁸: Կաֆան նշանավոր այն կենտրոնն էր դարձել, ուր կանգ էին առնում և նախապատրաստվում Մոսկվա մեկնելու՝ Անդրկովկասի, Թուրքիայի և Իրանի քաղաքներից ժամանող հայ վաճառականներից շատերը: Չնայած ռուսական փաստաթղթերի մեջ նրանք բոլոր մեծի մասին գրանցվում էին որպես «թուրքական» («турецкие»), «սլավոնական» («азамляне», այսինքն աճեմցի—իրանցի), «թոխաթցի» («токатяне»), «բուրսացի» («бурсяне») վաճառականներ, սակայն կան տվյալներ նրանցից շատերի հայ լինելու մասին:

Հոծ հայ բնակչություն ունեցող Կաֆա քաղաքն էր այն հանգուցակետը, որտեղ օտարերկրյա վաճառականների հետ գործարար կապեր էին հաստատում Ռուսաստանի տարբեր իշխանություններից այստեղ ժամանող վաճառականները: Առանց ասելու էլ հասկանալի է, որ «սուլթոցի» կամ «կաֆայեցի» կոչվողները միջազգային նշանակություն ունեցող այդ ապրանքափոխանակության կազմակերպիչների շարքում պատվավոր տեղ էին գրավում:

1475 թ. թուրքերը գրավում են Կաֆան: Զենովացիներն այդ վայրերից վճնդվում են անվերադարձ: Այդ դեպքերը կատարյալ աղետ են դառնում բոլոր այն երկրների համար, որոնց միջազգային հաղորդակցության ուղիները Սև ծովի հետ էին շաղկապված: Մանր հարված է ստանում նաև զրիմահայ առևտրական կապիտալը: Հարյուրավոր ընտանիքներ լքում են իրենց նոր հայրենիքը, և ապահով կյանքի և շահութաբեր գործունեության քիչ թիվ շատ նպաստավոր պայմաններ գտնելու հույսով՝ արտագաղթում ուրիշ երկրներ: Սակայն երկու-երեք տասնամյակ շանցած՝ Կաֆա քաղաքն սկսում է կենդանության նոր նշաններ ցույց տալ և քայլ առ քայլ վերականգնել առևտրական իր հին կապերը, որոնք այլևս երբեք նախկին ծավալը չեն ստանում, բայց այնուամենայնիվ, հսկայական նշանակություն են ձեռք բերում Ռուսաստանի և արեւելյան երկրների միջև դարերի ընթացքում հաստատված ապրանքափոխանակության աշխուժացման համար:

Անվարան կարելի է հայտարարել, որ Ղրիմի տնտեսական զահավիժումի առաջն առնում են հիմնականում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, թարմ ուժեր ստանալով մայր երկրից (մասնավորապես Տրապիզոնի, Բաբերդի, Երզնկայի շրջաններից): Այդ ժամանակաշրջանում աշխարհագրական այդ միջավայրում գոյություն չունեի մի այլ ուժ, որ ի վիճակի լիներ կենդանություն ներարկելու կիսակործան Կաֆա քաղաքին:

Կաֆայի վերակենդանացումը տեղի ունեցավ XV դ. վերջին տասնամյակներին, այն ժամանակ, երբ Մոսկվայի մեծ իշխանությունը բուռն զարգացման շրջան էր ապրում: Նրան էին ենթարկվել Նովգորոդը, Ռյազանը և Կենտրոնական Ռուսաստանի բոլոր իշխանությունները: Պետության սահմանները հյուսիսից տարածվել էին մինչև Մառուցյալ օվկիանոս, հարավից մոտեցել էին Ղրիմին, արևմուտքից՝ սահմանակից էին դարձել Լիվոնյան ուխտի հողերին (ասպետները պարտավորվել էին հարկ վճարել): 1480 թ., երկդարյա համառ պայքարից հետո, Մոսկվան թոթափում է նաև Ռսկե Հորդայի նկատմամբ ունեցած հպատակային բոլոր պարտավորությունները և փաստորեն դառնում հզոր մի միապետություն՝ ունենալով Իվան III-ի պես ականավոր առաջնորդ:

²¹⁸ ПСРЛ, т. XVIII, էջ 178: М. Н. Тухомиров. Пути из России в Византию, էջ 19—20:

Իվան Վասիլևիչի իշխանության տասնամյակներին, այսինքն՝ 1462—1505 թթ., զգալի առաջընթաց է ապրում նաև Ռուսաստանի տնտեսությունը. զարգանում են քաղաքները, ծավալվում է առևտուրը հարևան երկրների հետ, մայրաքաղաք Մոսկվան զարդարվում է ճարտարապետական գեղեցիկ կառույցներով, ընդարձակվում է Կրեմլը և այլն:

Քաղաքական ու տնտեսական բուռն զարգացման այս տասնամյակներին հայերի գործունեությունը Մոսկվայում պետք է որ ավելի մեծ ծավալ ընդուներ: Ի հաստատություն այս եզրակացության այսօր հնարավոր է մեջբերել բազմաթիվ փաստեր. դրանք, թերևս, երևան կհանվեն հետագայում, երբ այս տեսանկյունից քննության ենթարկվեն Մոսկվայի պատմության բոլոր գրավոր աղբյուրները՝ տպագիր ու ձեռագիր: Մեզ հայտնի նյութերը քանակով շատ շեն, բայց ուշադրության արժանի են իրենց բովանդակությամբ:

Իվան III մեծ իշխանը 1469 թ. արշավանք կազմակերպեց Ղազանի խանության դեմ. արշավողների շարքում, ինչպես գրված է տարեգրության մեջ, գտնվում էին նաև «սուրոժցիները, մահուդավաճառներն ու առևտրի մարդիկ»²¹⁹: Այսպիսով, «սուրոժցիները», Մոսկվայի ողջ բնակչության հետ մեկտեղ, կանգնած էին Իվան III-ի կողքին և նպաստում էին ռուսական հողերի միավորման ու Մոսկվայի մեծ իշխանության զարգացմանն ի նպաստ ծավալած նրա գործունեության իրականացմանը:

Մոսկվային նոր միացված իշխանությունների վարչա-տնտեսական կենտրոններում արմատավորվելու նպատակով, Իվան III-ը հաճախ բռնի տեղահանում և ուրիշ վայրեր էր փոխադրում տեղի բոյարներին ու խոշոր վաճառականներին, նրանց փոխարին այդ քաղաքներն ուղարկելով իր մոսկվացի կուսակիցներին: 1471 թ. Շելոն գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Մեծ Նովգորոդը կորցնում է իր անկախությունը, իսկ մի քանի տարի անց՝ 1478 թ., վերացվում են այդ նշանավոր քաղաքի «հանրապետական կարգերը». քաղաքն՝ իր լայնատարած շրջաններով մտնում է ռուսական կենտրոնական իշխանության կազմի մեջ²²⁰: Նովգորոդ մշտական բնակության են փոխադրվում Մոսկվայի վաճառականների ամենաբարձր խավի մի շարք ներկայացուցիչներ, որոնցից էին մեզ ծանոթ Սալարև գերդաստանին պատկանող մի քանի անհատներ և այլ «սուրոժցիներ»: Սրանք նովգորոդում XVI դ. սկզբներին ունեին «Сурожский двор» կոչվող իրենց վաճառատունը, ձեռք էին բերել գյուղեր ու կալվածքներ և այլն²²¹: Նովգորոդում սկսում են հայտնվել նաև արևելյան երկրներից ժամանած հայ վաճառականներ. նրանց քանակն այնքան է մեծանում, որ դարի վերջերին (1486 թ.) հրապարակված հրովարտակով սահմանվում է լիտովցիներից, թուրքերից և հայերից դանձվելիք հարկերի շափը. «а с иноземцев, с Литвы и с Турчан, с Армен и с иных иноземцев, опричь Немец, явки с головы с человека имати по 2 алтына»²²²:

219 «Купчие люди» — «առևտրի մարդիկ». այսպես էին կոչվում Մոսկվայի շարքային առևտրականները:

220 «Очерки истории СССР», II, էջ 276—283: Նովգորոդից վանդվում են Համզայի վաճառականները, որոնք այստեղ մեծ արտոնություններ էին ձեռք բերել (այդ մասին տե՛ս Н. А. Казакова. Из истории торговой политики русского централизованного государства XV в. («Исторические записки», № 47, 1954, էջ 259—290):

221 В. Е. Сыроечковский նշվ. աշխ., էջ 111—118:

222 М. В. Фехнер. նշվ. աշխ., էջ 61:

Իվան III-ի մերձավոր գործակիցների շարքում հանդիպում ենք նաև հայազգի վաճառականների, որոնք կատարում են նաև դիվանագիտական դանազան հանձնարարություններ: Կարևոր տեղ է զբաղում հատկապես դրիմահայ վաճառական Բոգդանը: Նախ այդ գործիչը Մոսկվա է ժամանում Քամանի իշխան Զախարիայի Մոսկվա փոխադրվելու ցանկությունը Իվան III-ին փոխանցելու, իսկ 1488 թ. մեկնում է Ղրիմ այդ գործը գլուխ բերելու համար²²³: Շատ ավելի նշանավոր դեր է կատարել կաֆայեցի վաճառական Կակոսը, որի մասին տվյալներ կան Ղրիմի խանությունը վերաբերող արխիվային գործերի մեջ: Նա հիշատակված է իր «Ժիդովին» մականունով, որ հայերեն կարելի է թարգմանել «ջհուղանման», «ջհուղատիպ» իմաստով: Այս նույն բովանդակությունն ունի ռուս առևտրաարդյունաբերողների նշանավոր գերդաստան Եվրեխնովների աղգանունը: Ինչպես այս, «Ժիդովինը», այնպես էլ Եվրեխնովների նախահայրը, հավանաբար այդպիսի մականուն-աղգանուն է վաստակել իր ժլատ բնավորությամբ, կամ էլ վաշխատուական լայնածավալ գործարքներ կատարելով: Նկատի ունենալով այդ հանգամանքը, կարծում ենք, որ կաֆայեցի վաճառական Կակոսին հրեա ծագում վերագրելու հիմքեր չկան: Այդ Կակոս անունը միջնադարյան Հայաստանում ամենից շատ տարածված ու սիրված Կիրակոս անվան փաղաքշական ձևն է, որ բաղմիցս վկայված է միջնադարյան աղբյուրներում և շատ զործածական է նաև այսօր²²⁴:

Կակոսը հանրահայտ անձնավորություն է եղել Մոսկվայում: Նրա օժանդակությամբ Իվան III-ը հարաբերությունների մեջ է մտել և դաշինք կնքել Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի հետ (այս առթիվ Կակոսը մեծ իշխանից պարգև է ստացել): Հարթելով Կաֆայի հետ առաջացած տարածայնությունները, Իվան III-ը 1474 թ. պահանջել է խանի դեսպանից՝ վերջ տալ Մոսկվայի վաճառականների նկատմամբ կիրառվող ճնշումներին. իսկ Կաֆա ուղևորվող իր դեսպանին հրահանգել է այդ հարցի մասին խորհրդակցել Կակոսի և այլ կաֆայեցիների հետ: Նույն այս Կակոսը 1475 թ. ստանձնել է խնամախոսի դեր. նա բանակցություններ է վարել Մանգուլի իշխանի դստերը Իվան III-ի որդու հետ ամուսնացնելու խնդրով: Գտնվելով մեծ իշխանի «ծառայություն» մեջ, փրկագնել է Ղրիմի թաթար իշխանների կողմից գերի վերցված ռուս վաճառականների, գնել է նրանց համար զգեստներ և ճանապարհել հայրենիք: 1486 թ. Իվան III-ը, հիշեցնելով Կակոսին նրա նախկին ծառայությունները, առաջարկել է շարունակել իր ջանքերն ի նպաստ Մոսկվայի մեծ

²²³ «Сборник русского исторического общества», т. 41, СПб., 1844, էջ 72—73: Այս փաստը քաղել ենք Վ. Միրայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» աշխատությունից (տե՛ս էջ 160—161):

²²⁴ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» (հատոր Բ, էջ 576—577) հիշատակված են Կակոս անունը կրող մի շարք անձինք: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական ինքնավարության մարմնի 1567 թ. հիշատակված դատավորներից մեկը նույնպես այդ անունն է կրել (տե՛ս Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 96, 212, 267 և այլն):

Փաստաթղթերի մեջ Կակոս անունը գրանցված է Կոկոս ձևով. «ա» և «ո» հնչյունների այս փոփոխությունը դյուրություն բացատրվում է օտար բառերի ու անունների՝ ռուսական ուղղագրության կանոններին համապատասխան գրություններով: «Կաոոլ» (թագավոր) բառը, որ ծագել է Կառլ անձնանունից, ռուսները գրում են «ո»-ով, բայց արտաբերում «Կաոոլ»։ հայկական Փանոս (Ստեփանոսի փաղաքշական ձևը) անունը ռուսական աղբյուրներում գտնում ենք տառադարձված Понос (Պոնոս) ձևով, որ անշուշտ արտասանվել է «ա»-ով (Панос). գրում էին կոզակ, մանետա, Օնտոն, Օլեքսանդր, բայց արտասանում՝ կազակ, մանետա, Անտոն, Ալեքսանդր և այլն:

իշխանություն. «Как еси наперед того нам служил и добра нашего смотрел, и ты бы и ныне нам служи, а мы, аж даст бог, хотим тебя жаловать». — գրել է իշխանը²²⁵:

Այս շրջանի մոսկովյան դիվանագիտական փաստաթղթերի մեջ հիշատակվում են նաև կաֆայեցի մի շարք այլ հայ վաճառականներ՝ Խաչերեսը (գրված է Качерис), Խարանգուլը (ըստ երևույթին Խերան անվան հետ է կապված), Պողոսը (գրված է Богос), Կուլին, Սարգիսը (գրված է Серкиз), Բարեկը, Ավետիքը և ուրիշներ²²⁶:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում, հատկապես, Պողոսի մասին Իվան III-ի, Ղրիմի խանի ու Կաֆայի թուրք փառայի միջև փոխանակված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է ղրիմահայ գաղութի պատմության մասնագետ Վ. Միրայելյանը²²⁷: Այս գրադրությունը հնարավորություն է ընձեռում շատ ավելի հստակ պատկերացում կազմելու «սուրոժցի» կոչվող վաճառականների գործունեության տարրեր կողմերի մասին: Պողոսը եղել է մեծահարուստ վաճառական: XV դ. 90-ական թթ., 5—6 տարի անընդմեջ, նա գտնվել է Մոսկվայում. 1498 թ. ծանր հիվանդացել է. նրա հարազատները, մասնավորապես եղբայրը, խոշա Կուլին, անհրաժեշտ քայլերի են դիմել Պողոսին Կաֆա փոխադրելու համար: Սակայն հիվանդը կնքել է իր մահկանացուն Մոսկվայում, թողնելով թանկարժեք ապրանքներ: 1499 թ. Իվան III-ը Կաֆա և Կոստանդնուպոլիս մեկնող իր դեսպանորդին հրահանգներ է արժեք, թե վերջինս ինչ պետք է ասի սուլթանական և խանական արքունիքներում Պողոսի ու նրա ժառանգության մասին. ստորև մեջ ենք բերում այդ հրահանգների կարևոր մասի հայերեն թարգմանությունը.

«Համայն Թուսիայի մեծ իշխան Իվան Վասիլևիչից՝
Օլեշ Գոլոխովստովին:

Այստեղ (Մոսկվայում) կար մի կաֆայեցի Պողոս անվամբ հայ. այժմ նա այլևս չկա. և ես կարգադրել եմ նրա իրերը հավաքել ու կնքել: Եթե Կաֆայում կամ Ցարգրադում... Պողոսի իրերի մասին քեզ հարցնեն, ապա դու նրանց պատասխանելու ես աշտպես. այդ մարդը եղել է մեր թագավորի երկրում և այժմ մահացել է. և մեր թագավորի մաքսահավաքներին հրաման է արվել պահպանել ու կնքել նրա ապրանքները. եթե այդ մարդն ունի զավակներ կամ որևէ զարմիկ, ապա, առաջնորդվելով արդարությամբ, մեր թագավորն այդ ապրանքը կհանձնի այն մարդուն, որին կուղարկի ձեր թագավորը մեր թագավորի մոտ»²²⁸:

Բանակցությունները ձգձգվում են. երկուստեք գրվում են բողոքներ ու բացատրություններ, մինչև որ 1502 թ. ապրիլին հանգուցյալ Պողոսի գույքը հանձնվում է Կաֆայից ժամանած դեսպանորդներին և հարթվում այդ վեճը:

²²⁵ Կակոսի մասին այս բոլոր տեղեկությունները բաղել ենք Վ. Միրայելյանից մեր կողմից բազմիցս հիշատակված աշխատությունից (էջ 40—41):

²²⁶ В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 45—46:

²²⁷ Վ. Ա. Միրայելյան, նշվ. աշխ., էջ 45—46: Փաստաթղթերը ապագրված են «Сборник русского исторического общества», т. 41, СПб., 1884 ժողովածուի մեջ (էջ 271—305):

²²⁸ Վ. Միրայելյան, նշվ. աշխ., էջ 162: Վավերագրի թարգմանությունը մեջ ենք բերում փոքր-ինչ սրբագրելով:

Ըստ այս նյութերի Պողոսը հանդես է գալիս որպես մեկն այն «սուրոժցիներից», որոնք տարիներ շարունակ առևտուր անելով Մոսկվայում՝ չէին դարձել Մոսկվայի բնակիչ: Հայտնի է, որ Պողոսի մայրը, կինը, երկու դուստրերը, եղբայրը և, հավանաբար, ուրիշ շատ ազգականներ բնակվում էին Կաֆա քաղաքում, և հանդես էին գալիս որպես Ղրիմի խանի հպատակներ:

Պետք է ենթադրել, որ «սուրոժցիների» մեծամասնությունը իրենց բնակիչ սկզբնական շրջանում եղել են Պողոսի նման. Մոսկվայում առևտրական աշխույժ գործունեություն են ծավալել, բայց եղել են ոչ թե Մոսկվայի քաղաքացի (գործ ենք ածում նորագույն ժամանակներին հարմար այս տերմինը), այլ ղրիմեցի—«սուրոժյան հյուր»: Սակայն բաղմաթիվ ղրիմահայեր էլ՝ տակավին XIV դ. կեսերին, իսկ ավելի մեծ շափով XV-ի ողջ ընթացքում, այնպիսի սերտ անտեսական կապեր էին ստեղծել Մոսկվայի հետ, հաստատվել այդ քաղաքում տեականորեն, տուն ու տեղ ստեղծել իրենց համար, ձեռք բերել շարժական ու անշարժ կալվածքներ, խնամիական կապեր հաստատել ռուսների հետ, որ «սուրոժցի» կոչումը նրանց համար դարձել էր արդեն ազգային պատկանելիությունից ավելի տոհմի ծագումը բացահայտող մի ցուցանիշ: Պետք չէ անտեսել և այն հանգամանքը, որ «սուրոժցիներից» սերված և Մոսկվայի քաղաքացի դարձած վաճառականներից շատերը, տեղի տալով ռուսական եկեղեցու ճշնշումներին, խզում էին իրենց կապերը մայր եկեղեցուց և դառնում ուղղափառ Այսպիսով նրանք ավելի էին մերվում ռուսական միջավայրին, մոռացություն տալով իրենց գերդաստանի ծագման հիշատակները:

* * *

Ի՞նչ հիշատակներ է պահել Մոսկվայի միջնադարյան պատմությունը «սուրոժցի» կոչվող հայ վաճառականների առկայության ու գործունեության մասին: Հնագույն տեղեկությունը, գրանցված 1599 թ. մի փաստաթղթի մեջ, վերաբերում է «Հայկական կարավանատանը» («Армянский двор»), որն քստ երևույթին գոյություն է ունեցել այդ թվականից շատ առաջ²²⁹: Միջնադարյան քաղաքների ներքին կյանքի մասին առկա տեղեկություններից դատելով, հայ վաճառականները իջևանում էին իրենց այս կարավանատանը, և հենց այստեղ էլ զբաղվում մեծածախ առևտրով: Կարավանատունը գտնվում էր Սրետենսկի փողոցի վրա²³⁰:

Մոսկվայի քաղաքային շուկան գտնվում էր Կրեմլի առջևի հրապարակում և զետափին, բաղկացած էր բաղմաթիվ շարքերից, որոնց մեջ կենտրոնական տեղ էր գրավում «Սուրոժյան մետաքսի վաճառաշարքը» («Суроожский шелковый ряд»), որը սկիզբ էր առնում Կրեմլի Սպասսկի կոչվող դարպասի մոտակայքից և ձգվում մինչև Իլլինկայի եկեղեցին: 1626 թ. մեծ հրդեհից հետո, երբ գրեթե ամբողջապես հրո ճարակ դարձան Կիտայ-Գորոդի բոլոր շինությունները, Մոսկվայի առևտրական այդ կենտրոնն սկսեց վերաշինվել հիմնովին. տերություն և մասնավոր անձանց նախաձեռնությամբ այստեղ սկսեցին կառուցվել վաճառատներ, պետական հիմնարկներ և եկեղեցիներ: Վաճա-

²²⁹ Н. М. Карамзин. История государства российского, изд. Н. Эйнерлинга, т. X, СПб., 1843, էջ 155; М. В. Фехнер, Կշվ. աշխ., էջ 60:

²³⁰ Н. Костомаров. Очерк торговли Московского государства в XVI—XVII столетиях, СПб., 1862, էջ 86:

աատներից հիշատակվում են երեքը՝ «Հինը», «Նորը» և «Պարսկականը». այս վերջինն իր մեջ բովանդակում էր 200 թաղակապ կրպակներ, որոնք վարձու էին տրվում արևելյան ապրանքներ վաճառող հայերին, պարսիկներին, ռուսներին²³¹:

Հայկական կարավանատան, «Սուրժյան մետաքսի վաճառաշարքի», իսկ հետագայում «Պարսկական» վաճառատան գոյությունը Մոսկվայի կենտրոնական հրապարակում և Սրետենսկի փողոցի վրա՝ խոսուն փաստեր են նախ դրիմահայերի, ապա նաև այլ վայրերից ժամանող հայ վաճառականների Մոսկվայում կատարած տնտեսական կարևոր դերի մասին:

* * *

Մոսկվայի հայ գաղութի մասին մեր գիտելիքները կրնդարձակվեին, եթե հնարավոր լիներ պարզել, թե երբվանից են հայերն այստեղ ունեցել իրենց եկեղեցին՝ միջնադարյան այն հաստատությունը, որի գոյությունն իսկ կարելի է զորեղ առհավատոյա համարել բազմամարդ ու կազմակերպված գաղթօջախի առկայության: Նախորդ էջերից մեկում անդրադարձել ենք արդեն Մոսկվայի մետրոպոլիտ Կիպրիանոսին ու նրա՝ հայերի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կեցվածքին: Հոգևոր այդ առաջնորդը պատվիրում էր ռուս հավատացյալներին մտերմական կապեր չստեղծել «հերձվածող» հայերի հետ, արգելել նրանց մուտքը եկեղեցիներ և այլն:

Այս «հորդորներից» հետո, եթե ոչ հասարակ ժողովուրդը, ապա՝ անտարակույս կղերական դասը, պետք է, որ խեթ աչքերով նայեր «կասկածելի» դավանանք ունեցող հայ քրիստոնյաների վրա: Եվ նրանք, անկախ եկեղեցու պաշտոնյաների կողմից պարտադրվող անբարյացակամ այս կեցվածքի, եթե, իհարկե, պատկառելի թիվ էին կազմում, պետք է, որ ստեղծեին իրենց աղոթքի տունը, իրենց համայնքի ներքին գործերը տնօրինող հաստատությունը: Եվ իրոք, կան աղոտ հիշատակներ այն մասին, որ «սուրժոցի վաճառականները» տակավին XIV դ. վերջերին, Մոսկվայում ունեցել են իրենց եկեղեցին:

1479 թ. Իվան III-ը քանդել տալով փայտաշեն ու խարխուլ մի եկեղեցի, որը գտնվում էր Մոսկվայի առևտրատարհեստավորական արվարձանում՝ Պոսարում, նույն տեղում հիմք է դնում քարաշեն մի եկեղեցու՝ Հովհան Ռսկերբրանի անունով: Այդ մասին տարեգրության մեջ գրանցում կատարողը նշել է, որ նախկին փայտաշեն եկեղեցին կառուցված է եղել Մոսկովյան «հյուրերի», այսինքն «սուրժոցի վաճառականների» կողմից, պատկանելիս է եղել նրանց («бе же та церковь изначала гостей московских строение») ²³². Բայց մեծահարուստ ու փարթամ «սուրժոցի» վաճառականները կարո՞ղ էին, արդյոք, իրենց հոգևոր հաստատությունը պահել վերին աստիճանի լքված ու խարխուլ վիճակում, եթե XV դ. վերջերին ունեցած շինեին մեկ ուրիշ տաճար: Թվում է, թե շէր կարող այդպես լինել: Եվ, իրոք, տարեգիրը այդ խարխուլ եկեղեցին անվանում է «бывшей гостинной деревяной», այ-

231 М. Н. Тихомиров, նշվ. աշխ., էջ 130, 147; Н. Костомаров, նշվ. աշխ., էջ 85:

232 ПСРЛ, т. XI, էջ 221. В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 39:

սինքն՝ «Հյուրերին պատկանող փայտաշեն եկեղեցի»²³³, ակնարկելով թերևս այն մասին, որ Իվան III-ի կողմից նոր եկեղեցու հիմքերը դնելու ժամանակ Մոսկվայի «հյուրերն» ունեցել են արդեն մեկ այլ՝ ոչ փայտաշեն, այլ քարաշեն տաճար²³⁴:

Ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել այդ տաճարի կառուցման ժամանակի, վայրի և գոյատևման մասին: 1753 թ. մի փաստաթղթում՝ գրված Օթար Թումանովի և այլ հայերի կողմից, տվյալ կա այն մասին, որ վաղ ժամանակներում Կիտայ-Գորոդում հայերն ունեցել են եկեղեցի, որը հետագայում լքվել է, այդ շինությունների տեղում մետաքսի արհեստանոց կառուցվելու հետևանքով: Մեկ ուրիշ վկայությամբ այդ եկեղեցին գտնվելիս է եղել Կիտայ-Գորոդի այն հատվածում, որն ընկած էր Վարվառկա և Իլյինկա փողոցների միջև, ուր տակավին XVIII դ. գոյություն են ունեցել հայերին պատկանող ինչ-որ շինություններ՝ պիտանի հայկական եկեղեցու կարիքների համար²³⁵:

Իվան IV Ահեղի հրամանատարության ներքո գործող ռուսական բանակը, երկարամյա համառ պայքարից հետո, 1552 թ. գրավեց Ղազանի խանությունը: Մենք արդեն ասել ենք, որ Ղազանում բնակվող հայերը ռուսական զինքի հաղթանակի շերտ կողմնակիցներն էին: «Ղազանի տարեգրությունը» տեղեկություն է պարունակում այն մասին, որ պատերազմից հաղթանակով վերադարձող ցարին ու զորքերին Մոսկվայում ցնծազին դիմավորողների շարքում եղել են բազմաթիվ հայեր²³⁶: Ի նշանավորումն այս հաղթանակի, Իվան Ահեղը Մոսկվայի կենտրոնում կառուցել է տվել ռուս ճարտարապետության հրաշալիքներից մեկը՝ Վասիլի Երանելու փառահեղ տաճարը, բաղկացած միմյանց հետ շաղկապված ինը փոքր եկեղեցիներից: Գրանցից մեկը նվիրվել է Հայոց Լուսավորիչ Գրիգոր Պարթևին: Եթե Մոսկվայի հայերը Ռուսաստանի տընտեսական կյանքում զգալի դեր կատարած շլինեին, այս փաստը կմնար առանց բացատրության: Եվ, անշուշտ, ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք հայերին սիրաշահելու խորհուրդ են տեսնում այս փաստի մեջ: Մոսկվայի հայ գաղթօջախի բնակչությանը, ինչպես և տարբեր ճանապարհներով ու տարբեր գործերով Մոսկվա ժամանող հայազգի բոլոր մարդկանց հնարավորություն է տրվում իրենց անկյունն ունենալու համառուսական նշանակություն ստացած նորակառույց այդ տաճարի մեջ:

²³³ Այս արտահայտությունը բաղում ենք Մ. Տիխոմիրովից (նշվ. աշխ., էջ 158), որը մեջ է բերել՝ վկայակոչելով ПСРЛ. т. VIII, էջ 201, ПСРЛ. т. XXIII, էջ 193:

²³⁴ Այս եզրակացությունը պատկանում է Մ. Տիխոմիրովին (տե՛ս նշվ. աշխ., էջ 158): Նշենք, սակայն, որ «սուրժյան հյուրեր» կոչվող վաճառականներին համարելով մոսկվացի ռուս վաճառականներ, որոնք առևտուր էին անում Ղրիմի հետ, ակադ. Մ. Տիխոմիրովը այս փաստի հիման վրա խոսք է բացել Մոսկվայում վաճառականական միությունների կամ արհեստակցական կազմակերպությունների սաղմերի առկայության մասին: Այժմ, երբ պարզ է արդեն, որ «սուրժցի» են կոչվել ոչ թե ազգությամբ ռուս վաճառականները, այլ զրիմահայերը՝ վերանայման կարոտ են դառնում «սուրժցիներին» պատկանող եկեղեցիների մասին փաստի այս կարգի հեռանկա մեկնարանությունները:

²³⁵ Материалы для истории, археологии и статистики города Москвы, собр. И. Е. Забелиным, ч. I, էջ 1009, ч. II, էջ 1154 (տե՛ս Մ. Տիխոմիրով, նշվ. աշխ., էջ 216):

²³⁶ «Казанская история», М., 1957, էջ 154. «Հայ ժողովրդի պատմություն», IV, էջ 422:

* * *

XVI դ. երկրորդ հիսնամյակը Ռուսաստանի և մերձակա երկրների հայկական գաղթօջախների պատմության համար դարձակետային ժամանակաշրջան է եղել: Հայ առևտրական կապիտալն ընդարձակել է իր գործունեության շրջանակները: Ինչպես միշտ զբաղված լինելով հիմնականում արևելյան ապրանքների առևտրով, հայ վաճառականներից շատերը մուտք են գործել այդ երկրների տնտեսական կյանքի տարբեր բնագավառները, զբաղվել նաև տեղական ու եվրոպական ապրանքների մեծածախ առևտրով, ստեղծել արհեստանոցներ և այլն: Քիչ չեն եղել նաև մեծահարուստ այն վաճառականները, որոնք ձեռք բերելով գանձագին խոշոր կալվածքներ, տեղ են գրավել այդ երկրների կալվածատերերի շարքում: Բարգավաճ այս վիճակն արդյունք էր, առաջին հերթին, արևելաեվրոպական երկրների տնտեսական կյանքի բուռն զարգացման, սակայն որոշիչ դեր էին կատարում նաև քաղաքական նոր պայմաններն ու միջպետական հարաբերությունները:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև դեռևս XVI դ. սկզբներին ծայր առած դոտեմարտերն ավելի սուր բնույթ էին ստացել դարիս երկրորդ հիսնամյակի ընթացքում: Սյուննի և շիա դավանանքին պատկանող մուսուլմանների միջև հակամարտությունները բացարձակ պայքարի ձևեր էին ընդունել: Թուրքիայի սահմաններից վճռվել էին բոլոր իրանցի շիաները. իրանցի վաճառականների առջև փակվել էին Ատրպատականից Թուրքիայի կենտրոնական քաղաքները և սևծովյան նավահանգիստները ձգվող բանուկ ճանապարհները: Հակառակ քաղաքական անբարենպաստ այս պայմանների, ապրանքափոխանակությունը չէր դադարել մրցակից պետությունների միջև: Առանց կանգառի Իրանում արտահանվող հում մետաքսի բեռները և իրանական ու հեռավորարևելյան այլ ապրանքներ, մեղ ծանոթ ճանապարհներով, մուտք էին գործում Թուրքիա՝ դառնալով հումք Թոխաթում, Բուրսայում և այլ քաղաքներում զարգացող մետաքսագործության համար: Պատերազմող կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ մեծ շափերի հասնող այդ առևտուրը կատարվում էր Իրանի և Թուրքիայի տիրապետության տակ անցած հայկական նահանգներում բնակվող և այդ երկրների տնտեսական կենտրոններում հաստատված հայ վաճառականների միջոցով²³⁷: Նույն այս վաճառականներն էին, հիմնականում, որ վերոհիշյալ արևելյան ապրանքները և դրան ավելացված նաև Թուրքիայում արտադրվող թանկարժեք գործվածքեղենը մեծ քանակությամբ հասցնում էին Արիմ, Լեհաստան, Մոսկվա և ուրիշ մերձակա երկրներ:

Տևական պատերազմները և սազմական բախումներն անպակաս էին նաև Արևելյան Եվրոպայի երկրներում: Բայց ապրանքափոխանակությունը շահութաբեր էր բոլորի համար հավասարապես: Ուստի հայ վաճառականներն այստեղ ևս դիտվում էին որպես շեղոք տարր և իրավունք էին ստանում կարավաններ կազմելով երթևեկել մի երկրից մյուսը՝ նույնիսկ պատերազմական գործողությունների ժամանակ: Եվ այսպիսի երթևեկը կատարվում էր ոչ դեպքից դեպք կամ բացառիկ պայմաններում, այլ օրենքի ուժ էր ստացել Լեհաստանի

237 Հ. Փափագյան. Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 242—244:

Քաղաքը Սիգիզմունդ Օգոստոսի 1570 թ. հրապարակած մի հրովարտակով²³⁸:

Այս ժամանակաշրջանում Լեհաստանում բնակվող կամ առևտուր անող հայ վաճառականներն ստացել էին նաև այլ առանձնաշնորհումներ, և այն աստիճանի ամրապնդել իրենց տնտեսական դիրքերը, որ տեղական առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների նախանձն էին շարժում: Վերջիններս, զանազան բողոքագրեր ներկայացնելով կենտրոնական իշխանությունը, փորձում էին սահման դնել հայերի տնտեսական բարգավաճման առջև: Լվովի քաղաքային համայնքն, օրինակ, Սիգիզմունդ Օգոստոս Քաղաքին հասցեագրած բողոքագրի մեջ ասում էր. «Հայերն այժմ առևտուրը տարածել են ողջ Քաղաքությունից մեջ, նաև Պրուսիայում, Լիտվայում և Մոսկվայում, երկրներ, ուր իրենց նախնիները բավարարվում էին սոսկ արևելյան ապրանքների վաճառքով: Իրենց ստացած արտոնագրից հետո,— շարունակում են բողոքագրի հեղինակները,— հայերի վիճակն այնքան երջանիկ է դարձել, որ ծովից ծով (այսինքն՝ Սև ծովից Բալթիկ ծով—Լ. Խ.) են հասցնում իրենց առևտրի ապրանքները, առիթ չեն կորցնում գյուղեր և ավաններ վարձակալելու, բաղամացնում են իրենց պարտեզները քաղաքի արվարձաններում, և իրենց ձեռքն են առնում քաղաքի (իմա՝ Լվովի—Լ. Խ.) գրեթե բոլոր վաճառատները»²³⁹:

Մոսկվայի հայ վաճառականների մասին պահպանված տեղեկությունները, ինչպես տեսանք արդեն, անհամեմատ աղքատ են, սակայն, հիմքեր կան ենթադրելու, որ մեծ չափերի է հասել նաև նրանց առևտուրը: Մոսկվայի և արևելյան երկրների միջև կատարվող առևտրի մասին հատուկ մենագրության հեղինակ Մ. Ֆեխները, սկզբնաղբյուրների հիման վրա ցույց տալով, որ արևմտիկյան (առաջին հերթին՝ հայազգի) վաճառականները մշտապես առևտուր էին անում Մոսկվայում, Մեծ Նովգորոդում, Պուտիլյում, այսինքն՝ Ռուսաստանի սահմանափակ կենտրոններում, ուշադրություն է հրավիրում հետևյալ հարցերի վրա: Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը սահմանափակել էր արևելյան վաճառականների գործունեության վայրերը, այդուամենայնիվ, Արևելքից ներմուծված ապրանքները Ռուսաստանում լայն տարածում էին գտնում: Ռուս վաճառականները հայերից ձեռք բերելով այդ ապրանքները, դրանք վաճառքի էին հանում ոչ միայն Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, այլև հասցնում էին պետության հյուսիսային և հյուսիս-արևելյան ամենահեռավոր շրջանները. «Այս հանգամանքը,— եզրակացնում է ուսումնասիրողը,— ակնառու կերպով հաստատում է, որ ռուսական ներքին շուկայի համար արևելյան առևտուրն ունեցել է ոչ փոքր նշանակություն»: Այնուհետև հաստատելով, որ հայ վաճառականների առևտրի հիմնական առարկան XVI դ. եղել է մետաքսը, Մ. Վ. Ֆեխները շեշտում է, որ այդ ապրանքներից բացի «հայերը թանկագին քարերի, մորթիների, կաշվի և մամի մեծ չափերի հասնող առևտուր են արել»²⁴⁰:

Բարվոք և հավասարակշիռ այս վիճակը խախտվում է XVI դ. վերջերին և XVII-ի սկզբներին, երբ Թուրքական կայսրությունն արևելքում էր շալալինե-

²³⁸ Հրովարտակում պարզ ասված է, որ հայ վաճառականներն իրավունք ունեն կարավաններով Թուրքիայից լեհական պետության սահմանները մանել և Կիևից ուղևորվել Մոսկվա նաև պատերազմի ժամանակ («Архив юго-западной России», ч. VII, т. V. 1907, էջ 187—190):

²³⁹ Պիլզնի, Լեհաստանի հին իրավունքը, Վիեննա, 1890, էջ 36—37:

²⁴⁰ М. В. Фехнер, նշվ. աշխ., էջ 60—63:

րի հուժկու ապստամբություններից: Փոքր Ասիայի արհեստագործության և առևտրի նշանավոր կենտրոնները կողոպտվում ու ավերվում էին այն աստիճանի, որ տասնամյակներ պետք է անցնեին նախկին վիճակին հասնելու համար:

Մոսկվայի հետ տնտեսական ամենասերտ կապեր ստեղծել էին, հատկապես, թոխաթեցի հայ վաճառականները: 1602 թ. ջալալիները գրավեցին և ավերեցին նշանավոր այս կենտրոնը: Ստեփանոս Թոխաթեցի տարագիր բանաստեղծը գովերգում է իր հայրենի քաղաքը, նկարագրում նրա ծաղկուն ու բարգավաճ վիճակը մինչև ջալալիների կողմից ավերվելը: Ի վերջո, սրտի խոր կսկիծով նա արձանագրում է, որ ամեն ինչ այդտեղ հողին է հավասարեցվել, իսկ բնակչության մեծամասնությունը լքել է քաղաքն ու ցրվել աշխարհով մեկ²⁴¹:

Թուրքիայի քաղաքական կյանքի անկայուն վիճակի և կենտրոնական շրջանների տնտեսական փլուզման այս նույն ժամանակաշրջանում, ինչպես ասել ենք արդեն, ուսական պետությունը վերելք էր ապրում և ընդարձակում իր սահմանները՝ բոլոր տեղություններով: Ղազանի և Աստրախանի խանությունների գրավումից հետո միջազգային ապրանքափոխանակության Կասպ-Վոլգյան հին մայրուղին շատ ավելի մեծ նշանակություն է ստանում հզորացող Ռուսաստանի համար: 1584 թ. հյուսիսային Դվինայի գետաբերանում՝ Սպիտակ ծովի ափին հիմնադրվում է հետագայում Արխանգելսկ կոչված նավահանգստային քաղաքը, որով ուսական պետությունը ծովային ճանապարհով անմիջական հաղորդակցության մեջ է մտնում հյուսիսեվրոպական երկրների հետ: Իրանից և Անդրկովկասյան երկրներից Կասպից ծովի ու Վոլգայի վրայով դեպի Մոսկվա ձգվող տնտեսական զարկերակն սկսում է բարախել լիարյուն, և դրան համընթաց արյունաբամ է լինում դրիմյան մայրուղին:

Համայն Ռուսիայի մայրաքաղաք դարձած Մոսկվայում ավելի են բազմանում հայ վաճառականներն ու տարբեր զբաղմունքի տեր մարդիկ, որոնցից շատերը մշտական բնակություն են հաստատում այստեղ: Սակայն նրանք, իրենց մեծամասնությամբ, այլևս դրիմահայեր կամ թուրքական տիրապետության տակ անցած հայկական նահանգների հետ կապված հայեր չէին, այլ Արևելյան Հայաստանից, Վրաստանից և Իրանի տիրապետության տակ զրտնրվող Անդրկովկասյան խանություններից տեղափոխվածներ:

Մոսկվան այդ շրջանում շատ էր ընդարձակվել. Սպիտակ քաղաքից (Белый город) դուրս գտնվող թաղամասերը, որ հողե պարիսպների ծիրի մեջ էին գտնվում, արդեն անբավարար էին արագորեն աճող բնակչության կարիքների համար, ուստի այդ պարիսպներից դուրս ստեղծվում էին նոր թաղամասեր²⁴²: Քաղաքային կյանքի զարգացման հետևանքով մարդահամար կատարելու փորձեր էին արվում. 1620, 1638, 1665—1672, 1690-ական թթ. կատարված բնակչության ցուցակագրությունների տվյալներից ելնելով, ուսումնասիրողները հանգել են այն եզրակացության, որ XVII դ. հայերը Մոսկվայում շեն ունեցել հատուկ թաղամաս, այլ բնակություն են հաստատել օրավուր ընդարձակվող քաղաքի տարբեր մասերում²⁴³: Կան, սակայն, որոշ տրվ-

241 Ղ. Ալիջան, Հայաստանում, հատոր Բ, Վենետիկ, 1901, էջ 606—609:

242 П. В. Сутин. История планировки и застройки Москвы, материалы и исследования, том первый, 1147—1762 гг., М., 1950:

243 Нина Молева. Иван Салтанов и его школа. «Литература», 1977, № 10, էջ 75:

յալներ, որոնք խոսում են հօգուտ այն ենթադրության, թե բազմաթիվ հայեր գերադասում էին Պրեսնյա թաղամասը, ուր ըստ ստուգելի որոշ տվյալների XVII դ. սկզբներին կառուցվել է Հայոց Սուրբ Աստվածածնի քարաշեն եկեղեցին²⁴⁴։ Քաղաքի այս մասում բազմաթիվ հայերի առկայությունը է բացատրվում նաև այն հանգամանքը, որ հայերի ազգային գերեզմանատուներ նույնպես ստեղծվել է այստեղ. Վազանկովյան թաղի հայկական այս գերեզմանատանը 1801 թ. կառուցվեց հայկական մի մատուռ, որը կանգուն է առ այսօր և Մոսկվայի հայերի միակ գործող եկեղեցին է հանդիսանում։

1729 թ. Պետրոս II-ի հրովարտակով Պրեսնյայի թաղամասում գտնվող Վոսկրեսենսկայա կոչվող թագավորական կալվածքը տրվում է իր ընտանիքով Մոսկվա փոխադրված Վրաց թագավոր Վախթանգ VI-ին։ Թագավորի հետ միասին Պրեսնյայի այս նոր թաղամասում բնակություն են հաստատում Պետրոս Մեծի անդրկովկասյան արշավանքից հետո հայրենիքից հեռացած բազմաթիվ վրացի և հայ ազնվականներ, առևտրականներ, ղինվորականներ և հասարակ մարդիկ՝ շուրջ 3000 անձինք։ Սրանց ջանքերով շինանում է քաղաքի այդ մասը, որը հայտնի է դառնում Գրուզինի անունով և որի հիշատակները մնում են նաև այսօր՝ Մեծ և Փոքր Գրուզինսկի փողոցների շրջափակում։ Եթե ճիշտ է այն տեղեկությունը, թե Պրեսնյայում հայեր են հաստատվել ու եկեղեցի կառուցել այս դեպքերից շուրջ մեկ դար առաջ, կարելի է ենթադրել, որ ուսական կառավարությունը Վրաց թագավորի և նրա հետ ժամանած վրաստանցի գաղթականների համար բնակության վայր ընտրելիս հաշվի էր առել նաև այդ հանգամանքը։ Գրուզինի կոչված նորաստեղծ թաղամասի բնակչության կազմում կարելի է հաստատապես պնդել, որ զգալի թիվ էին կազմում հայազգի մարդիկ, ըստ մեծի մասին վաճառականներ²⁴⁵։

244 Բարձրագույն հրովարտակը և արձանագրությունը վերաբերեալը առ եկեղեցիս դաւանութեան լուսաորշական Հայոց, որ ի Ռուսաստան, Մոսկվա, 1842, էջ 119. Մ. Մաքեւան, Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց կազարեան տոհմի, Մոսկվա, 1856, էջ 18։

Մոսկվայում բնակություն հաստատած մի խումբ հայերի կողմից 1753 և 1760 թթ. խուսական պետական մարմիններին ներկայացրած խնդրագրերի մեջ խոսք կա այն մասին, որ Կիտայ-Գորոդի հայկական եկեղեցու վերացումից և ժամանակավոր ժողովատեղիների փոփոխությունից հետո, հայերն իրենց աղօթատեղին փոխադրել են Պրեսնյա, որտեղ Վախթանգ թագավորի կողմից նրանց հատկացված հողամասի վրա, նրանք կառուցել են փայտաշեն մի եկեղեցի 1753 թ. փաստաթղթում գրված է. «...А как тот Волков двор хозяинном продан, то оную церковь принуждено перенести в деревянной покой, состоящей за землянным городом, близ самого поля, за Преснею рекою, месте которое отдано выехавшим покойным грузинским царем Вахтангом Леонтевичем армянской нации князьям и дворянам и протчего звания людям с фамилиями для поселения» («Арм.-русские отношения в XVIII в.», 3, էջ 276, հմմ. նաև էջ 337)։

ըստ երևույթին հիմնավոր չեն այն տվյալները, որոնց համաձայն Պրեսնյայում հայկական քարաշեն եկեղեցի է եղել տակավին XVII դ.։ Հավանաբար այդ թաղամասում հայկական եկեղեցական առաջին շինությունը հենց այն փայտաշեն եկեղեցին է, որի մասին խոսք կա վերոհիշյալ փաստաթղթի մեջըրերված հատվածում։

245 Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ ինչպես վաղ միջնադարում, այնպես էլ հետագա դարերում (մինչև XIX դ.), «վրացի» տերմինը հայ և օտարազգի բազմապիսի ազգյուրներում լայնորեն օգտագործվել է «Վրաստանի բնակիչ» իմաստով, հատկացվելով հավասարապես Վրաստանի և՛ վրացիներին, և՛ հայերին։ Այս հաստատվում է բազմաթիվ փաստերով, որոնցից մի քանիսի հետ արժե ծանոթանալ։ 1691 թ. հայերեն մի հիշատակարանի մեջ «վրացի» է կոչվել Սպահանում առևտուր անող Կուտէնց Մաթոսի որդի պարոն Ռամազը (եղբայրն է՝ Ղազար, բույրը՝ Խաթուն և այլն)։ Զաքարիա Ազուլեցին իր «Օրագրության» մեջ

* * *

Հին Մոսկվայի հետ հայերի ունեցած անտեսական կապերի ստվերազրծվող պատկերն ավելի հստակ կզատնա, եթե մենք հպանցիկ մի հայացք նետենք այն երկու նշանավոր կենտրոնների վրա, որոնք երկար ժամանակ եղել են մոսկվացի ուս վաճառականների կողմից ոչ հաճախ կազմակերպվող հետազնայ առևտրական ճամփորդությունների վերջնական հանգրվանները: Խոսքը վերաբերում է Փոքր Ասիայում՝ Թոխաթին, Անդրկովկասում՝ Շամախում:

Նախ Թոխաթի մասին: Թուրքական մի բարձրաստիճան նահանգապետի 1498 թ. գրած նամակում բառացի ասված է, «որ Մեծ իշխան Իվանի վաճառականներից (ГОСТЬ) շատերը գալիս են մեր Թոխաթ քաղաքը»²⁴⁶: Դժվար է ասել, թե այստեղ խոսք կա ազգություններ ուս վաճառականների մասին, և ավելի հավանական է ենթադրել, որ թուրք պաշտոնյան նկատի է ունեցել Մոսկվայում հաստատված հայերին, որոնք հաճախ էին այցելում Թոխաթ: Անկախ

խոսում է երկու հայերի մասին, որոնք իրենց սնանկ հայտարարելով՝ շատ վաճառականների անտեսական մեծ հարված են հասցրել. «Այս Բ. բինադարս, — գրում է նա, — վրացի են, ազգու հայ, ի քաղաքէն Քլվխու, անունն Շահվերդի, միուն Գասպար» («Օրագրություն», էջ 72): Ընդամենը այդպես վրացի են կոչված նաև «Աբրահամի որդի վրացի պարոն Կարապետը» (Բրիտանական գրադարան, Օ.Ք.Յ. № 1048, էջ 77), «վրացի Զորարեզը» (Մատենադարան, Արխիվային բաժին, Լազարյանների ֆոնդ, վավ. 1, էջ 126), «վրացի պրն Մխիթարը» (ձեռ. № 6240, էջ 44ա), «վրացի Սողոեանց Ալահվերտին» («Եղիա Կարենցու դիվանը», էջ 68) և բազմաթիվ այլ հայ վաճառականներ, անշուշտ, այն բանի համար, որ դրանք բոլորն էլ եղել են Քիֆիսեցիներ կամ վրացահայեր: Երուսաղեմի հայերեն ձեռագրերից մեկում ընդօրինակված է զվարճալի մի պատմություն, որի մեջ հակադրվում են իրենց կենցաղով շատ տարբեր վրաստանցի (առատաձեռն ու «քեֆչի») և պարսկաստանցի (սակավապետ) հայերը: Այնտեղ գրված է. «Հայ ոմն վրացի ճանապարհորդեալ ի Պարսկաստանէ զնայր ի Բասրա ընդ միում պարսկահայի, որ էր փարթամ յոյժ, բայց կերակուր իւր էր իբրև յեփին չբատրի...»: Երբ այս հարուստ վաճառականը դիտողություն է անում վրացահային՝ կերուխումի համար շատ գրամ ծախսելու կապակցությամբ, վերջինս նրան պատասխանում է. «Պարոն, մինչ ունիմ, այսպէս փարթամօրէն կեամ, և յորժամ պակասեսցին ինձ, յայնժամ կեցից իբրև զքեզ» (Ն. Պողոսյան, Տուրակ..., Գ, էջ 561): «Ընտիր պատմութիւն Գալիթ-բեգին» (Վաղարշապատ, 1871, էջ 5) ծանոթ գրվածքի մեջ Վրաստանից Այունիք ժամանած հայ դիվորները «վրացի» են կոչվել. «Մորա վրացի ասին, — բացատրում է հեղինակը, — ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ ի յազգէ նոցա»: Խոսելով Քիֆիս քաղաքի մասին, Մ. Բաղիադյանն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ ուղղակի նշում է, որ «քնակիչը նորա հայր և զիրք առ այլազգիս միահաղոյն զուռչիս անուանեալ [են]» («Գրական ժառանգություն», հատոր 9, Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1975, էջ 169) և այլն: Այս նույն պատկերը նկատվում է նաև սուսերեն գրված բազմաթիվ փաստաթղթերում: Լուկա Շիրվանով հայ վաճառականը, օրինակ, թվարկելով իր գերդաստանի հետ սերտորեն կապված անձնավորություններին, գրանց շարքում հիշատակում է Բարսեղի որդի Պոզոսին, նրան կոչելով «гилянец грузинец Павел Василев, уроженец города Тифлиса» («Арм.-русские отношения XVII в.», 3, էջ 180): Զուրաբ Զալրիեր, պետական մարմիններին ներկայացրած իր մի գրության մեջ, ներկայանում է որպես «грузинской нации армянского закона дворянин Зураб Завриев», Օթար Թումանյանը ներկայանում է որպես «армянской нации в Москве обретающееся житель грузинской князь гусарского полку капитан Отар Туманов» (նույն տեղում, էջ 275) և այլն:

Այսպիսով ստացվում է նույն պատմությունը. XIV դ. Մոսկվայի բնակչությունը շփվում է Ղրիմից ժամանող հայերի հետ՝ կոչելով նրանց «Սուրճցի» կամ «Կաֆացի», հաշվի առնելով Ղրիմի վաճառաշահ այն քաղաքները, որտեղից ժամանում էին այդ հայերը. իսկ XVI—XVII դդ. «վրացի» («գրուզին») անունով են հայտնի դառնում շատ հայեր, քանի որ նրանք Մոսկվա էին ժամանում այս անգամ արդեն ոչ թե Ղրիմից, այլ Վրաստանից:

246 В. Е. Сыроечковский, Եզվ. աշխ., էջ 51:

այս վկայությունից, կան իսկապես ուրա մարդկանց թոխաթ այցելելու մասին ուրիշ, ավելի վստահելի տվյալներ:

Արդ՝ ի՞նչ էր իրենից ներկայացնում թոխաթ քաղաքը մինչև շալալիների կողմից ավերվելը (1602 թ.) և հետագայում, երբ բուժվեցին նրա վերքերն ու այն նորից վերակենդանացավ: Ստեփանոս թոխաթեցին հայտնում է, որ քաղաքի յոթ թաղերը եղել են զուտ հայաբնակ և ամեն մեկն ունեցել է իր եկեղեցին: Սուրբ Սարգսի թաղի մասին, օրինակ, բանաստեղծն ասում է.

Շատ բրիստոնեայր կայր յայն թաղին,
Ամենքըն ճոխ տանուաէրնի,
Կարդացողներ, հասկըցողնի,
Առատաձեռն խօճանի:

Այս վաճառականներն էին, որ իրենց առևտրական գործերով լինում էին ամենուրեք.

Գնային Շիրվան և Շամախի,
Շամ, Հալէպ և Ըստամպուլի,
Պուրսայ, և այլ բազում տեղի:

Անշուշտ, այս «բազում տեղիի» մեջ էին մտնում նաև Ղրիմը, Լեհաստանը և Մոսկովյան պետությունը՝ տնտեսական իրենց նշանավոր կենտրոններով: Բանաստեղծը նկարագրում է թոխաթի շուկան՝ «բարով իլի» խանութներով.

Վաճառականաց էր նա տեղի.
Չորս կողմանց գայր պաղրրկնի,
Ծախէր բեռնով ապրուշումնի,
Չուխայ, բրթան և այլ զումաշնի:

Քաղաքը եղել է նաև արհեստագործության նշանավոր կենտրոն. արտադրվել են «գոյնըզդունաց ամեն ցեղի» մետաքսե ծաղկադարձ գործվածքներ, բեհեզ, քաթան և այլ կտորեղեն: Բանաստեղծը խոսում է ոսկերչական զեղեցիկ ապրանքների, սղնձե «թաս-թափախների», «վարպետաբան» կողպեքների և շատ այլ «զարմանալի բաների» արտադրության մասին²⁴⁷:

Մեկ ուրիշ թոխաթեցի՝ Հակոբ Բաթուկենցը, լրացնելով նախորդին, տեղեկություններ է հաղորդում իր հայրենի քաղաքի «ընտիր խաների», այսինքն՝ կարավանատների մասին, ուր տարբեր երկրներից ժամանած վաճառականները «օթէին բազում օրեր», զովերզում է տեղի «տուլվաթաւոր խօճաներին», որոնք մեծահամբավ, փարթամ ու անվանի էին²⁴⁸:

XVII դ. սկզբներին կրած հարվածներից մի քանի տասնամյակ հետո, երբ հաղթահարվում են ներքին դժվարությունները և Իրանի ու թուրքիայի միջև վերականգնվում են բնականոն հարաբերությունները, թոխաթը կրկին դառնում է նշանավոր քաղաք, բայց երբեք այլևս չի հասնում իր նախկին փառքին: Տրանսխաջի ճանապարհորդ Հ. Բ. Տավերնիեն, թոխաթը համարելով դեպի Արևելք երկարող տարանցիկ ճանապարհների խոշոր կայաններից մեկը, վկա-

247 Ղ. Ալիշան, Հայագատում, Բ, էջ 606—607:

248 Նույն տեղում, էջ 609:

յում է այն մասին, որ «այնտեղ անընդհատ կարավաններ են ժամանում Պարսկաստանից, Դիարբեքիից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Սինոպից և այլ վայրերից»: Անդրադառնալով Թոխաթից մինչև Թավրիզ ընկած երկրամասին, նա նշում է, որ ընդարձակ այս տարածությունը՝ հների կողմից Հայաստան կոչված երկիրն է, բնակեցված է գրեթե միայն քրիստոնյաներով. և պետք չէ զարմանալ, — շարունակում է նա, — որ «քաղաքների ու գյուղերի մեջ մեկ մահմեդականի դիմաց գտնվում են հիսուն հայեր»²⁴⁹:

Նկատի առնելով Թոխաթի տնտեսական կյանքում հայերի գրաված դիրքը և այն հանգամանքը, որ արևելյան Եվրոպայի երկրամասերի հետ հենց նրանք էին սերտ կապեր հաստատել, դժվար չէ եզրակացնել, որ Թոխաթ ժամանող սակավաթիվ ուս առևտրականները մեծ մասամբ հենց հայերի հետ էին առընչվում և ապրանքափոխանակություն կատարում:

Նույնը կարելի է ասել նաև Շամախի քաղաքի մասին: XV դ. 70-ական թթ. ճամփորդելով արևելյան երկրներում, Ջ. Բարբարոն եղել է նաև Շամախիում և նշել, որ այն «շատ լավ քաղաք է, ունի շորս հազարից հինգ հազար տուն, և արտադրում են մետաքս, կտավ և ուրիշ բաներ իրենց եղանակով», գտնվում է Մեծ Հայքում և բնակիչների մեծ մասը հայ են²⁵⁰: Ա. Կոնտարինին հայտնում է, որ «այդ քաղաքում պատրաստում են մեզ մոտ տալամանյան (իմա՛ ղեյլեմյան — Լ. Խ.) անունով հայտնի մետաքսը և բացի այդ արտադրում են մետաքսե գործվածքներ, ըստ մեծի մասին անպաճույճ և ոչ շատ բարձրորակ»²⁵¹: Ռուս վաճառական Ֆ. Կոտովը, որ երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, լավ սովորել է մեր լեզուն, Շամախիում եղել է 1623—1624 թթ.: Մանոթանանք նաև նրա հաղորդած հետաքրքրական տվյալներին. «А Шамаха стоит промеж высокими горами в услоне, город каменной и посады каменные... а посад и ряды и гостиные дворы стоят за городом. А в Шемахе семь гостиных дворов все каменные... а стоят гостиные дворы промеж рядами: Тезичей, Арменьской, на том русские люди торгуют, Лязгинской, Гилянской и иные дворы, и местом велик»²⁵²:

²⁴⁹ Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, t. I, Paris) 1679, էջ 11, 12, 20, 47—48:

²⁵⁰ Հովհ. Հախարյան, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ—ԺԶ դար, Երևան, 1932, էջ 199:

²⁵¹ И. П. Петрушевский. Государства Азербайджана в XV в. «Сборник статей по истории Азербайджана» вып. I, Баку, 1949, էջ 195:

²⁵² М. В. Фехнер, Եզդ. աշխ., էջ 32 (վկայակոչում է «Хождение на Восток Ф. А. Котова в первой четверти XVII в. «Известия отдела русского языка и словесности императорской Академии Наук», 1907, т. XII, кн. 1): Տալիս հնք այստեղ մեջքերված ոռանրեն հատվածի թարգմանությունը. «Եսկ Շամախին կառուցված է բարձր լեռների միջև՝ թերթյան վրա. բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Եվ բնակավայրը և կրպակների շարքը և կարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ կարավանատներ, բոլորն էլ կառուցված քարից, և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական (тезичей), հայկական, — ուր առևտուր են անում նաև ոռանները, — լեզգիների, գիլանցիների և այլ կարավանատներ. և [քաղաքն] ընդարձակ է»:

Շամախու արհեստագործությունը հարատևել է ընդհուպ մինչև XIX դ. վերջերը. Մակար Բարխուտարյանցն այդ մասին գրել է. «Շամախում ծաղկած է մանավանդ մետաքսագործության արվեստն. ուղաններով գործում են մետաքսյա ընտիր կերպաս, վերմակների երեսներ, կանացի հագուստեղեն, զանազան գունով և մեծությամբ թաշկինակներ, զարդեր և այլն» («Աղբյուրից երկիր և դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 159):

Այսպիսով, ուստի վաճառականները առևտրական գործերով ժամանելով Շամախի (ավելի հարավ ընկած պարսկական քաղաքներ նրանք, որպես կանոն, չէին ճամփորդում), իջևանում էին հայկական կարավանատանը, և հենց այստեղ էլ կատարում առևտրական իրենց գործարքները, շփվելով հիմնականում իրենց հավատակից հայ վաճառականների հետ:

* * *

Ինչպես արդեն վաղուց հայտնի, այնպես էլ նոր միայն շրջանառության մեջ դրված փաստերը, լրացնելով միմյանց, հնարավորություն են ընձեռում հանգելու այն եզրակացության, որ հայերի ծանոթությունը Մոսկվայի հետ տեղի է ունեցել այդ քաղաքի պատմության հնագույն շրջանում. XIV դ. վերջերից հայերի երթևեկը Մոսկվա այնքան է ընդարձակվել ու ծավալվել, որ նրանցից շատերը մշտական բնակություն հաստատելով այնտեղ, ուշագրավ դիրքեր են գրավել Մոսկվայի մեծ իշխանության տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում: Հասնելով այս արդյունքներին, մեզ գտնում ենք կանգնած քաղմազան ու բարդ նոր հարցերի ու խնդիրների առջև, որոնցից յուրաքանչյուրի լուծման համար անհրաժեշտ են լինելու երկար տարիների համառ ջանքեր: Կարևորագույն հարցերից է, օրինակ, հետևյալը. հայկական էթնիկական տարրի առկայությունը Մոսկվայում որևէ հետք չի՞ թողել նոր Ռուսիայի մայրաքաղաքի մշակութային կյանքի տարբեր ոլորտներում: Պետք է նշել, սակայն, որ այս հարցին հիմնավոր պատասխանելու ժամանակը չի հասունացել. առ այսօր բիշ բան է արված հայկական ու ռուսական միջնադարյան մշակույթի տարբեր բնագավառների՝ ճարտարապետության, մանրանկարչության, կիրառական արվեստի և գրականության փոխադարձ առնչությունների ու ազդեցությունների բարդ ու դժվարին հարցերի քննարկման ուղղությամբ: Իսկ թե այս առումով ինչ դեր է վիճակված եղել Մոսկվային, այս հարցը քննարկման նշույթ իսկ չի դարձել:

Ռուսական նշանավոր միջնադարյան տարեգրություններից երկուսը տեղեկություն են պահպանել այն մասին, որ Վլադիմիրո-Սուզդալյան մեծ իշխանության տիրակալ՝ նշանավոր Անդրեյ Բոգոլյուբսկին (1157—1174)՝ փառահեղ քարաշեն տաճարներ կառուցելու համար օտար երկրներից հրավիրել է մեծ թվով վարպետներ: «Приведе ему Бог из всех земель мастера», — կարդում ենք Լավրենտիևյան տարեգրության մեջ, իսկ Նիկոնովյան տարեգրությունը հաղորդում է նաև, որ Բոգոլյուբսկու կողմից հրավիրվածների մեջ եղել են «мастера всякия»²⁵³: Ո՞ր երկրներից են ժամանել այդ վարպետները. այս հարցին փորձել են պատասխան գտնել շատ մասնագետներ, և առաջ են քաշվել իրարամերժ տեսակետներ: Շատերը Վլադիմիրո-Սուզդալյան ճարտարապետական հուշարձանների վրա նկատել են ռոմանական ոճի նշանակալից հետքեր, բայց եկել են այն համոզման, որ այդ ազդեցությունը եղել է միջնորդարար՝ Գալիցիայի և Վոլինյայի վրայով (երկրամասեր, որոնց քաղաքների զարգացման գործում հայ գաղթականները զգալի դեր են կատարել): Մի շարք ուսումնասիրողներ հատուկ ուշադրություն են դարձրել հուշարձանների որմնադարձերի վրա՝ արևելյան ոսկերչական իրերի և գործվածքների զարդած-

253 Օ. X. Халпахчьян, նշվ. աշխ., էջ 28:

վերի ուշադրավ նմանություններ գտնելով նրանց մեջ: Սովետական անվանի պատմաբաններ Բ. Գրեկովն ու Ա. Յակուբովսկին, նկատի ունենալով հատկապես Վլադիմիր քաղաքի Դմիտրևյան և Յուրև-Պուսկի քաղաքի Գեորգիևյան տաճարի ճարտարապետական հարդարանքը, կովկասյան արվեստի ազդեցության հետքեր են նշմարել դրանցում և այլն: Ճարտարապետ Հ. Խարիտաիշյանը հանգամանորեն քննարկել է այս խնդրի շուրջ արտահայտված տեսակետները և հանգել այն եզրակացության, որ անհնարին է անտեսել արևելյան տարրեր երկրներից և, մասնավորապես, Հայաստանից ժամանած ճարտարապետների ու քարգործ վարպետների դերը Վլադիմիրո-Սուզդալյան բաժնետիրական իշխանության ճարտարապետական հնագույն հուշարձանների կառուցման և հարդարման գործում²⁵⁴: Այս տեսակետի հիմնավորման համար գիտնականը հետաքրքրական այնպիսի զուգադրություններ է կատարել, որոնք, անտարակույս, խոստումնալից են:

Սկզբնաղբյուրներում առկա որոշ ակնարկներից կարելի է հետևցնել, որ Մոսկվա քաղաքում քարաշին-կամարակապ առաջին բնակելի շենքեր կառուցողները «սուրոժցի» կոչվող մեծահարուստ վաճառականներն են եղել. նրանցից, մասնավորապես մեզ հայտնի են Վեսյակովները և Տարոկան (գուցե՞ Քարխա՞ն) անունով վաճառականը: Մրանց տներն իրենց շինանյութով ու արտաքին տեսքով այժմբան տարրեր էին XIV դ. Մոսկվայի մյուս շենքերից, որ գրավում էին բոլորի ուշադրությունը և տարեգրություններում գրանցվելու նյութ դառնում²⁵⁵:

1485 թ. կրեմլում քարաշին ապարանք ու դարպասներ է կառուցում թագավորի գանձապետ «սուրոժցի» Վլադիմիր Խովրինի որդի Դմիտրին, որին հետևում է նրա ավագ եղբայր Իվանը: Այս Իվան Խովրինը հայտնի էր Գոլովա մականունով (նրանից է սերում ռուսական պատմության մեջ մեծ դեր կատարած Գոլովինների ընտանիքը)²⁵⁶:

Հատուկ ուշադրության արժանի է Վասիլի III մեծ իշխանի ժամանակակից Վասիլի Դմիտրևիչ Նրմոլինի գործունեությունը: Այս «սուրոժցին» ներկայացուցիչն էր Մոսկվայի ամենափարթամ վաճառական ընտանիքներից մեկի և հայտնի էր որպես կապալառու-ճարտարապետ: Սա է վերականգնել կրեմլի պարիսպները և Համբարձման տաճարը, վանքերից մեկում կառուցել է քարաշին սեղանատուն, վերականգնել Յուրև-Պուսկի քաղաքի կործանված տաճարը (հայտնի իր արևելյան ոճավորմամբ զարդաքանդակ քարերով), և կառուցել ու վերակառուցել է բազմաթիվ այլ շինություններ²⁵⁷:

Պետք է ենթադրել, որ օտարազգի շինարար-վարպետների մասնակցությամբ առաջին հերթին կառուցվում էին փառահեղ վանքերն ու եկեղեցիները: Եվ եթե մանրակրկիտ ուսումնասիրվեն Մոսկվայում տակավին կանգուն քարաշին հին տաճարները, ապա, մեծ հավանականությամբ, դրանց շարքում կարող են երևան զալ հայկական միջնադարյան ճարտարապետական արվեստի

254 Նույն տեղում, էջ 31—44.

255 М. Н. Тухомиров, *նշվ. աշխ.*, էջ 151: Տարոկանի տան մասին, օրինակ, տարեգրության մեջ գրված է. «Того же лета (իմ' 1471թ.) Тарокан купець заложил себе полаты кирпичны во граде Москве, у градной стены, у Фроловских ворот» (ПСРЛ, т. VI, էջ 191).

256 П. В. Сытин, *История планировки...*, էջ 43.

257 М. Н. Тухомиров, *նշվ. աշխ.*, էջ 154.

տին, մանավանդ՝ կառուցողական ավանդույթներին հարազատ մի շարք կառույցներ: Մասնագետների ուշադրությանն ենք հանձնում մասնավորապես Մոսկվայի Անդրոնիկյան վանքի սուրբ Փրկչի տաճարը, կառուցված շուրջ 1427 թ.: Չեռքի տակ ունենք նրա գմեթարդ ավազ խորանի և որմնասյուներից մեկի պրոֆիլավոր խարիսխի լուսանկարները, որոնք շափազանց նման են միջնադարյան հայկական տաճարների համապատասխան մասերին:

Այժմ մի քանի խոսք կերպարվեստի և կիրառական մշուս արվեստների բնագավառում նկատվող հայկական հետքերի մասին:

Երբ 1660 թ. Չարար Շահրիմանյանը Սպահանից ժամանեց Մոսկվա ու Ալեքսեյ Միխայլովիչ ցարին մատուցեց նշանավոր ադամանդյա գահը, բանակցություններ տեղի ունեցան պետական բարձրաստիճան պաշտոնեությունների և մեծահարուստ այդ վաճառականի միջև՝ շուղահայ առևտրականների գործունեության ընդարձակման հարցի շուրջ: Ընդառաջելով թագավորի ցանկությունը, Չարարը, իր հոր՝ Սահրադ Շահրիմանյանի և անձամբ իր անունից պարտավորվեց հայազգի արվեստագետ-վարպետներ ուղարկել Մոսկվա՝ թագավորի հրամանի ներքո աշխատելու համար. «А великому государю всякими узорочьи и мастеровыми людьми отец его и он (Захарий) промышлять готовы для его великого государя милости», — ասված է այդ բանակցությունների առթիվ կազմված փաստաթղթի մեջ²⁵⁸:

Չի անցնում մի քանի տարի, և նոր Զուղայից Մոսկվա է ժամանում Թանդրիվերան անունով հայ վարպետը, որը ուսական միջավայրում ճանաչվում է Իվան կամ Բոգդան Սալթանով անուն-ազգանունով և հսկայական դեր կատարում Ռուսաստանի մայրաքաղաքի մշակութային կյանքի տարբեր մարզերում, մեծապես նպաստում ուսական արվեստի զարգացմանը: 1667 թ. հունիսի 15-ի թագավորական հրովարտակով նա նկարչի պաշտոնով և բարձր աշխատավարձով ընդունվում է աշխատանքի Զինասպալատում: Սալթանովի հետ աշխատանքի են անցնում նաև հայազգի մի քանի արվեստագետներ՝ Մատյուշկա և Իվաշկա Բոգդանով եղբայրները և Մարչկա Օստաֆեր: Նրանց անուն-ազգանունները ուսականացված են անձանաչելի աստիճանի, և եթե հատուկ ուսումնասիրություն կատարված չլիներ, մենք այսօր որևէ կովան չէինք ունենա նրանց հայ լինելը հաստատելու համար²⁵⁹: Սալթանովի այս հայազգի աշակերտներն օգնել են իրենց անվանի ուսուցչին, հետազայում կատարել ինքնուրույն աշխատանքներ: Նրանցից շատ ավելի մեծ ճանաչում է ստացել մեծ վարպետի նշանավոր աշակերտ Լադար Իվանովիչ Բելյսկի նկարիչը՝ նահապետը Բելյսկի ազգանունը կրող հայազգի նկարիչների գերդաստանի, որի անդամները մեծ դեր կատարեցին XVII դ. ուսական գեղանկարչության ձևավորման գործում²⁶⁰:

Կերպարվեստի բնագավառում հայ-ուսական կապերի մասին պերճախոս այս փաստերը՝ վերաբերելով XVII դ. երկրորդ հիսնամյակին, դուրս են գտնվում մեր ուսումնասիրության ժամանակագրական սահմաններից: Դրանց անդրադառնալու անհրաժեշտությունն զգացվեց նախորդ դարի որոշ երևույթներ պարզաբանելու համար:

258 «Армяно-русские отношения в XVII веке». Сборник документов под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1953, էջ 26:

259 Нина Молева. Иван Салтанов и его школа. «Լրաբեր», 1977, № 10, էջ 79:

260 Н. М. Молева. О художниках Бельских. «Լրաբեր», 1974, № 8, էջ 38—52:

Նկատված է արդեն, որ XV—XVI դդ. Մոսկվայում աշխատել է նշանավոր մի վարպետ կամ ավելի ճիշտ՝ նույն դպրոցին պատկանող արվեստագետների մի խումբ, որի ջանքերով պատրաստվել են գեղարվեստական բարձր հատկանիշներով օժտված մի շարք իրեր, նկարազարդվել են տաճարներ և այլն: Ա. Յակոբսոնը, մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարելով ի մի է բերել այդ դպրոցին պատկանող արվեստի առարկաները, որոնց համառոտ ցանկը ներկայացնում ենք ստորև.

1. Բորովսկու Ս. Պաֆնուտիի վանքի «Յագավորական դարպասները» («Царские врата», այսպես էին կոչվում ռուսական եկեղեցիների ավագ խորանի սրբապատկերներով զարդարված գեղազարդ դռները).

2. Կիրիլո-Քելոզերսկի վանքի Ս. Սերգեյի և Ս. Հովհան Լեսովիչնիկի եկեղեցիների «Յագավորական դարպասները».

3. Նույն վանքի պանակեններից մեկը.

4. Նույն վանքի Ս. Կյուրեղի սրբապատկերի դրվագյալ շրջանակը.

5. Նովգորոդի թանգարանում պահվող Բորիսի և Գլեբի սրբապատկերի դրվագյալ շրջանակը.

6. Մոսկվայի Կրեմլի Ավետման տաճարի սրբապատկերներից մեկի դրվագյալ շրջանակը.

7. Նույն տաճարի 1508 թ. որմնանկարները.

8. Զինապալատում պահվող 1499 թ. մի Ավետարանի արծաթե կազմը.

9. Իվան Ահեղի սաղավարտը և այլն:

Համոզիչ համեմատություններ կատարելով և զուգահեռներ անցկացնելով մեկ կողմից վերոհիշյալ գեղարվեստական առարկաների զարդաձևերի ու ոճի, մյուս կողմից հայկական համապատասխան հուշարձանների (մանրանկարչության, ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, արծաթյա իրերի և այլ առարկաների) զարդաքանդակների միջև, Ա. Յակոբսոնը հանգել է այն եզրակացության, որ դրանք միևնույն ակունքներից են բխում: Այդ բոլոր առարկաները, — նշում է նա, — դուրս են եկել միևնույն արհեստանոցից, այդ արհեստանոցը, հավանաբար, գոյություն է ունեցել Մոսկվայի Զինապալատին առնթի, և նրա արտադրած եկեղեցական սպասքն ու առարկաները, նվիրաբերվելով տարբեր վանական ու եկեղեցական հաստատությունների՝ տարածվել են մայրաքաղաքում և նրա սահմաններից դուրս²⁶¹: Իսկ թե ինչպե՞ս բացատրել այդ հուշարձանների «մերձավորարևելյան» կամ «կովկասյան» հատկանիշները²⁶², այս հարցին որոշակի պատասխան չգտնելով, Ա. Յակոբսոնը զանազան ենթադրություններ է անում: Այստեղ աշխատող ռուս վարպետներն ինչ-որ ժամանակ ապրելով արևելյան երկրներում, դաստիարակվել են տեղական ավանդույթներով, յուրացրել իրենց ուսուցիչների գեղագիտական սկզբունքները: Իսկ եթե Մոսկվայից նրանք դուրս չեն եկել, այդ դեպքում կա՞մ

261 Հարկ է նշել, որ Ա. Յակոբսոնը իր կողմից բնարված ու մասնագիտական խոր վերլուծություններ՝ հայկական նյութերի հետ զուգադրած առարկաների ոճը բնորոշելու համար խուսափում է «հայկական» տերմինից. նրան ավելի դուր են գալիս «կովկասյան», «մերձավոր արևելյան» որոշակիությունից զուրկ տերմինները, որոնք զուցե և ավելի հարմար են: Բայց անգոր բացահայտելու պատմամշակութային իրական եղելություններ:

262 А. Л. Якобсон. Художественные связи московской Руси с Закавказьем и Ближним Востоком в XVI в. «Материалы и исследования по археологии СССР», № 167. «Древности московского Кремля», М., 1971, էջ 245—246:

իրենց ձեռքի տակ ունեցել են «արևելյան երկրներում» պատրաստված համանման գեղարվեստական իրեր ու ընդօրինակել են դրանք, կա՛մ էլ օգտվել են զարդանախշերի ինչ-որ ալբոմներից²⁶³։

Քիչ է ասել, թե այս պատասխանները գոհացուցիչ չեն։ Բազմաթիվ հայ արվեստագետ-վարպետների առկայությունը Մոսկվայի Զինապալատում XVII դ. 60-ական թթ. ու հետագայում, հմուտ արհեստավորների Ռուսաստան հրավիրելու մասին ուս պետական պաշտոնյաների հարցապնդումները, որոնք արտահայտություն են գտել հայ-ռուսական տնտեսական կապերի մասին առկա փաստաթղթերում²⁶⁴ և, վերջապես, մեծաքանակ հայ վաճառականների ու արհեստավորների առկայությունը Մոսկվայում XV—XVI դդ. այնպիսի նախադրյալներ են, որ հնարավորություն են ընձեռում հանգելու շատ ավելի հիմնավոր այսպիսի եզրակացության. հայ արվեստագետ-վարպետներ աշխատել են Մոսկվայի Զինապալատում ոչ միայն XVII դ., այլև դրանից շատ առաջ՝ Իվան III մեծ իշխանի ժամանակներում։ Նրանց ջանքերով են պատրաստվել բազմաթիվ գեղարվեստական իրեր, որոնց մի մասն արդեն դրված են գիտական շրջանառության մեջ, իսկ շատերն էլ, թերևս, սպասում են իրենց հայտնաբերողներին։

Այդ հմուտ արվեստագետ-վարպետների արտադրած իրերի շքեղ զարդապատկերները սիրվել ու լայնորեն տարածվել են Մոսկովյան պետության սահմաններում, թարմ շունչ հաղորդել տեղական արվեստին, դարձել մոդայիկ և օգտագործվել ինչպես փայտափորագրության և ոսկերչության, այնպես էլ Հարտարապետության և, նույնիսկ, գրատպության ասպարեզում²⁶⁵։

* * *

Ի՞նչ հուշ-հիշատակներ են պահպանվել Մոսկվա քաղաքի և Մոսկվայի հայ գաղթօջախի մասին միջնադարյան հայկական ու ռուսական գեղարվեստական ստեղծագործություններում։ Այս հարցին մասամբ պատասխան է տրված տարիներ առաջ, երբ Ա. Մնացականյանի ջանքերով գիտական շրջանառության մեջ դրվեց բազմաթիվ միջնադարյան ձեռագրերով ավանդված և տարբեր խմբագրությունների ենթարկված հայկական այն պոեմը, որի մեջ Մոսկվան հիշատակված է աշխարհի շքեղագույն ու նշանավոր քաղաքների շարքում՝ որպես

²⁶³ Նույն տեղում, էջ 246։

²⁶⁴ Զարար Շահրիմանյանը 1660 թ. պատասխանելով ռուս պաշտոնյաների հարցումներին, նրանց ասել է նաև հետևյալը. «А мастеровых де всяких людей в шахове области много и он де (Захарий) к великому государю в московское государство призывать ушет». Իսկ նույն Զարարի 1666 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ուղղած գրության մեջ ասված է, որ ցարը ծանոթացած լինելով խորհրդավոր ընթրիքը պատկերող մի փորագրության, պահանջել է Մոսկվա ուղարկել այդ պատկերը պատրաստող արվեստագետին «Армяно-русские отношения в XVII в.», էջ 26, 41)։

«Էստի յառաջ փորք ծառէդ մին պղնձէ թանուրի վերայ աւագ խինդ շարաթ օրէն տնօրինականքն քաշած մեծ թագաւորին զուխ ինք տրւել, շաւղաթ էր արարել, նորա շինողն ուղեցել էր. էն քարթանումն որ շինվել էր մի զապիլ ուստայ կէր, անունն Բուղտան, որ նորայ հունարն ամենու վերայ առաւել էր, ուղարկեցինք քրիստոսաշէն Մօսկովն, զոն մեծ թագաւորին զուլաղն տեղն կատարին» (նույն տեղում, էջ 41)։

²⁶⁵ А. П. Якобсон, նշվ. աշխ., էջ 247։

ամենափառավորն ու մեծագինը²⁶⁶: Պոեմը սիրային բովանդակություն ունի, նվիրված է մի «գյուղալի» (գեղեցկուհու) բարեմասնությունների գովերգությանը, այնպիսի հմայք ունի այդ գեղեցկուհին, որ նրա երեստեսնուքի համար փեսացուն շոայրորեն «նվիրարեբում» է Սելանիկն ու Ատրնան, աչքերի համար՝ Սկյուտարն ու Ղալաթիան, քաղցրիկ զրույցի համար Բաղդադն ու Բասրան և այն: Հիշատակվում են նաև Թոխաթ, էրզրում, Գյանջա, Կաֆա, Վենետիկ քաղաքները, Մըսը (Եգիպտոս), Շամ (Սիրիա), Հնդուստան, Սպանիա երկրները և այլն, այսինքն գլխավոր այն վաճառաշահ կենտրոնները, որոնք մեծ դեր էին կատարում միջազգային առևտրի մեջ մինչև աշխարհագրական նոր հայտնագործությունները:

Ինչպես ասվեց, Մոսկվան կենտրոնական տեղ է զբաղում վերոհիշյալ քաղաքների ու երկրների շարքում, երգիչը շեշտված մեծարանքով է հիշատակում այդ քաղաքի անունը²⁶⁷:

Միանգամայն իրավացի է Աս. Մնացականյանը, երբ բավարար փաստեր մեջբերելով հանգում է այն եզրակացության, որ պոեմը ստեղծված պետք է լինի XIV—XV դդ.: Եվ պետք չէ տարակուսել, որ այն հորինվել է այնպիսի խոշոր հայկական կենտրոններից մեկում, ուր գոյություն ուներ միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներում և նշանավոր գաղթավայրերում վկայված «Կարիճվորաց եղբայրություն» կոչվող կազմակերպություններից մեկը: Պոեմի հնագույն փոփոխակներում պահպանված են այսպիսի տողեր.

Մանկունք, մի մեղադրէք

Սէրն արու զիս տիւանայ...

Աժէ, ինչ տուաք, եղբաւք,

Կուղելին իսկի գին շկայ.

«Մանկունք», «եղբարք» կոչվող հասցեատերերը հիշատակված են նաև մի շարք հայրեններում: Կոստանդին Երզնկացին ևս իր բանքերի մի մասը հորինել է քաղաքաբնակ «եղբայրների» հոգևոր պահանջները բավարարելու համար²⁶⁸: Նկատի ունենալով այս հանգամանքը, կարելի է հանգել այն եզրա-

266 Աս. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում, «Տեղեկագիր», 1948, № 3, էջ 49—64:

267 Նույն տեղում, էջ 53: Աս. Մնացականյանը ցույց է տվել նաև, որ այս պոեմը դրախտագրություն է գործել հայ մի շարք բանաստեղծների, որոնց թվում նաև Նազաշ Հովնաթանի վրա. վերջինս ունի այսպիսի տողեր.

Քաղաք ես խոթայի Մոսկով,

Խելքս տարար անուշ խօսքով:

«Ըստ այս տողերի,— գրել է Մնացականյանը,— Մոսկվան գտնվում է խոթայում—Չինաստանում», ուստի միջնադարյան դուստներն ու հորինողները, մեծ մասամբ պատկերացում էլ չեն ունեցել իրենց գործածած վայրերի ուր գտնվելու մասին (տե՛ս նշվ. աշխ., էջ 50—51):

Կարծում ենք, սակայն, որ խոթայի-Մոսկով ասելով Նազաշ Հովնաթանը, մի բանաստեղծ, որ ապրել է հայ վաճառականների միջավայրում ու ստեղծագործել նրանց համար, նրկատի է ունեցել Մոսկվայի առևտրական կենտրոն Կիտայ-Գորոզը, և բնավ էլ չի կարծել, թե Մոսկվան գտնվում է Չինաստանում:

268 Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը», «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 84:

կացության, որ «Քաղուհի մի ես տեսայ» սկսվածքով խնդրո առարկա պոեմը նույնպես ստեղծվել է հայկական վաճառաշահ կենտրոններից մեկում (Ֆերևա հենց Կաֆա քաղաքում), որի բնակիչները անտեսական սերտ կապեր են ունեցել Մոսկվայի հետ:

Այժմ անդրադառնանք միջնադարյան ռուս գրականությանը:

Մոսկվայում ստեղծված գրական հուշարձանների շարքում որոշակի տեղ է գրավում «Պատմություն Վրաց թագուհի Գինարի մասին, ինչպես հաղթեց Պարսից թագավորին» («Повесть о грузинской царице Динаре, како победи перского царя») խորագրով ստեղծագործությունը: Նրա ստեղծման հանգամանքների ու ժամանակի մասին ռուս և վրաց գրականության պատմաբանները տարբեր կարծիքներ են հայտնել: Արդեն հաղթահարված պետք է համարել անհիմն այն ենթադրությունը, թե ռուսական այս գրվածքը՝ թարգմանությունն է Քամար թագուհու գործունեությանը նվիրված բյուզանդական շափածո մի ստեղծագործության²⁶⁹: Հունարեն լեզվով այդպիսի մի գրվածքի հրքեմնի գոյության մասին որևէ փաստ հայտնի չէ. իսկ Քամար թագուհին այնպիսի հռչակավոր գործիչ է եղել, որ նրա անունը չէր կարող գուրս նկատվել ու փոխարինվել իրենից դարեր առաջ ապրած և շատ համեստ պատմական դեր կատարած Գինար թագուհու անունով:

Ուսումնասիրողներից մի մասի կարծիքով (Ն. Կ. Գուդզի, Կ. Վ. Բազիլևիչ) «Պատմությունը» գրվել է Մոսկվայում XV դ. վերջին քսանհինգամյակի ընթացքում, իսկ ըստ ուրիշների (Մ. Սպերանսկի, Յա. Յինցաձե)՝ XVI դ. կեսերին²⁷⁰: Մեզ համար էական նշանակություն չունի, թե այս տեսակետներից որն է ի վերջո ճիշտ համարվելու: XV դ. վերջերին և XVI-ի առաջին հիսնամյակի ընթացքում ոչ միայն ավելի լայն ծավալ էին ստանում անտեսական կապերը Մոսկվայի ու Վրաստանի միջև, այլև ծայր էին առել դիվանագիտական բանակցություններ. վրաց դահակալների կողմից Մոսկվա առաքվող բանագնացները (որոնց շարքում գրեթե միշտ լինում էին հայազգի գործիչներ) Մոսկվայի մեծ իշխանների օգնությունն էին խնդրում թուրքական և իրանական զավթիչների դեմ հաջող պայքար մղելու համար:

Ուսումնասիրողներն իրավացիորեն նշել են, որ այդպիսի բանակցությունների ժամանակ վրաստանցի դիվանագետներն առիթը բաց չէին թողնելու շեշտելու համար վրացիների և ռուսների դավանակից-քրիստոնյաներ լինելու հանգամանքը: Նրանք, իրենց երկրի ու եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու նպատակով կարող էին նաև նշել՝ հենվելով «Քարթլիս ցխովրեբայի» վրա, որ իրենց ժողովուրդը Քրիստոսի ուսմունքին հաղորդակից է դարձել անմիջապես Աստվածամոր քարոզչության շնորհիվ: Կարող էին պարծենալ նաև սուրբ Նունեով և վրաց հին եկեղեցու այլ սրբություններով: Այսպիսի դատողությունները շարունակելով, ոմանք հնարավոր են համարել «Գինար թագուհու պատմության» հորինման հանգամանքները նույնպես առնչել վրաց դիվանագետների և ռուսական պետական պաշտոնյաների միջև տեղի ունեցած բանակցություններին: Նրանց կարծիքով վրացի բանագնացներն անբավարար են նկատել վերոհիշյալ «փաստերը» և ռուսներին պատմել են նաև Գինարի

²⁶⁹ Այս տեսակետը տեղ է գտել նույնիսկ «Վրաց պատմության» դարձյալական դասագրքում («История Грузии», ч. I, Тбилиси, 1946, էջ 237:

²⁷⁰ Л. С. Шепелева. Культурные связи Грузии с Россией в X—XVII веках. «Труды отдела древнерусской литературы», IX, М.—Л., 1953, էջ 310—311:

պատմությունը՝ «ուղղափառության հաղթանակի համար Վրաստանի վաստակը մի ավելորդ անգամ ընդդժեխու նպատակով»²⁷¹։

Եվ ահա այդ ճանապարհով «արևելյան Վրաստանի» շրջաններից մեկի տիրակալ իշխանի կին Գինարը՝ ճանաչվել է ուսական միջավայրում և գրական մի ուշադրավ ստեղծագործության հերոսուհի դարձել²⁷²։

Մենք չենք կարող բավարարվել այսպիսի բացատրությամբ։

IX դ. կեսերին արարական լուծը թոթափելուց հետո՝ Բագրատունյաց Հայաստանը մի քանի տասնամյակ միայն գոյություն ունեցավ որպես միասնական պետություն։ Ֆեոդալական հարաբերությունների դարգացման հետևանքով երկիրը շուտով մասնատվեց մի շարք մանր-կիսանկախ թագավորությունների։ Վասպուրականը, Սյունիքը, Լոռին, Կարսը և այլ նահանգներ՝ անջատվեցին Բագրատունյաց կենտրոնական իշխանությունից։ Այդպիսի մի իշխանություն էլ ստեղծվեց պատմական Հայաստանի Արցախ նահանգում, որը հայտնի է սկզբնաղբյուրներում Աղվանից թագավորություն անունով։ Այս իշխանության կազմի մեջ էր մտնում նաև Կուր գետից հյուսիս գտնվող պատմական Կամրջանի շրջանը, ուր ապրում էին նաև բաղմահազար հայեր, որոնք դավանանքով լուսավորչական էին։ Հայկական փոքր այս թագավորության նշանավոր գահակալը եղավ Համամ Արևելցի անվանի մատենագիրն ու բանաստեղծը, որն իր արժանի տեղն է գրավել հայ գրականության պատմության մեջ։ Նրան հաջորդեց Ատրնեբսեհը։ Վերջինս ամուսնացած էր Վրաց իշխանաց իշխան Գուրգենի քրոջ՝ Գինարի հետ. այս թագուհին X դ. կեսերին, իր իշխանիկ անունով որդու հետ միասին, եռանդուն գործունեություն ծավալեց և հաջողություններ ունեցավ Հերեթ-Կախեթի հայերին քաղկեդոնական դարձնելու գործում²⁷³։ Ահա այս Գինարի գործունեության որոշ դրվագներ են, որ գունազարդվելով հիմք են հանդիսացել նկարագրվող դեպքերից կես հազարամյակ հետո հյուսված ուսական «Պատմության» համար։

Այդ ստեղծագործության հորինման հնարավոր գրդասպատճառները բացահայտելու նպատակով պատասխան պետք է գտնել հետևյալ հարցին. հասարակական և էթնիկական ի՞նչ շերտեր կային Մոսկվայում XVI դ. կեսերին, որոնց համար օգտակար կարող էին լինել մի հեռավոր երկրամասի հայ ազգաբնակչության դարեր առաջ տեղի ունեցած դավանափոխության և ուղղափառ եկեղեցուն հարելու մասին հին պատմությունները։ Ուրիշ առիթով նշել ենք արդեն, որ XIV դ. վերջերին և հետագայում, ուսական եկեղեցու բարձրատիճան ղեկավարներից շատերը օտարազավան հայերի նկատմամբ որդեգրել էին անհանդուրժողական կեցվածք։ Կրոնական անհանդուրժողականությունը հրքեմն այնպիսի շափերի էր հասնում, որ ոմանք ստիպված էին լինում ընդունել ուղղափառություն, խզելով իրենց կապերը մայր եկեղեցուց։

271 Նույն տեղում, էջ 309։

272 Նույն տեղում։

273 Այս հարցի մասին հանգամանորեն խոսում է Ա. Շ. Մնացականյանը «Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը» (Նրևան, 1966) արժեքավոր աշխատության մեջ (տե՛ս էջ 204—213)։ Ուշադրավ է, որ վերջինս հայտնաբերվեցին Աղվանից մի շարք իշխանների և այս Գինար իշխանուհու տապանաքարերը Ղափանի շրջանում գտնվող Վահանավանքի շրջափակում (Պ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները. «Արարիք», 1970, № 10)։

«Գինար թագուհու պատմության» հորինման շրջանում հաճախացել էր վրաստանցի հայերի երթևեկը Մոսկվա: Նրանցից շատերը մշտական բնակություն էին հաստատում այստեղ և, բնականաբար, հնարավոր ամեն ինչ անում էին թարեմաբար ու բնականոն պայմաններ ստեղծելու իրենց և հարազատների համար: Գավանաբանական անհանդուրժողականությունը դիմադրելով ելու միջոցներից էին նաև անցյալի հիշատակները. դարեր առաջ ապրած մի թագուհու շանքերով հաղարավոր հայեր բնգունել էին ուղղափառ եկեղեցու դավանանքը, այսինքն հրաժարվել էին «հայկական հերձվածից», դարձել «խսկական», «ուղղափառ» քրիստոնյաներ: Այդ հայերի հեռավոր հետնորդները նոր Ռուսիայի մայրաքաղաքում վերարժարժելով հին այս պատմությունը, հույս կարող էին ունենալ ավելի բարեհամբույր վերաբերմունքի: Իսկ պաշտական պաշտոնիության շրջանակներում կային արդեն գրագետ մարդիկ, որոնք ի շահ Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական կապերի բնդարձակման, ոչ միայն ունկնդրում էին այդպիսի պատմությունները, այլև գրի առնում, տարածում՝ դարձնելով միջոց հասարակական կարծիքի մշակման:

Պետք է հուսալ, որ հայ-ուսական հնամենի մշակութային առնչությունների մասին ի մի բերված այս տվյալները հետադաշում բազմապատկվելու են ճարտարապետական հուշարձանների, գրական ժառանգության ու դիվանական նյութերի խորազնին ուսումնասիրության ճանապարհով:

* * *

Հետագա ուսումնասիրությունների ժամանակ պետք չէ անտեսվեն նաև ուսական միջնադարյան բանահյուսության ընձեռած նյութերը, մասնավորապես վիպական գրականության գլուխ-գործոցներ հանդիսացող բիլինաները: Նկատված իրողություն է արդեն, որ բիլինաների մի շարք ճյուղեր, ի մասնավորի Չուրիլա Պլենկովիչի, մեծահարուստ վաճառական Սադկոյի, վաճառականի որդի Իվանի մասին պահպանված երգերի մեջ՝ արաացուվել են քաղաքային կյանքի շատ հետաքրքրական երևույթներ: Սադկոյի մասին բիլինայի մեջ, օրինակ, հենց վիպական հերոսի անունից ասված է հետևյալը.

Что де я гулял по Волге двенадцать лет,
Со вершины знаю и до устья ее,
А и нижняя царства Астраханскова.

Կամ՝

Я сам, Садко, знаю—ведаю:
Бегаю по морю двенадцать лет,
Тому царю заморскому
Не платил я дани—пошлины,
И во то сине море Хвалинское
Хлеба с солью не опускал²⁷⁴.

Ըստ այդմ Սադկոն պատկանում էր ուսական այն վաճառականների դասին, ովքեր Վոլգայի և Կասպից ծովի վրայով աշխույժ առևտուր էին անում

²⁷⁴ Древние российские стихотворения, собранные Киршею Даниловым, М.—Л., 1958, էջ 185, 231:

Իրանի ու Անդրկովկասյան երկրների հետ: Նախորդ էջերում քանիցս անհրաժեշտութուն է առաջացել նշելու, որ միջազգային նշանակություն ունեցող վոլգ-կասպյան մայրուղին ոչ միայն դարեր շարունակ ծանոթ է եղել հայ վաճառականներին, այլ եղել են ժամանակներ, երբ նրանք դրավել են այդ ճանապարհով կատարվող արտաքին առևտրի հրամանատարական զիրքերը: Պարզ է, ուրեմն, որ բիլինայի ծանոթ հերոսը՝ «Մեծահարուստ վաճառական Սադկոն» իր տասներկուամյա թափառումների ժամանակ՝ բազմիցս հանդիպած պետք է լիներ հայ վաճառականների և համագործակցեր նրանցից շատերի հետ՝ նյութական անսպառ միջոցների տեր դառնալու համար:

Մոսկվայի տնտեսական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող մյուս զարկերակի՝ Դնեպրյան մայրուղու հետ է կապված բիլինաների վաճառական հերոսներից Չուրիլա Պլենկովիչը: Սրա հայր Պլենկոն, բիլինայի մեջ ուղղակի կոչված է «սուրոժցի» («старый Пленка Сароженин»):

Ակադ. Ա. Ն. Վեսելովսկին, որ 22 ամբողջական պատումների համագրությամբ հանդամանորեն ուսումնասիրել է Չուրիլայի մասին բիլինան²⁷⁵, անդրադարձել է նաև գլխավոր հերոսների անուններին: Չուրիլա անունը Կիրիլ-Կյուրեղ անվան ժողովրդական փոփոխակն է, իսկ նրա հոր՝ «սուրոժցի» Պլենկոյի անունը Վեսելովսկին, անշուշտ, ելակետ ունենալով այն իրողությունը, որ Ղրիմի թերակղզու վաճառաշահ ափերը XIII—XIV դդ. գտնվում էին իտալացիների (Ջենովայի և Վենետիկի) տիրապետության տակ, արտածում է «Ֆոանկ» (եվրոպացի, իտալացի) բառի հետ և, այդպիսով, իտալական ծագում է վերագրում բիլինաների այս հերոսներին: Հարկ չկա այստեղ նորից անդրադառնալու «սուրոժցի» կոչվող վաճառականների ազգային պատկանելիության մասին նախկինում արտահայտած տեսակետներին, մանավանդ, որ անձնանունների բնադրոսիկ այսպիսի բացատրությունները արդեն իսկ կասկածների տեղիք են տվել ուսական բանասիրության մեջ²⁷⁶:

Չուրիլային վերաբերող բիլինայի մի այլ փոփոխակի մեջ, որ վերամըշակված պետք է լինի ուշ ժամանակներում, «սուրոժցիների» մասին գտնում ենք ուշագրավ այսպիսի տողեր.

Как жил на Руси
Суровец—молодец,
Суровец—богатырь, он Суроженин,
По роду города Суздаля,
Сын отца—гостя богатого²⁷⁷.

Այստեղ նրանք առնչվում են Սուրդավի հետ՝ միջնադարյան Ռուսաստանի նշանավոր այն քաղաքի, որը Վլադիմիր-Սուրդավյան իշխանության բարգա-

275 А. Н. Веселовский. Южно-русские былины, V, Богатыри-сурожицы. Суровец Суздалец и Чурила Пленкович. «Сборник, отделения русского языка и словесности императорской Академии Наук», том XXXVI, № 3, СПб., 1884.

276 А. И. Соболевский. Заметки о собственных именах в великорусских былинах. «Живая Старина», вып. II, 1890, էջ 96:

277 Летописи русской литературы и древности. изд. Н. Тихонравов, IV, М., 1862, էջ 12—14:

վաճման շրջանում միջազգային իր կապերով բացառիկ դիրք գրաված լինելով՝ անտարակույս ծանոթ էր «սուրոժցի» վաճառականներին²⁷⁸:

Չուրիլա Պլենկովիչը ուսական էպոսի հանրաճանաչ դեմքերից է: Ամբողջովին նրան է նվիրված երկու գրույց. դրանցից բացի՝ նա հիշատակված է և այլ բիլինաներում: Առաջին գրույցի մեջ Չուրիլան ներկայացված է որպես մարտական ջոկատի պետ. այնքան բազմաթիվ են նրա կտրիճները, որ Կիևի իշխանը տեսնելով նրանց բազմությունը, կարծում է, թե ժամանել է Ռսկե Հորդայի խանը կամ որևէ երկրից հզոր դեսպան:

Едет ко мне король из Орды
Или какой грозен посол.

Զրույցի մեջ հատուկ տեղ են գրավում Չուրիլայի ու նրա «սուրոժցի» հոր առանձնատան արդուլարդի, շքեղության և նրանց ունեցած մեծաքանակ թանկարժեք ապրանքների մասին պերճախոս տողերը: Ահա Չուրիլան իջնում է խորունկ իր նկուղները, բացում է դուռը ոսկե բանալիով, և գանձեր է հանում՝ Վլադիմիր իշխանին մատուցելու համար:

Взял золоту казну
Сорок сороков черных соболей,
Другую сорок печерских лисиц,
И брал же камку белокрушету.
А цена камке сто тысячей,
Принес он к князю Владимиру.

Չուրիլան հրավիրվում է արքունիք: Ապրակսենա իշխանուհին հափշտակվում է Չուրիլայի գեղեցկությամբ և խնդրում ամուսնուց նրան անկողնապետի պաշտոնին կոչել: Վլադիմիր իշխանը դայրանում է այդ առաջարկից և դարձնում է նրան գդիր (зазыватель):

Պերճորեն զարդարված Չուրիլան դրսևնում է Կիևի փողոցներում՝ իր գեղեցկությամբ գրավում կանանց ուշադրությունը.

Загледелись на Чуриву все люди—те:
Где девушки глядят—заборы трешшат,
Где молодушки глядят—лишь оконенки звенят..

²⁷⁸ Չի բացառված, սակայն, որ Սուրդայի հիշատակությունն այստեղ հետսամուտ մի հավելում է, զուրկ իրական ու պատմական անընթացների հիմքից: Այս կապակցությամբ ակադ. Ա. Վեսելովսկին գրել է. «Суровец наших былии не что иное, как дублет к Сурожанину; Суровец-Суздадец, очевидно, тавтология, вторая часть которой была искажена или подновлена по созвучию с Суздадем, более известным в северном периоде нашего эпоса: Суздадец вместо Судалец, Согдалец; в одной песне он—«богатого гостя заморенин сын» (այսուր կոչված են նաև քուպцы заморяние вавилоняне—л. Խ.), что едва ли идет к Суздадю, но быть может, не относится непосредственно и к Сурожу» (А. Н. Веселовский, նշվ. աշխ., էջ 70—71):

Երկրորդ զրույցը հիմնականում նվիրված է Չուրիլայի և մի ծեր վաճառականի՝ Բերմյատա Վասիլիչի²⁷⁹ երիտասարդ կնոջ՝ գեղեցիկուհի Կատերինայի սիրավեպին: Որոշ պատումներում այս զրույցը ողբերգական վախճան է ունենում, խանդոտ ամուսինը սպանում է Չուրիլային:

Բիլինայի մի ուրիշ պատումի մեջ Չուրիլան (Шурилушка Шапленкович) ապրել ու գործել է ոչ թե Վլադիմիր իշխանի ժամանակներում, այլ ծառայել է Լիտվայի թագավորին, այսինքն՝ զրույցն աղերսվել է պատմական այն ժամանակաշրջանին, երբ Կիևը գտնվում էր Լիտվայի մեծ իշխանության տիրապետության տակ (1362—1471 թթ.) և երբ կիևահայ գաղութն ապրում էր իր զարգացման բարձրագույն շրջանը: Այս պատումի համաձայն Չուրիլայի սիրավեպի կին հերոսուհին՝ Լիտվայի թագավորի դուստրն է. Չուրիլան պարծենում է իր սիրային կապով արքայադստեր հետ, բռնվում է հանցանքի մեջ և պատժվում²⁸⁰:

Չուրիլայի հոր՝ Պլինկոյի «սուրոժցի» վաճառական լինելու հանգամանքն ինքնին մի կովան է բիլինաների այս հերոսին Կիևի հայկական գաղթօջախի և Կիևում բնակություն հաստատած «սուրոժցի» հայ վաճառականների հետ շաղկապելու համար: Թվում է, սակայն, որ կան ավելի հիմնավոր հիմքեր այսպիսի ենթադրության:

Ասացինք արդեն, որ Չուրիլան առաջին զրույցի մեջ ասպարեղ է իջնում որպես մեծահարուստ վաճառական, բայց միաժամանակ իր հրամանի ներքո ունի բաշ երիտասարդներից բաղկացած մարտական մի ջոկատ: Նախորդ էջերում մենք արդեն անդրադարձել ենք Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» այն նշանավոր տողերին, որոնց համաձայն կիևահայությունը, գաղթօջախի շեն տարիներին, թշնամու դեմ կովի է հանել 500 արի դյուցազունների («յորժամ սէֆէր լինէր, հինգհարիւր հողի կելէր հայոց ի պատերազմ եարար պահատուրնի»)՝²⁸¹: Նրանք, անշուշտ, խաղաղ օրերին, իրենց հրամանատարների գլխավորությամբ, երբեմն դուրս էին գալիս քաղաքամերձ տարածությունները, զբաղվում որսորդությամբ, զինավարժություններով, կերուխումով: Պատմական հենց այսպիսի իրողությունների հիշատակներ են պահպանված Չուրիլա Պլինկոյիչի բիլինայի մեջ:

²⁷⁹ Այս վաճառականի անունը բիլինայի տարբեր պատումներում տարբեր տառադարձությամբ է ներկայացված՝ Бермята, Пермьяна, Бурмяна, Вельма, Берма, Ерма և այլն (տե՛ս А. Н. Василевский, նշվ. աշխ., էջ 103):

Հետևելով Ա. Վեսելովսկու օրինակին, որը Պլինկոյ անունը անշեղծ «Ֆոանկ» էթնիկական անվան հետ, Չուրիլային և նրա հորը խաչակալական ծագում է վերագրում, մենք ևս կարող էինք այս վաճառականի անվան փոփոխականների հիման վրա վերականգնել նրա նախնիին ձևը «ВЕРМЯНА» (ուկրաիններեն՝ «հայ») ձևով, և նրան հայկական ծագում վերագրել: Սակայն կարծում ենք, որ անձնանունների այս կարգի մեկնարանությունների պատմական հիմքերը շատ խախտա են:

Ըստ Ա. Սորոլսկու (տե՛ս «Живая старина», вып. II, էջ 103) այս վաճառականի անվան նախնական ձևը պետք է եղած լինի Բերնյատա՝ Բերն անվան փաղարշական փոփոխակը:

280 И услышали тут короля да литовского,

А слуги ведь да и верные,

Да сковали-то ему да ножки резвыи,

И завесили ему да очи ясныи,

И хочут вести на поле Куликовое.

(А. Ф. Гильфердинг. Онежские былины, II, М.—Л., 1950, էջ 359—364):

281 «Սիմեոնի դպրի Լեհացույ ուղեգրութիւն», էջ 347—348:

Երբ վլադիմիր իշխանը Պլենկոյի շքեղ տանը հյուրընկալվելիս պատուհանից տեսնելով տանը մոտեցող մեծ ջոկատը, զարմանքով հարցնում է, թե ովքե՞ր են նրանք. «սուրոժցի» Պլենկոն հանգստացնում է իշխանին, ասելով. նրանք թշնամիներ շեն, այլ իր որդի Չուրիլայի ջոկատն է.

Изволь ты, осударь, Владимир—князь со княгинею
И со всеми своими князи и бояры кушати!
Что-де едет не король из Орды
И не грозен посол,
Едет-те дружина хоробрая сына моего
Молода Чурила сына Пленковича²⁸².

Չուրիլայի կերպարի մյուս կարևոր կողմը՝ պճնասիրություն, կնամեծարություն, թեթև ժամանցի հակամետություն, նույնպես բնորոշ է միջնադարյան քաղաքների առևտրա-արհեստագործական դասի երիտասարդ ներկայացուցիչների համար:

Ինչ վերաբերում է կիևահայությունը կամ Կիև այցելող հայ վաճառականներին, ապա այդ հանգամանքը զարմանալի որոշակիությամբ արտացոլվել է 1494 թ. իշխանական մի հրովարտակի մեջ, որով դրամական տուգանք է սահմանվել այն հայ վաճառականների համար, ովքեր, խախտելով քաղաքի սովորույթները, կապեր կհաստատեն միայնակ կանանց հետ, այլ խոսքով՝ կըրոնվեն անբարոյական արարքների մեջ²⁸³:

Տասնյակ այդպիսի դեպքեր պետք է եղած լինեին՝ նման հրովարտակի անհրաժեշտությունը նախապատրաստելու համար: Եվ Չուրիլա Պլենկովիչի պարագան (ծեր վաճառականի երիտասարդ կնոջ կամ կիտվայի իշխանի դստեր հետ սիրային կապեր ունենալը, իշխանուհի Ապրակսենային դուր գալը և այլն), ըստ երևույթին հեռավոր մի վերհուշ է պատմական ինչ-որ իրողության, որն ավարտվել է «սուրոժցի» երիտասարդ վաճառականի սպանությամբ:

Այսպիսով կարելի է եզրափակել հին Մոսկվայի հայկական գաղութի պատմության մասին մեր ուսումնասիրության արդյունքները՝ արձանագրելով, որ «սուրոժցի» կոչվող հայ վաճառականներն այնքան նշանակալից դեր են կատարել Մոսկվայի ու Կիևի տնտեսական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտներում, որ ժողովրդական հրդիչները հորինել են նույնիսկ նրանց կեցության ու բնավորության որոշ գծերով օժտված հավաքական կերպարներ, որոնք իրենց պատվավոր տեղն են գրավել ռուսական միջնադարյան վիպական լավագույն ստեղծագործությունները հանդիսացող բիլինաների մեջ:

Աշխարհագրական մեծ գյուտերը, որ ծայր առան XV դ. վերջին տարիներին և հաջորդ դարի ընթացքում հեղափոխիչ դեր կատարեցին ողջ մարդկության համար, իրենց անմիջական անդրադարձն ունեցան նաև Մոսկովյան պետության տնտեսական կյանքի վրա:

²⁸² Древние российские стихотворения, էջ 114:

²⁸³ Акты, относящиеся к истории западной России, т. 1, СПб, 1848, էջ 194, 195. հմտ. Д. М. Мышко, նշվ. աշխ., էջ 118:

Միջազգային հաղորդակցության դարավոր ավանդույթներ ունեցող մայր-ուղիները կամ կորցրեցին իրենց երբեմնի դերը՝ դարձան տեղական նշանակություն ունեցող ճանապարհներ, կամ էլ նոր ոգի ու բովանդակություն ստանալով՝ դուրս եկան հին ու անձուկ սահմաններից, ձգվեցին դեպի նոր աշխարհամասեր:

«Սուրոժցի» վաճառականների կենսական զարկերակը լիարյուն սնունդ էր ստանում Ղրիմի ակունքներից. իսկ Ղրիմի վրայով անցնող ճանապարհներն էին հենց, որ կորցրեցին իրենց վիթխարի միջազգային նշանակությունը, ուստի և կարևոր դերը Մոսկովայի տնտեսական կյանքի զարգացման համար: Սակայն խնդիրը միայն ճանապարհների փոփոխության հետ չէր առնչվում: Փոփոխվել էին ժամանակներն ըստ ամենայնի: Բաժնետիրական ժամանակաշրջանի ծնունդ հանդիսացող «սուրոժցի» վաճառականը, որը ինքնուրույն ձևերից էր ծագում առնում, հաղթահարելով ֆեոդալական մասնատվածության արդյունք հանդիսացող հազար ու մեկ սահմանափակություններ, ամեն քայլափոխի դանազան մարսատուրքեր վճարելով՝ Մոսկվա էր հասցնում մի քանի բեռ արևելյան ապրանքներ ու դրա դիմաց օտար երկրներ արտածում Ռուսաստանի արտաքին առևտրի նյութերը, այլևս չէր կարող քայլ պահել ժամանակի հետ: XVI դ. կեսերից Հյուսիսային և Սպիտակ ծովերի վրայով Ռուսաստան էին ներթափանցել արդեն անզլիացի վաճառականները, որոնք փորձում էին իրենց տնտեսական գերիշխանությունը հաստատել Կասպ-Վոլգյան հին մայրուղու վրա, մեկ ծայրից մյուսը՝ Իրանից սկսած մինչև Հյուսիսային Եվրոպայի երկրներ: Այս ճանապարհի հին բաժնետերերը՝ հայ վաճառականները, կամ պետք է դուրս գային ասպարեզից, կամ էլ համառ պայքար մղելով իրենց մրցակիցների դեմ, պետք է բարձրանային նրանց աստիճանին՝ ընդարձակեին իրենց գործունեության շրջանակները, օգտվեին վարկի նոր եղանակներից, շաղկապեին առևտուրը արտադրական գործունեության հետ և այլն:

Նոր ժամանակի առաջադրած այդ խնդիրները հաջողությամբ լուծեցին «սուրոժցի» կոչվող հայ վաճառականներին հաջորդած «չուղայեցի» հայ վաճառականները: 1667 թ. մայիսի 31-ին, ջուղահայ առևտրական բուրժուազիայի լիազոր ներկայացուցիչների և Մոսկովյան պետական պաշտոնյաների մեկ տարուց ավելի տևած բանակցությունները պսակվեցին հաջողությամբ: Կընքվեց նշանավոր այն պայմանագիրը, որի զորությամբ ջուղահայ վաճառականները (հետագայում այն տարածվեց նաև այլ վայրերից Ռուսաստան այցելող հայ վաճառականների վրա) իրավունք էին ստանում արտոնյալ պայմաններով Ռուսաստանում առևտուր անելու, Ռուսաստանի վրայով եվրոպական երկրներ արտահանելու հում մետաքս և Անդրկովկասյան երկրներից ու Իրանից բերվող այլ ապրանքներ: Այս պայմանագիրը շրջադարձային նշանակություն ունեցավ ոչ միայն հայ-ռուսական տնտեսական կապերի հետագա ընդարձակման և Ռուսաստանի քաղաքներում դարերից ի վեր գոյություն ունեցող հայկական համայնքների բարգավաճման համար:

Օտար լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի զույգ հատվածների առաջադեմ ներկայացուցիչները, ավելի սերտ տնտեսական կապեր հաստատելով Ռուսաստանի հետ, հանգեցին միակ ճիշտ այն եզրակացությանը, որ ռուսական հզոր պետությունն է քաղաքական այն ուժը, որն ի վիճակի է օգնելու հայ ժողովրդին իր հայրենի երկրի ազատագրության համար մղվող պայքարում: Եվ այսպես, հարյուրամյակների պատմություն ունեցող տնտեսական ու մշակութա-

յին կապերն ու անընթացությունները՝ վերաճեցին, հզորացան և քաղաքական քաղաքականություն ստացան: Դրան զուգընթաց սկսվեց Մոսկվայի հայ գաղթօջախի պատմության նոր դարաշրջանը՝ հարուստ հայ և ուրա ժողովուրդների բարեկամությունը զոգող փաստերով և անտեսական կապերի նոր դրսևորումներով, որոնք արժանի են հանգամանալից ու խորազնին նոր ուսումնասիրությունների:

Л. С. ХАЧИКЯН

АРМЯНЕ В ДРЕВНЕЙ МОСКВЕ И НА ПУТЯХ, ВЕДУЩИХ В МОСКВУ

Уже с первых веков своего существования Москва поддерживала тесные экономические связи с восточными странами. Эти связи осуществлялись в основном по Волго-Каспийскому пути, а также через Киев и Крым. Заметную роль в этой области играли армянские купцы. Армянами были созданы значительные колонии в столице Хазарского каганата—Итиле, а впоследствии—в половецких административно-экономических центрах, в столице волжских болгар—Великих Болгарах, в Казани, Нижнем-Новгороде и т. д. Еще большего расцвета армянские колонии достигли с конца XIII века. В старой и новой столицах Золотой Орды—Сарай-Бату и Сарай-Берке, на Северном Кавказе (особенно на Таманском полуострове и в других районах исторической Черкесии), в юго-восточных приморских центрах Крыма, в Киеве и в других городах южной России появились многолюдные кварталы, населенные армянами.

В XIV—XV вв. армяне составляли две трети населения города Кафы (около 45 тыс. чел.), являвшейся экономическим центром Крыма; они поставляли восточные товары в Россию и в другие страны Восточной Европы.

Подытоживая имеющиеся в наличии сведения об упомянутых выше армянских колониях, автор статьи делает попытку по новому осветить место армян в экономической жизни Москвы XIV—XVI вв. Значительную роль в жизни Москвы этого периода играли купцы, называемые «гостями-суроужанами» или «суроужцами». Высказывались различные точки зрения относительно их национальной принадлежности: по мнению некоторых исследователей среди «гостей—суроужан» ведущая роль принадлежала итальянским (особенно генуэзским) или греческим купцам; другие считали их русскими московскими купцами, существует также точка зрения, согласно которой среди «суроужан» были и армянские купцы.

Приводя данные о месте армян во внешней торговле России и делая имена десяти «гостей-суроужан», участвовавших вместе с Дмитрием Донским в Куликовской битве, а также других (например, Некамата суроужанина) предметом специального рассмотрения, автор статьи приходит к выводу, что «гостями-суроужанами» назывались крымские, в основном, кафинские армянские купцы.

В новом свете предстают также данные о крымских армянах—сподвижниках Ивана III—Какосе, Богдане, Погосе и других, материалы о существовавшем в средневековой Москве армянском дворе, сурожском шелковом ряде и торговом доме, называвшемся «персидским» и т. д. Доказывается, что у армян в Москве была церковь еще с конца XIV в.; следовательно, организованная армянская колония в Москве существовала гораздо раньше, чем было принято считать.

Специальные разделы в статье посвящены тем памятникам культуры (архитектурные памятники, произведения изобразительного искусства, ювелирные изделия, литературные произведения), в создании или реставрации которых, по всей вероятности, принимали участие армянские мастера. По мнению автора, воспоминания об армянских купцах нашли отражение и в произведениях устного народного творчества, в частности, в былине о Чуриле Пленковиче.

L. S. KHATCHIKIAN

LES ARMÉNIENS DANS MOSCOU MÉDIEVALE ET SUR LES ROUTES MENANT À MOSCOU

(R é s u m é)

Dès les premiers siècles de son existence Moscou a entretenu d'étroites relations économiques avec les pays orientaux. Ces relations se sont réalisées principalement par la voie Volgo-Caspienne, la Crimée et Kiev. Les commerçants arméniens ont joué un rôle considérable dans ce domaine. Les Arméniens avaient des colonies stables à Itile, capitale de la Khazarie, puis dans les centres économiques et administratifs des Polovtzes, dans la capitale des Bulgares de la Volga, à Véliky Bolgary, de même qu'à Kazan, à Nijni-Novgorod, etc. Les colonies arméniennes ont fleuri encore plus après le XIII^e siècle. Des quartiers populeux d'Arméniens existaient dans l'ancienne et la nouvelle capitales de la Horde d'Or, à Saraï-Batou et à Saraï-Berké, au Caucase du Nord (en particulier sur la presqu'île de Taman et dans les autres régions de la Circassie historique), dans les centres littoraux du sud-est de la Crimée et dans les autres régions de la Russie méridionale.

Aux XIV^e—XV^e siècles les Arméniens constituaient les deux tiers de la population de la ville de Kafa (environ 45 mille habitants), qui était le centre économique de la Crimée, et fournissaient des marchandises orientales à la Russie et aux autres pays de l'Europe Orientale.

Réunissant tous les renseignements existant quant aux colonies arméniennes mentionnées plus haut, l'auteur de l'article s'efforce d'éclairer d'une manière nouvelle le rôle des Arméniens dans la vie de Moscou aux XIV^e—XV^e siècles. A cette époque les commerçants nommés "marchands sourojiens" ou "sourojtsy" ont joué un rôle important dans la vie

économique de Moscou. Différentes suppositions ont été faites quant à leur appartenance nationale: finalement on en est venu à la conclusion que parmi eux le rôle prépondérant revenait aux commerçants italiens (surtout génois) et grecs; d'autres ont considéré que les "marchands sourojiens" étaient des commerçants russes moscovites; d'autres encore sont de l'opinion que parmi les "sourojiens" il y avait également des Arméniens.

Mentionnant les données existant quant au rôle joué par les Arméniens dans le commerce extérieur de la Russie et rendant les noms de dix "marchands sourojiens" ayant participé avec Dmitri Donskoï à la bataille de Koulikovo, de même que d'autres noms (par exemple celui de Nékomat Sourojien) l'objet d'un examen spécial, l'auteur de l'article en vient à la conclusion qu'on nommait "marchands sourojiens" les commerçants arméniens de Crimée et surtout de Kafa.

L'auteur examine sous un jour nouveau également les données relatives aux Arméniens de Crimée—compagnons d'armes d'Ivan III—Kakos, Bogdan, Poghos, etc., les matériaux concernant l'existence à Moscou d'un caravansérail arménien, de galeries de soirées de Sourojiens et d'une maison de commerce dite "persane". Il est démontré que les Arméniens ont eu une église à Moscou dès la fin du XIV^e siècle et que, par conséquent, une colonie arménienne organisée y a existé bien avant qu'on ne le croyait.

Des passages spéciaux de l'article sont consacrés aux oeuvres d'art (monuments, tableaux, joaillerie, oeuvres littéraires) à la création ou à la restauration desquelles des artistes arméniens ont participé. Selon l'auteur de l'article les souvenirs relatifs aux commerçants arméniens se sont reflétés également dans la création populaire orale, en particulier dans la chanson épique de Tchourila Plenkovitch.